ԱՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Նվիրվում է Արցախի պետական համալսարանի
հիմնադրման 50-ամյակին*

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ստեփանակերտ-2019

ՀՏԴ 340:378
ԳՄԴ 67+74.58
Ա 948

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Կազմեցին՝ *Արմեն Սարգսյան*
Նանա Առուստամյան

Ա 948 Արցախի պետական համալսարանի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ժողովածու/Կազմ.՝ Ա.Սարգսյան, Ն.Առուստամյան.- Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2019.-674 էջ:

Ժողովածուն ընդգրկում է Արցախի պետական համալսարանի գործունեությունը կարգավորող Արցախի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, գերատեսչական նորմատիվ ակտերը, համալսարանի գիտական խորհրդի որոշումներով հաստատված կարգերը, կանոնակարգերը, ընթացակարգերը, աշխատակարգերը, ներքին կանոնադրությունները՝ համապատասխան լրացումներով եւ փոփոխություններով:

ՀՏԴ 340:378
ԳՄԴ 67+74.58

ISBN 978-9939-1-0892-6

©ԱրՊՀ, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ I
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

1.«Կրթության մասին» ԼՂՀ օրենքը 12
2. «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ԼՂՀ օրենքը 32
3. «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» ԼՂՀ օրենքը..... 51
4. «Լեզվի մասին» ԼՂՀ օրենքը 60

ԲԱԺԻՆ II
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտամանկավարժական կադրերին գիտական աստիճաններ և գիտական կոչումներ շնորհելու կարգի մասին» ԼՂՀ կառավարության ***2002թ. մայիսի 6-ի N108*** որոշումը 64

2. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2007թ. փետրվարի 27-ի N81*** որոշումը 65

3. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող սոցիալական որոշ խմբերի ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման մասին» ԼՂՀ կառավարության ***2008թ. փետրվարի 14-ի N66*** որոշումը 68

4. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2008թ. մայիսի 6-ի N337*** որոշումը...70

5. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ԼՂՀ կառավարության ***2008թ. մայիսի 6-ի N 338*** որոշումը 72

6. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003թ. հունիսի 16-ի թիվ 184 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության ***2008թ. մայիսի 20-ի N375*** որոշումը 73

7. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ ասպիրանտների կրթաթոշակների չափերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005թ. մարտի 29-ի թիվ 154 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության ***2008թ. նոյեմբերի 27-ի N812*** որոշումը 86

8. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բուհերի և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում սովորող ուսանողներին դրամական փոխհատուցում տալու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999թ. հունվարի 26-ի թիվ 3 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության ***2009թ. հունիսի 9-ի N364-Ն*** որոշումը 87

9. «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2010թ. հունվարի 26-ի N29-Ն*** որոշումը 90

10. «Ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները սահմանելու մասին» ԼՂՀ կառավարության ***2010թ. փետրվարի 23-ի N80-Ն*** որոշումը.... 97

11. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում սովորող ուսանողների կրթաթոշակների չափերը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005թ. մարտի 29-ի N154 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության ***2011թ. մարտի 22-ի N146-Ն*** որոշումը 100

12. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության

2001թ. մարտի 6-ի N52 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության ***2011թ. հունիսի 21-ի N410-Ն*** որոշումը 101

13. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2011 թ. հուլիսի 26-ի N511-Ն*** որոշումը 112

14. «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009թ. հոկտեմբերի 13-ի N647-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության ***2011թ. դեկտեմբերի 29-ի N1036-Ն*** որոշումը 119

15. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելու եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011թ. մայիսի 31-ի N336-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության ***2012թ. մայիսի 14-ի N301-Ն*** որոշումը 124

16. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2012թ. դեկտեմբերի 27-ի N944-Ն*** որոշումը 143

17. «Կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2013թ. ապրիլի 25-ի N219-Ն*** որոշումը 149

18. «Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2013թ. սեպտեմբերի 25-ի N656*** որոշումը 152

19. «Ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձեւը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2015թ. մայիսի 26-ի N316-Ն*** որոշումը 154

20. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող՝ պաշտպանության բանակում զինվորական ծառայության մեջ եւ պահեստազորում գտնվող սպաների զավակ ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության ***2015թ. դեկտեմբերի 28-ի N910-Ն*** որոշումը 157

21. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության եւ ուսուցման, դոկտորանտուրայի եւ հայցորդության ձեւակերպման կարգը հաստատելու եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N943-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԼՂՀ կառավարության ***2016թ. ապրիլի 29-ի N203-Ն*** որոշումը 159

22. «Արցախի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների եվ դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը հաստատելու եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001թ. մարտի 6-ի N52-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության ***2017թ. դեկտեմբերի 5-ի N234-Ն*** որոշումը 165

23. «Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» ԱՀ կառավարության ***2017թ. դեկտեմբերի 5-ի N235-Ն որոշումը*** 172

ԲԱԺԻՆ III

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի ***2007 թ. մարտի 20-ի թիվ 30/Մ §2*** հրամանը 184

2. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության և գիտության նախարարի ***2008թ. ապրիլի 25-ի թիվ 57/Մ §1*** հրամանը..... 186

3. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության և գիտության նախարարի ***2008թ. ապրիլի 25-ի N57/Մ §2*** հրամանը 190

4. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության և գիտության նախարարի ***2012թ. փետրվարի 7-ի N9-Ն*** հրամանը 193

5. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության և գիտության նախարարի ***2012թ. փետրվարի 7-ի N10-Ն*** հրամանը 203

6. «Լիցենզավորված անձանց կրթական ծրագրերով տրամադրվող լիցենզիայի ներդիրի ձևերը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության և գիտության նախարարի ***2013թ. ապրիլի 19-ի N80-Ն*** հրամանը 207

7. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության և գիտության նախարարի ***2014թ. հուլիսի 16-ի N150-Ն*** հրամանը..... 210

8. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Տարվա լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կրթության և գիտության նախարարի ***2014թ. նոյեմբերի 18-ի N223/Մ*** հրամանը..... 215

ԲԱԺԻՆ IV
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
1. ԿԱՐԳԵՐ

1.«Արցախի պետական համալսարանի ամբիոններում գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների և ատենախոսությունների քննարկման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2012թ. փետրվարի 28-ի*** որոշումը 222

2.«Արցախի պետական համալսարանում կրեդիտային համակարգով հետազոտողի կրթական ծրագրի գործընթացի կազմակերպման, հետազոտողի պատրաստման (ասպիրանտուրայի) գիտակրթական ծրագրի կառուցվածքը եւ բովանդակությունը, հետազոտողի գիտակրթական ծրագրով ուսումնառվող ասպիրանտների ամփոփիչ ատեստավորման աստիճանաշնորհման կարգերը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2012թ. օգոստոսի 30-ի*** որոշումը 224

3.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ամբիոնի գործունեության կարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2004թ. մայիսի 15-ին հաստատված կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2013թ. դեկտեմբերի 25-ի N11-Լ*** որոշումը 240

4.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողական կուրսի (խմբի) ավագության կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. փետրվարի 26-ի N5-Լ*** որոշումը 245

5.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կուրսղեկության կարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2005թ. մարտի 4-ին հաստատված կարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. փետրվարի 26-ի N6-Լ*** որոշումը 248

6.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրակացարանում ուսանողների բնակության կարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2013թ. մարտի 18-ին հաստատված կարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. մարտի 28-ի N11-Լ*** որոշումը..... 251

7.«Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2009թ. հոկտեմբերի 30-ին հաստատված կարգն, 2010թ. օգոստոսի 25-ին հաստատված ժամանակավոր կարգն, 2010թ. օգոստոսի 25-ին հաստատված կարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հունիսի 19-ի N27-Լ*** որոշումը 256

8. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2011թ. նոյեմբերի 17-ին, 2011թ. դեկտեմբերի 27-ին հաստատված ժամանակավոր կարգերն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. օգոստոսի 28-ի N38-Լ*** որոշումը 289

9. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մագիստրատուրայի ընդունելության կարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2009թ. հունիսի 10-ին հաստատված կարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. օգոստոսի 28-ի N39-Լ*** որոշումը 318

10. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում դասալսումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. օգոստոսի 28-ի N40-Լ*** որոշումը 322

11.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթության որակի ապահովման քաղաքականությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հոկտեմբերի 7-ի N44-Լ*** որոշումը 325

12. «Հայցորդի ուսումնառության կազմակերպման պայմանների վերաբերյալ» պայմանագրի նմուշը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հոկտեմբերի 7-ի N50-Լ*** որոշումը..... 331

13. «Առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և քննարկման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. մարտի 18-ի N2-Լ*** որոշումը 334

14. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման ուղեցույցը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. մարտի 18-ի N3-Լ*** որոշումը 338

15. «Նպաստառու ուսանողների առաջադիմության հաշվառման և մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. հունիսի 23-ի N13-Լ*** որոշումը 342

16. «ԱրՊՀ ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. հունիսի 23-ի N15-Լ*** որոշումը 345

17. «Բակալավրի կրթական ծրագրով ուսումնառության կազմակերպման պայմանների վերաբերյալ» և «Մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառության կազմակերպման պայմանների վերաբերյալ» պայմանագրերի նմուշները հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. օգոստոսի 24-ի N19-Լ*** որոշումը 350

18. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. օգոստոսի 24-ի N23-Լ*** որոշումը 359

19. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մագիստրատուրայի ուսանողների գիտամանկավարժական փորձուսուցման կազմակերպման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. դեկտեմբերի 24-ի N33-Լ*** որոշումը 363

20. «ԱրՊՀ ուսանողներին ստուգման գրքույկների և ուսանողական տոմսերի տրամադրման և հաշվառման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2016թ. ապրիլի 18-ի N7-Լ*** որոշումը 367

21. «Արցախի պետական համալսարանի և ԼՂՀ դպրոցների համագործակցության ծրագիրը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2016թ. մայիսի 4-ի N17-Լ*** որոշումը 370

22.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետի մեթոդիստի գործունեության կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2016թ. սեպտեմբերի 29-ի N26-Լ*** որոշումը 374

23.«Ուսանողի կողմից այլ դասընթացի յուրացման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. փետրվարի 28-ի N6-Լ*** որոշումը 377

24. «Արցախի պետական համալսարանի ուսումնական հրատարակությունների ձևերը և նրանց ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. նոյեմբերի 2-ի N36-Լ*** որոշումը 379

25.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հայցորդների ձևակերպման կարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2013թ. հոկտեմբերի 31-ի N02-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. նոյեմբերի 27-ի N38-Լ*** որոշումը 385

26.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գիտական, մեթոդական և այլ գրականության հրատարակման կարգը հաստատելու և «Արցախի պետական

համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2007թ. հունիսի 29-ին հաստատված կարգը ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. դեկտեմբերի 20-ի N45-Լ*** որոշումը 387

27.«Արցախի պետական համալսարանի հոգեբանական կենտրոնում մասնագիտական ծառայությունների մատուցման և վճարների գանձնման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. հունվարի 31-ի N 3-Լ*** որոշումը 390

28.«Արցախի պետական համալսարանում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. փետրվարի 23-ի N7-Լ*** որոշումը 393

29.«Արցախի պետական համալսարանի ուսանողական խորհրդի եւ ուսանողական գիտական ընկերության գործունեության գնահատման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. հունիսի 22-ի N18-Լ*** որոշումը 398

30. «Արցախի պետական համալսարանի մասին տեղեկատվության տարածման կարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. հունիսի 22-ի N19-Լ*** որոշումը 402

2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

1.«Արցախի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2012թ. հունիսի 21-ի*** որոշումը 406

2.«Ուսանողների գիտելիքների համակարգչային թեստային ստուգման գործընթացի կանոնակարգը (ժամանակավոր) հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2012թ. հոկտեմբերի 15-ի*** որոշումը 411

3.««Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատի կանոնակարգը հաստատելու և Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից 2004 թվականի մարտի 19-ին հաստատված կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2013թ. նոյեմբերի 29-ի N5-Լ*** որոշումը 414

4.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգը հաստատելու և Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից 2004 թվականի մարտի 19-ին հաստատված կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2013թ. նոյեմբերի 29-ի*** N6-Լ որոշումը..... 417

5.«Կուրսային (դասընթացային-գիտական) աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության», «Ավարտական աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության» ու «Մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշտպանության» կանոնակարգերը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հունվարի 31-ի N1-Լ*** որոշումը 423

6. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. փետրվարի 26-ի N2-Լ*** որոշումը 439

7.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսման և այլ վճարների գանձման կանոնակարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2005 թ. մարտի 4-ին հաստատված կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հունիսի 30-ի N29-Լ*** որոշումը 450

8. «Ռեֆերատի պատրաստման և ներկայացման կանոնակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. հունվարի 26-ի N1-Լ*** որոշումը 455

9. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների փոխատեղման գործընթացի կազմակերպման կանոնակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. մայիսի 12-ի N8-Լ*** որոշումը 458

10. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողի էլեկտրոնային փոստի հասցեի տրամադրման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. հունիսի 23-ի N14-Լ*** որոշումը 460

11. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգը և ուսումնական աշխատանքների հաշվառման նորմերը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. հուլիսի 3-ի N16-Լ*** որոշումը 463

12. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պարգևների և պատվավոր կոչումների շնորհման կանոնակարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2005թ. մարտի 4-ին հաստատված կարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. դեկտեմբերի 24-ի N32-Լ*** որոշումը 470

13. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ուսանողական խորհուրդ» կազմակերպության կանոնակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. դեկտեմբերի 24-ի N34-Լ*** որոշումը 473

14. «ԱրՊՀ աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2016թ. մայիսի 4-ի N8-Լ*** որոշումը 480

15. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական գրադարանից օգտվելու կանոնները հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2016թ. մայիսի 4-ի N10-Լ*** որոշումը 487

16.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը հաստատելու ու «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2013թ. հոկտեմբերի 31-ի N04-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. փետրվարի 28-ի N7-Լ*** որոշումը 490

17. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը և հարցաթերթը հաստատելու ու «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2015թ. հունիսի 23-ի N12-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. փետրվարի 28-ի N8-Լ*** որոշումը 495

18. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական տեղեկագրի հրատարակման կանոնակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. նոյեմբերի 2-ի N37-Լ*** որոշումը 500

19.«Ակադեմիական ազնվության և անազնվության կանոնակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. դեկտեմբերի 20-ի N46-Լ*** որոշումը 506

20.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպության բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների փորձուսուցման կազմակերպման եւ անցկացման կանոնակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. դեկտեմբերի 26-ի N46-Լ*** որոշումը..... 509

3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԵՐ

1.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2004թ. մայիսի 15-ին հաստատված կարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2013թ. դեկտեմբերի 25-ի N10-Լ*** որոշումը 518

2.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2009թ. օգոստոսի 25-ին հաստատված կարգը ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2013թ. դեկտեմբերի 25-ի N12-Լ*** որոշումը.....525

3.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2005 թ. օգոստոսի 30-ին հաստատված կանոնակարգն ու կարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2013թ. դեկտեմբերի 25-ի N13-Լ*** որոշումը 532

4.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հոկտեմբերի 7-ի N45-Լ*** որոշումը..... 541

5. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի մշտական հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. նոյեմբերի 5-ի N51-Լ*** որոշումը 548

6.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետների տեսուչների, գործակարգավորիչների, ամբիոնների լաբորանտների գործառական պարտականությունները հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2012թ. փետրվարի 28-ին հաստատված կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. մայիսի 12-ի N9-Լ*** որոշումը 561

7.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կաբինետի վարիչի գործառական պարտականությունները հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2015թ. նոյեմբերի 9-ի N27-Լ*** որոշումը 565

8. «ԱրՊՀ-գործատու համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. փետրվարի 23-ի N8-Լ*** որոշումը 568

4. ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2004թ. մարտի 19-ին հաստատված կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2013թ. դեկտեմբերի 25-ի N9-Լ*** որոշումը 572

2. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կադրերի բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. փետրվարի 26-ի N3-Լ*** որոշումը 579

3. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ընդհանուր բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. փետրվարի 26-ի N4-Լ*** որոշումը 583

4. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական գրադարանի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. ապրիլի 30-ի N12-Լ*** որոշումը 587

5. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հրատարակչության բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. ապրիլի 30-ի N14-Լ*** որոշումը 593

6. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձուսուցման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հունիսի 17-ի N19-Լ*** որոշումը 598

7. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահական հաշվառման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հունիսի 17-ի N20-Լ որոշումը*** 603

8. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հայագիտական կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2014թ. հունիսի 17-ի N21-Լ*** որոշումը 610

9.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Ուսանողական գիտական ընկերության» կանոնադրությունը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կողմից 2010թ. հունվարի 18-ին հաստատված կանոնակարգն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. ապրիլի 28-ի N16-Լ*** որոշումը 615

10.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հոգեբանական կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. հուլիսի 3-ի N22-Լ*** որոշումը 619

11.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության իրավաբանական կլինիկայի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. նոյեմբերի 2-ի N33-Լ*** որոշումը 624

12.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտահետազոտական կենտրոնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2017թ. նոյեմբերի 27-ի N42-Լ*** որոշումը 627

13.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. սեպտեմբերի 19-ի N29-Լ*** որոշումը 630

14.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության հանրային կապերի և լրատվության բաժնի կանոնադրությունը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2014թ. օգոստոսի 28-ի N34-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. սեպտեմբերի 19-ի N30-Լ*** որոշումը 639

15.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի սպասարկման բաժնի կանոնադրությունը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2014թ. ապրիլի 30-ի N13-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. նոյեմբերի 9-ի N32-Լ*** որոշումը 645

16.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի կանոնադրությունը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2014թ. մարտի 28-ի N9-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. նոյեմբերի 9-ի N33-Լ*** որոշումը 650

17.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2014թ. օգոստոսի 28-ի N37-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. նոյեմբերի 9-ի N34-Լ*** որոշումը 657

18.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի կանոնադրությունը հաստատելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2014թ. մարտի 28-ի N8-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. նոյեմբերի 9-ի N35-Լ*** որոշումը 663

19.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» ԱրՊՀ գիտական խորհրդի ***2018թ. նոյեմբերի 9-ի N36-Լ*** որոշումը 669

ԲԱԺԻՆ I

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է 2000 թվականի մարտի 15-ին

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Կրթության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունը

Սույն օրենքը սահմանում է կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը:

Կրթության բնագավառը կարգավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

Հոդված 2. Կրթության բնագավառում օրենսդրության խնդիրները

Կրթության բնագավառում օրենսդրության խնդիրներն են՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.

2) իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև.

3) կրթության համակարգի գործառնության և զարգացման համար իրավական երաշխիքների և մեխանիզմների ստեղծումը.

4) իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանումը և փոխհարաբերությունների իրավական կարգավորումը:

Հոդված 3. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **կրթություն՝** անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելու ու սերունդներին փոխանցելու համար.

1.1) **ուսուցում՝** կրթական ծրագրով իրականացվող գործընթաց, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպատակաուղղված է անձի ուսումնառության կազմակերպմանը, իրականացմանը կամ դրա օժանդակմանը.

1.2) **հարատև կրթություն՝** անձի ամբողջ կյանքի ընթացքում ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մասնակցության միջոցով ձեռք բերած ուսումնառության արդյունքներ, որոնցով անհատը ձևավորում կամ կատարելագործում է իր գիտելիքները, հմտությունները, կարողությունները և արժեքային համակարգը.

1.3) **ֆորմալ կրթություն՝** հանրակրթական և մասնագիտական կրթական հիմնական ծրագրերի որոշակի մակարդակ կամ ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կողմից և հանգեցնում տվյալ մակարդակի որակավորման աստիճանի շնորհման և դիպլոմավորման.

1.4) **ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում)՝** կրթության լրացուցիչ ուսուցման ծրագիր կամ ծրագրերի ամբողջություն, որն իրականացվում է համապատասխան ուսումնական հաստատության (հաստատությունների) կամ այդ գործառույթն իրականացնելու իրավասությունն ունեցող կազմակերպության և (կամ) ծառայության միջոցով, սակայն չի հանգեցնում որակավորման աստիճանի շնորհման և ուսումնառության արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերի.

1.5) **ինֆորմալ կրթություն՝** անձի առօրյա և ընտանեկան կյանքի, հանգստի, ժամանցի, աշխատանքային գործունեության և այլ տարբեր գործողությունների արդյունքում ձեռք բերված ուսումնառության արդյունքներ, որոնք, որպես կանոն, կանխամտածված չեն անձի կողմից որպես նպատակային ուսումնառություն, կազմակերպված և համակարգված չեն ժամանակի կամ ռեսուրսների առումով, չեն հանգեցնում արդյունքների պաշտոնական ճանաչման, բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

1.6) **լրացուցիչ կրթություն (ուսուցում)՝** լրացուցիչ կրթական ծրագրով իրականացվող ոչ ֆորմալ ուսումնառություն, որի առավելագույն տևողությունը կարող է լինել մինչև հինգ ամիս.

1.7) **ունկնդիր՝** լրացուցիչ կրթական ծրագրում ընդգրկված և ուսումնառող անձ.

1.8) **սոցիալական գործընկեր՝** մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, մասնավորապես գործատուների, արհեստակցական և հասարակական այլ միավորումներ, կրթական և ուսումնական ծրագրեր իրականացնող ցանկացած կազմակերպություն, պետական և համայնքային մարմիններ.

2) **պետական կրթական չափորոշիչ՝** նորմատիվ, որը սահմանում է կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները.

3) **կրթական (այդ թվում՝ ռազմական) ծրագիր՝** կրթության համապատասխան մակարդակի բովանդակությունը և մասնագիտական ուղղվածությունը.

3[1]) **հատուկ կրթություն՝** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգ, որը մեկ կամ մի քանի կրթական ծրագրերի հիման վրա կարող է իրականացվել հատուկ կամ ընդհանուր հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատություններում.

4) **ուսումնական հաստատություն՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ մի քանի կրթական ծրագիր և ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունն այդ ծրագրերի պահանջներին համապատասխան.

4.1) **ռազմաուսումնական հաստատություն՝** բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն, որն ապահովում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը ռազմական կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան.

5) **մանկապարտեզ՝** նախադպրոցական կրթության ծրագիր իրականացնող ուսումնադաստիարակչական հաստատություն.

6) **հանրակրթական ուսումնական հաստատություն՝** մեկ կամ մի քանի հանրակրթական հիմնական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություն.

7) ***(կետն ուժը կորցրել է 23.12.2009 ՀՕ-3-Ն)***

8) **կրթահամալիր՝** տարբեր կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միավորում.

8[1]) **արհեստագործական ուսումնարան՝** իրավաբանական անձն կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր.

9) **քոլեջ՝** իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ դրա ստորաբաժանում, որն իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագիր:

10) **համալսարան՝** բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է բնագիտական, հասարակագիտական, գիտության և տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղությունների բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը.

11) **ինստիտուտ՝** բարձրագույն ուսումնական հաստատություն, որն իրականացնում է գիտության, տնտեսության և մշակույթի մի շարք ուղղությունների գծով մասնագիտական ու հետբուհական կրթական ծրագրեր և գիտական ուսումնասիրություններ.

12) **ակադեմիա (ուսումնական)՝** բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է որոշակի ոլորտում կրթության, գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացմանը, իրականացնում է որոշակի ճյուղի (բնագավառի) բարձր որակավորման մասնագետների պատրաստումը և վերաորակավորումը, հետբուհական կրթական ծրագրերը.

13) **կոնսերվատորիա՝** բարձրագույն ուսումնական հաստատություն, որի գործունեությունը նպատակաուղղված է երաժշտության ոլորտում մասնագետների պատրաստմանը, որակավորման բարձրացմանը և հետբուհական կրթական ծրագրերի իրականացմանը.

14) **մասնաճյուղ՝** ուսումնական հաստատության տարածքային առանձնացված ստորաբաժանում, որն իրականացնում է մեկ կամ տարբեր կրթական ծրագրեր.

15) **ուսումնական կենտրոն՝** կազմակերպություն (այդ թվում՝ ուսումնական հաստատություն), որն իրականացնում է լրացուցիչ կրթական ծրագիր (ծրագրեր).

16) **լիցենզավորում՝** ուսումնական հաստատության գործունեության թույլտվության գործընթաց.

17) **ատեստավորում՝** ուսումնական հաստատության գործունեության և նրա շրջանավարտների պատրաստման որակի, բովանդակության և մակարդակի գնահատում՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան.

17[1]) **որակավորում՝** ամփոփիչ ատեստավորման արդյունքում մասնագիտական որակավորման բնու-

թագրին անձի համապատասխանությունը հավաստող կարգավիճակ, որը շնորհվում է համապատասխան փաստաթղթով.

17[2]) **որակավորումների ազգային շրջանակ՝** մասնագիտական կրթության որակավորման աստիճանների բնութագրերի ամբողջությունը, որը ներառում է ուսումնառության յուրաքանչյուր աստիճանում ուսուցման արդյունքների և մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ընդհանրական նկարագրերը.

18) **պետական հավատարմագրում՝** պետության կողմից՝ պետական կրթական չափորոշիչներին մասնագետների պատրաստման որակի համապատասխանության ճանաչումը.

18[1]) **արհեստավոր՝** նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրին և (կամ) որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց.

19) **մասնագետ՝** միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջին մասնագիտական կրթական ծրագրին համապատասխան ամփոփիչ ատեստավորում անցած անձանց.

20) **բակալավր՝** բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կրթություն ունեցող և առնվազն քառամյա (ոստիկանական մասնագիտությունների համար՝ միջին մասնագիտական ոստիկանական կամ զինվորական կրթության հիմքով, առնվազն եռամյա) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան ատեստավորված անձանց.

21) **դիպլոմավորված մասնագետ՝** բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձանց՝ առնվազն հնգամյա բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

22) **մագիստրոս՝** բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ առնվազն մեկ տարի բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

23) **հետազոտող՝** հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան ունեցող անձանց՝ ասպիրանտուրայում եռամյա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

24) **ինտերն՝** բարձրագույն բժշկական կրթության որակավորման աստիճան, որը շնորհվում է բժշկական բարձրագույն կրթական ծրագրերն ավարտած և առնվազն մեկ տարվա հետբուհական ուսուցում ստացած անձանց.

25) **կլինիկական օրդինատոր՝** բարձրագույն մասնագիտական որակավորման աստիճան, որը շնորհվում է բարձրագույն բժշկական կրթություն ունեցող անձանց՝ մեկից մինչև հինգ տարվա հետբուհական մասնագիտական կրթական ծրագրի ատեստավորման արդյունքով.

26) **էքստեռն (այսուհետ՝ դրսեկություն)՝** ինքնակրթությամբ և ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ամփոփիչ ատեստավորման եղանակով իրականացվող կրթության ձև:

(3-րդ հոդվածը փոփ. 27.12.2001 ՀՕ-181, փոփ. 28.03.2002 ՀՕ-199, փոփ., լրաց., խմբ. 25.05.2005 ՀՕ-200, լրաց. 20.06.2007 ՀՕ-59, փոփ., խմբ. 23.12.2009 ՀՕ-3-Ն, լրաց., խմբ. 17.02.2011 ՀՕ-4-Ն, լրաց., խմբ., փոփ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 4. Կրթության բնագավառում պետական քաղաքականությունը

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն:

2) Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Այդ գործին իր նպաստն է բերում նաև Հայ Եկեղեցին:

4) Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության ներկայացմամբ հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովը:

5) Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է կրթության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են կրթության զարգացման պետական ծրագրին համապատասխան:

Հոդված 5. Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) կրթության մարդասիրական բնույթը, համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության,

անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության, ազգային արժանապատվության, հայրենասիրության, օրինականության և բնապահպանական աշխարհայացքի դաստիարակությունը.

2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ.

3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը.

4) միջազգային կրթական համակարգում ինտեգրացումը.

5) սփյուռքում հայապահպան կրթական գործունեությանը և Հայաստանի Հանրապետության հետ ընդհանուր ուսումնագիտական դաշտի ստեղծմանն աջակցելը.

6) ուսումնական հաստատություններում կրթության աշխարհիկ բնույթը.

7) ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը.

8) պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.

9) ուսումնական հաստատությունների ու դրանց կողմից տրվող ավարտական փաստաթղթերի իրավահավասար կարգավիճակի ապահովումը:

(5-րդ հոդվածը խմբ. 25.05.2005 ՀՕ-200)

Հոդված 6. Կրթական իրավունքի պետական երաշխիքները

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով:

2. Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ:

2.1. Պետությունը, համագործակցելով սոցիալական գործընկերների հետ, ապահովում է մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան, ինչպես նաև երաշխավորում ֆորմալ և ինֆորմալ կրթության համակարգի համաչափ գործարկումն ու արդյունքների ճանաչումը:

3. Պետությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների համար երաշխավորում է պետական ուսումնական հաստատություններում անվճար ընդհանուր միջնակարգ և մրցութային կարգով՝ անվճար նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկքաղաքացիները նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են Լեռնային ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ իրենց ընտրությամբ: Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով կարող է իրականացվել բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ:

4. Պետական հանրակրթական դպրոցների բոլոր դասարանների աշակերտներին պետությունը, պետական բյուջեի միջոցների հաշվին, անվճար ապահովում է դասագրքերով:

5. Արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին պետությունն աջակցում է՝ ստանալու համապատասխան մակարդակի կրթություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

6. Պետությունը անհրաժեշտ պայմաններ է ստեղծում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթություն ստանալու և սոցիալական հարմարվածությունն ապահովելու նպատակով:

7. Պետությունը նպաստում է, որ կրթական գործունեությանը մասնակցի նաև սփյուռքահայությունը:

(6-րդ հոդվածը խմբ. 20.06.2007 ՀՕ-59, լրաց. 17.02.2011 ՀՕ-4-Ն, լրաց., փոփ., խմբ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 7. Ուսուցման լեզուն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթությունն իրականացվում է «Լեզվի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 2

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 8. Կրթության համակարգը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության համակարգը պետական կրթական չափորոշիչների, պետական հավատարմագրման չափանիշների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների և կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է: ***(8-րդ հոդվածը լրաց. 26.02.2015 ՀՕ-1-Ն)***

Հոդված 9. Պետական կրթական չափորոշիչները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանվում և հրապարակվում են պետական կրթական չափորոշիչներ, որոնք շրջանավարտների կրթության մակարդակի և որակավորման գնահատման հիմքն են՝ անկախ նրանց ստացած կրթության ձևից և ուսումնական հաստատությունների կազմակերպական-իրավական ձևից:

Հոդված 10. Կրթական ծրագրերը

1. Կրթական ծրագիրը սահմանում է որոշակի մակարդակ և ուղղվածություն ունեցող կրթության բովանդակությունը, անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ծավալը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում իրականացվող կրթական ծրագրերն են՝

1) հանրակրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ).

2) մասնագիտական կրթական ծրագրեր (հիմնական և լրացուցիչ):

2. Հանրակրթական ծրագրերը նպատակաուղղված են անհատի համակողմանի զարգացմանը, նրա աշխարհայացքի ձևավորմանը, նախասիրություններին, հակումներին և ընդունակություններին համապատասխան մասնագիտական ծրագրերի ընտրության և յուրացման համար հիմքերի ստեղծմանը:

Հանրակրթական հիմնական ծրագրերն են՝

1) նախադպրոցական.

2) տարրական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ).

3) հիմնական (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ).

4) միջնակարգ (ընդհանուր, մասնագիտացված, հատուկ):

3. Մասնագիտական կրթական ծրագրերը նպատակաուղղված են կրթության հանրակրթական և մասնագիտական մակարդակների հաջորդականության միջոցով համապատասխան որակավորման մասնագետների պատրաստմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գիտելիքների ծավալի ընդլայնմանն ու որակավորման բարձրացմանը:

Մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

1) նախնական մասնագիտական (արհեստագործական).

2) միջին մասնագիտական.

3) բարձրագույն մասնագիտական.

4) հետբուհական մասնագիտական:

4. Ուսումնական հաստատություններում հանրակրթական և մասնագիտական հիմնական ծրագրերի յուրացման ժամկետները որոշվում են սույն օրենքով և համապատասխան պետական կրթական չափորոշիչով:

5. Լրացուցիչ կրթական ծրագրերը նպատակաուղղված են նախընթաց կրթության և ուսուցման արդյունքում կամ դրան զուգահեռ ձեռք բերված գիտելիքները, կարողությունները և (կամ) հմտությունները լրացնելուն, կատարելագործելուն և արդիականացնելուն:

(10-րդ հոդվածը խմբ. 23.12.2009 ՀՕ-3-Ն, խմբ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 11. Կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Կրթության բովանդակությունը հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացի հիմնական գործոններից մեկն է և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, նրա ինքնորոշման և ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:

2. Կրթության բովանդակությունն ապահովում է՝

1) սովորողների աշխարհաճանաչման ձևավորումը գիտելիքների և կրթական ծրագրերի ժամանակակից մակարդակին (աստիճանին) համապատասխան.

2) սովորողների կողմից ազգային և համամարդկային մշակութային արժեքների յուրացումը.

3) հասարակության կատարելագործումը և ազգի զարգացման նոր մակարդակ ապահովող ժամանակակից անհատի ու քաղաքացու ձևավորումը.

4) հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերարտադրությունն ու զարգացումը:

Հոդված 12. Կրթության ձևերը

1. Սովորողների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով:

2. Կրթության բոլոր ձևերի համար նույն կրթական ծրագրերի շրջանակներում գործում է միասնական պետական կրթական չափորոշիչը:

(12-րդ հոդվածը լրաց. 25.05.2005 ՀՕ-200)

Հոդված 13. Ուսումնական հաստատությունների տիպերը

1. Ուսումնական հաստատությունների տիպերն են՝

1) նախադպրոցական.

2) հանրակրթական.

21) նախնական մասնագիտական (արհեստագործական).

3) միջին մասնագիտական.

4) բարձրագույն մասնագիտական.

5) լրացուցիչ կրթության, այդ թվում՝ արտադպրոցական դաստիարակության.

6) հետբուհական մասնագիտական կրթության:

2. Սույն օրենքին համապատասխան՝ կրթական ծրագրեր կարող են իրականացվել նաև ոչ ուսումնական հաստատություններում՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի թույլտվությամբ:

(13-րդ հոդվածը լրաց. 27.12.2001 ՀՕ-181, լրաց. 25.05.2005 ՀՕ-200, փոփ. 23.12.2009 ՀՕ-3-Ն)

Հոդված 14. Կրթության գործընթացի կազմակերպումը

1. Կրթության գործընթացը կազմակերպվում է սույն օրենքին համապատասխան և կարգավորվում է ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով, ուսումնական ժամանակացույցով և դասացուցակներով:

2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության գործընթացը կարգավորվում է օրինակելի ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: Դրանք մշակում և հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, համապատասխան բնագավառի (ների) պետական կառավարման լիազորված մարմնի հետ համաձայնեցված և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հաստատած չափորոշիչներին համապատասխանեցված, հաստատում են նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունները:

4. Բարձրագույն կրթության ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը մշակում և հաստատում է բարձրագույն ուսումնական հաստատությունը: Դրանք ներկայացվում են կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

41. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը վերահսկում է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին:

5. Ուսումնական հաստատություններում ուսումնական տարվա սկիզբը և տևողությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչով:

6. Հիմնական, միջնակարգ կրթության և մասնագիտական կրթական ծրագրերի յուրացումն ավարտվում է շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ, որի անցկացման կարգը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

7. Դրսեկության ձևով հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական), մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

8. Հեռակա, հեռավար (դիստանցիոն) ձևերով մասնագիտական միջին և բարձրագույն կրթության կազմակերպումն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իսկ մասնագիտությունների ցանկը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

(14-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181, խմբ., փոփ., լրաց. 25.05.2005 ՀՕ-200, փոփ. 23.12.2009 ՀՕ-3-Ն)

Հոդված 15. Ուսումնական հաստատության ընդունելությանը ներկայացվող ընդհանուր պահանջները

1. Սույն օրենքին համապատասխան՝ նախադպրոցական, հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող-

ների ընդունելության պահանջները սահմանում է հիմնադիրը՝ հաշվի առնելով ուսումնական հաստատության առանձնահատկությունները, իսկ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

2. Ուսումնական հաստատությունը պարտավոր է դիմորդներին և նրանց ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել ուսումնական հաստատության կանոնադրությանը և կրթության գործընթացը կարգավորող մյուս փաստաթղթերին:

3. Ընդհանուր կրթությունն սկսվում է վեց տարեկանից (որը լրանում է մինչև տվյալ ուսումնական տարվա դեկտեմբերի վերջը):

4. Նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքով:

Բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների հրամանագրումն ավարտվում է տվյալ ուսումնական տարվա պարապմունքներն սկսվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

5. Բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում և մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը պաշտոնապես հրապարակում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը: Հաստատված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելն արգելվում է:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը ներառում է՝

1) կրթության ձևը (առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն), դրսեկություն).

2) մասնագիտություններն ըստ բուհերի.

3) յուրաքանչյուր մասնագիտության համար նախատեսված ընդունելության քննությունների առարկաների անվանումը.

4) քննության ձևը (մրցութային, ոչ մրցութային).

5) քննության տեսակը՝ գրավոր (թելադրություն, շարադրություն, թեստ), բանավոր, հարցազրույց և այլն:

6. Պետական հանրակրթական դպրոցների ավարտական, ինչպես նաև պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննությունների անցկացման համար նախապատրաստվող հարցաթերթիկները (հարցաշարերը, քննական հարցերը, խնդիրները և այլ առաջադրանքները) կազմվում են բացառապես պետական հանրակրթական դպրոցների (1-12-րդ դասարանների) կրթական ծրագրերով նախատեսված, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից պետական հանրակրթական դպրոցներում օգտագործման համար երաշխավորված և առնվազն մեկ ուսումնական տարվա ընթացքում պետական հանրակրթական դպրոցներում օգտագործված (դասավանդված) դասագրքերին, ձեռնարկներին, խնդրագրքերին և ժողովածուներին համապատասխան:

(15-րդ հոդվածը լրաց. 12.04.2001 ՀՕ-141, փոփ. 24.08.2001 ՀՕ-161, խմբ. 27.12.2001 ՀՕ-181, լրաց. 28.03.2002 ՀՕ-199, խմբ., լրաց. 25.05.2005 ՀՕ-200, խմբ., փոփ. 23.08.2006 ՀՕ-306, խմբ. 17.02.2011 ՀՕ-4-Ն, խմբ., փոփ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 16. Հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացումը

(վերնագիրը խմբ. 23.12.2009 ՀՕ-3-Ն)

1. Հանրակրթական հիմնական ծրագրերն իրականացվում են հանրակրթական ուսումնական հաստատություններում և օրենքով սահմանված կարգով՝ հանրակրթական ծրագրեր իրականացնող մասնագիտական ուսումնական հաստատություններում, կազմակերպություններում:

2. Հանրակրթական հատուկ ծրագրերը մշակվում են ընդհանուր հանրակրթական ծրագրերի հիման վրա՝ հաշվի առնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տարիքային, հոգեբանական, ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները և կարողությունները:

3. Հանրակրթական մասնագիտացված ծրագրերը մշակվում են ընդհանուր հանրակրթական ծրագրերի հիմքի վրա՝ ռազմական, սպորտի, գիտության, արհեստների կամ արվեստի որևէ բնագավառում սովորողների խորացված հանրակրթություն ապահովելու նպատակով:

4. Տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերը կառուցվում են հաջորդականության սկզբունքով:

Հանրակրթական հիմնական ծրագիրը (բացի նախադպրոցականից) չյուրացնելու դեպքում սովորողին չի թույլատրվում անցնել հանրակրթական ուսուցման հաջորդ աստիճան:

5. Հանրակրթական հիմնական ծրագրերի շրջանակներում տվյալ ուսումնական տարվա ծրագիրը չյուրացրած սովորողի հետագա ուսումնառությունը կարգավորվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

(16-րդ հոդվածը խմբ. 23.12.2009 ՀՕ-3-Ն)

Հոդված 17. Նախադպրոցական կրթությունը

1.Նախադպրոցական կրթության հիմնական խնդիրներն են՝

1) երեխայի ֆիզիկական, բարոյական և մտավոր զարգացման հիմքերի ստեղծումը.

2) մայրենի լեզվով հաղորդակցվելու և այդ հիմքի վրա օտար լեզուների ուսումնասիրման նախադրյալների ապահովումը.

3) հաշվելու տարրական կարողությունների զարգացումը.

4) վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը.

5) հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացում ձևավորելը.

6) աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ձեռքբերումը.

7) դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

2. Նախադպրոցական կրթության ծրագրերի իրականացման գործում գլխավոր դերը պատկանում է ընտանիքին: Պետությունը պայմաններ է ստեղծում ընտանիքում երեխաների դաստիարակությունը կազմակերպելու համար:

3. Ընտանիքին աջակցելու համար պետությունը ստեղծում է նախադպրոցական հիմնարկներ՝ տարբերակված ծրագրերով մսուր-մանկապարտեզներ և մանկապարտեզներ:

Հոդված 18. Հանրակրթությունը

(վերնագիրը փոփ. 23.12.2009 ՀՕ-3-Ն)

1. Հանրակրթության նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրան ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթությանը նախապատրաստելը:

2. Հանրակրթության հիմնական խնդիրներն են՝

1) սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը.

2) համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացի ձևավորելը.

3) սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագիր իրականացնելը:

3. Միջնակարգ կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով.

1) տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ).

2) միջին դպրոց (5-9-րդ դասարաններ).

3) ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):

4. Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը:

5. Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:

Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում են հիմնական դպրոցը:

6. Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Ավագ դպրոցում, սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան, կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում:

Միջին և ավագ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումն ավարտվում է գիտելիքների պարտադիր ամփոփիչ ատեստավորմամբ:

7. Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է: Հիմնական ընդհանուր կրթության պարտադիր լինելու պահանջը պահպանվում է մինչև սովորողի 16,5 տարին լրանալը, եթե այն չի բավարարվել ավելի վաղ: 16,5 տարին լրանալուց հետո սովորողը ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ կարող է թողնել դպրոցը:

Պարտադիր հիմնական ընդհանուր կրթության պահանջը չի տարածվում կրթության առանձնահատուկ

պայմանների կարիք ունեցող երեխաների որոշակի կատեգորիաների վրա, որոնք սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

(18-րդ հոդվածը փոփ. 24.08.2001 ՀՕ-161, խմբ. 23.08.2006 ՀՕ-306, փոփ., խմբ. 23.12.2009 ՀՕ-3-Ն, լրաց. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 19. Հատուկ կրթությունը

(վերնագիրը փոփ. 23.12.2009 ՀՕ-3-Ն)

1. ***(մասը հանվել է 20.06.2007 ՀՕ-59)***

2. Պետությունն ստեղծում է հատուկ հաստատություններ (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ)՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով: Հատուկ հաստատությունների տիպերը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

3. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը ծնողների ընտրությամբ կարող է իրականացվել ինչպես ընդհանուր հանրակրթական, այնպես էլ հատուկ հաստատություններում՝ հատուկ ծրագրերով:

4. ***(մասը հանվել է 20.06.2007 ՀՕ-59)***

5. Վարքի շեղում ունեցող անչափահասների ուսուցումը և վերադաստիարակումն իրականացնում են հանրակրթական դպրոցները՝ հաշվի առնելով սովորողների հոգեբանական առանձնահատկությունները:

(19-րդ հոդվածը փոփ. 20.06.2007 ՀՕ-59)

Հոդված 20. Արտադպրոցական դաստիարակություն

1. Արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, և նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը, ռազմահայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերմանը:

2. Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների, ակումբների, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայանների, մարզադպրոցների, առողջարարական ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպությունների միջոցով:

Հոդված 21. Մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը

1. Մասնագիտական ուսումնական հաստատություններն իրականացնում են սույն օրենքով նախատեսված, կրթական տարբեր մակարդակներին բավարարող կրթական ծրագրեր՝ նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական որակավորմամբ կադրեր պատրաստելու նպատակով:

2. Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատությունների կրթական մասնագիտությունների ցանկը, ինչպես նաև համապատասխան մասնագիտական որակավորումների ուսուցման տևողությունը՝ ըստ մասնագիտությունների, և կրթության հիմքը կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

(21-րդ հոդվածը խմբ. 25.05.2005 ՀՕ-200)

Հոդված 22. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը

1. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության նպատակը նախնական մասնագիտական (արհեստագործական) որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է:

2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, այլ մասնագիտական ուսումնական հաստատություններում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում:

3. Համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում նախնական մասնագիտական արհեստագործական կրթությունը կարող է իրականացվել նաև անհատական մասնագիտական ուսուցման ձևով (վարպետային ուսուցում), որի իրականացման կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության հիմքը ըստ մասնագիտությունների սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

(22-րդ հոդվածը փոփ. 27.12.2001 ՀՕ-181, խմբ. 25.05.2005 ՀՕ-200)

Հոդված 23. Միջին մասնագիտական կրթությունը

1. Միջին մասնագիտական կրթության նպատակը առնվազն հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետներ պատրաստելն է:

2. Մասնագիտությունների ցանկը, որոնց գծով թույլատրվում է հիմնական ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթության կազմակերպում, հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

3. Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում և ուսումնարաններում, որոնք կարող են իրականացնել նաև հանրակրթական և արհեստագործական կրթական ծրագրեր:

4. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ավարտական ատեստավորում անցած շրջանավարտներին շնորհվում է մասնագետի որակավորում:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ՝ երկրորդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ: Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

(23-րդ հոդվածը փոփ. 27.12.2001 ՀՕ-181, խմբ. 25.05.2005 ՀՕ-200, խմբ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 24. Բարձրագույն մասնագիտական կրթությունը

1. Բարձրագույն մասնագիտական կրթության նպատակը բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերարտադրումն է, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տարատեսակները՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակը որոշվում է նրա կրթական ծրագրերով, կազմակերպական-իրավական ձևով, պետական հավատարմագրման առկայությամբ:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանվում են բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման հետևյալ աստիճանները.

1) բակալավր.

2) դիպլոմավորված մասնագետ.

3) մագիստրոս:

5. Դիպլոմավորված մասնագետ պատրաստող բուհերի մասնագիտությունների ցանկը կրթության կառավարման պետական լիազորված մարմնի ներկայացմամբ հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

6. Բարձրագույն ուսումնական հաստատությունը, իր բնույթին համապատասխան և օրենքով սահմանված կարգով, կրթության պետական կառավարման մարմնի հետ համաձայնեցրած մասնագիտությունների գծով կարող է իրականացնել նաև հանրակրթական, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր:

(24-րդ հոդվածը խմբ. 17.02.2011 ՀՕ-4-Ն, լրաց. 26.02.2005 ՀՕ-200)

Հոդված 25. Հետբուհական մասնագիտական կրթությունը

1. Հետբուհական մասնագիտական կրթության նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է:

2. Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով:

(25-րդ հոդվածը փոփ. 27.12.2001 ՀՕ-181, փոփ. 25.05.2005 ՀՕ-200)

Հոդված 26. Լրացուցիչ կրթությունը

1. Լրացուցիչ կրթական ծրագրերն իրականացվում են անձի ամբողջ կյանքի ընթացքում մասնագիտական և անձնական կրթական պահանջմունքները բավարարելու նպատակով և համարվում են ոչ ֆորմալ ուսուցում ապահովելու միջոց:

2. Լրացուցիչ կրթական ծրագրերի խնդիրն է կատարելագործել, արդիականացնել և լրացնել մինչ այդ ձեռք բերված (նախընթաց) գիտելիքները, կարողությունները, հմտությունները և արժեքները:

3. Լրացուցիչ կրթական ծրագրերը կազմակերպվում են վերապատրաստումների, խմբային և անհատական մասնագիտական ուսուցման և կարճաժամկետ ուսուցման դասընթացների միջոցով, որոնց ուսումնառության արդյունքները կարող են օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատվել և ճանաչվել:

4. Լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը, ինչպես նաև ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերով շնորհված միասնական նմուշի փաստաթուղթը (վկայականը և ներդիրը) կարող է գործատուի կողմից ընդունվել որպես մասնագիտական գործունեության կամ որոշակի զբաղմունքի համար անհրաժեշտ պարտադիր նախապայման:

(26-րդ հոդվածը խմբ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

ԳԼՈՒԽ 3

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 27. Ուսումնական հաստատության կարգավիճակը

1. Պետական ուսումնական հաստատությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որը, սույն օրենքին, օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան, ձեռք է բերում իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

2. Պետական ուսումնական հաստատությունն, իր գործունեության նպատակին համապատասխան, կարող է իրականացնել վճարովի ուսումնական, հետազոտական և գիտաարտադրական ծառայություններ և վճարովի ուսուցում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Պետական ուսումնական հաստատությունն ունի հաշվեկշիռ, նախահաշիվ և բանկային հաշիվ:

4. ***(կետն ուժը կորցրել է 27.12.2001 ՀՕ-181)***

5. Ոչ պետական ուսումնական հաստատությունները կարող են ունենալ օրենքով նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև:

(27-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181, փոփ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 28. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը և ակադեմիական ազատությունները

(վերնագիրը խմբ. 25.05.2005 ՀՕ-200)

1. Բուհական (ռազմաուսումնական հաստատության) պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները և ուսանողները (կուրսանտները, ունկնդիրները) օժտված են ակադեմիական ազատություններով: Նրանք իրավունք ունեն մասնակցելու համալսարանի գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը և ընտրովի մարմինների աշխատանքին:

2. Պրոֆեսորադասախոսական կազմը, պետական կրթական չափորոշիչներին համապատասխան, ազատ է դասավանդվող ուսումնական նյութի շարադրման և դասավանդման մեթոդների ընտրության մեջ:

3. Բուհական գիտաշխատողները սեփական նախաձեռնությամբ հետազոտական թեմաների ընտրությունը և մշակումն իրականացնելիս ազատ են:

4. Ուսանողները (կուրսանտները, ունկնդիրները) ազատ են գիտելիքներ ստանալու, հետազոտություններով զբաղվելու՝ ըստ իրենց հակումների: Նրանք կարող են մասնակցել ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատել պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության ընտրովի պաշտոններն են՝ ռեկտոր, ռազմաուսումնական հաստատության պետի ուսումնական գծով տեղակալ, մասնաճյուղի (կրթահամալիրի) տնօրեն, ֆակուլտետի դեկան (ուսումնական ստորաբաժանման ղեկավար, ռազմաուսումնական հաստատության ֆակուլտետի պետ), ամբիոնի վարիչ (ռազմաուսումնական հաստատության ամբիոնի պետ, ցիկլի պետ, խմբի պետ), պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս: Այդ պաշտոնները զբաղեցվում են բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում՝ բարձրագույն ուսումնական հաստատության (մասնաճյուղի) խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետի (ուսումնական ստորաբաժանման) խորհուրդ, հավակնորդների թեկնածությունները քննարկելու և գաղտնի (փակ) քվեարկությամբ ընտրելու արդյունքով:

6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է պետական պատվեր՝ ըստ մասնագիտությունների և ուսումնական հաստատությունների:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի 10 տոկոսի չափով իրենց միջոցների հաշվին ըստ առաջադիմության փոխհատուցում են վճարովի ուսուցման համակարգի ուսանողների ուսման վարձը՝ ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազոր մարմնի հաստատած՝ մասնագիտություններին հատկացված տեղերի քանակի:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատած վճարովի ընդհանուր տեղերի սահմանում բուհերի առաջարկների հիման վրա, ըստ բուհերի և մասնագիտությունների, հաստատում է վճարովի ուսուցման տեղերը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն 7 տոկոսի չափով, իր միջոցների հաշվին, հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիա-

լական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում:

Վճարովի հիմունքներով սովորողներն ուսման վարձը կարող են մուծել ըստ կիսամյակների:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները ըստ անհրաժեշտության սահմանում են նաև ուսման վարձի ամսական վճարման մեխանիզմներ:

7. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իրավասու է տնօրինելու սեփական ֆինանսական միջոցները՝ ապահովելով մասնաճյուղի, ֆակուլտետի (ուսումնական ստորաբաժանման) ֆինանսական գործունեության ինքնուրույնությունը՝ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

Բարձրագույն ուսումնական հաստատության ծախսերի նախահաշվի նախագիծը ձևավորվելուց հետո յուրաքանչյուր օրացուցային տարվա վերջում հաստատվում է բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդում և ներկայացվում կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

8. Արցախի պետական համալսարանը կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի կարգավիճակը սահմանվում է օրենսդրությամբ:

8.1. Ռազմաուսումնական հաստատությունների կարգավիճակի առանձնահատկությունները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

9. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի մրցույթից դուրս մնացած դիմորդները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կարող են մասնակցել պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացրած հայտերի հիման վրա կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հատկացված վճարովի տեղերի մրցույթին:

10. Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման մարմիններում անդամների թվի առնվազն 25 տոկոսն ուսանողներն են, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է համապատասխան մակարդակի ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմինը՝ ուսանողական խորհուրդը: Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողական խորհրդի կանոնադրությունը հաստատվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:

(28-րդ հոդվածը լրաց. 12.04.2001 ՀՕ-141, փոփ., խմբ. 27.12.2001 ՀՕ-181, խմբ., փոփ. 25.05.2005 ՀՕ-200, խմբ. 17.02.2011 ՀՕ-4-Ն, լրաց., փոփ., խմբ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 29. Ուսումնական հաստատության հիմնադիրը (հիմնադիրները)

1. Պետական ուսումնական հաստատության հիմնադիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն է՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կամ պետական համապատասխան լիազորված մարմնի:

2. Համայնքային ուսումնական հաստատության հիմնադիրը համայնքն է՝ ի դեմս համայնքի ինքնակառավարման մարմինների:

3. Ոչ պետական ուսումնական հաստատության հիմնադիր կարող են լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձինք:

4. Ռազմական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններ կարող է հիմնադրել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 30. Ուսումնական հաստատության ստեղծումը
(վերնագիրը խմբ. 27.12.2001 ՀՕ-181)

1. Ուսումնական հաստատությունը ստեղծվում է հիմնադրի (հիմնադիրների) որոշմամբ:

2. Ուսումնական հաստատությունը ստեղծված է համարվում հիմնադրի (հիմնադիրների) կողմից դրա կանոնադրությունը հաստատելու և օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալու պահից:

(30-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181)

Հոդված 31. Ուսումնական հաստատության անվանումը և գտնվելու վայրը

1. Ուսումնական հաստատությունն ունի անվանում, որում նշվում է դրա կազմակերպական-իրավական ձևը, գործունեության բնույթը և գտնվելու վայրը:

2. Ուսումնական հաստատության գտնվելու վայրը դրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:

3. Ուսումնական հաստատության և դրա մասնաճյուղերի անվանումներն ու գտնվելու վայրերը նշվում են հաստատության կանոնադրությունում:

Հոդված 32. Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը

1. Ուսումնական հաստատության հիմնադիր փաստաթուղթը դրա հիմնադրի (հիմնադիրների) հաստատած կանոնադրությունն է:

2. Կանոնադրության պահանջները պարտադիր են ուսումնական հաստատության և դրա հիմնադիրների համար:

3. Ուսումնական հաստատության կանոնադրությունում նշվում են հաստատության անվանումը, կազ-

մակերպական-իրավական ձևը, հաստատության գտնվելու վայրը, գործունեության առարկան և նպատակները, կառավարման կարգը, տվյալներ մասնաճյուղերի վերաբերյալ, ուսումնական հաստատության գույքի ձևավորման աղբյուրները, կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը, ուսումնական հաստատության լուծարման դեպքում՝ գույքի տնօրինման կարգը:

Ուսումնական հաստատության կանոնադրությունը կարող է պարունակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:

Հոդված 33. Ուսումնական հաստատության վերակազմակերպումը
(վերնագիրը փոփ. 27.12.2001 ՀՕ-181)

1. Ուսումնական հաստատությունը կարող է վերակազմակերպվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և այլ օրենքներին համապատասխան:

2. Ուսումնական հաստատությունը կարող է վերակազմակերպվել միաձուլման, միացման, բաժանման, առանձնացման և վերակազմավորման ձևերով:

(33-րդ հոդվածը փոփ. 27.12.2001 ՀՕ-181)

Հոդված 34. Ուսումնական հաստատության մասնաճյուղերը

1. Ուսումնական հաստատությունը կարող է ստեղծել մասնաճյուղեր:

2. Մասնաճյուղն իրավաբանական անձ չէ և գործում է ուսումնական հաստատության հաստատած կանոնադրության համաձայն:

Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի ստեղծումը և գործունեությունը կարգավորվում են սույն օրենքով կամ միջպետական պայմանագրերով:

Մասնաճյուղի ղեկավարները նշանակվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված կարգով:

3. Մասնաճյուղերը գործում են իրենց ստեղծող ուսումնական հաստատությունների անունից: Ուսումնական հաստատությունները պատասխանատվություն են կրում իրենց մասնաճյուղերի գործունեության համար:

Հոդված 35. Ուսումնական հաստատության լուծարումը

1. Ուսումնական հաստատությունը լուծարվում է՝

1) հիմնադիրների կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշմամբ.

2) դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելով՝ կապված դրա ստեղծման ժամանակ թույլ տրված օրենքի կամ իրավական ակտերի խախտումների հետ.

3) դատարանի վճռով՝ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու դեպքում.

4) ուսումնական հաստատության սնանկության հետևանքով.

5) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2. Ուսումնական հաստատությունը լուծարվելիս դրա պարտատերերի պահանջները բավարարվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

3. Պարտատերերի պահանջները բավարարելուց հետո ուսումնական հաստատության մնացած գույքը հանձնվում է դրա հիմնադիրներին, եթե օրենքով, այլ իրավական ակտերով կամ ուսումնական հաստատության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

4. Ուսումնական հաստատության լուծարումը համարվում է ավարտված, իսկ դրա գոյությունը՝ դադարեցված, իրավաբանական անձանց պետական գրանցման մատյանում այդ մասին գրառում կատարելու պահից:

5. Լուծարված ուսումնական հաստատության սովորողների հետագա ուսուցման կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

(35-րդ հոդվածը փոփ. 27.12.2001 ՀՕ-181, փոփ., 26.02.2015 ՀՕ-1-Ն)

ԳԼՈՒԽ 4

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 36. Կրթության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության իրավասությունը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝

1) ապահովում է պետական կրթական քաղաքականության իրականացումը.

2) հաստատում է պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը.

21) սահմանում է որակավորումների ազգային շրջանակը և հաստատում է կրթության որակավորման աստիճանների ընդհանրական բնութագրերը.

3) հաստատում է ուսուցանվող մասնագիտությունների ցանկը.

4) հաստատում է հանրակրթական,նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության պետական պատվերը.

5) հաստատում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները.

6) հաստատում է պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը.

6.1) սահմանում է լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և իրականացման կարգը.

6.2) սահմանում է ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման և ճանաչման կարգը:

7) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

(36-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181, լրաց. 25.05.2005 ՀՕ-200, լրաց. 17.02.2011 ՀՕ-4-Ն, լրաց. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 37. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունը

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝

1) մշակում է կրթության զարգացման պետական ծրագիրը, պետական կրթական չափորոշիչների ձևավորման և հաստատման կարգը.

2) վերահսկողություն է իրականացնում կրթության զարգացման պետական ծրագրի և պետական կրթական չափորոշիչների կիրառման նկատմամբ.

3) ապահովում է օրինակելի հանրակրթական ծրագրերի, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի, դասագրքերի և ուսումնական ձեռնարկների մշակումը և հրատարակումը.

4) իրականացնում է ուսումնական հաստատությունների լիցենզավորումը և պետական հավատարմագրումը.

5) մշակում է պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունները,

6) հաստատում է ուսումնական հաստատությունների մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման կարգը.

61) հաստատում է որակավորման բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների.

7) ձևավորում է ուսումնական մասնագիտությունների ցանկերը.

8) մշակում է հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական պատվերը.

9) հաստատում է պետական և հավատարմագրված ոչ պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կանոնները, վերահսկում է դրանց իրականացումը.

10) հաստատում է ուսումնական հաստատությունների սովորողների գիտելիքների փոխադրական և ամփոփիչ ստուգման կարգը.

11) սահմանված կարգով հաստատում է հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների շնորհած պատվավոր կոչումները և տիտղոսները.

12) մշակում է կրթության բոլոր աստիճանների գծով պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը.

13) սահմանում է օտարերկրյա պետությունների կրթական փաստաթղթերի համարժեքության որոշման և ճանաչման կարգը.

14) ապահովում է պետական ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի ձևավորումը, իրականացումը և վերահսկումը.

15) համաձայնություն է տալիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժինների ղեկավարների և հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների նշանակման ու ազատման վերաբերյալ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

15[1]) համաձայնություն է տալիս պետական համապատասխան լիազորված մարմնի կողմից ուսումնական հաստատությունների վերակազմակերպման և լուծարման վերաբերյալ.

16) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորություններ:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը սույն հոդվածի 3-րդ, 6-րդ, 6.1-ին, 7-րդ, 10-րդ և 14-րդ կետերով սահմանված իրավասությունները ռազմական կրթության ոլորտում իրականացնում է պետական համապատասխան լիազորված մարմնի հետ համատեղ:

(37-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181, լրաց. 25.05.2005 ՀՕ-200, լրաց. 17.02.2011 ՀՕ-4-Ն, խմբ., լրաց. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 37[1]. Կրթության պետական տեսչությունը

Կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովումը վերահսկողական գործառույթների միջոցով իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կրթության պետական տեսչությունը, որի գործունեությունը կարգավորվում է «Կրթության պետական տեսչության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

(37[1]-րդ հոդվածը լրաց. 31.05.2006 ՀՕ-287)

Հոդված 38. Հանրակրթության բնագավառում Ստեփանակերտի քաղաքապետի և շրջանային վարչակազմի ղեկավարի իրավասությունները

Ստեփանակերտի քաղաքապետը և շրջանային վարչակազմի ղեկավարը՝

1) ապահովում են Ստեփանակերտ քաղաքի և շրջանի տարածքներում պետական կրթական քաղաքականության իրականացումը.

2) վերահսկում են նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը, ապահովում են կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացումը՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան.

3) համակարգում և վերահսկում են դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում են նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում.

4) ապահովում են պետական ուսումնական հաստատություններին օգտագործման իրավունքով հանձնված շենքերի կառուցումը, շահագործումը և պահպանումը.

5) իրականացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններ:

(38-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181)

Հոդված 39. Հանրակրթության բնագավառում համայնքի ղեկավարի իրավասությունը

Համայնքի ղեկավարը պարտադիր լիազորության կարգով՝

1) ուսումնական հաստատությունների ինքնակառավարման սկզբունքին համապատասխան՝ աջակցում է համայնքի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացմանը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) իրականացնում է նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովում է նրանց ընդգրկումն ուսումնական հաստատություններում.

3) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 40. Ուսումնական հաստատության իրավասությունը և կառավարումը

1. Ուսումնական հաստատությունն իր իրավասության շրջանակներում կազմակերպում ու իրականացնում է ընդունելության և ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման, կազմակերպման և իրականացման, կադրերի ընտրության և տեղաբաշխման, գիտական, ֆինանսական, տնտեսական և այլ գործունեություն՝ սույն օրենքի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այլ օրենքներին, իրավական ակտերին և տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

2. Ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է սույն օրենքին, այլ իրավական ակտերին և ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

3. Ուսումնական հաստատությունը կառավարվում է միանձնյա ղեկավարման և ինքնավարության սկզբունքների զուգորդմամբ:

4. Ուսումնական հաստատությունների կառավարման մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը, ուսումնական հաստատության խորհուրդը, ընդհանուր ժողովը, գիտական խորհուրդը, մանկավարժական խորհուրդը, գործադիր մարմինը: Ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները, դրանց ձևավորման կարգը և լիազորությունները սահմանվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

5. Ուսումնական հաստատությունը ղեկավարում է տնօրենը, ռեկտորը (պետը), որը նշանակվում (ընտրվում) և ազատվում է ուսումնական հաստատության կանոնադրության համաձայն:

Պետական ուսումնական հաստատության տնօրենը, ռեկտորը (պետը) չի կարող միաժամանակ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտամանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

6. Ուսումնական հաստատության կառավարման բարձրագույն և գործադիր մարմինների միջև լիազորությունները սահմանազատվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

(40-րդ հոդվածը լրաց. 12.04.2001 ՀՕ-141, փոփ. 27.12.2001 ՀՕ-181, լրաց. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 41. Կրթական գործունեության լիցենզավորումը

1. Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում: Լիցենզիան տրվում է ուսումնական հաստատությանը հետևյալ պահանջների բավարարման դեպքում.

1) հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ.

2) լաբորատոր բազա և ուսումնական տարածք.

3) ուսումնամեթոդական ապահովում.

4) գրադարանային-տեղեկատվական համակարգ.

5) ուսումնաարտադրական պրակտիկայի բազա:

2. Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Կրթական ծրագրերի լիցենզավորումն իրականացվում է օրենքով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

(41-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181)

Հոդված 42. Պետական հավատարմագրումը

1. Միջին և բարձրագույն մասնագիտական կրթության գծով պետական հավատարմագրումն իրականացվում է ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների:

2. Հավատարմագրման կարգը, չափանիշները և հավատարմագրի գործողության ժամկետները հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ:

3. Անկախ մասնագիտական ուսումնական հաստատության գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից՝ պետական հավատարմագրումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Պետական հավատարմագրման պայմաններն են՝

1) պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսուցման որակի ապահովումը.

2) *(կետն ուժը կորցրել է 26.02.2015 ՀՕ-1-Ն).*

3) ուսումնական հաստատության գծով՝ այդ հաստատության մասնագիտությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայությունը:

5. Նոր մասնագիտություններ բացելու դեպքում ուսումնական հաստատությունը պահպանում է իր պետական հավատարմագրված կարգավիճակը, եթե ապահովված են 42-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները:

6. Պետական ուսումնական հաստատությունները և դրանց մասնագիտությունները, ինչպես նաև ոչ պետական ուսումնական հաստատություններում բժշկական մասնագիտությունները պարտադիր պետք է անցնեն հավատարմագրման գործընթաց:

7. Ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է առանձին փուլերով՝ ըստ կրթական ծրագրերի:

8. Ուսումնական հաստատության առանձնացված կառուցվածքային ստորաբաժանումների (կրթահամալիրների, մասնաճյուղերի) կրթական գործունեությունը լիցենզավորվում, իսկ այդ ստորաբաժանումները և դրանց մասնագիտությունները հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով, սույն օրենքով սահմանված կարգով:

9. Պետական հավատարմագրման վկայականը հաստատում է ուսումնական հաստատության կողմից իրականացվող կրթական ծրագրերի մակարդակը, դրանց բովանդակության և շրջանավարտների որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

10. Լիցենզիա և պետական հավատարմագրման վկայական շնորհելու կամ այդ փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափերով:

(42-րդ հոդվածը փոփ., խմբ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 43. Պետական վերահսկողությունն ուսուցման որակի նկատմամբ

1. Ուսումնական հաստատությունների լիցենզավորման համար եզրակացություն տալու նպատակով կրթության պետական կառավարման լիազորված մարմինը ստեղծում է լիցենզավորման հանձնաժողով:

2. *(մասն ուժը կորցրել է 26.02.2015 ՀՕ-1-Ն)*

3. *(մասն ուժը կորցրել է 26.02.2015 ՀՕ-1-Ն)*

4. *(մասն ուժը կորցրել է 26.02.2015 ՀՕ-1-Ն)*

5. *(մասն ուժը կորցրել է 26.02.2015 ՀՕ-1-Ն)*

6. *(մասն ուժը կորցրել է 26.02.2015 ՀՕ-1-Ն)*

7. Ուսումնական հաստատություններում և հանրակրթական ու նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր իրականացնող այլ կազմակերպություններում կրթական ծրագրերի իրականացման արդյունավետության գնահատման, կրթության որակի ապահովման պետական վերահսկողություն իրականացնելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ստեղծում է կրթության պետական տեսչություն:

(43-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181, լրաց. 31.05.2006 ՀՕ-287, խմբ., փոփ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 44. Ուսումնական հաստատության ավարտական փաստաթուղթը

1. Ուսումնական հաստատությունն կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորում անցած անձանց հանձնում է համապատասխան փաստաթուղթ (վկայական, ատեստատ, դիպլոմ):

2. Ուսումնական հաստատությունները հավատարմագրված մասնագիտությունների գծով ամփոփիչ ատեստավորում անցած անձանց հանձնում են ավարտական փաստաթուղթ (ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտներին՝ զինվորական և դրան համապատասխանող քաղաքացիական կրթության ավարտական փաստաթուղթ):

3. Ոչ պետական հանրակրթական հաստատությունները պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու իրավունք են ստանում լիցենզավորման պահից:

4. Ավարտական փաստաթուղթը հավատարմագրված մասնագիտությունների գծով ուսումնական հաստատություններում հաջորդ աստիճանի կրթություն ստանալու համար պարտադիր պայման է:

5. Պետական մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար բարձրագույն կրթության մասին վկայող փաստաթուղթը պետական կամ հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթուղթն է, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

(44-րդ հոդվածը լրաց. 27.12.2001 ՀՕ-181, լրաց., փոփ., խմբ. 25.05.2005 ՀՕ-200)

ԳԼՈՒԽ 5
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 45. Սեփականության հարաբերությունները կրթության համակարգում

1. Պետական ուսումնական հաստատության գործունեությունն ապահովելու նպատակով՝ վերջինիս սեփականության կամ օգտագործման (անհատույց կամ հատուցելի) իրավունքով շենքեր, շինություններ, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ հանձնվող պետական գույքի տեսակները հաստատում է կառավարությունը:

2. Պետական ուսումնական հաստատությունը պատասխանատու է սեփականատիրոջ գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման համար:

3. Ոչ պետական ուսումնական հաստատությունների սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք, բացի գույքի առանձին տեսակների համար օրենքով նախատեսված սահմանափակումներից:

4. Պետական ուսումնական հաստատությունների գույքն օտարվելու դեպքում կարող է օգտագործվել միայն ուսումնական նպատակներով:

(45-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181, լրաց. 25.05.2005 ՀՕ-200)

Հոդված 46. Պետական և համայնքային ուսումնական հաստատության ֆինանսավորումը

1. Ուսումնական հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը:

2. Պետությունը յուրաքանչյուր նոր ուսումնական տարում երաշխավորում է կրթության կարիքների համար միջոցների հատկացումը՝ նրա առաջանցիկությունն ապահովող չափաքանակով: Պետական բյուջեի ընթացիկ ծախսերում կրթության ֆինանսավորման տոկոսային հարաբերությունը չպետք է ցածր լինի նախորդ բյուջետային տարվա համապատասխան ցուցանիշից:

3. Պետական բյուջեից պետական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացվում է պետական պատվերի (բացի հեռակա ուսուցումից), սուբսիդիայի, պետական սեփականություն հանդիսացող գույքի պահպանության վճարի և այլ ձևերով: Պետական պատվերով ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝ մեկ սովորողի հաշվարկով՝ ըստ ուսումնական հաստատության տիպի, իսկ առանձին դեպքերում (լեռնային և սահմանամերձ շրջաններ)՝ հատուկ չափաքանակներով:

4. Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել պետական բյուջեից ֆինանսավորման չափերի նվազեցմանը:

5. Ուսումնական հաստատությունը չի կարող վճարովի ուսումնական գործունեություն իրականացնել բյուջեից ֆինանսավորվող կրթական գործունեության փոխարեն:

6. Ուսումնական հաստատության ֆինանսավորման հիմնական աղբյուրները պետական և համայնքների բյուջեներն են:

Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները,

2) սեփական միջոցները, որոնք գոյանում են վճարովի ուսումնական, հետազոտական, գիտաարտադրական, խորհրդատվական, հրատարակչական և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեության այլ ձևերից.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներ:

7. Պետությունը կրթության բնագավառում ապահովում է բարենպաստ հարկային քաղաքականություն:

(46-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181)

Հոդված 47. Ոչ պետական ուսումնական հաստատությունների միջոցները

1. Ոչ պետական ուսումնական հաստատությունների գործունեության ֆինանսավորումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով:

2. Ոչ պետական ուսումնական հաստատության ֆինանսավորման չափանիշները մեկ սովորողի հաշվարկով չեն կարող ցածր լինել պետական համանման ուսումնական հաստատությունների համար պետական չափորոշիչով սահմանված ֆինանսավորման չափանիշներից:

Հոդված 48. Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան

Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան, որն անհրաժեշտ է կրթական, հետազոտական, գիտաարտադրական գործունեության և կրթության բնագավառի այլ խնդիրների լուծման համար, ստեղծվում և զարգացվում է բյուջետային, ինչպես նաև սեփական միջոցների հաշվին՝ կրթության զարգացման պետական ծրագրի և ուսումնական հաստատությունների զարգացման ծրագրերի հիման վրա:

ԳԼՈՒԽ 6

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հոդված 49. Սովորողների իրավունքները և սոցիալական պաշտպանվածությունը

1. Ուսումնական հաստատությունը նպաստում է սովորողների կենցաղի, սննդի, առողջության պահպանման, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:

2. Արգելվում է սովորողներին ներգրավել աշխատանքի՝ առանց վերջիններիս և (կամ) նրանց ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնության: Սովորողների նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման մեթոդների կիրառումն արգելվում է:

3. Բացառիկ ընդունակություններ դրսևորած երեխաների համար կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով կարող են ստեղծվել հանրակրթական համապատասխան հաստատություններ:

4. Պետությունն ապահովում է առանց ծնողական խնամքի մնացած և ծնողական խնամքից զուրկ երեխաների ուսուցումը պետական հանրակրթական հաստատություններում:

5. Կրթության հատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար հանրակրթական հաստատությունների ֆինանսավորումն իրականացվում է բարձրացված չափաքանակներով:

6. Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողները կրթաթոշակ են ստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափերով:

7. Ռազմաուսումնական հաստատությունների սովորողները դրամական բավարարմամբ, հանդերձանքով, սննդով և կացարանով ապահովվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Միջին և բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողներն իրավունք ունեն տվյալ կամ այլ հաստատությունում վճարովի հիմունքներով ստանալ երկրորդ մասնագիտություն՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

9. Սովորողներն ատեստավորումը հաջողությամբ անցնելու դեպքում, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով, իրավունք ունեն տեղափոխվել համապատասխան մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական այլ հաստատություն:

10. Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների նախորդ տարիների շրջանավարտներն իրավունք ունեն ստանալու պետական նմուշի դիպլոմ՝ մինչև 2016-2017 ուսումնական տարվա ավարտը հանձնելով ամփոփիչ ատեստավորման քննություններ՝ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերում ըստ մասնագիտությունների՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած մասնագիտական-առարկայական ծրագրերի համաձայն: Ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը մինչև 2011 թվականի ապրիլի 1-ը:

(49-րդ հոդվածը փոփ., լրաց. 17.02.2011 ՀՕ-4-Ն, խմբ., լրաց., փոփ. 26.02.2015 ՀՕ-1-Ն)

Հոդված 50. Ուսումնական հաստատությունների աշխատողների սոցիալական երաշխիքները

1. Ուսումնական հաստատության և դրա աշխատողների միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2. Պետական ուսումնական հաստատությունների վարչական և մանկավարժական (պրոֆեսորադասախոսական) կազմի աշխատանքի վարձատրության դրույքաչափը չի կարող ցածր լինել բյուջետային հիմնարկների աշխատողների միջին աշխատավարձից:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը հավելյալ վարձատրություն է սահմանում սահմանամերձ, բարձր լեռնային և լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչների համար:

4. Ուսումնական հաստատությունն ապահովում է աշխատողների մասնագիտական որակի բարձրացման և վերապատրաստման գործընթացները:

(50-րդ հոդվածը լրաց. 12.04.2001 ՀՕ-141)

ԳԼՈՒԽ 7

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Հոդված 51. Միջազգային համագործակցությունը կրթության բնագավառում

1. Կրթության բնագավառում միջազգային համագործակցությունն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան: Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

2. Ուսումնական հաստատություններն իրավունք ունեն համագործակցել օտարերկրյա ուսումնական, գիտական և այլ կազմակերպությունների հետ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:

ԳԼՈՒԽ 8

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹ

Հոդված 52. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԳԼՈՒԽ 9

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 53. Սույն օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ կետն ուժի մեջ է մտնում միջին մասնագիտական կրթության մասին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքներն ընդունելուց հետո:

(53-րդ հոդվածը խմբ. 27.12.2001 ՀՕ-181)

Հոդված 54. Սույն օրենքի 50 հոդվածի 2-րդ կետն ուժի մեջ է մտնում 2000 թվականի հունվարի 1-ից:

Հոդված 55. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի գործողությունը տարածվում է միայն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 2006 թվականին և դրանից հետո հանրակրթական ուսումնական հաստատություններ ընդունված անձանց վրա:

Մինչև 2001 թվականը հանրակրթական դպրոցներ ընդունված սովորողները ուսումը շարունակում են տասնամյա հանրակրթական միջնակարգ դպրոցի համար հաստատված կրթական ծրագրերով:

2001 թվականից մինչև 2005 թվականը ներառյալ, ինչպես նաև 2006 թվականին հանրակրթական դպրոցների առաջին դասարաններ ընդունված 6,5 և բարձր տարիքի սովորողները ուսումը շարունակում են տասնմեկամյա հանրակրթական միջնակարգ դպրոցի համար հաստատված կրթական ծրագրերով:

2006-2007 ուսումնական տարում դպրոցներում ըստ տարիքային խմբերի ձևավորված առաջին դասարանների սովորողների ուսուցման և փոխադրման կարգը սահմանում է կրթության կառավարման պետական լիազորված մարմինը:

2007-2008 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ից երկրորդ (2006-2007 ուսումնական տարում առաջին դասարան ընդունված 6,5 և բարձր տարիքի սովորողներ), երրորդ և երրորդից բարձր դասարանները վերահամարակալվում են՝ յուրաքանչյուրը մեկով ավելի:

2009-2010 ուսումնական տարվանից կատարվում է անցում եռամյա ավագ դպրոցի:

(55-րդ հոդվածը լրաց. 27.12.2001 ՀՕ-181, խմբ. 23.08.2006 ՀՕ-306)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

15 ապրիլի 2000թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-106

Ծանոթություն

1. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերության դրույթները տարածվում են 2015 թվականին եւ դրանից հետո միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողների վրա: ***(հիմք՝ 26.02.2015 ՀՕ-1-Ն, հոդված 19)***

2. 1. Սույն օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները տարածվում են 2015 թվականին եւ դրանից հետո ընդունված ուսանողների վրա: ***(հիմք՝ 26.02.2015 ՀՕ-1-Ն, հոդված 19)***

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ընդունված է 2005 թվականի մայիսի 25-ին

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում իրավական, կազմակերպական և ֆինանսական հարաբերությունները:

Հոդված 2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենսդրությունը

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում հարաբերությունները կարգավորվում են «Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, սույն օրենքով և իրավական այլ ակտերով:

2. Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **բարձրագույն մասնագիտական կրթություն՝** առնվազն միջնակարգ կրթության հենքի վրա բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի ծրագրերով իրականացվող մասնագիտական կրթություն.

2) **բարձրագույն ուսումնական հաստատություն՝** կրթական հաստատություն, որն իրականացնում է բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրեր.

3) **հետբուհական մասնագիտական կրթություն՝** բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթություն.

4) **լրացուցիչ կրթություն՝** մասնագիտական կրթության հենքի վրա հիմնական կրթական ծրագրերից դուրս մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերաորակավորումը ապահովող, անձի մասնագիտական որակավորումն անընդհատ լրացնող կրթություն.

անձ.

5) **ուսանող (կուրսանտ, ունկնդիր)՝** համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն սահմանված կարգով ընդունված և բարձրագույն մասնագիտական կրթության կրթական որևէ ծրագրով ուսումնառու անձ.

6) **դասախոս՝** բարձրագույն մասնագիտական կրթական համակարգի գիտամանկավարժական աշխատող, որը տեսական, գործնական, մասնագիտական գիտելիքներ է դասավանդում ուսանողներին, սովորողներին և նպաստում է դրանց յուրացմանը.

7) **ասպիրանտ՝** բարձրագույն մասնագիտական (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) կրթություն ունեցող, հետբուհական կրթական ծրագրով ուսումնառությունն ասպիրանտուրայում շարունակող և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ, որը հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ատեստավորման արդյունքում կարող է ստանալ հետազոտողի որակավորման աստիճան.

8) **դոկտորանտ՝** գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստելու համար համապատասխան կարգով ձևակերպված անձ.

9) **հայցորդ՝** բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը.

10) **հեռավար (դիստանցիոն) ուսուցում՝** համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով.

11) **դրսեկություն (էքստեռնատ)**՝ ինքնակրթությամբ և գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով ուսումնական հաստատությունում իրականացվող կրթության ձև.

12) **պետական հավատարմագրում**՝ պետության կողմից բուհի, կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչում.

13) **ինքնավերլուծություն**՝ բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության և որակի ուսումնասիրություն, որը, կրթական չափորոշիչներին համապատասխան, իրականացնում է բարձրագույն ուսումնական հաստատությունը.

14) **ուսումնական հաստատության որակի գնահատում (ատեստավորում)**՝ բարձրագույն ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում.

15) **որակի ապահովում**՝ պետական կրթական չափորոշիչներին և հավատարմագրման չափանիշներին կրթության որակի համապատասխանության և բարելավման անընդհատ գործընթաց.

16) **ակադեմիական կրեդիտ (չափանիշ)**՝ ուսումնական բեռնվածության չափման ժամաքանակով արտահայտվող պայմանական միավոր.

17) **կրեդիտային (չափանիշային) համակարգ**՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որը ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ռեֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, քննությունների նախապատրաստումը, գնահատումը և այլն.

18) **կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿԿՓԵՀ)**՝ համաեվրոպական կրեդիտային համակարգ, որն ապահովում է ակադեմիական կրեդիտների համեմատելիությունը և փոխանցելիությունը, դյուրացնում է ուսանողների շարժունակությունը ընդհանուր եվրոպական բարձրագույն կրթական տարածքում.

19) **ուսանողական նպաստ**՝ ուսանողի ուսման վարձի փոխհատուցում՝ պետական բյուջեից ֆինանսավորման, բարձրագույն ուսումնական հաստատության, հիմնադրամների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին.

20) **ինտերնատուրա**՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ինտերնի ծրագրով ընդհանուր պրակտիկ բժշկական գործունեություն իրականացնող մասնագետների պատրաստում.

21) **օրդինատուրա**՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա կլինիկական օրդինատորի ծրագրով բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստում: ***(3-րդ հոդվածը փոփ., լրաց. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

Հոդված 4. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝

1) մարդու և քաղաքացու՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.

2) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մատչելիությունը.

3) կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը.

4) մրցութայնությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը.

5) եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում և Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը և դիպլոմների, դրանց ներդիրների ճանաչելիությունն ապահովելը.

6) ուսանողների միջազգային շարժունությանը նպաստելը.

7) բարձրագույն ուսումնական հաստատությունների ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը.

8) հայկական սփյուռքի համար, ինչպես նաև հայագիտության զարգացման նպատակով մասնագետների պատրաստումը և որակավորման բարձրացումը: ***(4-րդ հոդվածը լրաց., խմբ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

Հոդված 5. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրները

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝

1) բարձրագույն և հետբուհական կրթության որակի ապահովումը.

2) պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում մասնագետների պատրաստմանն աջակցելը.

3) միջազգային գիտակրթական համագործակցության զարգացմանը և դրա ինտեգրմանը նպաստելը.

4) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը միջազգային ասպարեզում.

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում ուսուցման որակի ներքին (ներբուհական) ու արտաքին գնահատման և հավատարմագրման միջազգային (եվրոպական) չափանիշների ներդրումը.

6) հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավահավասարության ապահովումը՝ անկախ սեփականության ձևից:

2. Պետությունն ապահովում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության զարգացում հետևյալ ձևերով.

1) անցում բարձրագույն կրթության որակավորման երկաստիճան համակարգի.

2) հետբուհական կրթության համակարգի կատարելագործում.

3) կրթության զարգացման պետական ծրագրերի մշակում և իրականացում.

4) կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատանքային շուկայի պահանջներին.

5) պետության պահանջներին համապատասխան՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանցում սովորողների ֆինանսական աջակցության ապահովում.

6) օրենքով սահմանված կարգով բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ուսանողներին և ասպիրանտներին պետական ֆինանսական օժանդակություն (կրթաթոշակներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ և մասնակի (զեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր).

7) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում գիտելիքների ստուգման և որակի գնահատման, ուսուցման կազմակերպման նոր ձևերի, ներառյալ՝ կրեդիտային համակարգի ներդրում.

8) կրթական նոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրում՝ զարգացում ապահովելու նպատակով.

9) բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտության և կրթության ինտեգրման ապահովում, գիտահետազոտական ստորաբաժանումների կազմակերպում:

3. Պետությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիներին երաշխավորում է պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն ստանալու իրավունք: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկքաղաքացիները բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրացիների համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններով՝ իրենց ընտրությամբ:

Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով կարող է իրականացվել բարձրագույն և հետբուհական մասնագիտական անվճար կրթություն՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ:

(5-րդ հոդվածը լրաց. 17.02.2011 ՀՕ-6-Ն, խմբ., փոփ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)

Հոդված 6. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունը, իրավասությունը և ակադեմիական ազատությունները

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունը՝

1) իրականացնում է իր ինքնավարությունը ինքնակառավարման և կոլեգիալության սկզբունքներով.

2) ինքնուրույն է ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի և պարբերականության ընտրության հարցերում.

3) ինքնուրույն է որոշում բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնում է աշխատողների ընտրությունը և բաշխումը, ներառյալ՝ գիտամանկավարժական կազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական և ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը.

4) իրավունք ունի օրենքով և իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեության:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության իրավասությունն է՝

1) ըստ կրթական ծրագրերի՝ դիմորդների, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց ընդունելության, ուսումնական գործընթացի կազմակերպումը.

2) բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավար անձնակազմի և պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգերի մշակումը և ընտրությունների անցկացումը.

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակումն ու հաստատումը, ուսումնական գրականության և ուսումնամեթոդական ձեռնարկների հրատարակումը.

4) ըստ ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների՝ աշխատողների տեղաբաշխումը.

5) մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման դասընթացների կազմակերպումը.

6) տեղական և միջազգային գիտակրթական և հետազոտական ծրագրերին մասնակցությունը և իրականացումը, գիտական հետազոտությունների կատարումը.

7) հետազոտական աշխատանքներում սովորողների մասնակցության ապահովումը.

8) վճարովի կրթական ծառայությունների (վճարովի ուսուցում և այլն) իրականացումը.

9) ֆինանսների կառավարում, ներառյալ՝ աշխատավարձի, կրթաթոշակի վճարում, ուսման վարձի փոխհատուցում, ուսանողական նպաստների տրամադրում, բարձրագույն ուսումնական հաստատության պահպանմանը և զարգացմանը, գիտահետազոտական գործունեությանը նպատակաուղղված ծախսերի կատարումը.

10) հետբուհական կրթության իրականացումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Բարձրագույն ուսումնական հաստատությունն ինքնուրույն է որոշում իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, ներառյալ՝ իր աշխատողների վարձատրության և նյութական խրախուսման կարգը և չափերը, սահմանում է կրթաթոշակներ:

4. Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձևով տրվում է մրցույթի արդյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ուսանողներին՝ անկախ ուսումնառության համակարգից (անվճար, վճարովի), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

Պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող ոլորտների մասնագիտությունների ցանկը և քանակը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը, ինչպես նաև սահմանված կարգով փոխհատուցում է այդ ուսանողների նպաստը:

Ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար: Պետական կրթաթոշակի տրման կարգը և չափը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

4.1. Բարձրագույն ուսումնական հաստատությունը առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին, հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

1) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

2) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ առնվազն 50 տոկոս.

3) երեք և ավելի անչափահաս,կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ առնվազն 30 տոկոս.

4) այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին, որը կարող է սահմանել բարձրագույն ուսումնական հաստատությունը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը առանձնահատուկ դեպքերում կարող է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում տալ նաև հեռակա ուսուցման համակարգում սովորող սոցիալապես խիստ անապահով ուսանողներին:

4.2 Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում առնվազն 50 տոկոսի չափով տրամադրվում է ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ:

Սույն հոդվածով, ինչպես նաև այլ իրավական ակտերով սահմանված մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

4.3 Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից բակալավրի և մագիստրոսի համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հաղթահարելու դեպքում:

Առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

4.4 Բարձրագույն ուսումնական հաստատությունները տվյալ տարվա ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ մինչև հաջորդ տարվա ապրիլի

1-ը ներկայացնում են հաշվետվություն կրթության պետական կառավարման լիազորված մարմին:

Բարձրագույն ուսումնական հաստատության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

5. Բարձրագույն ուսումնական հաստատություններն ինքնուրույն են իրենց կառուցվածքի ձևավորման հարցում:

Բարձրագույն ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանման կարգավիճակը և գործառույթները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բարձրագույն ուսումնական հաստատության կառուցվածքային ստորաբաժանումները կարող են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել հանրակրթական, միջին մասնագիտական, ինչպես նաև լրացուցիչ կրթության ծրագրեր:

6. Բարձրագույն ուսումնական հաստատությունը օտարերկրյա պետությունների կրթական կառավարման համապատասխան մարմինների հետ կնքած պայմանագրերով, համաձայնագրերով իրականացնում է օտարերկրյա քաղաքացիների ընդունելություն, մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձևերով, ինչպես նաև մասնագետների փոխանակում, համատեղ գիտական աշխատանքներ, ծրագրեր, օտարերկրյա պետություններում ստեղծում է մասնաճյուղեր, ստորաբաժանումներ և այլն:

7. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իր գործունեության համար պատասխանատու է անհատի, հասարակության և պետության առջև:

Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության համապատասխանությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրությանը և իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներին վերահսկում են բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադիրը (հիմնադիրները), լիազորված մարմինը և օրենքով սահմանված կարգով լիազորված այլ մարմիններ: ***(6-րդ հոդվածը լրաց. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

ԳԼՈՒԽ 2

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 7. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգը ներառում է՝

1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, պետական հավատարմագրման չափանիշները.

2) լիցենզավորված բարձրագույն ուսումնական հաստատությունները և համապատասխան հետբուհական ու լրացուցիչ մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունները.

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կառավարման մարմինները, ինչպես նաև դրանց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունները:

Հոդված 8. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները և կրթական ծրագրերը

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանվում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներ, որոնք ապահովում են՝

1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակը.

2) եվրոպական և օտարերկրյա այլ պետությունների կրթական չափորոշիչների հետ համեմատելիության հնարավորությունները.

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեության գնահատման հիմքը.

4) օտարերկրյա պետությունների բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորումների և փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը:

2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները ներառում են՝

1) ընդհանուր պահանջներ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի վերաբերյալ.

2) պահանջներ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագ-

ների բովանդակության պարտադիր նվազագույնի, դրանց իրականացման պայմանների, ներառյալ՝ ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների և շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ձևերի, յուրաքանչյուր մասնագիտությամբ շրջանավարտների պատրաստման մակարդակի վերաբերյալ.

2.1) անկախ սեփականության ձևից և մասնագիտությունից՝ բարձրագույն մասնագիտական հիմնական կրթության բակալավրի կրթական ծրագրում հայոց լեզու, հայոց պատմություն առարկաների ուսուցումը ներառվում է առնվազն երկու կիսամյակի ընթացքում, որոնք ավարտվում են գիտելիքների պարտադիր ստուգմամբ.

3) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպման ժամկետները կամ անհրաժեշտ կրեդիտային միավորների քանակը.

4) սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը:

3. Պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ լիազորված մարմին) ներկայացմամբ (ռազմական (ռազմաբժշկական), ոստիկանական և բժշկական բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան պետական կառավարման լիազորված մարմինների հետ համաձայնեցված):

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է հիմնական և լրացուցիչ հետևյալ կրթական ծրագրերով.

1) բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրերով՝
- բակալավրի,
- մագիստրոսի,
- դիպլոմավորված մասնագետի.

2) հետբուհական մասնագիտական հիմնական կրթական ծրագրով՝
- հետազոտողի,
- կլինիկական օրդինատորի.

3) լրացուցիչ կրթական ծրագրերով՝
- վերապատրաստման,
- մասնագետների որակավորման բարձրացման:

5. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերը մշակում և հաստատում են բարձրագույն ուսումնական հաստատությունը, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը՝ պետական կրթական չափորոշիչների հիման վրա:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտացումների ուսումնական պլանները և դասընթացները երաշխավորում են տարբեր կրթական փուլերում սովորողների ուսումնառության գործընթացը (մուտքը կրթական ծրագիր և ելքը ծրագրից)՝ ապահովելով կրթական կրեդիտների կուտակումը, փոխանցումը և որակավորման աստիճանների շնորհումը: ***(8-րդ հոդվածը լրաց., փոփ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

Հոդված 9. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճանները, ուսուցման ժամկետները և ձևերը

1. Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել անընդհատ և (կամ) ընդհատումներով՝ ըստ աստիճանների:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանվում է բարձրագույն մասնագիտական կրթության երկաստիճան որակավորման համակարգ:

Ամփոփիչ ատեստավորումն անցած անձին շնորհվում է՝

1) առաջին աստիճանում՝ բակալավրի որակավորում.

2) երկրորդ աստիճանում՝ մագիստրոսի որակավորում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պահպանվում է նաև դիպլոմավորված մասնագետի որակավորումը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում սահմանվում է հետբուհական մասնագիտական կրթության՝ հետազոտողի որակավորման աստիճանը:

4. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի ուսուցման տևողությունն է՝

1) բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 4 տարվա, ոստիկանական կամ զինվորական մասնագիտությունների համար՝ առնվազն երեք տարվա.

2) դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 5 տարի, արվեստի և ֆիզիկական կուլտուրայի մասնագիտությունների համար՝ առնվազն 4 տարի.

3) մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 1 տարի.

4) հետազոտողի որակավորման աստիճան ստանալու համար՝ առնվազն 3 տարի.

5) բժշկական մասնագիտությունների համար կրթության տևողություն սահմանել առնվազն հինգ տարի՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով, որի արդյունքում շնորհված կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանի.

6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների ռազմաբժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ ստորաբաժանումների շրջանավարտների համար սահմանել մեկ տարի տևողությամբ հետբուհական ուսուցում՝ ինտերնատուրա:

5. Այն անձինք, ովքեր ստացել են բարձրագույն մասնագիտական կրթության համապատասխան աստիճանի ավարտական փաստաթուղթ, իրավունք ունեն սահմանված կարգով շարունակելու ուսումնառությունը հաջորդ աստիճանի կրթական ծրագրով:

Բարձրագույն կրթության տարբեր աստիճանների կրթական ծրագրերով առաջին անգամ կրթություն ստանալը չի դիտվում որպես երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն:

6. Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերը կարող են իրականացվել ուսուցման տարբեր ձևերով՝ առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի): Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու առկա և այլ ձևերի զուգակցումը չի արգելվում:

Այն մասնագիտությունների ցանկը, որոնցով բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը չի թույլատրվում հեռակա, հեռավար (դիստանցիոն) կամ դրսեկության (էքստեռնատի) ձևերով, սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ձևերով ուսուցման կարգերը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցված և (կամ) դադարեցված բարձրագույն ուսումնական հաստատությունների (կամ դրանց մասնագիտությունների) սովորողները կարող են մասնակցել պետական և համապատասխան մասնագիտություններով հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ընթացիկ և (կամ) ամփոփիչ ատեստավորմանը՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

7. Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է առկա, հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ուսուցման ձևերով, որի կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

(9-րդ հոդվածը խմբ. 17.02.2011 ՀՕ-6-Ն, լրաց., փոփ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)

Հոդված 10. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ավարտական փաստաթուղթը

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության ավարտական փաստաթուղթ՝ համապատասխան ներդիրով.

- բակալավրի դիպլոմ,
- մագիստրոսի դիպլոմ,
- բարձրագույն կրթությամբ մասնագետի դիպլոմ,
- հետազոտողի դիպլոմ,
- օրդինատորի դիպլոմ:

2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ակադեմիական տեղեկանք:

3. Լրացուցիչ մասնագիտական կրթության կրթական ծրագիրն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության սահմանած նմուշի ավարտական փաստաթուղթ (հավաստագիր, վկայական): ***(10-րդ հոդվածը լրաց. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

Հոդված 11. Բարձրագույն ուսումնական հաստատության խնդիրները

Բարձրագույն ուսումնական հաստատության հիմնական խնդիրներն են՝

1) անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը բարձրագույն և (կամ) հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու միջոցով.

2) գիտության, կրթության, տնտեսության և արվեստի զարգացումը գիտամանկավարժական աշխատողների և սովորողների գիտական հետազոտությունների ու ստեղծագործական գործունեության միջոցով, ստացված արդյունքների օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական և կրթական գործընթացում.

3) բարձրագույն կրթությամբ գիտամանկավարժական աշխատողների պատրաստումը և վերապատրաստումը.

4) կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.

5) կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

6) սովորողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը.

7) բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.

8) սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը՝ ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում:

Հոդված 12. Բարձրագույն ուսումնական հաստատությունների տեսակները և անվանումները

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետևյալ տեսակները.

1) համալսարան.

2) ինստիտուտ.

3) ակադեմիա.

4) կոնսերվատորիա և այլն:

Բարձրագույն ռազմական, ոստիկանական ուսումնական հաստատությունների գործունեության կարգը սահմանվում է սույն և այլ օրենքներով:

Հոդված 13. Բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծումը, վերակազմակերպումը, լուծարումը, լիցենզավորումը, հավատարմագրումը

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Բարձրագույն և հետբուհական կրթական գործունեության լիցենզավորումը՝

1) բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերը կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) կրթական գործունեության լիցենզիան ուսումնական հաստատությանը տալիս է լիազորված մարմինը: Կրթական ծրագրերի լիցենզավորումն իրականացվում է օրենքով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

3) ուսումնական հաստատության լիցենզավորման համար հիմք են մանկավարժական և պրոֆեսորադասախոսական հիմնական կազմի, լաբորատոր բազայի և ուսումնական տարածքի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի, գրադարանային-տեղեկատվական համակարգի առկայությունը և ուսումնամեթոդական ապահովումը:

3. Պետական հավատարմագրումը՝

1) անկախ մասնագիտական ուսումնական հաստատության գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից՝ պետական հավատարմագրումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով.

2) բարձրագույն ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների, հետբուհական կրթական ծրագրերի պետական հավատարմագրումն իրականացվում է լիցենզիայի առկայության դեպքում.

3) բարձրագույն մասնագիտական կրթության գծով պետական հավատարմագրումն իրականացվում է ըստ ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների.

4) հավատարմագրման կարգը, չափանիշները և հավատարմագրի գործողության ժամկետը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը.

5) պետական հավատարմագրման նպատակն է ուսուցման և առանձին մասնագիտությունների գծով շրջանավարտների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումը, ինչպես նաև նպաստելը ուսումնական հաստատության զարգացման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը.

6) պետական հավատարմագրման վկայականը հավաստում է ուսումնական հաստատության իրականացրած կրթական ծրագրերի մակարդակի, դրանց բովանդակության և շրջանավարտների որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին.

7) ուսումնական հաստատությունների, դրանց մասնագիտությունների հավատարմագրումն իրականացվում է առանձին փուլերով՝ ըստ կրթական ծրագրերի.

8) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում պետական հավատարմագրման ենթակա են բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերը.

9) պետական հավատարմագրման վկայականը տրվում է բարձրագույն ուսումնական հաստատությանը՝ ուսումնական հաստատության և դրա ուսանողների և երկու տարվա շրջանավարտների առնվազն 60 տոկոսի ատեստավորման վերաբերյալ դրական եզրակացության հիման վրա, ինչպես նաև այդ հաստատության մասնագիտությունների առնվազն 75 տոկոսի պետական հավատարմագրման առկայության դեպքում.

10) ուսումնական հաստատության մասնաճյուղերը հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատության հայտի հիման վրա, մայր բուհի կազմում.

11) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների, կազմակերպությունների մասնակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված ուսումնական հաստատությունները և դրանց մասնաճյուղերն իրավահավասար են պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և լիցենզավորվում, հավատարմագրվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով, եթե այլ բան նախատեսված չէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով.

12) բարձրագույն ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթղթում (դիպլոմում) նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը:

4. Բարձրագույն ուսումնական հաստատությունը կարող է ստանալ նաև հասարակական հավատարմագրում, որը հասարակական հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից իրենց չափանիշներին և պահանջներին բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության մակարդակի համապատասխանության ճանաչումն է: ***(13-րդ հոդվածը խմբ., փոփ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

Հոդված 13.1. Բարձրագույն ուսումնական հաստատության նկատմամբ կիրառվող նախազգուշացումը, տուգանքը, տուգանքի չափերը և լիցենզիայի գործունեության դադարեցումը

1. Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության իրականացման ժամանակ լիցենզավորման կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պահանջների ու պայմանների, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված դեպքերում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը օրենքով սահմանված կարգով բարձրագույն ուսումնական հաստատության նկատմամբ կիրառում է նախազգուշացում կամ տուգանք կամ դադարեցնում է լիցենզիայի գործունեությունը:

2. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը սույն հոդվածով նախատեսված նախազգուշացումը կիրառում է բարձրագույն ուսումնական հաստատության թույլ տված համապատասխան խախտումը սահմանված ժամկետում վերացնելու և այդ խախտման վերացման մասին կրթության պետական կառավարման լիազորված մարմնին հայտնելու նպատակով: Խախտման վերացման համար նախատեսված ժամկետը, որը չի կարող պակաս լինել 10 օրից, որոշում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը լիցենզավորման հանձնաժողովի առաջարկությամբ՝ հաշվի առնելով խախտման հետևանքների վտանգավորությունը, խախտման վերացման հրատապությունը և խախտումը վերացնող բարձրագույն ուսումնական հաստատության հնարավորությունները:

3. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը օրենքով սահմանված կարգով նախազգուշացնում է բարձրագույն ուսումնական հաստատությանը հետևյալ խախտումների հայտնաբերման դեպքում.

1) լիցենզավորման կարգով նախատեսված՝

ա. հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի պահանջի մասով կատարված ցանկացած խախտման դեպքում,

բ. ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով կատարված ցանկացած խախտման դեպքում,

գ. ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով կատարված ցանկացած խախտման դեպքում, բացառությամբ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դիմորդների ընդունելության, սովորողների փոխադրման, տեղափոխման, ամփոփիչ ատեստավորման (քննությունների), ավարտական աշխատանքների պաշտպանության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքերի,

դ. գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով կատարված խախտման դեպքում,

ե. ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի մասով կատարված խախտման դեպքում.

2) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից լիցենզիայի գործողության ընթացքում կրթության պետական կառավարման լիազորված մարմին ներկայացված փաստաթղթերում իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հայտնաբերման դեպքում.

3) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում փոփոխությունների մասին կրթության պետական կառավարման լիազորված մարմնին ժամանակին չհայտնելու դեպքում.

4) տարեկան պետական տուրքը չվճարելու դեպքում.

5) լիցենզավորման կարգով նախատեսված այլ դեպքերում:

4. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը օրենսդրությամբ սահմանված կարգով բարձրագույն ուսումնական հաստատության նկատմամբ կիրառում է տուգանք հետևյալ դեպքերում և չափերով.

1) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից լիցենզավորման ենթակա գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնող անձանց՝ օրենսդրությանը համապատասխան ստուգումների իրականացմանը խոչընդոտելու կամ պահանջվող փաստաթղթերը չներկայացնելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով.

2) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝ օրենքով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով.

3) բարձրագույն ուսումնական հաստատության ներկայացրած հայտի հիմքով իրեն հատկացված սովորողների (ըստ կուրսերի) նախատեսվող սահմանային թվի խախտման դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով.

4) մեկ ուսումնական տարվա ընթացքում սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով ոչ պակաս, քան երկու անգամ նախազգուշացման դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկի չափով.

5) սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված որևէ խախտման համար կիրառված նախազգուշացմամբ սահմանված ժամկետներում այդ խախտումը չվերացնելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

5. Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը դադարեցնում է բարձրագույն ուսումնական հաստատության լիցենզիայի գործողությունը՝

1) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված առնվազն երկու խախտման դեպքերի միաժամանակյա հայտնաբերման դեպքում.

2) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից լիցենզավորման կարգով նախատեսված՝ կրթական ծրագրեր իրականացնելու վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայության պահանջի մասով խախտման դեպքում.

3) սույն հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված տուգանքը չվճարելու, իսկ վճարելու դեպքում՝ նախազգուշացման հիմք հանդիսացած խախտումը չվերացնելու դեպքում.

4) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից լիցենզիան օրենքով չնախատեսված դեպքերում այլ անձի օգտագործման հանձնելու, գրավ դնելու կամ օտարելու դեպքում.

5) բարձրագույն ուսումնական հաստատության լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքից ժամանակավորապես զրկելու դեպքում.

6) բարձրագույն ուսումնական հաստատության դիմումի համաձայն.

7) լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն հայտնաբերելու դեպքում.

8) լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լուծարման կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցվելու դեպքերում.

9) լիցենզիայի ժամկետը լրանալու դեպքում.

10) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դիմորդների ընդունելության, սովորողների փոխադրման, տեղափոխման, ամփոփիչ ատեստավորման (քննությունների), ավարտական աշխատանքների պաշտպանության պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում:

6. Լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ:

7. Օրենսդրության պահանջների խախտման պատճառով լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշումը կայացվում է խախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում, իսկ շարունակվող և տևական խախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից մեկ տարվա ընթացքում, իսկ սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերում՝ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվությունը հայտնաբերելու օրվանից 15 օրվա ժամկետում:

8. Սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ կետով նախատեսված հիմքով լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր լիցենզիա ստանալու համար դիմելու միայն լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո:

9. Սույն հոդվածի 5-րդ մասի 6-րդ, 8-րդ և 9-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը համարվում է դադարեցված կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից, եթե այդ որոշմամբ ավելի ուշ

ժամկետ նախատեսված չէ: Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը լիցենզիայի գործողության դադարեցման մասին պատշաճ ձևով տեղեկացնում է լիցենզավորված անձին՝ տեղեկացմանը կից ուղարկելով նաև լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշման պատճենը:

10. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշումը: ***(13.1-ին հոդվածը լրաց. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

Հոդված 14. Ընդունելությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում

1. Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելությունը բակալավրի կրթական ծրագրում իրականացվում է առնվազն միջնակարգ կրթություն ունեցող անձանց դիմումներով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իրավունք ունի ընդունելություն հայտարարելու լիցենզիայի առկայության դեպքում:

Բարձրագույն ուսումնական հաստատությունը պարտավոր է ծանոթացնել դիմորդին իր լիցենզիային, կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին, ինչպես նաև պետական հավատարմագրման վկայականին (առկայության դեպքում), որի վերաբերյալ տեղեկությունները գրանցվում են դիմորդի ընդունելության փաստաթղթերում:

3. Բարձրագույն ուսումնական հաստատությունն ուսանողի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում է դիմորդին:

Բարձրագույն ուսումնական հաստատության և ուսանողի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում են սովորելու տարիների տևողությունը և տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության բարձրագույն կրթության յուրաքանչյուր աստիճանի համար նախատեսված ուսման վարձի ընդհանուր չափը՝ բաժանված ըստ ուսումնական տարիների:

Ուսանողի հետ կնքված պայմանագիրը, այդ թվում՝ այդ պայմանագրով նախատեսված ուսման վարձի ընդհանուր և դրա՝ ըստ տարիների բաժանված չափերը ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չեն:

Հեռացումից հետո վերականգնված ուսանողի ուսման վարձը հաշվարկվում է տվյալ տարվա համար սահմանված վարձավճարի չափով, և նրա հետ կնքվում է նոր պայմանագիր:

3.1. Բարձրագույն ռազմաուսումնական հաստատություն ընդունված անձի հետ կնքվում է պայմանագիր՝ «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Բարձրագույն կրթության երկաստիճան համակարգում երկրորդ աստիճանի (մագիստրատուրայի) մրցութային ընդունելությունն իրականացվում է առաջին աստիճանի (բակալավրիատի) գնահատականների հաշվառմամբ՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

5. Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը, ըստ բակալավրի կրթական ծրագրի, սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ կատարվում է ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի՝ մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:

6. Ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում է մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ծրագրով, դիմորդների մրցութային ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա, որի կարգը և մասնագիտությունների ցանկը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

Ասպիրանտուրայի ընդունելության դիմումի հետ միասին բարձրագույն ուսումնական հաստատությունը դիմորդի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և տրամադրվում դիմորդին: Օրինակելի պայմանագրի ձևը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

7. Դոկտորանտուրայի փաստաթղթերի ձևակերպումը կատարվում է գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի և դոկտորական թեզի համար գիտական թեմայի առկայության հիման վրա:

(14-րդ հոդվածը խմբ., լրաց. 17.02.2011 ՀՕ-6-Ն, խմբ., լրաց. 26.02.2015 ՀՕ-2-Ն)

Հոդված 15. Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարումը

1. Բարձրագույն ուսումնական հաստատության կառավարումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը

համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ:

2. Պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհուրդը ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան: Խորհրդի նախագահի և անդամների իրավասությունները սահմանվում են կանոնադրությամբ:

Խորհուրդը ձևավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի, լիազորված մարմնի ներկայացուցիչներից:

Խորհրդի ձևավորման կարգը լիազորված մարմնի ներկայացմամբ սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը: Խորհրդի թվաքանակը սահմանվում է տվյալ բուհի կանոնադրությամբ՝ առնվազն 20 հոգի:

Խորհրդի գործունեության մեջ մտնում են հաստատության բյուջեի, ռազմավարական ծրագրերի հաստատումը, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության տարեկան հաշվետվության (որը ներկայացնում է ռեկտորը) լսումն ու գնահատումը, ռեկտորի ընտրությունը, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրության, դրա մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկության ներկայացումը հիմնադրին:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության գիտական խորհուրդը ձևավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան և լուծում է բարձրագույն ուսումնական հաստատության ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:

Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե մտնում են ռեկտորը (ռազմաուսումնական հաստատության պետը), որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները (ռազմաուսումնական հաստատության պետի տեղակալները) և բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

Գիտական խորհրդի լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում է բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

4. Բարձրագույն ուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ուսումնական հաստատության գործադիր մարմինը՝ ռեկտորը:

Պետական բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորն ընտրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով՝ ուսումնական հաստատության խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը: Արդյունքներն անվավեր ճանաչելու դեպքում, համաձայն գործող կարգի, նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն:

Եթե նույն թեկնածուն ընտրություններում հավաքում է խորհրդի անդամների ձայների առնվազն երկու երրորդը, ապա հիմնադիրը հաստատում է գիտական խորհրդի որոշումը:

4.1. Ռազմաուսումնական հաստատության պետի պաշտոնը զինվորական պաշտոն է, որում նշանակումը կատարվում է «Զինվորական ծառայություն անցնելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ռազմաուսումնական հաստատության պետն իրականացնում է ռազմաուսումնական հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որի ձևավորման կարգը և լիազորությունները սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:

6. Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղի տնօրենը ընտրվում է ուսումնական հաստատության խորհրդի նիստում գաղտնի (փակ) քվեարկությամբ, 5 տարի ժամկետով, բաց մրցույթով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել մասնաճյուղի տնօրենի պաշտոնում:

7. Բարձրագույն ուսումնական հաստատության պրոռեկտորները (մասնաճյուղի տնօրենի տեղակալները) նշանակվում են ռեկտորի (մասնաճյուղի տնօրենի) հրամանով, և նրանց հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

8. Ֆակուլտետի դեկանի, ռազմաուսումնական հաստատության ֆակուլտետի պետի (ուսումնական ստորաբաժանման ղեկավարի), ամբիոնի վարիչի (ռազմաուսումնական հաստատության ամբիոնի պետի, ցիկլի պետի, խմբի պետի) պաշտոնները ընտրովի են, որոնց ընտրության կարգը սահմանվում է բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ: Ֆակուլտետի դեկանի, ռազմաուսումնական

հաստատության ֆակուլտետի պետի (ուսումնական ստորաբաժանման ղեկավարի) գործունեությունը համարվում է վարչական և գիտամանկավարժական աշխատանք, ամբիոնի վարիչի (ռազմաուսումնական հաստատության ամբիոնի պետի, ցիկլի պետի, խմբի պետի) գործունեությունը՝ գիտամանկավարժական:

9. Նոր ստեղծվող կամ վերակազմակերպված բարձրագույն ուսումնական հաստատությունում մինչև խորհրդի ձևավորումը բարձրագույն ուսումնական հաստատության հիմնադիրը նշանակում է ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար մեկ տարուց ոչ ավելի ժամկետով:

10. Բարձրագույն ուսումնական հաստատությունները մշակում և հաստատում են հնգամյա կրթական ռազմավարական ծրագրեր: Ռազմավարական ծրագրով սահմանվում են բարձրագույն ուսումնական հաստատության հիմնական նպատակները, դրանց հասնելու միջոցառումների ցանկը: Ռազմավարական ծրագիրը հաստատում է խորհուրդը:

Ռազմավարական ծրագիրը լիազորված մարմնի կողմից բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը գնահատելու հիմնական ծրագրային փաստաթուղթն է: ***(15-րդ հոդվածը լրաց., փոփ., խմբ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

Հոդված 16. Հասարակական կազմակերպությունները և միավորումները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում

Հասարակական-քաղաքական, հասարակական, կրոնական կազմակերպությունները և միավորումները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում չեն գործում, բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական և շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների:

ԳԼՈՒԽ 3

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հոդված 17. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողները

1. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը բարձրագույն (հետբուհական) կրթության սուբյեկտ է:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության ուսանողները (կուրսանտները, ունկնդիրները), ասպիրանտները (այսուհետ՝ սովորողներ) կարող են իրենց հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրել մասնագիտություն, բարձրագույն ուսումնական հաստատության տեսակը և ուսուցման ձևը, տեղափոխվել բարձրագույն ուսումնական այլ հաստատություն (ներառյալ՝ օտարերկրյա պետություններին), զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատել կամ շարունակել բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությունը, բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան՝ լիիրավ մասնակցել բարձրագույն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինների աշխատանքներին:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողն իրավունք ունի՝

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) և ամբիոնը.

2) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.

3) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ այդ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.

4) մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ նախատեսված օրենքով կամ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ.

5) անվճար օգտվելու բարձրագույն ուսումնական հաստատությունների գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ստորաբաժանումների ծառայություններից, մասնակցելու գիտահետազոտական աշխատանքներին, գիտաժողովներին, սեմինարներին և սիմպոզիումներին.

6) բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

7) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

8) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ՝ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակ, դրամաշնորհ, ինչպես նաև ուսանողական վարկ.

9) ծանոթանալու բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությանը և նորմատիվ այլ փաստաթղթերի, կնքելու պայմանագիր բարձրագույն ուսումնական հաստատության հետ՝ ուսումնառության պայմանների վերաբերյալ.

10) լիազորված մարմնի սահմանած կարգով անհրաժեշտության դեպքում ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

11) ուսուցման առկա ձևով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ.

12) հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով ստանալու հանրակացարանում համապատասխան տեղ.

13) փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն, ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություն՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգի.

14) ուսման բարձր առաջադիմության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական խրախուսանք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ և բարձրագույն ուսումնական հաստատության սահմանած կարգով:

4. Կրթությունը ընդհատած նախկին սովորողը, անկախ ընդհատման պատճառից, իրավունք ունի վերականգնելու իր ուսանողական իրավունքները, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակում կրթության ընդհատման:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության սովորողը պարտավոր է կատարել բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով սահմանված պարտականությունները:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահության կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում սովորողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բարձրագույն ուսումնական հաստատությունից հեռացնելը՝ ներքին ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

Արգելվում է սովորողներին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

7. Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորողները կարող են միավորվել ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կազմակերպություններում: Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների ստեղծման և գործունեության կարգը հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Ուսանողական խորհուրդների և ուսանողական գիտական ընկերությունների գործունեությունը ֆինանսավորվում է ուսումնական հաստատության արտաբյուջետային միջոցների հաշվին: Ֆինանսավորման չափը սահմանում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդը:

(17-րդ հոդվածը խմբ. 17.02.2011 ՀՕ-6-Ն, լրաց., փոփ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)

Հոդված 18. Ասպիրանտները, դոկտորանտները և հայցորդները

1. Ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

2. Ընտրված գիտական թեմաների, գիտական հետազոտությունների հետ կապված աշխատանքների կատարման համար ասպիրանտները, հայցորդները և դոկտորանտները բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գիտամանկավարժական և գիտական աշխատողների հետ հավասարապես օգտվում են լաբորատորիաներից, սարքավորումներից, ուսումնամեթոդական կաբինետներից, գրադարաններից, ինչպես նաև գործուղումների իրավունքից:

Հոդված 19. Բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների աշխատողները

1. Բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական և գիտական աշխատողներն իրավունք ունեն իրենց հայեցողությամբ ծրագրի շրջանակներում ուսումնական առարկան շարադրելու, գիտական հետազոտությունների թեմաներ ընտրելու և դրանք իրենց ընտրած մեթոդներով իրականացնելու:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում սահմանվում են վարչական և գիտամանկավարժական, պրոֆեսորադասախոսական (դեկան, ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ,

իսկ ռազմաուսումնական հաստատությունում՝ ֆակուլտետի պետ, ամբիոնի պետ, ցիկլի պետ, խմբի պետ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ) կազմ, գիտական աշխատողներ, ինժեներատեխնիկական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ կազմի աշխատողներ:

3. Բարձրագույն ուսումնական հաստատությունում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական աշխատողների բոլոր թափուր պաշտոններն զբաղեցվում են բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությանը և կանոնակարգերին համապատասխան:

4. Բարձրագույն ուսումնական հաստատությունում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունում գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոնների տեղակալումը իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է մինչև 5 տարի ժամկետով: Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրություն: Աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական աշխատողի հետ կարող է կնքվել նոր աշխատանքային պայմանագիր մինչև 5 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության՝ պայմանագրային ժամկետում նրա գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա: Նշված պաշտոնների տեղակալման կարգը հաստատում է բարձրագույն ուսումնական հաստատության, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության գիտական խորհուրդը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

5. Բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողն իրավունք ունի՝

1) բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում.

2) մասնակցելու բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը.

3) օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական և գիտական ստորաբաժանումների, ինչպես նաև սոցիալ-կենցաղային, բուժական և բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կառուցվածքային այլ ստորաբաժանումների ծառայություններից՝ բարձրագույն ուսումնական հաստատության, հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությանը և (կամ) կոլեկտիվ պայմանագրին համապատասխան.

4) ընտրելու դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցներ, որոնք ապահովում են ուսումնական գործընթացի բարձր որակ.

5) բողոքարկելու բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հրամանները և կարգադրությունները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

6) ունենալու կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ մասնագիտական գործունեության համար:

6. Բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության աշխատողները պարտավոր են՝

1) ապահովել կրթական և գիտական գործընթացների արդյունավետությունը.

2) պահպանել բարձրագույն ուսումնական հաստատության և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

3) սովորողների մեջ ձևավորել մասնագիտական որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում, հայրենասիրություն.

4) սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ.

5) ոչ պակաս, քան 5 տարին մեկ, սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում:

7. Բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության վարչատնտեսական, ինժեներատեխնիկական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն օրենքով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, բարձրագույն ուսումնական հաստատության կամ հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով:

(19-րդ հոդվածը լրաց. 17.02.2011 ՀՕ-6-Ն, լրաց., փոփ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)

Հոդված 20. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին օտարերկրյա պետությունների փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության, գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին օտարերկրյա պետությունների փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և այդ բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջպետական, միջկառավարական պայմանագրերով, համաձայնագրերով:

ԳԼՈՒԽ 4

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 21. Պետական իշխանության մարմինների իրավասությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության իրավասությունն է՝

1) պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ստեղծումը, վերակազմակերպումը և լուծարումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձևավորման կարգի հաստատումը.

3) բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգի հաստատումը.

4) կրթական ծրագրերի լիցենզավորման կարգի հաստատումը.

5) ըստ հիմնական կրթական ծրագրերի՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ցանկի հաստատումը.

6) հաստատում է դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով ուսուցում իրականացվող մասնագիտությունների ցանկը.

7) բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների ընդունելության կարգի և գիտելիքների գնահատման միասնական համակարգի հաստատումը.

8) բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների շարժունության կարգի սահմանումը.

9) ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտների և հայցորդների ձևակերպման կարգի հաստատումը.

9.1) ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձևի հաստատումը.

10) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների, դրանց ուսուցման ձևերի և դրանց համապատասխան տրվող որակավորումների ընդհանրական բնութագրերի և ցանկերի հաստատումը, փոփոխությունների և լրացումների կատարումը.

11) հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստեռնատի) ձևերով ուսուցում չթույլատրվող մասնագիտությունների ցանկերի հաստատումը.

12) ֆինանսական միջոցների տրամադրման կարգի հաստատումը՝ ներառյալ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսումնական վարկ ստանալու, կրթական հիմնադրամներին ֆինանսավորելու կարգերը.

13) պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների գրանցումը, դրանցում լրացումների և փոփոխությունների կատարումը:

14) ուսման վարձի առավելագույն չափի սահմանումը ըստ կրթական աստիճանների և հավատարմագրման արդյունքների:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված այլ լիազորություններ:

2. Լիազորված մարմնի իրավասությունն է՝

1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և որակավորումների բնութագրերի մշակումն ու հաստատումը՝ ըստ մասնագիտությունների և կրթական աստիճանների.

2) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի վերահսկողության իրականացումը.

3) ասպիրանտուրայի ընդունելության և ասպիրանտուրայում ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգերի մշակումը.

4) համապատասխան մարմինների հետ աշխատաշուկայի վերլուծության կատարումը և բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունելության վերաբերյալ առաջարկների ներկայացումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն.

5) մասնագետների պատրաստման, աշխատողների և գիտամանկավարժական աշխատողների որակավորման բարձրացման և վերապատրաստման, պետական բյուջեից գիտության զարգացմանն ուղղված ֆինանսավորման ծավալների մասին առաջարկությունների ներկայացումը.

6) բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգի հաստատումը.

7) երկրորդ մասնագիտություն ստանալու կարգի հաստատումը.

8) առկա, հեռակա ձևերով ուսուցման կարգերի հաստատումը.

9) բարձրագույն ուսումնական հաստատությունների դիմորդների ընդունելության և գիտելիքների գնահատման միասնական համակարգի ու սկզբունքների մշակումը.

10) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի հաստատումը.

11) բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման ընդունելության և մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգերի հաստատումը.

12) միջին որակական գնահատականի հաշվարկման մեթոդաբանության մշակումը:

Լիազորված մարմինն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ իրավասություններ:

(21-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 17.02.2011 ՀՕ-6-Ն, լրաց. 26.02.2015 ՀՕ-2-Ն)

Հոդված 22. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովումը և դրա նկատմամբ պետական վերահսկողությունը

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն ուղղված է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության ապահովմանը, մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգի ֆինանսավորման համար հատկացված պետական բյուջեի և այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը:

2. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է լիազորված մարմինը՝ լիցենզավորման և հավատարմագրման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ, ուսումնական հաստատության որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

3. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության որակի ապահովման նպատակով բարձրագույն ուսումնական հաստատությունը և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունը պարտավոր են հրապարակել ուսումնական հաստատության որակի գնահատման և (կամ) հավատարմագրման չափանիշները, ուսումնական հաստատության որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպության տված եզրակացությունները, ինչպես նաև ուսումնական հաստատության որակի գնահատման ընթացիկ արդյունքները:

4. Բարձրագույն ուսումնական հաստատություններում և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում ուսումնական հաստատության որակի գնահատում և (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգը հաստատում է լիազորված մարմինը:

5. Բարձրագույն և հետբուհական կրթության համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են՝ գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը: ***(22-րդ հոդվածը լրաց. 26.02.2015 ՀՕ-2-Ն)***

ԳԼՈՒԽ 5

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդված 23. Սեփականության հարաբերությունները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգում

1. Կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով հիմնադիրը (հիմնադիրները) բարձրագույն ուսումնական հաստատությանը սեփականության կամ օգտագործման (անհատույց

կամ հատուցելի) իրավունքով տրամադրում է շենքեր, շինություններ, տրանսպորտ, հողամասեր, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք:

Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններին հիմնադիրը (հիմնադիրները) գույքը տրամադրում է անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով:

2. Բարձրագույն ուսումնական հաստատությունը սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատություններին կարող են անհատույց կամ հատուցելի կարգով օգտագործման հանձնել ուսումնական տարածքներ և հողամասեր:

Հոդված 24. Բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների ֆինանսավորումը

Բարձրագույն ուսումնական հաստատությունների և հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների ֆինանսավորումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 25. Բարձրագույն ուսումնական հաստատության աշխատողների աշխատանքի վարձատրությունը

1. Բարձրագույն ուսումնական հաստատությունն իր ունեցած և աշխատողների աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների սահմաններում ինքնուրույն է որոշում աշխատանքի վարձատրության ձևը և համակարգը, լրավճարների, հավելումների, պարգևատրումների և նյութական խրախուսման այլ միջոցների չափերը, ինչպես նաև բոլոր տարակարգերի աշխատողների աշխատավարձի դրույքաչափերը՝ առանց աշխատավարձի առավելագույն դրույքաչափեր սահմանելու:

2. Բարձրագույն ուսումնական հաստատության աշխատողին աշխատավարձի դրույքաչափը վճարվում է աշխատանքային պայմանագրով նախատեսված գործառական պարտականությունների և աշխատանքների կատարման համար:

3. Բարձրագույն ուսումնական հաստատության կրթական գործունեությունն ապահովելու նպատակով պետական բյուջեից հատկացվող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին պետական, օտարերկրյա պետությունների մասնակցությամբ ստեղծված բարձրագույն ուսումնական հաստատությունները ինքնուրույն ձևավորում են աշխատողների աշխատանքի վարձատրության ֆոնդ:

ԳԼՈՒԽ 6

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 26. Անցումային դրույթներ

1. Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ կապված բարձրագույն կրթության երկաստիճան համակարգի ներդրման հետ, բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելությունն իրականացվում է միայն բակալավրի կրթական ծրագրով: Արվեստի բարձրագույն ուսումնական հաստատություններում առանձին մասնագիտությունների գծով ուսուցում կարող է իրականացվել դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագրով:

2. Ներառյալ 2009-2010 թվականների ուսումնական տարին՝ գործում է նաև միաստիճան որակավորման համակարգ՝ դիպլոմավորված մասնագետի որակավորմամբ:

3. Ներառյալ 2011 թվականը շնորհված դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանին:

4. Դիպլոմավորված մասնագետի ծրագրով բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնառությունն սկսած ուսանողը բանակ զորակոչվելուց կամ հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելուց հետո, եթե վերականգնվում է երկաստիճան կրթական համակարգում, հնարավորություն է ստանում սովորելու մագիստրատուրայում: Եթե մագիստրատուրան երկու տարով է, ապա բարձրագույն ուսումնական հաստատության ֆինանսավորման հաշվին ազատվում է մեկ տարվա ուսման վարձից:

5. Բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի պարտադիր ներդրումը սկսվում է 2006-2007 թվականների ուսումնական տարվանից:

6. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ կետն ուժի մեջ է մտնում 2005-2006 թվականների ուսումնական տարվանից:

(26-րդ հոդվածը փոփ. 17.02.2011 ՀՕ-6-Ն, փոփ. 26.02.2015 ՀՕ-2-Ն)

Հոդված 27. Եզրափակիչ դրույթ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

21 հունիսի 2005թ.
ք.Ստեփանակերտ
ՀՕ-199

Ծանոթություն

1. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4.1-4.4-րդ մասերի դրույթները տարածվում են 2015 թվականին եւ դրանից հետո ընդունված ուսանողների վրա: ***(հիմք՝ 26.02.2015 ՀՕ-2-Ն, հոդված 17)***

2. Սույն օրենքի 13.1-ին հոդվածի դրույթները տարածվում են 26.02.2015 ՀՕ-2-Ն օրենքի հրապարակումից վեց ամիս հետո ծագած հարաբերությունների վրա: ***(հիմք՝ 26.02.2015 ՀՕ-2-Ն, հոդված 17)***

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունված է 2002 թվականի հոկտեմբերի 30-ին

Գ Լ Ո Ւ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը սահմանում է պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ պետական կազմակերպություն) իրավական վիճակը, դրանց ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման կարգը, ինչպես նաև պետական կազմակերպության փոխհարաբերությունները պետական մարմինների հետ:

Հոդված 2. Պետական կազմակերպությունների մասին օրենսդրությունը

Պետական կազմակերպությունների մասին օրենսդրությունը բաղկացած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից, այլ օրենքներից և իրավական ակտերից, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

Հոդված 3. Հիմնական դրույթներ պետական կազմակերպության մասին

1. Պետական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որն ստեղծվում է միայն մշակույթի, առողջապահության, սոցիալական, սպորտի, կրթության, գիտության, բնապահպանական և ոչ առևտրային այլ բնագավառներում գործունեություն իրականացնելու նպատակով:

2. Պետական կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Պետական կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3. Պետական կազմակերպությունն ունի անվանում, որը պետք է ներառի «պետական ոչ առևտրային կազմակերպություն» բառերը, ինչպես նաև ցուցում՝ պետական կազմակերպության գործունեության բնագավառի մասին, եթե անվանումից դա ակնհայտ չէ:

4. Պետական կազմակերպության գտնվելու վայրը նրա մշտական գործող մարմնի գտնվելու վայրն է:

5. Պետական կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

6. Պետական կազմակերպությունը պետք է ունենա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և կազմակերպության հայերեն անվանմամբ կլոր կնիք: Պետական կազմակերպությունը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

7. Պետական կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

Հոդված 4. Պետական կազմակերպության սեփականությունը

1. Պետական կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև պետական կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

Հիմնադրման ժամանակ պետական կազմակերպությանը հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է պետական կազմակերպության հիմնադրման մասին որոշմամբ: Հիմնադրման ժամանակ պետական կազմակերպությանը հիմնադիրը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

2. Պետական կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

3. Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

4. Պետական կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է պետական կազմակերպությունը:

5. Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

Հոդված 5. Պետական կազմակերպությանն ամրացված գույքը

1. Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

2. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից պետական կազմակերպությանն ամրացված գույքը:

3. Պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

Պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված գույքի օգտագործման արդյունքում պետական կազմակերպության ստացած եկամուտները պետական կազմակերպության սեփականությունն են, եթե այլ բան նախատեսված չէ պետական կազմակերպության կանոնադրությամբ:

Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

4. Հիմնադրի կողմից գույքը պետական կազմակերպության ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

5. Հիմնադրի կողմից պետական կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ պետական կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

Հոդված 6. Պետական կազմակերպության գործունեությունը

1. Պետական կազմակերպությունը ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով պետական կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

2. Պետական կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար: Պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

3. Ենթաօրենսդրական ակտերով չեն կարող պետական կազմակերպությանը տրվել այնպիսի իրավունքներ կամ արտոնություններ, որոնց հետևանքով պետական կազմակերպությունը կարող է ապրանքային շուկայում գերիշխող դիրք գրավել կամ խախտել տնտեսական մրցակցության մասին օրենսդրության այլ պահանջները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

4. Պետական կազմակերպության կողմից իր կարիքների համար գնումները կատարվում են «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Պետական բյուջեով պետական կազմակերպության համար ուղղակիորեն նախատեսված միջոցների սահմաններում կազմակերպության կողմից պետությանը մատուցվող ծառայությունների, աշխատանքների և ապրանքների գնումն իրականացվում է մեկ աղբյուրից՝ գնումների կատարման ձևով: Պետական կազմակերպության կողմից պետությանն այլ ծառայություններ, աշխատանքներ կարող են մատուցվել կամ ապրանքներ իրացվել միայն «Գնումների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով:

5. Պետական կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

Հոդված 7. Պետական կազմակերպության և հիմնադրի պատասխանատվությունը

1. Պետական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

2. Պետական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

Հոդված 8. Պետական կազմակերպության հիմնարկները, ներկայացուցչությունները և մասնաճյուղերը

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, սույն օրենքին և իր կանո-

նադրությանը համապատասխան՝ պետական կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ: Պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչություններն ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

2. Պետական կազմակերպության կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենսդրությանը համապատասխան, եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում պետական կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, օրենքով սահմանված կարգով, ենթակա են հաշվառման՝ իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից:

ԳԼՈՒԽ 2

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հոդված 9. Պետական կազմակերպության ստեղծումը

1. Պետական կազմակերպությունն ստեղծվում է հիմնադրման, ինչպես նաև պետական հիմնարկի կամ հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերությունների վերակազմակերպման միջոցով:

2. Պետական կազմակերպության հիմնադիր (այսուհետ՝ հիմնադիր) կարող է հանդիսանալ միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ի դեմս կառավարության:

3. Պետական կազմակերպությունն ստեղծվում է հիմնադրի որոշմամբ:

Պետական կազմակերպության հիմնադրման մասին հիմնադրի որոշմամբ սահմանվում են պետական կազմակերպության անվանումը, նրա գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները, պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմն ու արժեքը, պետական կազմակերպության կառավարումն իրականացնող այն լիազորված պետական մարմինը, որի ենթակայությանը հանձնվում է պետական կազմակերպությունը, լիազորված պետական մարմնի լիազորությունները, ինչպես նաև օրենքին չհակասող այլ դրույթներ;

4. Հիմնադիրը պատասխանատվություն է կրում մինչև պետական կազմակերպության պետական գրանցումը ծագած՝ պետական կազմակերպության ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

5. Համայնքն իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով ստեղծել համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ համայնքային կազմակերպություն): Համայնքի անունից համայնքային կազմակերպությունն ստեղծում է համայնքի ղեկավարը: Համայնքային կազմակերպության ստեղծման մասին որոշումը և կազմակերպության կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին:

Համայնքային կազմակերպությունների վրա տարածվում են սույն օրենքի պահանջները, բացառությամբ 14-րդ հոդվածի, որով նախատեսված լիազորություններն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Հոդված 10. Պետական կազմակերպության պետական գրանցումը

1. Պետական կազմակերպությունը ենթակա է պետական գրանցման՝ օրենքով սահմանված կարգով:

2. Պետական կազմակերպությունն ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

3. Պետական կազմակերպությունն ստեղծվում է առանց ժամկետային սահմանափակման, եթե նրա կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Հոդված 11. Պետական կազմակերպության կանոնադրությունը

1. Պետական կազմակերպության կանոնադրությունը հանդիսանում է նրա հիմնադիր փաստաթուղթը:

2. Պետական կազմակերպության կանոնադրությունը պետք է ներառի՝

ա) պետական կազմակերպության անվանումը.

բ) պետական կազմակերպության գտնվելու վայրը.

գ) պետական կազմակերպության գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.

դ) պետական կազմակերպության կառավարման մարմինները, դրանց կազմը և լիազորությունները.

ե) պետական կազմակերպության սեփականության ձևավորման և տնօրինման, տիրապետման և օգտագործման կարգը.

զ) պետական կազմակերպության շահույթի օգտագործման կարգը.

է) պետական կազմակերպության լուծարման կարգը.

ը) պետական կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման կարգը.

թ) օրենքով կամ հիմնադրի կողմից նախատեսված և օրենքին չհակասող այլ դրույթներ:

3. Պետական կազմակերպության կանոնադրությունը կամ դրա փոփոխությունները հաստատում է հիմնադիրը, իսկ հիմնադրի որոշմամբ նախատեսված դեպքում՝ նրա լիազորած պետական մարմինը:

ԳԼՈՒԽ 3

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 12. Պետական կազմակերպության կառավարման մարմինները

1. Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, նախագահ, ռեկտոր և այլն):

2. Հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կոլեգիալ կառավարման, խորհրդակցական, վերահսկողություն իրականացնող և (կամ) այլ մարմինների (խորհուրդ, տնօրենների խորհուրդ և այլն) ձևավորում:

Հոդված 13. Պետական կազմակերպության հիմնադիրը

1. Պետական կազմակերպության հիմնադիրն ունի պետական կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) պետական կազմակերպության հիմնադրումը.

բ) պետական կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) պետական կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխություններ կատարելը.

ե) պետական կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ) պետական կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է) պետական կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) օրենքով և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

3. Պետական կազմակերպության հիմնադիրը սույն հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված իր լիազորությունները կարող է վերապահել լիազորված պետական մարմնին, իսկ գործադիր մարմնի նշանակման լիազորությունը՝ նաև կոլեգիալ կառավարման մարմնին:

Հոդված 14. Լիազորված պետական մարմինը

1. Լիազորված պետական մարմինն իրականացնում է պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

2. Լիազորված պետական մարմինը՝

ա) պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) իրականացնում է պետական կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում պետական կազմակերպության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է պետական կազմակերպության գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) վերահսկողություն է իրականացնում պետական կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է պետական կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը, եթե պետական կազմակերպությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին.

ը) իրականացնում է սույն օրենքով, հիմնադրի որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Հոդված 15. Պետական կազմակերպության գործադիր մարմինը

1. Պետական կազմակերպության ընթացիք գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր մարմինը, որին նշանակում և ազատում է (նրա լիազորությունները դադարում են) լիազորված պետական մարմինը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

Պետական կազմակերպության գործադիր մարմինը օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, պետական կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է պետական կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, պետական կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

2. Պետական կազմակերպության գործադիր մարմնի գործառույթներն իրականացնող անձի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրում սահմանվում են նրա իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի, պետական կազմակերպության կառավարման այլ մարմինների հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ սույն օրենքով նախատեսված բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը կգտնեն անհրաժեշտ: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

3. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

4. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով պետական կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված վնասի համար: Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցնող անձը կամ կոլեգիալ մարմնի ղեկավարը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև նրա կողմից պետական կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով պետական կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի համար պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցրած պաշտոնատար անձը կամ կոլեգիալ մարմնի անդամները կրում են լրիվ գույքային պատասխանատվություն:

5. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված պետական մարմնի, պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինների՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

6. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի բացակայության դեպքում նրան նշանակած մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

Հոդված 16. Պետական կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակելը և ազատելը

1. Գործադիր մարմնի պաշտոնում կարող է նշանակվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն:

2. Գործադիր մարմնի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

ա) որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ.

բ) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

գ) որը նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

3. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե՝

ա) նա դիմում է այդ մասին.

բ) լրացել է նրա 65 տարին.

գ) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

դ) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

ե) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

զ) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ, կամ առաջ են եկել սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված հանգամանքները.

է) նա իր գործառույթներն իրականացնելիս պետական կազմակերպությանը կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը.

ը) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

թ) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

ժ) նա կորցրել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիությունը.

ժա) դատական կարգով նրա ղեկավարած պետական կազմակերպությունը ճանաչվել է սնանկ, կամ այն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.

ժբ) պետական կազմակերպության կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարները իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.

ժգ) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

4. Գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի «բ», «գ», «ը», «թ», «ժ», «ժբ» և «ժգ» ենթակետերով նախատեսված դեպքերում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությունը տեղի ունենալու կամ համապատասխան որոշումը, վճիռը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելու հաջորդող օրը:

Սույն հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են դիմումում նշանակված օրվանից:

Սույն հոդվածի 4-րդ կետում նախատեսված դեպքում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են մահվան պահից:

Սույն հոդվածի 3-րդ կետի այլ ենթակետերով նախատեսված դեպքերում գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

(16-րդ հոդվածը փոփ. 19.12.2007 ՀՕ-114)

Հոդված 17. Պետական կազմակերպության գործադիր մարմնի լիազորությունները

Պետական կազմակերպության գործադիր մարմինը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս պետական կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

գ) տալիս է պետական կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

դ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում պետական կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

ե) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

զ) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

է) սահմանում է պետական կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

ը) հաստատում է պետական կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին.

թ) նշանակում է պետական կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին.

ժ) օրենքով և պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժա) իրականացնում է օրենսդրությանը չհակասող և պետական կազմակերպության կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

Հոդված 18. Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը

1. Հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ձևավորվում է պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմին:

Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի ձևավորման և գործունեության կարգը, նրա լիազորությունները սահմանվում են պետական կազմակերպության կանոնադրությամբ:

2. Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամ կարող են լինել միայն ֆիզիկական անձինք: Պետական կազմակերպության գործադիր մարմնում նշանակված անձը չի կարող լինել կոլեգիալ կառավարման մարմնի անդամ: Նա իրավունք ունի կոլեգիալ կառավարման մարմնի նիստերին մասնակցել խորհրդակցական ձայնի իրավունքով:

3. Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամների քանակական կազմը սահմանվում է պետական կազմակերպության կանոնադրությամբ, բայց չի կարող 3 հոգուց պակաս լինել:

4. Բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամների ոչ պակաս, քան քսանհինգ տոկոսը պետք է կազմեն պետական կազմակերպության սովորողները, որոնց ընտրում են սովորողների ինքնակառավարման մարմինների ընդհանուր ժողովները:

Հանրակրթական կրթական ծրագրեր իրականացնող պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամների ոչ պակաս, քան քսան տոկոսը պետք է կազմեն աշակերտների ծնողները, որոնց ընտրում են նրանց ինքնակառավարման մարմինների ընդհանուր ժողովները:

Այլ բնագավառների պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի անդամների ոչ պակաս, քան քսան տոկոսը պետք է կազմեն պետական կազմակերպության աշխատավորական կոլեկտիվի անդամները, որոնց ընտրում են աշխատավորական կոլեկտիվի ընդհանուր ժողովները:

Հոդված 19. Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի լիազորությունները

Հիմնադրի որոշմամբ պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնին կարող են վերապահվել ներքոհիշյալ լիազորությունները կամ դրանց մի մասը.

ա) սույն օրենքով և պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կազմակերպության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ պետական կազմակերպության գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկությունների ներկայացումը լիազորված պետական կառավարման մարմնին.

բ) պետական կազմակերպության գործադիր մարմնի նկատմամբ ընթացիկ վերահսկողության իրականացումը.

գ) պետական կազմակերպության գործադիր մարմնի նշանակումը, նրա հետ կնքվող աշխատանքային պայմանագրի հաստատումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, գործադիր մարմնի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այդ լիազորությունը վերապահվել է իրեն.

դ) հիմնադրի կողմից սահմանված կարգով պետական կազմակերպության շահույթի տնօրինման ուղղությունների սահմանումը.

ե) պետական կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այդ լիազորությունը վերապահվել է իրեն.

զ) իր աշխատակարգի հաստատումը.

է) կոլեգիալ կառավարման մարմնի ղեկավարի ընտրումը.

ը) սահմանված կարգով լիազորված պետական մարմնին պետական կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը.

թ) պետական կազմակերպության ստորաբաժանումների կանոնակարգերի, ներքին կարգապահական և այլ կանոնների հաստատումը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այդ լիազորությունը վերապահվել է իրեն.

ժ) պետական կազմակերպության գործադիր մարմնի հաշվետվությունների քննարկումը և հաստատումը.

ժա) պետական կազմակերպության տարեկան հաշվապահական և այլ հաշվետվությունների քննարկումը.

ժբ) պետական կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների

կնքման համար համաձայնություն տալը, եթե հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ այդ լիազորությունը վերապահվել է իրեն.

ժգ) օրենքով սահմանված այլ լիազորությունների իրականացումը:

Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնին չեն կարող վերապահվել պետական կազմակերպության հիմնադրի, լիազորված պետական մարմնի կամ գործադիր մարմնի լիազորությունները, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 20. Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի նիստերը

1. Կոլեգիալ կառավարման մարմնի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաև լիազորված պետական մարմնի, պետական կազմակերպության գործադիր մարմնի, կոլեգիալ գործադիր մարմնի անդամների մեկ երրորդի պահանջով: Պետական կազմակերպության կոլեգիալ գործադիր մարմնի անդամների մեկ երրորդի պահանջով կոլեգիալ կառավարման մարմնի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և կարգով:

Կոլեգիալ կառավարման մարմնի հերթական նիստերը գումարվում են պետական կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում:

2. Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի նիստերի քվորումը սահմանվում է պետական կազմակերպության կանոնադրությամբ, բայց չի կարող նրա անդամների ընդհանուր թվի կեսից պակաս լինել:

3. Կոլեգիալ կառավարման մարմնի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, եթե պետական կազմակերպության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ կոլեգիալ կառավարման մարմնի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

Կոլեգիալ կառավարման մարմնի նիստերն արձանագրվում են:

4. Կոլեգիալ կառավարման մարմնի աշխատակարգը սահմանվում է պետական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Հոդված 21. Պետական կազմակերպության կառավարման մարմինների անդամների և այլ պաշտոնատար անձանց պարտականությունը

Պետական կազմակերպության լիազորված պետական մարմնի ղեկավարը, պետական կազմակերպության գործադիր մարմինը, նրա տեղակալները, պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինների անդամները պետական կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող պետական կազմակերպության:

Հոդված 22. Խոշոր գործարքները

1. Խոշոր են այն գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են պետական կազմակերպության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակում տրված հաշվապահական հաշվետվությամբ պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի 50 տոկոսից ավելին: Խոշոր չեն այն գործարքները, որոնք կատարվում են պետական կազմակերպության առօրյա գործունեության ընթացքում և համարվում են տվյալ կազմակերպության կանոնադրական խնդիրներից ուղղակիորեն բխող գործառույթ:

2. Խոշոր գործարքը կատարվում է լիազորված պետական մարմնի համաձայնությամբ:

3. Պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի ձևավորման դեպքում պետական կազմակերպության կողմից սեփականության իրավունքով նրան պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումը պետական կազմակերպության կանոնադրությամբ կարող է վերապահվել պետական կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնին:

4. Սույն հոդվածի պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը կարող է դատական կարգով ճանաչվել անվավեր՝ պետական կազմակերպության հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի հայցի հիման վրա:

Հոդված 23. Վերահսկողությունը պետական կազմակերպության գործունեության նկատմամբ

Պետական կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

Պետական կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

ԳԼՈՒԽ 4

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Հոդված 24. Պետական կազմակերպության վերակազմակերպումը

1. Պետական կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Լեռնային Ղարաբաղի Հարապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Պետական կազմակերպությունը կարող է վերակազմավորման ձևով վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

2. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

(24-րդ հոդվածը խմբ. 23.02.2012 ՀՕ-3-Ն)

Հոդված 25. Պետական կազմակերպության լուծարումը

1. Պետական կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

2. Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Պետական կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

3. Պետական կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

4. Պետական կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է պետական բյուջե:

ԳԼՈՒԽ 5

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 26. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահին գործող հիմնարկների գույքի հիման վրա ստեղծվող պետական կազմակերպություններին են փոխանցվում հիմնարկների անունից ստանձնած իրավունքները և պարտականությունները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

30 նոյեմբերի 2002թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-10

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

Ընդունված է 2013 թվականի ապրիլի 25-ին

Սույն օրենքով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, իրավաբանական անձանց, հիմնարկների և կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

Հոդված 1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեզվական քաղաքականությունը

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական լեզուն հայերենն է:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է:
3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լեզվական քաղաքականության հարաբերությունները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նպաստում է ժամանակակից գրական հայերենի կանոնարկմանը, բառակերտման, տերմինաբանության (եզրաբանության), ուղղագրության, ուղղախոսության, տառադարձության և կետադրության կանոնարկման սկզբունքների մշակմանը:
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նպաստում է Ղարաբաղի (Արցախի) բարբառի պահպանմանը, օգտագործմանը, խրախուսում նրա գիտական ուսումնասիրումը և ազգագրական ու բանահյուսական ժողովածուների հրատարակումը:
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն աջակցում է իր սահմաններից դուրս բնակվող հայերի շրջանում հայոց լեզվի պահպանմանը և տարածմանը:
7. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը:
8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում երաշխավորվում է բնակչության մեջ տարածում գտած ռուսաց լեզվի և այլ լեզուների գործածումը:

Հոդված 2. Օրենքում գործածվող հիմնական հասկացությունները

Օրենքում գործածվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

պետական լեզվաքաղաքականություն՝ լեզվի բնագավառում պետության ձեռնարկած միջոցառումների ամբողջություն՝ ուղղված պետական լեզվի պաշտպանությանը, բոլոր ոլորտներում պետական լեզվի կենսագործունեության ապահովմանն ու զարգացմանը.

պետական լեզու՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված և պետության հոգածությամբ ու հովանավորությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գերակայություն ունեցող լեզու.

պաշտոնական լեզու՝ հայոց լեզվի քերականության, բառապաշարի, արտասանության կանոններին ենթարկվող, պաշտոնական գործառույթներին և հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզու.

պաշտոնական խոսք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների (անկախ կարգավիճակից) ի պաշտոնե հրապարակային խոսք.

լեզվավիճակ՝ համաժամանակյա կտրվածքով ներկայացվող լեզվական իրողությունների, զարգացման միտումների և երևույթների ամբողջականություն.

լեզվական հարաբերություններ՝ պետական լեզվի գործառույթներով պայմանավորված՝ լեզվի գործածության ձևեր, որոնք իրականացվում են պետության ներսում և այլ պետությունների ու միջազգային կառույցների միջև առկա փոխհարաբերություններում.

գրական հայերենի կանոնարկում՝ լեզվի հիմնական քերականական օրենքների, բառակերտման և տերմինաբանության միջոցով բառապաշարի հարստացման և քերականական նոր կանոնների ստեղծման գործընթաց.

լեզվական իրավունք՝ քաղաքացու, հանրության, պետական կամ հասարակական կառույցների լեզվական գործառության նկատմամբ պետության սահմանած իրավունքներ.

լեզվական պարտականություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների և հաստատությունների կողմից հանրային կյանքի բոլոր ոլորտներում լեզվական քաղաքականությունից և լեզվական հարաբերություններից բխող սկզբունքների պահպանում.

գործավարություն՝ փաստաթղթերի ստեղծման, ձևավորման, շրջանառության ապահովման և պահպանման գործընթաց, որը ներառում է կազմակերպակարգադրական (կառավարման և վարչական աշխատանքի կազմակերպումն ապահովող), անհատական, նորմատիվ, տեխնիկական, գիտատեխնիկական, նախագծահաշվային, ուսումնամեթոդական, ֆինանսահաշվապահական, գործարքային, հաշվետու-վիճակագրական, առևտրային, տեղեկատվական, բացատրական, հրահանգային, տեխնոլոգիական, նամակագրական-թղթակցային փաստաթղթերի ստեղծումը և (կամ) ձևավորումը, շրջանառության ապահովումն ու պահպանումը.

ցուցանակ՝ կազմակերպության որևէ հատվածում տեղադրված հրապարակային գրվածք, որը պարունակում է տեղեկույթ կազմակերպության (ֆիրմայի) անվանման և (կամ) կազմակերպահրավական ձևի, և (կամ) ապրանքանշանի, և (կամ) տվյալ աշխարհագրական, և (կամ) վարչական, և (կամ) քաղաքաշինական, և (կամ) տնտեսական, և (կամ) հասարակական, և (կամ) միավորի անվանման և այլնի մասին.

պետական վերահսկողության ենթակա փաստաթուղթ՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) գործունեությանն առնչվող փաստաթուղթ:

Հոդված 3. Կրթության լեզուն

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության համակարգում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համայնքներում հանրակրթական ուսուցումն ու դաստիարակությունը կարող են կազմակերպվել իրենց մայրենի լեզվով՝ պետական ծրագրով և հովանավորությամբ, հայերենի պարտադիր ուսուցմամբ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում օտարալեզու ոչ հանրակրթական ուսումնական հաստատություն կարող է հիմնել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:

4. Հանրակրթության ոլորտում միջազգային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկությունները սահմանվում են «Հանրակրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում հայոց լեզվի ընդունելության քննությունը և հայոց լեզվի ուսուցումը պարտադիր են: Հայրենադարձների, փախստականների, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում բնակվող այլազգի քաղաքացիների ու օտարերկրյա քաղաքացիների ընդունելության քննություններն ու ուսուցումը իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Հոդված 4. Քաղաքացիների լեզվական պարտականությունները

1. Պաշտոնատար անձինք և սպասարկման առանձին ոլորտներում աշխատող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են տիրապետել գրական հայերենին:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ներկայացնող անձանց պաշտոնական ելույթների լեզուն գրական հայերենն է, եթե դա չի հակասում տվյալ միջազգային ատյանում ընդունված կարգին:

3. Պաշտոնական խոսքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները պարտավոր են պահպանել գրական հայոց լեզվի անաղարտությունը:

Հոդված 5. Հաստատությունների լեզվական իրավունքները և պարտականությունները

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող իրավաբանական անձինք, հիմնարկները և կազմակերպությունները այլ երկրների պետական մարմինների, իրավաբանական անձանց, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ հաղորդակցվում են փոխադարձաբար ընդունելի լեզվով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական մարմինները, իրավաբանական անձինք, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են՝

1) գործավարությունը կատարել գրական հայերենով՝ ապահովելով հայոց լեզվի անաղարտությունը, ամրագրված լեզվական կանոնները.

2) համագումարներում, նստաշրջաններում, ժողովներում, գիտաժողովներում, հրապարակային ատենախոսությունների և պաշտոնական ու հանրային միջոցառումների, հեռուստառադիոհաղորդումների ժամանակ ապահովել ոչ հայերեն ելույթների հայերեն թարգմանությունը.

3) ցուցանակները, ձևաթղթերը, դրոշմանիշները, նամականիշները, կնիքները, միջազգային փոստային ծրարները, գովազդի բոլոր միջոցները ձևավորել հայերեն՝ անհրաժեշտության դեպքում զուգակցելով այլ լեզուներով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող արտասահմանյան պետական մարմինները, իրավաբանական անձինք, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են պետական վերահսկողության ենթակա փաստաթղթերը զուգակցել հայերենով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների

կազմակերպություններն իրենց փաստաթղթերը, ձևաթղթերը, կնիքները ձևավորում են հայերեն՝ իրենց լեզվով զուգահեռ թարգմանությամբ:

Հոդված 6. Պետական լեզվաքաղաքականության իրականացումը

1. Պետական լեզվաքաղաքականությունն իրականացնում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև դրա համար լիազորված պետական մարմինը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը խրախուսում է հայոց լեզվով հրատարակությունները, մամուլը, ինչպես նաև հայերեն դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, տեղեկատու, գիտամեթոդական, գիտահանրամատչելի գրականության ստեղծումը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում է պատասխանատվություն սույն օրենքի պահանջները խախտելու համար:

Հոդված 7. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Լեզվի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1995 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՕ-2 օրենքը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

15 մայիսի 2013թ.
ք. Ստեփանակերտ
ՀՕ-12-Ն

ԲԱԺԻՆ II

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2002թ. N108

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՉՈՒՄՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ելնելով «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներից և նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության հետ ընդհանուր ուսումնագիտական դաշտի ստեղծումը, ինչպես նաև գիտական աստիճանների և կոչումների շնորհման փաստաթղթերի և չափանիշների միասնականության ապահովումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

ԼՂՀ գիտամանկավարժական կադրերին գիտությունների թեկնածուի, գիտությունների դոկտորի գիտական աստիճանների և դոցենտի ու պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հաստատումը և համապատասխան վկայագրերով դրանց ամրագրումը իրականացնել Հայաստանի Հանրապետության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի միջոցով՝ առաջնորդվելով ՀՀ-ում հաստատված համապատասխան կարգերով:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2007 թ. N81

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասին և 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2007թ. փետրվարի 27-ի
թիվ 81 որոշման

ԿԱՐԳ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՏԱԼՈՒ

I. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

1. Ուսանողական նպաստը փոխհատուցում է (լրիվ կամ մասնակի) ուսանողի ուսման վճարը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, բարձրագույն ուսումնական հաստատության, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

2. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է՝

ա) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով.

բ) օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի,

1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի,

զոհված զինծառայողների երեխա-ուսանողներին, պարտադիր զինվորական ժամկետային ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի, ***(լրաց. 26.05.2015 N 315-Ն)***

գ) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց, զոհված զինծառայողների երեխա-ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև ծրագրի ավարտը, իսկ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց, պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների, բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը, որը տեղափոխվում է կուրսից կուրս:

4. Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով բուհ ընդունված ուսանողներին:

Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցութային հիմունքներով:

Ուսումնական տարվա քննությունների եւ ստուգարքների արդյունքում միեւնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու եւ ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների եւ ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին: ***(լրաց. 26.05.2015 N 315-Ն)***

5. ***(ուժը կորցրած է ճանաչվել 26.05.2015 N 315-Ն)***

6. Ուսման վճարը մասնակի փոխհատուցող ուսանողական նպաստների չափը «Բարձրագույն եւ

հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն սահմանում է և այն տրամադրելու գործառույթներն իրականացնում է բուհը: ***(լրաց. 26.05.2015 N 315-Ն)***

7. Բուհերում ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող եւ հաջորդող երկու շաբաթների ընթացքում: ***(խմբ. 26.05.2015 N 315-Ն)***

8. Պետության կողմից ուսանողական նպաստ տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Մյուս ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստներ հատկացնելու որոշումն ընդունում է հիմնադիրը:

9. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության եւ ծննդաբերության, ինչպես նաեւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում): ***(փոփ. 26.05.2015 N 315-Ն)***

10. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում բուհի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:

11. Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմինը:

II. ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

12. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է. ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվություն, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար (արվեստի բնագավառի բուհերում՝ նաև մասնագիտական մրցույթ ստուգատեսների հաղթողներին):

Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

ա) մասնակցությունը ֆակուլտետի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին,

բ) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում),

գ) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

դ) այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ բուհի հայեցողությամբ:

Սույն կարգի իմաստով ուսանողների պատշաճ վարքագիծը բուհի ներքին կանոնների պահպանումն է:

13. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը, յուրաքանչյուր տարի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի, հաստատում է պետական կրթաթոշակների թիվը և չափը:

14. Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության պետական բյուջեից ֆինանսավորվող ուսումնական հաստատությունների ուսանողներին: Մյուս ուսումնական հաստատություններում կրթաթոշակի հատկացման որոշումն ընդունում է հիմնադիրը:

15. Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի արդյունքներով՝ համաձայն սույն կարգի 12-րդ կետով նախատեսված պայմանների: Նախատեսված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Պետական կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընդգրկվել ուսումնական նպաստառուների համակարգում՝ սույն կարգի 2-րդ կետի պահանջները բավարարելու դեպքում: ***(փոփ. 26.05.2015 N 315-Ն)***

16. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների:

17. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության եւ ծննդաբերության, ինչպես նաեւ մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած կրթաթոշակ ստանալու իրավունքը (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված կրթաթոշակ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում): ***(խմբ. 26.05.2015 N 315-Ն)***

18. Պետական կրթաթոշակների ձևակերպման գործընթացն իրականացնում է բուհը:

19. Բարձրագույն ուսումնական հաստատությունը կարող է սեփական միջոցների հաշվին սահմանել անվանական կրթաթոշակներ:

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 փետրվարի 2008թ. N66

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՐՈՇ ԽՄԲԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող սոցիալական որոշ խմբերի ուսանողների անվճար ուսուցում ապահովելու նպատակով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել, որ՝

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող զոհված զինծառայողների այրիների և երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, 1-ին և 2-րդ խմբի և մանկուց հաշմանդամների և Արցախյան պատերազմի 1-ին խմբի հաշմանդամների երեխաների ուսման վարձավճարը փոխհատուցվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված գումարներից, սկսած 2007-2008 ուստարվանից, համապատասխան ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձավճարի նկատմամբ սահմանված զեղչի հաշվառմամբ, իսկ հեռակա ուսուցման 2009 -2010 և դրան նախորդող ուսումնական տարիներին ընդունված վճարովի համակարգում սովորող վերոնշյալ սոցիալական խմբերի ուսման վարձավճարը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված գումարներից փոխհատուցվում է 50 տոկոսի չափով՝ համապատասխան ուսումնական հաստատությունների կողմից ուսման վարձավճարի նկատմամբ սահմանված զեղչի հաշվառմամբ ***(փոփ. 13.11.2009, N745-Ն):***

բ) Վերոնշյալ սոցիալական խմբերի ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցումն իրականացնում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը՝ ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված ցուցակների համաձայն՝ ուսման վարձավճարների գումարի նշումով և տվյալ սոցիալական խմբերի պատկանելության մասին համապատասխան տեղեկանքի հիման վրա:

2. Հաստատել ԼՂՀ պետական և ոչ պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող սոցիալական որոշ խմբերի ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման կարգը՝ համաձայն հավելվածի:

3. ԼՂՀ ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշմամբ հաստատված սոցիալական խմբերի ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման ֆինանսավորումն իրականացնել ըստ ուսումնական հաստատությունների՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացվող հայտերի համաձայն:

4. Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել ԼՂՀ կրթության և գիտության նախարարությանը:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
«14» փետրվարի 2008թ.
թիվ 66 որոշման

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՐՈՇ ԽՄԲԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են ԼՂՀ պետական և ոչ պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում սովորող սոցիալական խմբերի ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցումը (այսուհետ՝ փոխհատուցում):

2. Փոխհատուցում տրվում է ԼՂՀ պետական և ոչ պետական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգում սովորող հետևյալ սոցիալական խմբերի ուսանողներին.

ա) զոհված զինծառայողների այրիներ և երեխաներ,

բ) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ,

գ) 1-ին և 2-րդ խմբերի և մանկուց հաշմանդամ երեխաներ,

դ) Արցախյան պատերազմի 1-ին խմբի հաշմանդամների երեխաներ:

3. Փոխհատուցման գումարի չափը որոշվում է տվյալ ուսումնական հաստատության կողմից սահմանված ուսման վարձավճարի չափով, տվյալ հաստատության կողմից սահմանված ուսման վարձավճարի նկատմամբ սահմանված զեղչի հաշվառմամբ:

4. Փոխհատուցման գումարը հատկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, յուրաքանչյուր կիսամյակի համար ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվող ցուցակների համաձայն, ուսման վարձավճարի գումարի նշումով և տվյալ սոցիալական խմբերի պատկանելության մասին համապատասխան տեղեկանքի հիման վրա:

5. Զոհված զինծառայողների, Արցախյան պատերազմի 1-ին խմբի հաշմանդամների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսման վարձավճարի փոխհատուցումը տրվում է մինչև ուսումնական հաստատության ավարտելը, իսկ 1-ին և 2-րդ խմբերի և մանկուց հաշմանդամ երեխաների փոխհատուցումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում, համաձայն հաշմանդամության մասին տեղեկանքի:

6. Փոխհատուցումը տվյալ ուսանողի նկատմամբ դադարեցվում է՝

ա) եթե ուսանողը առաջադիմության կամ այլ պատճառներով հեռացվում է ուսումնական հաստատությունից,

բ) սահմանված ժամկետում չի ներկայացնում տվյալ սոցիալական խմբին պատկանելության մասին տեղեկանքը,

գ) ուսանողի ուսման վարձավճարը այլ կազմակերպության կամ անհատ անձի կողմից վճարվելու դեպքում:

7. Փոխհատուցում հատկացնելու ցուցակները ըստ սոցիալական խմբերի ճշգրտվում են ուսումնական հաստատությունների կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա 1-ին և 2-րդ կիսամյակների առաջին տասնօրյակում և ներկայացվում ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն:

8. Փոխհատուցման գումարները փոխանցվում են ուսումնական հաստատություններին յուրաքանչյուր ուստարվա համար փետրվար ամսվա ընթացքում:

9. 2007-2008 ուսումնական տարվա առաջին կիսամյակի համար սույն կարգով սահմանված սոցիալական խմբերի ուսանողների կողմից մուտք գործած գումարները ենթակա են վերադարձման:

10. Փոխհատուցման հատկացման հետ կապված փաստաթղթերը պահվում են ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունում և ուսումնական հաստատություններում:

11. Ուսումնական հաստատությունները փոխհատուցման գումարների վերաբերյալ մեկամսյա ժամկետում հաշվետվություն են ներկայացնում ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն:

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մայիսի 2008 թ. N337

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

ա) մինչև 2008 թվականի մայիսի 12-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքից և սույն կարգից բխող՝ համապատասխան փոփոխություններով, նոր խմբագրությամբ Արցախի պետական համալսարանի կանոնադրությունը.

բ) մինչև 2008 թվականի մայիսի 24-ը ապահովել Արցախի պետական համալսարանից խորհրդի անդամների թեկնածությունների առաջադրումը:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
«6» մայիսի 2008թ.
թիվ 337 որոշման

ԿԱՐԳ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) կոլեգիալ կառավարման մարմինը խորհուրդն է, որի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

2. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

2. Խորհուրդը ձևավորվում է հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացուցիչներից:

3. Խորհրդի անդամների թիվը (ոչ պակաս 20 և ոչ ավելի, քան 32) սահմանում է հաստատության հիմնադիրը (այսուհետ՝ հիմնադիր)՝ հաստատության կանոնադրությամբ:

4. Հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում հաստատության կառուցվածքային միավորները՝

ա) հաստատության կառուցվածքային միավորների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել հաստատության ցանկացած աշխատող,

բ) հաստատության կառուցվածքային միավորներից առաջադրված անձանց թեկնածություններն ընտրվում են հաստատության գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին,

գ) պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

5. Հաստատության ուսանողության ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները՝

ա) ուսանողական խորհուրդների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ցանկացած սովորող (ուսանող կամ ասպիրանտ),

բ) հաստատության ուսանողական խորհուրդը ընտրում է ֆակուլտետներից առաջադրված սովորողների թեկնածությունները և ներկայացնում լիազոր մարմին,

գ) ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

6. Հիմնադրի ներկայացուցիչները պետական պաշտոն զբաղեցնող անձինք են, որոնք կազմում են խորհրդի կազմի առնվազն 20 տոկոսը: ***(խմբ. 31.01.2018 N 59-Ն)***

7. Լիազոր մարմնի կողմից խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված ներկայացուցիչներ, ինչպես նաև ճանաչված գործատուներ (խորհրդի կազմի 25 տոկոսը):

8. Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը: ***(խմբ. 31.01.2018 N 59-Ն)***

9. Խորհուրդն իր կազմից, բացի ուսանողության ներկայացուցիչներից, ընտրում է նախագահ: Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատող (դեկան, ամբիոնի վարիչ, դասախոս): Խորհրդի նախագահը նույն բուհում պահպանում է ժամավճարի սկզբունքով դասախոսելու իրավունքը:

10. Խորհրդի անդամի լիազորությունները կարող են դադարեցվել՝

ա) իր դիմումի համաձայն,

բ) խորհրդի անդամի անգործության հիմնավորմամբ կամ մահվան պատճառով,

գ) խորհրդի անդամի թեկնածությունն առաջադրող մարմնի առաջարկությամբ,

դ) ըստ պաշտոնի առաջադրվելու դեպքում՝ պաշտոնից ազատվելու հետևանքով,

ե) որպես ուսանող առաջադրվելու դեպքում՝ ուսանողի կարգավիճակը կորցնելու հետևանքով:

11. Խորհրդի անդամի լիազորությունները՝ լիազոր մարմնի ներկայացմամբ դադարեցվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից: ***(խմբ. 31.01.2018 N 59-Ն)***

12. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում, այն համալրվում է սույն կարգի 4-8-րդ կետերի պահանջներին համապատասխան:

13. Խորհրդի անգործության դեպքում հիմնադիրը կարող է վաղաժամկետ դադարեցնել խորհրդի նախագահի լիազորությունները կամ լուծարել խորհուրդը:

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 մայիսի 2008 թ. N338

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. 2008-2009 ուսումնական տարվանից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ բուհ) սկսել ուսման կազմակերպման կրեդիտային համակարգի (այսուհետ՝ կրեդիտային համակարգ) ներդրման գործընթացը:

2. Սահմանել ուսանողի տարեկան լրիվ ուսումնական բեռնվածությունը՝ հավասար 60 ակադեմիական կրեդիտի:

Կրեդիտը ներառում է՝

- մասնակցությունը դասախոսություններին, լաբորատոր և գործնական պարապմունքներին, պրակտիկաներին,
- քննությունների և ստուգարքների հանձնումը,
- անհատական պարապմունքների ցուցանիշը,
- ռեֆերատների, կուրսային, դիպլոմային և ուսումնական պլանով նախատեսված այլ աշխատանքների կատարման աստիճանի, որակի գնահատումը:

Բակալավրի աստիճան ստանալու համար սահմանվում է առնվազն 240, բժշկական մասնագիտությունների համար՝ առնվազն 300 կրեդիտ:

Մագիստրոսի աստիճան ստանալու համար սահմանվում է 60-120 կրեդիտ, բժշկական մասնագիտությունների համար՝ առնվազն 180 կրեդիտ:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝

ա) ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության պետական բուհերում կրեդիտային համակարգի կիրարկման փորձը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում գործածության մեջ դրված կրեդիտային համակարգով ուսման գործընթացի կազմակերպման օրինակելի կարգը և կրթական չափորոշիչները՝ իրականացնել գործող ուսումնական պլանների արմատական վերակառուցումը.

բ) կազմակերպել բուհերի ուսումնական վարչակազմի և դասախոսների վերապատրաստում ուսումնական հաստատության միջոցների հաշվին՝ կրեդիտային համակարգի կիրարկման համար.

գ) մշակել համապատասխան օրենսդրական փոփոխությունների փաթեթ՝ նպատակ ունենալով ապահովել կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների ծրագրից ծրագիր և բուհից բուհ փոխանցման ու դրանց փոխադարձ ճանաչման, ոչ լրիվ ուսումնական բեռնվածությամբ ուսումնառության և դրա հետ կապված երկարացված տևողությամբ կրթական ծրագրերի իրականացման, կիսամյակային ուսման վարձերի՝ ըստ կրեդիտների թվի վճարման հնարավորությունը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2008թ. N375

ք.Ստեփանակերտ

«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 184 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» թիվ 337 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 16-ի «Արցախի պետական համալսարան» պետական հիմնարկը վերակազմակերպելու և «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 184 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) ուժը կորցրած ճանաչել որոշման 2-րդ կետը,

բ) որոշման 3-րդ կետում «ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարությանը» բառերը փոխարինել «ԼՂՀ կրթության և գիտության նախարարությանը» բառերով,

գ) որոշման 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրավունք ունի իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) բարձրագույն, միջին և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպում.

2) գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում.

3) գիտահետազոտական և գիտաարտադրական աշխատանքներ.

4) խորհրդատվական, փորձագիտական ծառայություններ.

5) հրատարակչական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում.

6) կրթական և ուսումնական վճարովի դասընթացների կազմակերպում.

7) միջազգային ուսումնական և գիտատեխնիկական համագործակցության կազմակերպում.

8) աշխատակիցների և ուսանողների հանգստի կազմակերպում.

9) հանրակացարանաբնակ ուսանողների կենցաղի կազմակերպում և սպասարկում»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
«20» մայիսի 2008թ. թիվ 375 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը (այսուհետ՝ համալսարան) կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է:

Համալսարանի՝ որպես պետական ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատության գործունեությունը նպատակաուղղված է հայագիտական, բնագիտական, մանկավարժական, բժշկական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտության եւ տեխնիկայի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթության մակարդակներում՝ օրենքով նախատեսված կարգով եւ կրթական ծրագրերի ձեւերով ***(լրաց. 03.07.13 N 423-Ն, փոփ. 01.04.2014 N185-Ն)***

2. Համալսարանի հիմնադիրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն է՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության:

3. Համալսարանը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող պետական ոչ առեւտրային, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կրթական եւ գիտամշակութային կազմակերպություն է, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրության, քաղաքացիական օրենսգրքի, այլ օրենքների ու նորմատիվ իրավական ակտերի հիման վրա եւ դրանցով նախատեսված կարգով ու սահմանված հիմքով ձեռք է բերում եւ իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ ու պարտականություններ: ***(լրաց. 03.07.2013 N 423-Ն)***

3.1 Համալսարանն իրավունք ունի իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության հետեւյալ տեսակները. ***(փոփ. 03.07.2013 N 423-Ն***)

1) բարձրագույն, միջին, հետբուհական մասնագիտական, հանրակրթական և լրացուցիչ կրթության կազմակերպում. ***(լրաց. 03.07.2013 N 423-Ն, 01.04.2014 N185-Ն)***

2) գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում.

3) գիտահետազոտական, գիտատեխնիկական, արտադրական աշխատանքների իրականացում, դրանց արդյունքների առևտրայնացում.***(խմբ. 01.04.2014 N185-Ն)***

4) խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցում. ***(փոփ. 03.07.2013 N 423-Ն)***

5) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում եւ դրա արդյունքների իրացում. ***(լրաց. 01.04.2014 N185-Ն)***

6) կրթական եւ ուսումնական վճարովի դասընթացների կազմակերպում.

7) միջազգային ուսումնական եւ գիտատեխնիկական ծրագրերի իրականացում. ***(փոփ. 01.04.2014 N185-Ն)***

8) աշխատողների, սովորողների և այլ անձանց հանրային սննդի, հանգստի, կենցաղի կազմակերպում և սպասարկում. ***(խմբ. 01.04.2014 N185-Ն)***

9) օտարերկրյա դիմորդների նախապատրաստական կրթության կազմակերպում. ***(խմբ. 01.04.2014 N185-Ն)***

3.2 Համալսարանն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի պատկերով եւ իր անվանմամբ կնիք, դրոշմակնիք և մեդալ, ձևաթուղթ, ինչպես նաև՝ իր խորհրդանիշը և օրհներգը: ***(լրաց. և փոփ.03.07.2013 N 423-Ն)***

4. Համալսարանի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ **«Արցախի պետական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն,**

հայերեն կրճատ՝ **«ԱրՊՀ» ՊՈԱԿ,**

ռուսերեն լրիվ՝ **"Арцахский государственный университет" государственная некоммерческая организация**

ռուսերեն կրճատ՝ **“АрГУ” ГНКО,**

անգլերեն լրիվ՝ **"Artsakh State University" state non-commercial organization,**

անգլերեն կրճատ՝ **ArSU SNCO:**

5. Համալսարանի գտնվելու վայրն է՝ **ք. Ստեփանակերտ, Մ. Գոշի փողոց, 5:**

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

6. Համալսարանի հիմնական խնդիրներն են՝

1) անձի մտավոր, հոգևոր և բարոյական զարգացման պահանջմունքների բավարարումը՝ բարձրագույն և (կամ) հետբուհական մասնագիտական կրթություն տալու միջոցով. ***(փոփ. 03.07.2013 N423-Ն)***

2) գիտության բնագավառներում գիտական, ուսումնամեթոդական և գիտամանկավարժական հետազոտությունների իրականացումը, հայագիտության բազմակողմանի զարգացումը.

3) գիտության, կրթության, տնտեսության և արվեստի զարգացումը՝ գիտամանկավարժական աշխատողների և սովորողների գիտական հետազոտությունների ու ստեղծագործական գործունեության միջոցով, ստացված արդյունքների օգտագործումը տնտեսության մեջ, հետազոտական եւ կրթական գործընթացում.

4) բարձրագույն կրթությամբ գիտամանկավարժական աշխատողների պատրաստումը եւ վերապատրաստումը.

5) կրթության որակի ապահովումը եւ բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.

6) կրթության եւ գիտության ինտեգրացման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը, ժամանակակից մասնագիտությունների ու մասնագիտացումների ներդրումը. ***(լրաց. և փոփ. 01.04.2014 N185-Ն)***

7) կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության եւ հրապարակայնության ապահովումը.

8) սովորողին ազգային, բարոյական եւ համամարդկային արժեքների ոգով դաստիարակելը.

9) հասարակության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և գիտամշակութային մակարդակի բարձրացումը. ***(խմբ. 01.04.2014 N185-Ն)***

10) սովորողների մեջ քաղաքացիական դիրքորոշման, հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը՝ ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության կառավարման պայմաններում.

11) սովորողների և աշխատողների առողջության պահպանման, կենցաղի, սննդի, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

7. Առաջադրված խնդիրներին համապատասխան՝ համալսարանն իրավասու է՝

1) իրականացնելու բարձրագույն, հետբուհական կրթություն, ինչպես նաեւ հանրակրթական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթության ծրագրեր.

2) մշակելու և հաստատելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, հրատարակելու ուսումնական գրականություն և ուսումնամեթոդական ձեռնարկներ.

3) ինքնուրույն որոշելու ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթական տեխնոլոգիաների և սովորողների ընթացիկ ատեստավորման ձևերի, կարգի ու պարբերականության ընտրության հարցերը.

4) կազմակերպելու ըստ կրթական ծրագրերի՝ դիմորդների, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը համալսարան եւ ուսումնական գործընթացը.

5) կազմակերպելու մասնագետների որակավորման բարձրացման, վերապատրաստման և լրացուցիչ կրթության այլ ծրագրեր. ***(փոփ. 01.04.2014 N185-Ն)***

6) որոշելու իր կառուցվածքը, կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման կարգը, օրենքով սահմանված կարգով ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու ֆակուլտետներ, ամբիոններ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ. ***(խմբ. 01.04.2014 N185-Ն)***

7) ինքնուրույն որոշելու բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնելու աշխատողների ընտրությունը, նշանակումը, բաշխումը և ատեստավորումը՝ ներառյալ գիտամանկավարժական կազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական եւ ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը. ***(փոփ. 01.04.2014 N185-Ն)***

8) մշակելու համալսարանի ղեկավար անձնակազմի ու պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության ընթացակարգերը եւ անցկացնելու ընտրությունները.

9) սահմանելու եւ շնորհելու համալսարանի պատվավոր կոչումներ, մրցանակներ, անվանական կրթաթոշակներ, պարգեւատրելու համալսարանի մեդալով.

10) իրականացնելու հրատարակչական գործունեություն.

11) իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնելու երկկողմանի ու բազմակողմանի ուղղակի կապեր հանրապետության եւ օտարերկրյա համալսարանների, գիտական հիմնարկների, պետական մարմինների, այլ կազմակերպությունների, իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հետ, կատարելու տարատեսակ աշխատանքներ (մասնագետների պատրաստում, վերապատրաստում և որակավորման բարձրացում՝ ուսուցման բոլոր ձեւերով, ուսանողների եւ ասպիրանտների ուսուցում, մասնագետների փոխանակում, գիտական, մշակութային-լուսավորչական եւ այլ գործունեություն,

գիտական խորհրդակցությունների ու արշավախմբերի կազմակերպում եւ այլն).

12) վարձակալության տալու իր գույքը, կառավարելու իր ֆինանսները, ինքնուրույն որոշելու իր ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները՝ ներառյալ իր աշխատողների վարձատրության եւ նյութական խրախուսման կարգը եւ չափերը, սահմանելու կրթաթոշակներ.

13) իրականացնելու օրենքով եւ իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

7.1. Չեն թույլատրվում համալսարանում կուսակցությունների, հասարակական-կրոնական կազմակերպությունների, դրանց կազմակերպական կառույցների ստեղծումն ու գործունեությունը՝ բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական եւ շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների: ***(փոփ. 03.07.2013 N 423-Ն)***

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8. Համալսարանի կառավարումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը եւ սույն կանոնադրությանը համապատասխան:

9. Համալսարանի կառավարումը հիմնված է իր ինքնավարության վրա՝ միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցմամբ, հիմնադրի, լիազոր մարմնի, համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ: ***(լրաց. 03.07.2013 N423-Ն)***

9.1. Հիմնադիրը՝

1) սահմանում է համալսարանի՝

ա. անվանումը,

բ. գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները,

գ. կառավարումն իրականացնող այն լիազորված պետական մարմինը, որի ենթակայությանը հանձնվում է պետական կազմակերպությունը.

2) հաստատում է համալսարանի կանոնադրությունը.

3) հաստատում է համալսարանի ռեկտորի ընտրության արդյունքները.

4) իրականացնում է օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

9.2 Լիազոր պետական մարմինը՝

1) իրականացնում է վերահսկողություն համալսարանի գործունեության նկատմամբ.

2) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում համալսարանի ռեկտորի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու որոշումները.

3) վերահսկողություն է իրականացնում համալսարանին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանման նկատմամբ.

4) լսում է համալսարանի գործունեության մասին հաշվետվությունները.

5) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ: ***(լրաց. 03.07.2013 N423-Ն)***

10. Համալսարանի խորհուրդն ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմին է, որն ստեղծվում է 5 տարի ժամկետով՝ համալսարանի կանոնադրությանը համապատասխան:

11.Համալսարանի խորհուրդը՝

1) քննարկում եւ հաստատում է համալսարանի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը. ***(փոփ. 03.07.2013 N423-Ն)***

2) հաստատում է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրերը.

3) լսում և գնահատում է համալսարանի տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը.

4) ընտրում է համալսարանի ռեկտորին.

5) քննարկում եւ սահմանված կարգով հիմնադրին է ներկայացնում առաջարկություն համալսարանի կանոնադրության կամ դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ.

6) հաստատում է իր աշխատակարգը, ռեկտորի ընտրությունների ընթացակարգը:

11.1. Համալսարանի խորհուրդը ձևավորվում է բարձրագույն ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմից, սովորողների (ուսանողներ և ասպիրանտներ) ներկայացուցիչներից, ինչպես նաև հիմնադրի ու լիազորված մարմնի ներկայացուցիչներից:

11.2. Համալսարանի խորհուրդը կազմված է 28 անդամից: Համալսարանի խորհրդի անդամներից 7-ը պետք է լինեն պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, որոնք առաջադրվում են կառուցվածքային ստորաբաժանումներից:

11.3 Ֆակուլտետների եւ կառուցվածքային այլ ստորաբաժանումների առաջադրած թեկնածուներն ընտրվում են համալսարանի գիտական խորհրդում: ***(փոփ. 01.04.2014 N185-Ն)***

11.4 Համալսարանի ռեկտորը չի կարող լինել խորհրդի անդամ: Նա իրավունք ունի խորհրդի նիստերին մասնակցելու խորհրդակցական ձայնի իրավունքով: ***(փոփ. 01.04.2014 N185-Ս)***

11.5 Համալսարանի խորհրդի անդամներից 7-ը պետք է լինեն սովորողներ: Համալսարանի խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները՝ յուրաքանչյուրից մեկական անդամ՝ բարձր առաջադիմություն եւ հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող սովորողներից: Համալսարանի ուսանողական խորհուրդը ֆակուլտետներից առաջադրված սովորողների թեկնածություններից ընտրում է խորհրդի անդամներին եւ ներկայացնում լիազոր մարմին:

11.6 Համալսարանի խորհրդի անդամներից 7-ը պետական պաշտոն զբաղեցնող անձինք են, որոնք հիմնադրի ներկայացուցիչներն են:

Համալսարանի խորհրդի անդամներից 7-ը լիազորված մարմնի ներկայացուցիչներն են, որոնք առաջադրվում են կրթության, գիտության, մշակույթի եւ տնտեսության տարբեր ոլորտների ճանաչված գործիչներից, ինչպես նաեւ ճանաչված գործատուներից: ***(խմբ. 31.01.2018 N59-Ս)***

11.7 Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը:***(խմբ. 31.01.2018 N 59-Ս)***

11.8 Համալսարանի խորհուրդը ձեւավորվելուց հետո իր կազմից ընտրում է նախագահ եւ քարտուղար: Խորհրդի նախագահը չի կարող լինել նույն բուհում հաստիքային աշխատող (դեկան, ամբիոնի վարիչ, դասախոս): Խորհրդի նախագահը նույն բուհում պահպանում է ժամավճարի սկզբունքով դասախոսելու իրավունքը:

11.9 Համալսարանի խորհրդի նախագահը նախապատրաստում է խորհրդի նիստերը, ղեկավարում դրանք, ստորագրում խորհրդի արձանագրությունները եւ որոշումները, իրականացնում աշխատակարգով նախատեսված այլ լիազորություններ: Համալսարանի խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք:

11.10 Համալսարանի խորհրդի անդամների իրավասությունը, նիստերի նախապատրաստման, գումարման, անցկացման, քվեարկության, որոշումների ընդունման, նիստերի արձանագրման կարգը սահմանվում են խորհրդի աշխատակարգով: ***(փոփ. 03.07.2013 N 423-Ս)***

Համալսարանի խորհրդի նիստերը գումարվում են առնվազն տարեկան մեկ անգամ:

Համալսարանի խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, ինչպես նաեւ լիազորված պետական մարմնի, համալսարանի ռեկտորի, համալսարանի խորհրդի եւ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով: Խորհրդի եւ գիտական խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

Համալսարանի խորհրդի նիստերը համարվում են իրավազոր, եթե դրանց մասնակցում է խորհրդի անդամների երկու երրորդը:

Համալսարանի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե սույն կանոնադրությամբ կամ խորհրդի որոշմամբ այլ բան չի նախատեսվում:

12. Համալսարանի գիտական խորհուրդը լուծում է համալսարանի ուսումնամեթոդական եւ գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման եւ կառավարման հիմնահարցերը:

12.1 Համալսարանի գիտական խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Գիտական խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:***(փոփ. 03.07.2013 N 423-Ս)***

12.2 Գիտական խորհրդի ձեւավորման եւ գործունեության կարգը սահմանվում է գիտական խորհրդի կանոնակարգով: ***(փոփ. 03.07.2013 N 423-Ս)***

13. Համալսարանի գիտական խորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը.

2) մշակում է համալսարանի ուսանողների ավարտական որակավորման պայմանները, մագիստրատուրայի ընդունելության կանոնները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան.

3) համալսարանին վերապահված ընդունելության անվճար և վճարովի ուսուցման տեղերից դուրս, սահմանված կարգին համապատասխան, ռեկտորի ներկայացմամբ, հաստատում է վճարովի հիմունքներով ընդունելության տեղերը և վճարի չափը՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան.

4) ռեկտորի ներկայացմամբ՝ որոշում է ստեղծել, վերակազմակերպել, լուծարել ֆակուլտետներ, գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ, քոլեջներ, ավագ դպրոցներ, ինչպես նաեւ ամբիոններ, այլ կառուցվածքային ստորաբաժանումներ.

5) հաստատում է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների օրինակելի կանոնադրությունները, համալսարանի եւ դրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերը.

6) քննարկում է համալսարանի մասնագիտությունների եւ մասնագիտացումների անվանացանկերը.

7) հաստատում է ուսումնական պլանները՝ ըստ մասնագիտությունների.

8) քննարկում է գիտական գործունեության գլխավոր եւ հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող կարեւորագույն գիտահետազոտական եւ գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.

9) ընդունում է պատվավոր եւ վաստակավոր կոչումներ շնորհելու, համալսարանի մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, համալսարանի մեդալով պարգեւատրելու, հանրապետական ու միջազգային պարգեւների եւ կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու մասին որոշումներ.

10) հաստատում է ֆակուլտետների դեկանների եւ ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունների ընթացակարգերը. ***(փոփ. 03.07.2013 N 423-Ն, լրաց. 01.04.2014 N185-Ն)***

11) համալսարանի գործունեության բնագավառին, նպատակներին եւ խնդիրներին համապատասխան՝ լիազորված պետական կառավարման մարմին է ներկայացնում առաջարկություններ համալսարանի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ.

12) ներկայացնում է առաջարկություններ համալսարանի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ.

13) քննարկում է հանրապետության հասարակական, քաղաքական, կրթական, գիտական ու մշակութային կյանքին և կարևորագույն իրադարձություններին վերաբերող խնդիրներ.

14) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությունից եւ սույն կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

13.1. Համալսարանի գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 40-ը: Գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում են ռեկտորը, որը գիտական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները, գիտական քարտուղարը եւ համալսարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ գիտական խորհրդի կանոնակարգի համաձայն:***(փոփ. 03.07.2013 N 423-Ն)***

13.2. Համալսարանի գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների երկու երրորդը: Որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:***(փոփ. 03.07.2013 N 423-Ն)***

13.3. Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ, անհրաժեշտության դեպքում, ստեղծվում են համահամալսարանական հանձնաժողովներ (մրցութային եւ այլն), որոնց կարգավիճակը, կառուցվածքը, իրավասությունը, աշխատանքի կարգը սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական ակտերով, համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգով:***(փոփ. 03.07.2013 N 423-Ն)***

14. Համալսարանի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է: Համալսարանի խորհրդի եւ գիտական խորհրդի նիստերի միջեւ ընկած ժամանակահատվածում ռեկտորատն իր կանոնակարգով իրեն ընձեռված լիազորությունների սահմաններում քննարկում է համալսարանի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցերը, համալսարանի խորհրդի եւ գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքը: Համալսարանի ռեկտորատի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, համալսարանի գիտական քարտուղարը, ուսումնական ստորաբաժանման ղեկավարը, գլխավոր հաշվապահը, արհմիութենական կազմակերպության նախագահը, ֆակուլտետների դեկանները, համահամալսարանական ամբիոնների վարիչները, ուսանողական վարչության նախագահը և այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները: ***(փոփ. և լրաց. 01.04.2014 N185-Ն)***

15. Համալսարանի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է համալսարանի գործադիր մարմինը՝ ռեկտորը: Ռեկտորն, իր իրավասության սահմաններում եւ համալսարանի կանոնադրությանը համապատասխան, գործում է միանձնյա եւ լրիվ պատասխանատվություն է կրում համալսարանի աշխատանքի արդյունքների համար:

Համալսարանի ռեկտորն ընտրվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ եւ սույն կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով՝ համալսարանի խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով:

15.1 Համալսարանի ռեկտոր կարող է ընտրվել կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ և գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում ունեցող անձը: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում:

Ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով հավաքել է խորհրդի ցուցակային կազմի 50 տոկոսից ավելի ձայն: ***(խմբ. 03.07.2013 N 423-Ն)***

16. ԼՂՀ օրենսդրության եւ սույն կանոնադրության համաձայն՝ համալսարանի ռեկտորն իր իրավասության սահմաններում՝

1) ղեկավարում է համալսարանի կրթական, գիտական, արտադրական, տնտեսական, ֆինանսական, միջազգային եւ այլ գործունեությունը.

2) կազմակերպում է համալսարանի գիտական խորհրդի, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը.

3) հրավիրում է համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի նիստեր.

4) տարեկան հաշվետվություն է ներկայացնում համալսարանի խորհրդին.

5) ապահովում է համալսարանի խորհրդի եւ գիտական խորհրդի որոշումների կատարումը.

6) համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում համալսարանի կառուցվածքը, ինչպես նաև ներկայացնում է կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու վերաբերյալ առաջարկություններ.

7) համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, դրանց կանոնակարգերը, ներհամալսարանական կանոնները, ներհամալսարանական այլ իրավական ակտեր.

8) սույն կանոնադրությանը համապատասխան՝ կազմավորում է համալսարանի կառավարման մարմինները, սահմանում է համալսարանի անձնակազմի հաստիքացուցակը, լիազորությունները, պաշտոնական պարտականությունները.

9) արձակում է ուսանողների ընդունելության, հեռացման, վերականգնման, տեղափոխման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր կիրառելու, որակավորման աստիճան շնորհելու, ուսանողական նպաստ հատկացնելու և համալսարանի գործունեության առնչվող այլ հրամաններ. ***(խմբ. 01.04.2014 N185-Ն)***

10) աշխատանքի նշանակում եւ աշխատանքից ազատում է համալսարանի պրոռեկտորներին, համալսարանի վարչական ստորաբաժանումների ղեկավարներին, որոշում նրանց գործունեության ոլորտները եւ իրավասությունները.

11) աշխատանքի նշանակում եւ աշխատանքից ազատում է համալսարանի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսանքի միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր.

12) կնքում է աշխատանքային պայմանագրեր ընտրված դեկանների, ամբիոնների վարիչների եւ գիտամանկավարժական կազմի աշխատողների հետ.

13) կասեցնում է համալսարանի գիտական խորհրդի, ինչպես նաեւ կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման մարմինների եւ առանձին պաշտոնատար անձանց այն որոշումները, որոնք չեն բխում նրանց իրավասությունից, հակասում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանն ու սույն կանոնադրությանը՝ նշանակելով դրանց վերաքննարկում.

14) իր բացակայության ժամանակ ռեկտորի պարտականությունների կատարումը դնում է պրոռեկտորներից մեկի վրա.

15) տալիս է համալսարանի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր, բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

16) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհակասող եւ համալսարանի կառավարման այլ մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

16.1 Համալսարանի ռեկտորն առանց լիազորագրի գործում է համալսարանի անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, պետական մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազոր պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ և ներհամալսարանական այլ ակտերով սահմանված կարգով տնօրինում է համալսարանի գույքն ու ֆինանսական միջոցները, կնքում է պայմանագրեր, արձակում հրամաններ, կարգադրություններ, հրահանգներ, տալիս ցուցումներ, որոնք պարտադիր են համալսարանի կոլեկտիվի անդամների համար: ***(լրաց. 03.07.2013 N 423-Ն)***

17. Պրոռեկտորները իրականացնում են համալսարանի գործունեության որոշակի ոլորտի անմիջական ղեկավարությունը՝ ռեկտորի հանձնարարություններին, հրամաններին եւ կարգադրություններին համապատասխան:

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

18. Համալսարանն ինքնուրույն է իր կառուցվածքի ձեւավորման գործում:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներն են ֆակուլտետները, ամբիոնները, կենտրոնները, բաժինները, լաբորատորիաները, գիտական գրադարանը, հրատարակչությունը եւ այլ ստորաբաժանումներ:

Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կարգավիճակը, գործառույթները, իրավասությունները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրու-

թյամբ եւ իրենց կանոնադրություններով՝ հաստատված համալսարանի գիտական խորհրդի կողմից:

19. Համալսարանը իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ միասին ուսումնական, գիտական եւ արտադրական ամբողջություն է, որի միասնությունն ապահովվում է՝

1) ուսումնական, կրթական կամ գիտահետազոտական գործընթացների կազմակերպմանը նրա բոլոր ստորաբաժանումների պարտադիր մասնակցությամբ.

2) բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների կողմից համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի որոշումների, ռեկտորի հրամանների եւ կարգադրությունների կատարմամբ:

20. Համալսարանի ֆակուլտետները գործում են իրենց կանոնադրությունների համաձայն:

Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը, սույն կանոնադրությանը եւ ֆակուլտետի կանոնադրությանը:

Ֆակուլտետը, ելնելով իր կողմից իրականացվող ուսումնական, գիտական, ուսումնաօժանդակ եւ ինժեներատեխնիկական աշխատանքներից, մշակում է իր հաստիքացուցակը՝ ըստ սահմանված չափանիշների, որը հաստատվում է ռեկտորի կողմից:

Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից եւ ուսումնական, գիտական ու այլ օժանդակ օղակներից:

Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի մեծ խորհուրդը, խորհուրդը եւ դեկանը:

21. Ֆակուլտետի մեծ խորհուրդն ընդունում է ֆակուլտետի կանոնադրությունը եւ այն ներկայացնում համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը, ընտրում է ֆակուլտետի դեկանին, լսում նրա ամենամյա հաշվետվությունը եւ գնահատում նրա գործունեությունը:

22. Ֆակուլտետի խորհրդի՝ որպես կառավարման մարմնի կազմը, ձեւավորման ու գործունեության կարգը սահմանվում են ֆակուլտետի կանոնադրությամբ: Ֆակուլտետի խորհրդի նախագահը ֆակուլտետի դեկանն է:

22.1 Ֆակուլտետի խորհուրդը՝

1) ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ (լաբորատորիաներ, բաժիններ) եւ այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու եւ վերացնելու, վերակազմակերպելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում համալսարանի ռեկտորին.

2) լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հարցերը.

3) համալսարանի ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի ուսումնական պլանները՝ համալսարանի գիտական խորհրդում հաստատելու համար.

4) համալսարանի գիտական խորհուրդ է ներկայացնում առաջարկություն՝ ֆակուլտետի աշխատողին պատվավոր եւ վաստակավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ.

5) ընտրում է համալսարանի գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչներին.

6) լուծում է սույն կանոնադրությունից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական եւ գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր: ***(փոփ. 03.07.2013 N 423-Ն)***

22.2 Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են դրա նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ղեկավարության, աշխատողների, ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների եւ հայցորդների համար: ***(փոփ. 03.07.2013 N 423-Ն)***

23. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում եւ ղեկավարում է ֆակուլտետի դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում եւ սույն կանոնադրության համաձայն:

Դեկանն ընտրվում է ֆակուլտետի մեծ խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ֆակուլտետի մեծ խորհրդում ամենաշատ ձայներ, բայց ոչ պակաս, քան մասնակիցների ձայների կեսից ավելին հավաքած թեկնածուն: Ֆակուլտետի մեծ խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցել է խորհրդի անդամների երկու երրորդը: Ռեկտորը դեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ դեկանի ընտրության արդյունքների հիման վրա:

Համալսարանի ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածուների առաջադրման, ընտրությունների անցկացման եւ դեկանին պաշտոնում հրամանագրելու կարգը սահմանվում է դեկանի ընտրության ընթացակարգով:

24. Ֆակուլտետի դեկանը՝

1) ղեկավարում է ֆակուլտետի կրթական, գիտական, արտադրական, միջազգային եւ այլ գործունեությունը.

2) ապահովում է ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների, ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները.

4) սահմանված կարգով առաջարկություն է ներկայացնում ռեկտորին՝ ուսանողներին հեռացնելու, վերականգնելու, տեղափոխելու, արձակուրդ ձևակերպելու, կուրսից կուրս փոխադրելու մասին: ***(խմբ. 03.07.2013 N 423-Ն)***

25.Ամբիոնները (բաժինները, լաբորատորիաները) համալսարանի ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման հիմնական կառուցվածքային ստորաբաժանումներն են, որոնք գործում են սույն կանոնադրության եւ ֆակուլտետի կանոնադրության համաձայն:

Համալսարանի ամբիոնները կարող են լինել նաև համահամալսարանական և անմիջականորեն ենթարկվել համապատասխան պրոռեկտորին:

Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում են պրոֆեսորները, դոցենտները, ասիստենտները, դասախոսները: ***(փոփ. 01.04.2014 N185-Ն)***

Բաժնի (լաբորատորիայի) գիտական և ինժեներատեխնիկական կազմում ընդգրկվում են գիտական եւ ինժեներատեխնիկական աշխատողները:

26. Ամբիոնը (բաժինը, լաբորատորիան) մշակում է ամբիոնի (բաժնի, լաբորատորիայի) աշխատողների հաստիքացուցակը ֆակուլտետի հաստիքացուցակի շրջանակներում՝ ելնելով կատարվող մանկավարժական, գիտական, ուսումնաօժանդակ եւ ինժեներատեխնիկական աշխատանքների ծավալից ու ձեւերից՝ ըստ սահմանված չափանիշների:

Համալսարանի ամբիոնների (բաժինների, լաբորատորիաների) պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, կազմի եւ համալսարանի միջեւ աշխատանքային հարաբերություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով, մրցութային կարգով:

27. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, որն ընտրվում է մրցութային հիմունքներով, 5 տարի ժամկետով, ֆակուլտետի խորհրդում՝ ամբիոնի (բաժնի, լաբորատորիայի) կարծիքն ստանալուց հետո: Ֆակուլտետի խորհրդի որոշումը հաստատվում է համալսարանի գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ, որից հետո ընտրված անձը ռեկտորի հրամանով նշանակվում է ամբիոնի վարիչ, եւ նրա հետ կնքվում է աշխատանքային պայմանագիր:

Ամբիոնի (բաժնի, լաբորատորիայի) վարիչը կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի ուսումնագիտական եւ այլ աշխատանքները, ներկայացնում նրա կոլեկտիվը համալսարանի, ֆակուլտետի, համալսարանական ստորաբաժանումների, ինչպես նաև ոչ համալսարանական կազմակերպությունների հետ հարաբերություններում:

Ամբիոնի (բաժնի, լաբորատորիայի) գիտաուսումնական հիմնական հարցերը քննարկվում են ամբիոնի (բաժնի, լաբորատորիայի) գիտամանկավարժական կազմի նիստերում: Ամբիոնի (բաժնի, լաբորատորիայի) այլ աշխատողներն այդ նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

28. Ուսանողների՝ համալսարան ընդունելությունը կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

29. Համալսարանում ուսուցումն իրականացվում է առկա, հեռակա, դրսեկության և հեռավար ձևերով:

30. Համալսարանի հիմնական կրթական ծրագրերով ուսումնառությունն իրականացվում է կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգի դրույթներին համապատասխան: ***(խմբ. 01.04.2014 N185-Ն)***

31. Համալսարանում բարձրագույն կրթությունն իրականացվում է բակալավրի և մագիստրոսի հիմնական կրթական ծրագրերով՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան: ***(խմբ. 01.04.2014 N185-Ն)***

32. Համալսարանում կիրառվում է բարձրագույն կրթության աստիճանական համակարգ: Ուսուցման յուրաքանչյուր աստիճանի շրջանավարտին տրվում է համապատասխան որակավորում և ավարտական վկայական (դիպլոմ):

Ուսուցման մեկ աստիճանից մյուսին անցումը կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համալսարանում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ:***(լրաց. 01.04.2014 N185-Ն)***

Համալսարանում գործում է որակի ներքին ապահովման և վերահսկման համակարգ, որի նպատակը կրթության որակի շարունակական բարելավումն է: ***(լրաց.01.04.2014 N185-Ն)***

33. Համալսարանի գիտական գործունեությունը ֆինանսավորվում է հետեւյալ աղբյուրներից.

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից.

2) հանրապետության ու օտարերկրյա հիմնարկների, կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից.

3) բարեգործական նպատակով տրամադրվող միջոցներից.

4) նախաձեռնողական հետազոտությունների համար նախատեսված համալսարանի միջոցներից.

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

34. Գիտահետազոտական աշխատանքներին կարող են մասնակցել համալսարանի դասախոսները, գիտաշխատողները, ասպիրանտները, հետազոտողները, հայցորդները եւ ուսանողները, ինչպես նաեւ պայմանագրային կարգով հրավիրված այլ մասնագետներ:

35. Համալսարանը կազմակերպում եւ անցկացնում է գիտաժողովներ, համաժողովներ, խորհրդակցություններ, սեմինարներ:

VI. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈԼԵԿՏԻՎԸ

36. Համալսարանի կոլեկտիվը կազմում են պրոֆեսորները, դոցենտները, ավագ դասախոսները, դասախոսները, ասիստենտները, դոկտորանտները, ասպիրանտները, գիտական, վարչական, ուսումնաօժանդակ եւ այլ աշխատողները, ուսանողները (բակալավր, մագիստրոս):

Համալսարանի բոլոր աշխատողները բաժանվում են գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական կազմը, գիտական աշխատողները), ինժեներատեխնիկական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ եւ այլ տարակարգերի:

Համալսարանի աշխատողների եւ սովորողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով եւ համալսարանի ներքին ակտերով:

37. Համալսարանի կոլեկտիվի անդամներն իրավունք ունեն՝

1) ընտրելու եւ ընտրվելու համալսարանի պաշտոններում եւ կառավարման համապատասխան մարմիններում.

2) մասնակցելու համալսարանի գործունեությանն առնչվող բոլոր խնդիրների քննարկմանը եւ ընտրովի մարմինների աշխատանքներին.

3) միավորվելու արհմիությունների եւ այլ հասարակական կազմակերպությունների մեջ.

4) օգտվելու գրադարանների, տեղեկատվական պահոցների, ուսումնական եւ գիտական ստորաբաժանումների, ինչպես նաեւ սոցիալ-կենցաղային, բուժական եւ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ծառայություններից՝ համալսարանի կանոնադրությանը եւ կոլեկտիվ պայմանագրին համապատասխան.

5) բողոքարկելու համալսարանի համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հրամանները եւ կարգադրությունները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը, գիտաշխատողները եւ ուսանողներն օժտված են ակադեմիական ազատություններով:

Համալսարանի գործունեության համար հատուկ կարեւորություն ունեցող խնդիրները քննարկվում են համալսարանի կոլեկտիվի ներկայացուցիչների ժողովում: Ժողովի կազմի մեջ մտնում են համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի անդամները, ֆակուլտետների խորհուրդները, ինչպես նաեւ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները՝ ի դեմս ղեկավարի եւ արհմիութենական կազմակերպության նախագահի: Ժողովի կանոնակարգը հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը:

38. Գիտամանկավարժական աշխատողների, ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների եւ հայցորդների համար ստեղծվում են գիտական ճշմարտության ազատ որոնումների, շարադրման ու տարածման նպաստավոր պայմաններ՝ այդ նպատակներին հատկացված միջոցների շրջանակներում:

Համալսարանի կոլեկտիվի անդամները պարտավոր են՝

1) պահպանել եւ կատարել սույն կանոնադրության, համալսարանի այլ ակտերի դրույթները.

2) կատարել համալսարանի ղեկավար մարմինների որոշումները.

3) ապահովել ուսումնական գործընթացի, անցկացվող գիտական հետազոտությունների արդյունավետությունը.

4) մշտապես բարձրացնել իրենց մասնագիտական որակավորումը, ոչ պակաս, քան 5 տարին մեկ անգամ սահմանված կարգով անցնել վերապատրաստում կամ որակավորման բարձրացում.

5) պահպանել եւ արդյունավետորեն ու խնայողաբար օգտագործել համալսարանի գույքը.

6) հոգ տանել համալսարանի հեղինակության բարձրացման մասին.

7) սովորողների մեջ ձեւավորել մասնագիտական բարձր որակներ, պատշաճ վարք ու վարվելակերպ, քաղաքացիական դիրքորոշում ու հայրենասիրություն.

8) սովորողների մեջ զարգացնել ինքնուրույնություն, նախաձեռնություն եւ ստեղծագործական ունակություններ:

39. Համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի, գիտական աշխատողների բոլոր թափուր պաշտոններն զբաղեցվում են համաձայն համալսարանի կանոնադրության եւ գիտամանկավարժական պաշտոնների նշանակման կարգի:

Գիտամանկավարժական կազմի բոլոր թափուր պաշտոններում նշանակումն իրականացվում է ըստ աշխատանքային պայմանագրի, որը կնքվում է 5 տարի ժամկետով:

Աշխատանքային պայմանագրի կնքմանը նախորդում է բաց մրցութային ընտրությունը:

Համալսարանի գիտամանկավարժական աշխատողներն ունեն՝

1) իրենց մասնագիտական գործունեության կազմակերպման և նյութատեխնիկական ապահովման,

2) գիտական հետազոտության ակադեմիական ազատության,

3) սեփական նախաձեռնությամբ հետազոտական թեմաներ ընտրելու եւ մշակելու ազատության,

4) պետական կրթական չափորոշիչներին համապատասխան ուսումնական դասընթացների բովանդակության, ծրագրերի ազատ որոշման,

5) իրենց անհատական առանձնահատկություններին համապատասխանող եւ ուսումնական գործընթացի բարձր որակն ապահովող նյութի շարադրման, դասավանդման մեթոդների ու միջոցների ազատ ընտրության,

6) համատեղությամբ գիտական, մանկավարժական եւ այլ բնույթի աշխատանքներ կատարելու իրավունք:

40. Համալսարանի ուսանողների ընտրությունն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

41. Համալսարանի սովորողը (ուսանողը, ասպիրանտը) իրավունք ունի՝

1) իր հայեցողությամբ, ըստ հակումների եւ պահանջմունքների, ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձեւը, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթությունը.

2) ստանալու գիտության, տեխնիկայի եւ մշակույթի ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախելու համալսարանում կարդացվող դասախոսություններին.

3) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր դասընթացներ, որոնք տրամադրում են համապատասխան ֆակուլտետը (ուսումնական ստորաբաժանումը) եւ ամբիոնը.

4) մասնակցելու իր կրթության բովանդակության ձեւավորմանը (ուսումնական դասընթացների եւ մասնագիտացման ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները.

5) մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին եւ գնահատելու պրոֆեսորա-դասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը.

6) բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է համալսարանում՝ ըստ սահմանված կարգի.

7) հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական ուսուցման հետ եւ ստանալու 2 որակավորման աստիճան.

8) ընդգրկվելու եւ մասնակցելու համալսարանի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ եւ համալսարանի կանոնադրությամբ սահմանված կարգով.

9) օգտվելու համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական եւ այլ ստորաբաժանումների ծառայություններից.

10) ըստ նախասիրությունների՝ մասնակցելու համալսարանում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին եւ գիտաժողովներին.

11) ստեղծելու ուսանողական հասարակական կազմակերպություններ՝ ուսանողական կյանքի հարցերի լուծման համար.

12) միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում եւ ուսանողական այլ կազմակերպություններում.

13) բողոքարկելու համալսարանի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

14) օգտվելու ուսման տարեկան վարձի մասամբ կամ լրիվ փոխհատուցման իրավունքից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

15) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ եւ համալսարանի կողմից սահմանված կարգով ստանալու սահմանված չափի, ներառյալ անվանական, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից նշանակված կրթաթոշակը, դրամաշնորհը, ինչպես նաեւ ուսանողական վարկը.

16) ծանոթանալու համալսարանի կանոնադրությանը եւ այլ նորմատիվ փաստաթղթերի.

17) բարձրագույն ուսումնական հաստատության հետ կնքելու պայմանագիր ուսումնառության պայմանների մասին.

18) լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով՝ բացառությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի.

19) ուսուցման առկա ձեւով սովորելու դեպքում տվյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն 2 անգամ գտնվելու արձակուրդում՝ ոչ պակաս, քան 7 շաբաթ ընդհանուր տեւողությամբ.

20) հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում՝ համալսարանի սահմանած կարգով հանրակացարանում ստանալու համապատասխան տեղ.

21) փոխադրվելու մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները.

22) ուսման բարձր առաջադիմության եւ գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական եւ (կամ) նյութական խրախուսանք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ եւ համալսարանի կողմից սահմանված կարգով:

Կրթությունն ընդհատած նախկին ուսանողն իրավունք ունի վերականգնվելու բարձրագույն ուսումնական հաստատությունում:

Արգելվում է ուսանողներին արտաուսումնական աշխատանքում ներգրավելը՝ առանց նրանց եւ (կամ) նրանց ծնողների (որդեգրողների եւ հոգաբարձուների) համաձայնության, ինչպես նաեւ՝ նրանց նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման միջոցներ կիրառելը:

42. Համալսարանի ուսանողները պարտավոր են՝

1) սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները.

2) տիրապետել բարձր որակավորման ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին եւ հմտություններին.

3) պահպանել համալսարանի կանոնադրությունը եւ ներքին կանոնները.

4) հաճախել համալսարանում կարդացվող դասընթացներին.

5) բարձր պահել համալսարանի պատիվն ու հեղինակությունը.

6) պահպանել հասարակության բարոյական նորմերը:

Վճարովի հիմունքներով կրթություն ստացող ուսանողները պարտավոր են ժամանակին վճարել ուսման վարձը:

Ուսման վարձը ժամանակին չվճարելու դեպքում այդ ուսանողները կարող են հեռացվել համալսարանից:

Այն ուսանողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանները եւ ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են համալսարանի ներքին կարգապահական կանոնները, ռեկտորի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչեւ համալսարանից հեռացվելը:

43. Համալսարանի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած եւ ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց շնորհվում է աստիճան եւ տրվում է համալսարանի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ)՝ համապատասխան ներդիրով:

Ավարտական փաստաթղթի առկայությունը պարտադիր է համալսարանում հաջորդ աստիճանի կրթություն ստանալու համար:

43.1 Կրթության հիմնական կրթական ծրագիրը չավարտած անձանց տրվում է համալսարանի կողմից սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք: ***(փոփ. 03.07.2013 N 423-Ն)***

43.2 Լրացուցիչ մասնագիտական կրթության կրթական ծրագիրն ավարտած եւ ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է համալսարանի կողմից սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ (հավաստագիր, վկայական): ***(փոփ. 03.07.2013 N423-Ն)***

44. Համալսարանի ուսանողության ինքնակառավարման եւ նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը եւ համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցերը:

45. Համալսարանում գիտամանկավարժական կադրերի պատրաստումն ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի եւ հայցորդության ձեւերով իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած կարգին համապատասխան՝ համաձայն համալսարանի գիտական խորհրդի հաստատած կանոնակարգի:

VII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

46. Համալսարանի գույքը կազմված է համալսարանին սեփականության իրավունքով պատկանող գույքից եւ հիմնադրի կողմից համալսարանին ամրացված գույքից:

47. Համալսարանի կանոնադրական խնդիրներն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը համալսարանի՝ որպես պետական ոչ առեւտրային կազմակերպության, հիմնադրման ժամանակ սեփականության իրավունքով նրան է հատկացնում անհրաժեշտ գույք:

Համալսարանի սեփականությունը, բացի կազմակերպության հիմնադրման ժամանակ եւ հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող գույքից, ձեւավորվում է համալսարանի գործունեության ընթացքում արտադրված եւ ձեռք բերված գույքից:

48. Համալսարանին ամրացված գույքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից նրան է հատկացվում անժամկետ եւ անհատույց օգտագործման իրավունքով:

Համալսարանն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման: Համալսարանն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

Ամրացված տարածքների վարձակալության արդյունքում ստացված վարձավճարները սահմանված կարգով ուղղվում են համալսարանի կանոնադրական խնդիրների իրականացմանը: ***(փոփ. 31.07.2012 N 529-Ն)***

Ամրացված գույքի այլ օգտագործման արդյունքում ստացված եկամուտները համալսարանի սեփականությունն են: Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

49. Համալսարանին սեփականության իրավունքով պատկանող գույքի ստեղծման աղբյուրներն են՝

1) համալսարանին սեփականության իրավունքով հանձնված գույքը.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից պետական պատվերի համար, ինչպես նաեւ այլ ձեւերով հատկացված միջոցները.

3) համալսարանի գործունեության արդյունք համարվող մտավոր եւ ստեղծագործական աշխատանքի արդյունքները.

4) այն միջոցները, որոնք գոյանում են համալսարանին թույլատրված ձեռնարկատիրական գործունեության տեսակներից եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից.

5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումները, նվիրված եւ կտակված գույքը.

6) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

50. Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավումը չի կարող հանգեցնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորման նորմատիվների եւ չափերի նվազեցմանը:

51. Համալսարանն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին եւ իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու եւ օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

52. Համալսարանի գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է միայն նրա կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

Շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

53. Համալսարանի եկամուտներն ու ծախսերը նախատեսվում եւ օգտագործվում են սահմանված կարգով հաստատված տարեկան նախահաշվին համապատասխան:

VIII. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Համալսարանի վերակազմակերպումը (միաձուլում, միացում, բաժանում, առանձնացում, վերակազմավորում) եւ լուծարումը կատարվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով: Համալսարանի լուծարման դեպքում պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջե:

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2008 թ. N812

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՈՎ, ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ, ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի ԹԻՎ154 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ ասպիրանտների սոցիալական վիճակը բարելավելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել պետական կրթաթոշակով, նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ, առկա ուսուցմամբ ասպիրանտների կրթաթոշակի չափը՝ հայագիտական ուղղվածությամբ մասնագիտություններով՝ 30000 (երեսուն հազար) դրամ, բնագիտական և այլ մասնագիտություններով՝ 25000 (քսանհինգ հազար) դրամ, տնտեսագիտական և իրավաբանական մասնագիտություններով՝ 20000 (քսան հազար) դրամ:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի «Արցախի պետական համալսարանի գերազանց սովորող ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների կրթաթոշակներին լրավճար սահմանելու մասին» թիվ 154 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման մեջ հանել «ասպիրանտներ» բառը իր բոլոր հոլովաձևերով,

2) հանել 1-ին կետի վերջին տողի «Ասպիրանտներ՝ 3.5 հազար դրամ» նախադասությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունիսի 2009 թ. N364-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐԺԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ՏԵՂԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏԱԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի ԹԻՎ 3 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բուհերի՝ Արցախի պետական համալսարանի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում սովորող ուսանողների կենցաղային պայմանների բարելավման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել 2010 թվականի հունվարի 1-ից դրամական փոխհատուցում պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ներքոբերյալ խմբերի ուսանողների համար.***(փոփ. 04.02.2010 N 43-Ն)***

1) Արցախի պետական համալսարանի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններից սովորող ուսանողներին՝ 5500 (հինգ հազար հինգ հարյուր) դրամ գումարի չափով,

2) Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում բակալավրի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորող ուսանողներին՝ 15000 (տասնհինգ հազար) դրամ գումարի չափով ***(փոփ. 04.10.2010 N43-Ն):***

2. Հաստատել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բուհերի և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում սովորող ուսանողներին դրամական փոխհատուցում տալու մասին» կարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշման 1-ին կետով սահմանված ուսանողներին դրամական փոխհատուցումների վճարումներն իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

4. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի հունվարի 26-ի «Արցախի պետական համալսարանի՝ ԼՂՀ շրջաններից պետական պատվերով սովորող ուսանողներին և ՀՀ բուհերի՝ պետական պատվերով ԼՂՀ-ին հատկացված տեղերում սովորող ուսանողներին դրամական փոխհատուցումներ տալու մասին» թիվ 3 որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2009 թվականի սեպտեմբերի 1-ից:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
«9» հունիսի 2009թ.
թիվ 364-Ն որոշման

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ՏԵՂԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բուհերի՝ Արցախի պետական համալսարանի և Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի (այսուհետ՝ բուհեր), և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում սովորող ուսանողների կենցաղային պայմանների բարելավման նպատակով դրամական փոխհատուցումների վճարումները կատարում են Արցախի պետական համալսարանը, Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը Հայաստանի Հանրապետության պետական բուհերի՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերում սովորող ուսանողներին դրամական փոխհատուցում տալու համար տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր քննաշրջանների համար արձակում է հրաման՝ ուսանողների կողմից տվյալ բուհում սովորելու մասին և համապատասխան խմբում ընդգրկվածությունը հավաստող տեղեկանքների հիման վրա:

3. Բուհերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը ներկայացնում են՝

1) համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունում՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում սովորող ուսանողների դրամական փոխհատուցումների վճարման ամփոփագրերը՝ յուրաքանչյուր ամսվա 20-25 ժամկետաշրջանում.

2) Բուհերի կողմից ուսանողներին փոխհատուցում նշանակելու մասին հրամանների պատճենները և հետագա ամիսներին կատարվող փոփոխությունները.

3) հայտ՝ վերոհիշյալ կարգի ուսանողների դրամական փոխհատուցումների վճարման գումարի և կից գրություն՝ ներկայացվող գումարի ֆինանսավորման վերաբերյալ՝ յուրաքանչյուր ամսվա 20-25 ժամկետաշրջանում:

4. Արցախի պետական համալսարանի ռեկտորը և Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրենը յուրաքանչյուր կիսամյակի համար ուսանողներին փոխհատուցում նշանակելու հրաման են արձակում իրենց կողմից հաստատված հանձնաժողովի ներկայացրած եզրակացության հիման վրա, որում հաստատագրված են տվյալ բուհի՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում սովորելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում մշտական գրանցում ունենալու պայմանները:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունը բուհերի հաշվարկների ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացրած հայտի հիման վրա ապահովում է ուսանողների փոխհատուցման անհրաժեշտ գումարների հատկացումը և սահմանված կարգով վերահսկում այդ վճարների տրման գործընթացը:

6. Դրամական փոխհատուցումները ստանում են ուսանողները, իսկ Հայաստանի Հանրապետության բուհերի՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հատկացված տեղերում սովորողների համար՝ նաև նրանց կողմից լիազորված անձինք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունում:

7. Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերից վճարովի համակարգ տեղափոխվելու, բուհից հեռացվելու կամ պաշտպանության բանակ զորակոչվելու դեպքում, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններից Արցախի պետական

համալսարանում և Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղում անվճար տեղերում սովորող ուսանողների՝ Ստեփանակերտ քաղաքում մշտական գրանցում ստանալու դեպքում, ինչպես նաև հիվանդության պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու ժամկետում ուսանողները զրկվում են դրամական փոխհատուցում ստանալու արտոնությունից:

8. Դրամական փոխհատուցումները նախատեսված են յուրաքանչյուր ուսումնական տարվա 10 ամսվա համար:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2010 թ. N29-Ն

ք.Ստեփանակերտ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի, դրա գործողությունը տարածելով 2007 թվականին և հետագա տարիներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններ ընդունված սովորողների վրա:

2. Հաստատել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների ցանկը, որոնց գծով թույլատրվում է շրջանավարտների տեղափոխում բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ համաձայն թիվ 2 հավելվածի, և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների ցանկը, որոնց գծով թույլատրվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների տեղափոխումը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 1
ԼՂՀ կառավարության
«26» հունվարի 2010 թվականի
թիվ 29-Ն որոշման

ԿԱՐԳ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և բարձրագույն պետական ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսում ստացած և բարձր առաջադիմություն ցուցաբերած (գնահատման 10 միավորանոց համակարգում 7 և ավելի միջին միավոր ունեցող) շրջանավարտների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու ընթացակարգը: ***(փոփ. 5.08.2014 N508-Ն)***

2. Այն մասնագիտությունների ցանկը՝ ըստ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ու ուսուցման ձևերի, որոնց գծով թույլատրվում է տեղափոխություն, հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը (Հավելված 2, 3):

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը կազմակերպվում է՝

1) ըստ միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանների համապատասխանության՝ 2-րդ կուրսից՝ եթե առարկաների 25 տոկոսից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգարքների և քննությունների թիվը, հաշվի առնելով բուհերի և մասնագիտությունների առանձնահատկությունները, չի գերազանցում 8-ը.

2) հեռակա ուսուցմամբ:

(3-րդ կետը փոփ. եւ խմբ. 5.12.2017 N 232-Ն)

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ բարձրագույն ուսումնական հաստատություն տեղափոխվող շրջանավարտների թիվը յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը՝ համաձայնեցնելով համապատասխան նախարարությունների հետ:

(փոփ. 16.06.2017 N 429-Ն)

II. ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ամփոփիչ պետական ատեստավորման շրջանի սկզբից առնվազն մեկ ամիս առաջ հրապարակում են համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսուցումը շարունակելու համար հատկացված տեղերի թիվը՝ նշելով մասնագիտությունը և ուսուցման ձևը:

6. Հավակնորդի կողմից բարձրագույն ուսումնական հաստատություն տեղափոխման մասին դիմումը միջին մասնագիտական ուսումնական հաստատության (միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատության) ղեկավարությանն է ներկայացվում ամփոփիչ պետական ատեստավորման քննաշրջանի սկզբից առնվազն մեկ շաբաթ առաջ՝ նշելով բարձրագույն ուսումնական հաստատությունը, մասնագիտությունը, ուսուցման ձևը:

7. Բարձրագույն ուսումնական հաստատություն տեղափոխման հավակնորդների մրցութային ընտրությունն ամփոփիչ ստուգման արդյունքների հիման վրա կատարում է տվյալ միջին մասնագիտական ուսումնական հաստատության (միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատության) պետական որակավորող հանձնաժողովը: Մրցույթի արդյունքների մասին արձանագրությունը ներկայացվում է համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն:

Բարձրագույն ուսումնական հաստատություն տեղափոխվող հավակնորդների՝ սահմանվածից ավելի մեծ թվի առկայության դեպքում բարձրագույն ուսումնական հաստատությունն իրականացնում է հավակնորդների մրցութային ընտրություն՝ առաջնահերթությունն ըստ հաջորդականության տալով այն հավակնորդներին, ովքեր ունեն՝

գերազանցության ավարտական փաստաթուղթ (դիպլոմ),

ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միջուկում առավել բարձր միջին գնահատական,

պետական ամփոփիչ ստուգման արդյունքում առավել բարձր միավորներ,

պետական որակավորող հանձնաժողովի կողմից հատուկ երաշխավորություն:

Նշված բոլոր պայմանների հավասարության դեպքում բարձրագույն ուսումնական հաստատությունը կազմակերպում է հավակնորդների հարցազրույց:

8. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջին մասնագիտական ուսումնական հաստատության պետական որակավորող հանձնաժողովի նախագահի թեկնածությունը համապատասխան նախարարության հաստատմանն է ներկայացվում միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից՝ նախապես համաձայնեցվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարության հետ:

Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են միջին մասնագիտական և համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները՝ հավասար թվով:

(փոփ. 16.06.2017 N 429-Ն)

9. Մրցույթով անցածներին բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորի հրամանով թույլատրվում է մասնակցել ուսումնական պարապմունքերին:

10. Մրցույթով անցածների անձնական գործերը համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություն են հանձնվում մինչև տվյալ տարվա օգոստոսի 30-ը:

11. Մրցույթով անցածների՝ որպես ուսանող հրամանագրումը կատարվում է միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրի ուսումնական պլանների առարկայական տարբերությունները հանձնելուց հետո՝ մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը:

12. ***(12-րդ կետը ուժը կորցրած՝ 5.12.2017 N 232-Ն)***

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ – ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ԱՀ կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 5-ի N232-Ն որոշման

«Հավելված 2»
ԼՂՀ կառավարության 26 հունվարի 2010 թվականի թիվ 29-Ն որոշման

ՑԱՆԿ

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԳԾՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԹԱՄԱՐԱ ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

0402 Մանկավարժական գործ
0405 Դեղագործություն
0406 Քույրական գործ
0418 Բուժական գործ զինված ուժերում

ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

0210 Թարգմանություն եւ սպասարկման կազմակերպում
0312 Դասավանդում տարրական դասարաններում
0514 Դիզայն ըստ ճյուղերի
0515 Զարդարային-կիրառական արվեստ եւ ժողովրդական արհեստներ
0518 Սոցիալ-մշակութային գործունեություն եւ ժողովրդական գեղարվեստական ստեղծագործություն
0601 էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ
2014 Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում եւ նորոգում
2307 Զբոսաշրջություն

«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

0601 էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ
0602 Մենեջմենթ (Կառավարում)
0603 Ֆինանսներ
0612 Ապրանքագիտություն
2401 Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում
2916 Քաղաքաշինական կադաստր
3101 Հողաշինարարություն
3102 Գյուղատնտեսագիտություն
3104 Անասնաբուժություն
3106 Գյուղատնտեսության մեքենայացում

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

0207 Թարգմանություն եւ գործավարություն
0302 Հայոց լեզվի դասավանդում
0303 Ռուսաց լեզվի դասավանդում
0307 Ֆիզիկական կուլտուրա եւ սպորտ
0312 Դասավանդում տարրական դասարաններում
0313 Նախադպրոցական կրթություն
0601 էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում եւ աուդիտ

0602 Մենեջմենթ (Կառավարում)
0603 Ֆինանսներ
2203 Հաշվողական տեխնիկա եւ ավտոմատացված համակարգերի ծրագրավորում
2307 Զբոսաշրջություն
2401 Փոխադրումների կազմակերպում եւ կառավարում տրանսպորտում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N2
ԼՂՀ կառավարության
2017 թվականի հունիսի 16-ի N429-Ն որոշման

«Հավելված 3
ԼՂՀ կառավարության
«26» հունվարի 2010 թվականի թիվ 29-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԳԾՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՄԻՁԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն
011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
011401.01.6 Կենսաբանություն
011401.02.6 Քիմիա
011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
011401.11.6 Կերպարվեստ
011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն
011401.19.6 Հայոց լեզու և գրականություն
011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն
023201.00.6 Լեզվաբանություն
023201.01.6 Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)
031101.00.6 Տնտեսագիտություն
031101.01.6 Տնտեսագիտություն
041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում
041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)
041201.00.6 Ֆինանսներ
041201.01.6 Ֆինանսներ (ըստ ոլորտի)
053101.00.6 Քիմիա
053101.02.6 Դեղագործական քիմիա
061101.00.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)
061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
061105.00.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ
061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ
101501.00.6 Զբոսաշրջություն
101501.01.6 Զբոսաշրջություն

«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

021201.00.6 Դիզայն
021201.01.6 Դիզայն
041801.00.6 Ագրոբիզնես
041801.01.6 Ագրոբիզնես
061105.00.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ
061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ
071403.00.6 Ռադիոտեխնիկա և կապ
071403.01.6 Ռադիոտեխնիկա և կապ
071601.00.6 Տրանսպորտային համակարգեր
071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում

071602.00.6 Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ
071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ
081101.00.6 Ագրոնոմիա
081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
084101.00.6 Անասնաբուժություն
084101.01.6 Անասնաբուժություն

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն
011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն
011401.19.6 Հայոց լեզու և գրականություն
011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն
031101.00.6 Տնտեսագիտություն
031101.01.6 Տնտեսագիտություն
061105.00.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ
061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն
011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն
011401.19.6 Հայոց լեզու և գրականություն
011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն
023201.00.6 Լեզվաբանություն
023201.01.6 Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն լեզուներ)
031101.00.6 Տնտեսագիտություն
031101.01.6 Տնտեսագիտություն
041301.00.6 Կառավարում
041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)
061101.00.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)
061101.01.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)
061104.00.6 Տեղեկատվական համակարգեր
061104.01.6 Տեղեկատվական համակարգեր

(Հավելված 3-ը փոփ. 5.12.2017 N 232-Ն)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2010 թ. N80-Ն

ք. Ստեփանակերտ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ՌԵԺԻՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 142-րդ հոդվածի 7-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատանքի և հանգստի ռեժիմի առանձնահատկությունները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2010 թ. 23 փետրվարի
թիվ 80-Ն որոշման

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՀԱՆԳՍՏԻ ՌԵԺԻՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատաժամանակի և հանգստի ռեժիմը որոշվում է մինչև ուսումնական տարվա սկիզբը՝ ուսումնական հաստատության ղեկավարի (կառավարման կոլեգիալ մարմնի) կողմից՝ հաշվի առնելով ուսումնական հաստատությունների գործունեության առանձնահատկությունները:

2. Իրենց պարտականություններն աշխատանքային օրվա ընթացքում անընդմեջ իրականացնող դասախոսներին, մանկավարժներին և դաստիարակներին (այսուհետ՝ դասավանդող) սնվելու համար ընդմիջում տրամադրվում է սովորողների, սաների հետ միաժամանակ:

3. Դասավանդողների ուսումնական պարապմունքների տևողությունը, ինչպես նաև դրանց միջև ընդմիջումները (դասամիջոցները) նախատեսվում են ուսումնական հաստատության կանոնադրությամբ կամ ներքին կանոնակարգով:

4. Ուսումնական աշխատանքի, ինչպես նաև ուսումնական պարապմունքների դասացուցակով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով աշխատաժամանակի մեջ ներառվում են՝

1) կրթական, մեթոդական խորհուրդների, կրթական ծրագրով նախատեսված ծնողական ժողովների, խորհրդատվությունների, առողջարանական, դաստիարակչական և այլ միջոցառումների անցկացման աշխատանքները.

2) այն ժամանակը, որը ծախսվում է անմիջականորեն սովորողներին, սաներին ուսուցանելու և դաստիարակելու, նրանց անհատական ընդունակությունների, հետաքրքրությունների ու հակումների, ինչպես նաև նրանց ընտանեկան և կենցաղային պայմաններն ուսումնասիրելու նպատակով նախապատրաստական աշխատանքների համար.

3) դասավանդողի կողմից գրավոր աշխատանքների ստուգումը, դասղեկությունը, ուսումնական կաբինետների ղեկավարումը, գիտահետազոտական, փորձակոնստրուկտորական, ուսումնամեթոդական, կազմակերպամեթոդական, դաստիարակչական աշխատանքները.

4) դասավանդողի կողմից մասնագիտական որակավորման բարձրացման, վերապատրաստման, վերաորակավորման, ինքնաուսուցման և այլ պարապմունքներին նախապատրաստվելը.

5) ուսումնական պարապմունքների միջև ընկած ընդմիջումները (դասամիջոցներ).

6) դասավանդողի կողմից առողջարարական ճամբարներում, արշավներում, արշավախմբերում, էքսկուրսիաներում կատարած աշխատանքները:

5. Սովորողների, սաների՝ հատուկ ուսումնական հաստատություններում շուրջօրյա մնալու դեպքում, երբ դաստիարակչական և ուսումնական գործունեություններն օրվա ընթացքում հաջորդում են միմյանց, ուսումնական հաստատության ղեկավարը կարող է դպրոցական տարիքի սաների խմբերում դասավանդման աշխատանք կատարող դաստիարակների համար նախատեսել աշխատանքային օրվա ռեժիմ՝ երկու ժամ անընդմեջ ընդմիջմամբ: Ընդմիջման ժամանակն աշխատաժամանակում չի ներառվում:

6. Ուսումնական հաստատությունների դասավանդողների, որոնց ուսումնական ծանրաբեռնվածությունը նվազել է կամ ավելացել տարվա սկզբում որոշված ուսումնական ծանրաբեռնվածությունից, աշխատաժամանակի և հանգստի ռեժիմը մինչև ուսումնական տարվա ավարտը որոշվում է դասաժամերի քանակով՝ հաշվի առնելով այն ժամանակը, որն անհրաժեշտ է սույն կարգի 4-րդ կետով նախատեսված աշխատանքների կատարման համար:

7. Ուսումնական հաստատությունների սովորողների արձակուրդների ժամանակահատվածները, որոնք դասավանդողի ամենամյա վճարովի հիմնական և լրացուցիչ արձակուրդների հետ չեն համընկնում, համարվում են աշխատաժամանակ:

8. Սովորողների արձակուրդի ընթացքում դասավանդողներն իրականացնում են կրթական ծրագրի կիրառման հետ կապված ուսումնական, մեթոդական, ինչպես նաև կազմակերպական աշխատանքներ՝ իրենց աշխատաժամանակի նորմավորված մասի սահմաններում:

9. Ուսումնական հաստատությունների դասավանդողները, որոնց համար սահմանված է ուսումնական ծանրաբեռնվածության տարեկան ծավալ, սովորողների արձակուրդների ժամանակահատվածում, որոնք չեն համընկնում իրենց ամենամյա արձակուրդի հետ, ներգրավվում են ամբիոնների, ուսումնամեթոդական կամ առարկայական (ցիկլային) հանձնաժողովների աշխատանքներում, սեմինարներում, որակավորման

բարձրացման, վերապատրաստման և այլ դասընթացներում, ինչպես նաև մշակութային միջոցառումների կազմակերպման և անցկացման միջոցառումներում, ամբիոնների կամ առարկայական (ցիկլային) հանձնաժողովների աշխատանքներում:

10. Համաճարակային, բնակլիմայական և այլ պատճառներով սովորողների, սաների ուսումնական պարապմունքները դադարեցնելու ժամանակահատվածն ուսումնական հաստատությունների դասավանդողների և այլ աշխատողների համար համարվում է աշխատաժամանակ:

11. Համաճարակային, բնակլիմայական և այլ պատճառներով ուսումնական հաստատության առանձին դասարանների (խմբերի) կամ ամբողջ ուսումնական հաստատության ուսումնական պարապմունքները դադարեցնելու ժամանակաընթացքում դասավանդողները սույն կարգի 7-9-րդ և 15-րդ կետերով նախատեսված պայմաններով ներգրավվում են ուսումնադաստիարակչական, մեթոդական, կազմակերպական աշխատանքներում:

12. Բարձրագույն, միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև լրացուցիչ կրթություն իրականացնող հաստատությունների յուրաքանչյուր դասավանդողի համար դասավանդման ծավալը որոշվում է տվյալ ուսումնական հաստատության կողմից՝ կախված աշխատողի մասնագիտական որակավորումից, ամբիոնի մասնագիտացումից, և մեկ ուսումնական տարվա ընթացքում սահմանվում է 700-950 ժամ: Հանրակրթական և նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների դասավանդողների աշխատաժամանակի տևողությունը՝ կախված ուսումնական հաստատության տիպից, սահմանվում է շաբաթական 22-33 ժամ:

13. Ուսումնական հաստատությունների վարչական աշխատողները (տնօրեն, տնօրենի տեղակալ, ռեկտոր, պրոռեկտոր և այլն) կարող են դասավանդել շաբաթական մինչև 8 դասաժամ ներառյալ:

14. 36-ժամյա աշխատանքային շաբաթվա դեպքում ուսումնական հաստատության հոգեբանների, ուսուցման մեթոդիկայի ու դաստիարակչական աշխատանքների մասնագետների աշխատաժամանակի ռեժիմը կարգավորվում է ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոններով՝ հաշվի առնելով՝

1) ուսումնական գործընթացի մասնակիցների անհատական և խմբային խորհրդատվական աշխատանքի կատարումը, որը չի կարող գերազանցել շաբաթական աշխատաժամանակի տևողության կեսը.

2) մասնագետի անհատական և խմբային խորհրդատվական աշխատանքներին նախապատրաստվելու, ստացված արդյունքների մշակման, վերլուծության և ընդհանրացման, փաստաթղթերի լրացման, ինչպես նաև իր որակավորման բարձրացման ժամանակը:

15. Նախադպրոցական կրթական հաստատություններում (խմբերում) սաների 12 ժամ մնալու և 5-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում, որտեղ սաների յուրաքանչյուր խմբի համար նախատեսված է երկու դաստիարակ, աշխատաժամանակի ռեժիմը որոշվում է՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դաստիարակի կողմից դասավանդման աշխատանքի կատարումը՝ յուրաքանչյուր շաբաթ 36 ժամվա հաշվարկով:

16. Ուսումնական հաստատությունների աշխատողների, այդ թվում՝ ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի, աշխատաժամանակի ռեժիմը սովորողների արձակուրդների ժամանակահատվածում կանոնակարգվում է ուսումնական հաստատության ներքին իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով և աշխատանքների կատարման ժամանակացույցով:

17. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող ուսումնական հաստատություններում և հատուկ կամ մասնագիտացված ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատանքի կատարման համար աշխատաժամանակի տևողությունը սահմանվում է՝

1) շաբաթական 22 ժամ՝ դասավանդող լոգոպեդների և դասավանդող դեֆեկտոլոգների, հատուկ մանկավարժական օգնություն ցուցաբերող դասավանդողների.

2) շաբաթական 24 ժամ՝ արտադպրոցական դաստիարակության հիմնարկներում դասավանդողների.

3) շաբաթական 30 ժամ՝ բուժական ֆիզկուլտուրայի գծով հրահանգիչների.

4) շաբաթական 30 ժամ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների դաստիարակների.

5) շաբաթական 30 ժամ՝ գիշերօթիկ դպրոցների, մանկատների, հանրակրթական հաստատությունների երկարօրյա խմբերի դաստիարակների.

6) շաբաթական 36 ժամ՝ երկարատև բուժման ու խնամքի կարիք ունեցող երեխաների և ընդհանուր տիպի հաստատությունների դաստիարակների.

7) շաբաթական 36 ժամ՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների դաստիարակների համար:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2011թ. N146-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ՏԵՂԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 154 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին, «Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 6-րդ մասին և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (Արցախի պետական համալսարան, Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղ) պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում սովորող ուսանողների համար սահմանել կրթաթոշակի հետևյալ չափերը.

1) սովորական կրթաթոշակ՝ 5000 դրամ, ավարտական կուրսի կրթաթոշակ՝ 5200 դրամ,

2) քննաշրջանի արդյունքներով միայն «գերազանց» գնահատականներ ունեցող ուսանողների կրթաթոշակ՝ 8000 դրամ,

3) մագիստրոսների սովորական կրթաթոշակ՝ 6500 դրամ,

4) քննաշրջանի արդյունքներով միայն «գերազանց» գնահատականներ ունեցող մագիստրոսների կրթաթոշակ՝ 8500 դրամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի «Արցախի պետական համալսարանի գերազանց սովորող ուսանողների, մագիստրոսների և ասպիրանտների կրթաթոշակներին լրավճար սահմանելու մասին» N 154 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա գործողությունը տարածվում է 2011 թվականի փետրվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հունիսի 2011 թ. N410-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 52 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 14.10.2014 N669-Ն)

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 41-րդ, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N1 հավելվածի.

2) նախադպրոցական կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N2 հավելվածի.

3) տարրական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, տարրական մասնագիտացված՝ 1-ին աստիճան, տարրական հատուկ՝ 1-ին աստիճան, լիցենզավորման կարգը՝ համաձայն N3 հավելվածի.

4) տարրական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, տարրական մասնագիտացված՝ 1-ին աստիճան, տարրական հատուկ՝ 1-ին աստիճան, լիցենզիայի ձևը՝ համաձայն N4 հավելվածի.

5) հիմնական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, հիմնական մասնագիտացված՝ 2-րդ աստիճան, հիմնական հատուկ՝ 2-րդ աստիճան, լիցենզավորման կարգը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) հիմնական հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, հիմնական մասնագիտացված՝ 2-րդ աստիճան, հիմնական հատուկ՝ 2-րդ աստիճան, լիցենզիայի ձևը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան, միջնակարգ մասնագիտացված՝ 3-րդ աստիճան, միջնակարգ հատուկ՝ 3-րդ աստիճան, լիցենզավորման կարգը՝ համաձայն N7 հավելվածի.

8) միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման, այդ թվում՝ միջնակարգ ընդհանուր՝ 3-րդ աստիճան, միջնակարգ մասնագիտացված՝ 3-րդ աստիճան, միջնակարգ հատուկ՝ 3-րդ աստիճան, լիցենզիայի ձևը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N9 հավելվածի. ***(փոփ. 14.10.2014 N669-Ն)***

10) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի ձևը ՝ համաձայն N10 հավելվածի. ***(փոփ. 14.10.2014 N669-Ն)***

11) միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N 11 հավելվածի. ***(փոփ. 14.10.2014 N669-Ն)***

12) միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N12 հավելվածի. ***(փոփ. 14.10.2014 N669-Ն)***

13) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգը՝ համաձայն N13 հավելվածի. ***(փոփ. 14.10.2014 N669-Ն)***

14) բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի (բացառությամբ բժշկական բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) իրականացման լիցենզիայի ձևը՝ համաձայն N14 հավելվածի: ***(փոփ. 14.10.2014 N669-Ն)***

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապե-

տության կառավարության 2001 թվականի մարտի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» N 52 որոշման 1-ին կետի «ա» և «գ» ենթակետերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N13
ԼՂՀ կառավարության
«21» հունիսի 2011 թ.
N410-Ն որոշման

ԿԱՐԳ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ

(վերնագիրը փոփ. 14.10.2014 N669-Ն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման գործընթացը և կարգավորում լիցենզավորման հետ կապված հարաբերությունները:

2. Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման ենթակա ծրագրեր իրականացնելու համար լիցենզիան տալիս (մերժում) է, լիցենզիայի գործողությունը կասեցնում է, դադարեցնում կամ դադարեցման մասին դատարան դիմում է ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

3. Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու և մասնագիտությունների գծով ընդունելության սահմանային տեղերի թվի փոփոխության, ըստ ուսուցման ձևերի, կրթության հիմքերի, գործունեության թույլտվության մասին որոշումն ընդունվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի (այսուհետ՝ Նախարար) հրամանով: Լիցենզիա տալու (մերժելու), լիցենզիայի գործողությունը կասեցնելու կամ դադարեցնելու մասին որոշումներն ընդունվում են Նախարարության կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի ներկայացրած եզրակացությունների հիման վրա: ***(փոփ. 14.10.2014 N669-Ն)***

4. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների մասնաճյուղերի կրթական գործունեության լիցենզավորումը ուսումնական հաստատության հայտի հիման վրա իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, եթե այլ բան նախատեսված չէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով: Մասնաճյուղի համար լիցենզիան տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

5. Լիցենզիա տալու մասին որոշումներն ընդունվում են «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան:

Լիցենզավորված անձանց, լիցենզիայի հետ միասին, տրամադրվում է լիցենզիայի ներդիր, որը համարվում է լիցենզիայի անբաժանելի մաս: Լիցենզիայի ներդիրի ձևը հաստատում է Նախարարը:

II. ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու համար «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի, 28-րդ հոդվածի և «Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հայտատուն ներկայացնում է հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝

1) հայտ (ձև N 1), որում նշվում է իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը, հեռախոսահամարը, իրականացվելիք կրթական ծրագրի անվանումը, կրթության ձևը, տևողությունը, ուսուցման լեզուն, ավարտական փաստաթղթի անվանումը, սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի (սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի հայտատուի կողմից հաշվարկվում է՝ հաշվի առնելով մեկ սովորողի հաշվով ուսումնական տարածքի նորմատիվների, լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ նաև վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազայի), գրադարանային-տեղեկատվական համակարգի հագեցվածության չափաքանակները, ուսումնաարտադրական պրակտիկայի բազան), լիցենզիայի գործողության ժամկետը.

2) լիցենզավորվող գործունեության տեսակի իրականացման համար նախատեսվող տարածքի նկատմամբ իրավունքի (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) գրանցման վկայականի պատճենը.

3) տեղեկանք պրոֆեսորադասախոսական կազմի վերաբերյալ, որտեղ նշվում է պրոֆեսորադասախոսական կազմի անդամների անունը, ազգանունը, կրթությունը, այն ուսումնական հաստատության անվանումը, որն ավարտել է, որակավորումը, գիտական աստիճանը կամ կոչումը, պաշտոնը, առարկան՝ որը դասավանդելու է, տեղեկություն աշխատանքի հիմնական կամ համատեղության մասին, ստաժը (վարչական/մանկավարժական) (ձև N 2).

4) տեղեկանք բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնելու համար զբաղեցրած

տարածքների, այդ թվում՝ լսարանային, լաբորատոր, արհեստանոցային, առարկայական կաբինետային, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիաների, օժանդակ (ձև N 3).

5) տեղեկանք ուսումնական գործընթացի գրադարանային-տեղեկատվական ապահովվածության վերաբերյալ (գրադարան, ընթերցասրահ, դասագրքային, էլեկտրոնային-տեղեկատվական) (ձև N 4).

6) տեղեկանք ուսումնական և արտադրական, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ կլինիկական պրակտիկաների բազաներով ապահովվածության վերաբերյալ.

7) կրթական ծրագրերի մասնագիտությունների ուսումնական պլանը, առարկայական ծրագրերի ցանկը.

8) սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգերը.

9) տեղեկանք օտարերկրյա ուսանողների ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման պայմանների ապահովվածության վերաբերյալ (այդ թվում նախապատրաստական բաժինների, դեկանատների, կառուցվածքային այլ ստորաբաժանումների և համապատասխան մասնագետների առկայության վերաբերյալ).

10) կրթական ծրագրերի իրականացման վայրում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենայի գրանցման քարտի պատճենը կամ լիցենզավորվող իրավաբանական անձի կողմից տեղեկանք կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներով գործարքներ չիրականացնելու մասին:

Հայտատուն լիցենզիա ստանալու համար սույն կարգով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը կարող է ներկայացնել նաև էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: ***(6-րդ կետը լրաց. 14.10.2014 N669-Ն)***

7. Հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու և լիցենզավորման մասին եզրակացություն տալու նպատակով իրականացվում է ուսումնասիրություն: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրությունները կարող են իրականացվել հայտատուի մոտ:

III. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Լիցենզավորման պարտադիր պահանջները և պայմաններն են՝

1) ներկայացված հայտի (N1 ձև) ձևի համապատասխանությունը սույն կարգով հաստատված հայտի (N1 ձև) ձևին և դրանում ներկայացված տեղեկությունների համապատասխանությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջներին.

2) հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի պահանջի մասով՝

ա. ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը պետք է հանդիսանա հիմնական աշխատավայր.

բ. ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական կազմի դասախոսների առնվազն 50%-ը պետք է ունենա պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան և (կամ) կոչում (բացառությամբ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների), այդ թվում՝ յուրաքանչյուր մասնագիտության մասնագիտական առարկաների գծով՝ 3-ը.

գ. ուսումնական հաստատությունում բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք ունեն դասավանդվող դասընթացի ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանով, նույն կրթական ծրագրի մասնագիտական դասընթացների վարման համար, պետք է ներգրավված լինեն գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում (բացառությամբ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների) կամ համապատասխան գործունեության ոլորտում մասնագիտական աշխատանքի փորձ ունեցող գիտամանկավարժական կադրեր.

դ. ուսումնական հաստատությունում մագիստրոսի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք ունեն գիտական աստիճան և (կամ) գիտական կոչում կամ դասընթացների ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն՝ առնվազն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանով և համապատասխան գործունեության ոլորտում հետազոտական աշխատանքի փորձ (բացառությամբ արվեստի, ֆիզիկական կուլտուրայի բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների նմանատիպ ֆակուլտետների և ամբիոնների).

3) ուսումնական տարածքի և լաբորատոր ապահովվածության պահանջի մասով՝

ա. զբաղեցրած ուսումնական տարածքների (այդ թվում՝ դասասենյակի, լաբորատորիայի, արհեստանո-

ցի, առարկայական կաբինետի, մարզադահլիճի, գրադարան-ընթերցասրահի, համակարգչային լաբորատորիայի, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն) համապատասխանությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնվող, ինչպես նաև պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվները հաստատելու մասին» N 274 որոշմամբ սահմանված նորմատիվների պահանջներին, ուսումնական տարածքների նկատմամբ իրավունքը (սեփականության, վարձակալության, անհատույց օգտագործման) հաստատող փաստաթղթերի, իսկ բժշկական կրթական ծրագրերի մասով՝ կլինիկական ամբիոնի (բազայի) գործող լիցենզիաների պատճենների առկայությունը.

բ. լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի սարքերով, սարքավորումներով, նյութերով, գույքով հագեցվածության համապատասխանությունը Նախարարի հրամանով հաստատած չափաքանակների պահանջներին.

գ. բժշկական մասնագիտությունների գծով՝

ամբիոնները պետք է ունենան տեխնիկական և տեխնոլոգիական հագեցվածություն. անատոմիայի ամբիոնում պարտադիր է ունենալ նաև սեկցիոն սենյակ և դիակային նյութեր՝ կմախքներ, ոսկրեր, թաց պրեպարատներ, կաղապարվածքներ (մուլյաժներ), իսկ դատական բժշկության և ախտաբանական անատոմիայի ամբիոնների համար՝ նաև դիահերձարաններ (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի հոկտեմբերի 28-ի N281 որոշմամբ նախատեսված տեխնիկական պահանջներին համապատասխան, իսկ սեփականը չունենալու դեպքում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով սահմանված կարգով), համաձայն տվյալ առարկայի ծրագրի՝ համապատասխան ամբիոններում (կենսաբանության, հյուսվածքաբանության, ախտաբանական անատոմիայի, մանրէաբանության և այլն) ուսումնական խմբի առնվազն 2 ուսանողին պետք է հատկացվի մեկ մանրադիտակ, հյուսվածքաբանության ամբիոնում՝ համապատասխան միկրոպրեպարատների, իսկ ախտաբանական անատոմիայի ամբիոնում՝ համապատասխան մակրո և միկրոպրեպարատների հավաքածուներ, դեղագործության կառավարում առարկայից. դասասենյակ՝ դեղատան մակետով (կահավորված դեղատան նման), ֆարմակոգնոզիա առարկայից՝ յուրաքանչյուրին մեկ մանրադիտակ, դասասենյակ՝ 1 գազահեղուկային քրոմատոգրաֆով, բոլոր մասնագիտական ամբիոններում պարտադիր է ունանալ առնվազն 2 ուսումնական լաբորատոր սենյակներ, ստոմատոլոգիական ամբիոն հաճախող խմբերի յուրաքանչյուր 3-4 ուսանողի պետք է տրամադրվի մեկ ստոմատոլագիական բազկաթոռ, իսկ բուժական ֆակուլտետի յուրաքանչյուր ուսանողի՝ տվյալ կլինիկական բաժանմունքում՝ 1-2 մահճակալ.

4) ուսումնամեթոդական ապահովվածության պահանջի մասով ուսումնական հաստատության՝

ա. ըստ կրթության ձևի, ուսումնական պլանի, ուսումնական պլանով նախատեսված դասընթացների առարկայական ծրագրերի համապատասխանությունը բարձրագույն մասնագիտական կրթական պետական ընդհանուր և մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջներին.

բ. սովորողների ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտական ամփոփիչ ատեստավորման (քննությունների), դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզի պաշտպանության կարգերի համապատասխանությունը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջներին.

գ. օտարերկրյա քաղաքացիների ուսուցումը (այդ թվում՝ նախապատրաստական բաժիններում) նախատեսված է հաստատության կանոնադրությամբ և ուսուցման կարգի համապատասխանությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների ուսուցման կարգին.

5) գրադարանային-տեղեկատվական համակարգի պահանջի մասով՝ ուսումնական հաստատությունում իր տարածքի սահմաններում պետք է ապահովված լինի գրադարանային ֆոնդով, որը պետք է ներառի մեկ ուսանողի հաշվարկով ոչ պակաս, քան 0,5-ական օրինակ դասագիրք, գեղարվեստական գրականություն, ուսումնամեթոդական ձեռնարկներ, ինչպես նաև ցուցադրական, աուդիո-վիդեո, մուլտիմեդիա նյութերով.

6) ուսումնաարտադրական կամ կլինիկական պրակտիկայի բազայի մասով՝ բնագավառի բազային հաստատությունների հետ կնքված պայմանագրերի (պրակտիկա անցնողների քանակի նշումով) առկայությունը.

7) գործունեության իրականացման վայրում հսկիչ-դրամարկղային մեքենայի առկայությունը, եթե այդ գործունեության մասով հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառումը, «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն, պարտադիր է: ***(8-րդ կետը լրաց. 14.10.2014 N669-Ն)***

IV. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

9. Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողության կասեցումը և դադարեցումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

10. Օրենքներով և սույն կարգով նախատեսված լիցենզիայի պարտադիր պահանջների կամ պայմանների խախտումները վերացնելու մասին համապատասխան հիմնավորող փաստաթղթերը լիցենզավորված անձը ներկայացնում է Նախարարություն:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ձև N 1

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

---------- - ին

---------- - ից

(հայտատուի լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, պետական գրանցման համարը)

(լրաց. 14.10.2014 N669-Ն)

(հարկ վճարողի հաշվառման համարը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

(գործունեության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը (e-mail))

ՀԱՅՏ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ

N N ը/կ	Դասիչը	Մասնա-գիտությունը	Կրթության ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողությունը	Ուսուցման ավարտին տրվող որակավորում	Ավարտական փաստաթուղթը	Լիցենզիայի գործողության ժամկետը
				1	2	3	4	5					

Կ.Տ.

_____ _____ __ թ. Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 2

_____ _____թ.

_____

(կազմակերպության անվանումը, գործունեության տեսակը, գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը)

Կ.Տ.

Տնօրեն _____ _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՈՐՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

NN ը/կ	Անունը, ազգանունը	Կրթությունը, ավարտած բուհը	Որակավորումը	Պաշտոնը, դասավանդած առարկան	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)	Ստաժը /վարչական/ մանկավարժական	Տարակարգը

Ձև N 3

_____ _____ թ.

Կ.Տ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՆՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կազմակերպության անվանումը _____

Տնօրենի անունը, ազգանունը _____

(ստորագրությունը)

Գործունեության իրականացման վայրը _____

Շինության տիպը՝ տիպային, հարմարեցված (ընդգծել), այլ

Շինության նկատմամբ իրավունքի տեսակը _____

Շինության ընդհանուր մակերեսը _____ քառ. մետր, որից

Անվանումը	Քանակը	Յուրաքանչյուրի մակերեսը /քառ. մ/	Տարածքի նկատմամբ իրավունքի տեսակը
Լսարան			
Լաբորատորիա			
Վիվարիում *(լրաց. 14.10.2014 N669-Ն)*			
Կլինիկական ամբիոն (բազա) *(լրաց. 14.10.2014 N669-Ն)*			
Առարկայական կաբինետ			
Արհեստանոց			
Սպորտդահլիճ (մարզադահլիճ)			
Գրադարան - ընթերցասրահ			
Համակարգչային սենյակ			
Օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլն)			
Այլ նշանակության			

Կից ներկայացվում են՝

ա. լաբորատորիաների, արհեստանոցների գույքի, նյութերի, սարքերի ու սարքավորումների, վիվարիումի, կլինիկական ամբիոնի (բազա) հագեցվածության ցուցակը. *(լրաց. 14.10.2014 N669-Ն)*

բ. մարզագույքի ցուցակը:

ՁԵ N 4

_____ _____ թ

Կ.Տ

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱԳԵՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կազմակերպության անվանումը _____

Գործունեության տեսակը _____

Տնօրեն (ռեկտոր) _____

(անունը, ազգանունը) (ստորագրությունը)

Գրքերի ընդհանուր թիվը _____, որից՝ ուսումնական ձեռնարկներ _____,

ծրագրային (մանկական) գեղարվեստական _____, ուսումնամեթոդական _____,

ուսումնաօժանդակ _____, էլեկտրոնային-տեղեկատվական _____,

քարտեզ _____, այլ _____ :

Հավելված N 14
ԼՂՀ կառավարության
«21» հունիսի 2011 թ.
N410-Ն որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լ Ի Ց Ե Ն Զ Ի Ա

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
(վերնագիրը փոփ. 14.10.2014 N669-Ն)

ՍԵՐԻԱ Ա N 0000

Սույնով վավերացվում է, որ

(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

(գտնվելու վայրը)

(գործունեության իրականացման վայրը)

Իրավունք ունի իրականացնելու

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ
(փոփ. 14.10.2014 N669-Ն)

Նախարար ---------- ----------
(ստորագրությունը) *(անունը, ազգանունը)*

------ ---------- -------- թ.

Կ.Տ.

(լիցենզիայի գործողության ժամկետը)

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հուլիսի 2011թ. N511-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2011 թվականի հուլիսի 26-ի
N511-Ն որոշման

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են օտարերկրյա քաղաքացիների (այսուհետ՝ օտարերկրացիներ)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններ (այսուհետ՝ ուսումնական հաստատություններ) ընդունելության կարգը և պայմանները:

2. Սույն կարգի նպատակներն են՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններում օտարերկրացիների համար կրթությունը մատչելի դարձնելը.

2) ելնելով ժողովուրդների միջև հարգանքի և փոխըմբռնման ոգով դաստիարակելու անհրաժեշտությունից՝ երիտասարդության շրջանում հայ մշակութային ժառանգության նկատմամբ հետաքրքրության առաջացման նպատակով համապատասխան պայմանների ստեղծումը, հայագիտության զարգացմանը նպաստելը:

3. Սույն կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններ ընդունված ուսանողների համար ուսուցումը կարող է կազմակերպվել գրական հայերենով կամ օտար լեզուներով:

II. ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Օտարերկրացիները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն կարող են ստանալ «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով նախատեսված բարձրագույն և հետբուհական հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերով՝ ուսուցման առկա, հեռակա և հեռավար (դիստանցիոն) ձևերով, հաստատված մասնագիտությունների ցանկին համապատասխան:

5. Օտարերկրացիները կարող են դիմել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններ նաև ընդհանուր հիմունքներով՝ դիմորդի փաստաթղթերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից փորձաքննությունից՝ փաստաթղթում առկա տեղեկատվության իսկության ստուգումից և հյուպատոսական վավերացման առկայությունը ճշտելուց, ինչպես նաև հաշվառելուց, միասնական տեղեկատվական բանկի ստեղծումից հետո:

6. Դիմորդների փաստաթղթերի հաշվառումը և փորձաքննությունը կատարվում են նախարարության կողմից:

7. Սույն կարգով բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար բարձրագույն ուսումնական հաստատություն կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ստացել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առնվազն միջնակարգ կրթություն կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առնվազն միջնակարգ կրթության մակարդակին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ (ատեստատ, վկայական):

8. Սույն կարգով մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ուսումնական հաստատություն կարող են դիմել այն օտարերկրացիները, ովքեր ստացել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առնվազն բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորման աստիճանին համապատասխան կրթություն և ունեն նշված կրթությունը հավաստող ավարտական փաստաթուղթ (դիպլոմ)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2008 թվականի ապրիլի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը հաստատելու մասին» N 57/Մ հրամանով հաստատված կարգին համապատասխան:

9. Բակալավրի կրթական ծրագրով կրթություն ստանալու համար օտարերկրացի դիմորդների ընդունելությունն իրականացվում է դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության և գիտելիքների ստուգման (այդ թվում՝ նաև հետագա ուսուցման լեզվի իմացության) հիման վրա: Հետագա ուսուցման լեզվին և բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան մասնագիտության ընդունելության համար նախատեսված քննական առարկաներին չտիրապետող օտարերկրացիները պետք է ուսուցումն անցնեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատության նախապատրաստական դասընթացում՝

1) գիտելիքների ստուգումների արդյունքների հիման վրա դիմորդները կարող են ընդունվել առաջին կուրս.

2) գիտելիքների ստուգումն անցկացվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան՝ բուհի կողմից սահմանված գիտելիքների ստուգման կարգով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջնակարգ կրթական ծրագրով: Գիտելիքների ստուգման կարգը և առարկայական ծրագրերը ներկայացվում են նախարարություն՝ մինչև տվյալ տարվա դիմորդների փաստաթղթերն ընդունելու ժամկետի սկիզբը (ժամկետները հաստատվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով):

10. Մագիստրոսի կրթական ծրագրով ուսանելու համար դիմած օտարերկրացիների ընդունելությունն իրականացվում է դիմորդների փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա: Հետագա ուսուցման լեզվին չտիրապետող օտարերկրացիները պետք է ուսուցման դասընթացն անցնեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատության նախապատրաստական դասընթացում:

11. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով երկրորդ մասնագիտություն ստանալու համար դիմած օտարերկրացիների ընդունելության ժամկետը, կուրսը և մյուս պայմանները սահմանում է դիմումները քննարկելու նպատակով ստեղծվող ատեստավորման հանձնաժողովը, որը ձևավորվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, մշակույթի և սպորտի նախարարի 2007 թվականի մարտի 20-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու մասին» N 30/Մ հրամանով հաստատված կարգին համապատասխան:

12. Օտարերկրացիներն ուսումնական հաստատություններում կարող են սովորել՝

1) պայմանագրային հիմունքներով (վճարովի).

2) միջպետական և միջգերատեսչական պայմանագրերով կամ համաձայնագրերով՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) օտարերկրացիներին տրամադրվող տեղերի շրջանակներում.

3) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից սփյուռքահայերի ընդունելության համար տրամադրված՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի սահմաններում:

13. Սույն կարգով դիմորդների համար վճարովի տեղերի թիվը չի սահմանափակվում, եթե այլ բան նախատեսված չէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ:

14. Սույն կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններ դիմորդների ընդունելությունն իրականացվում է նախարարության կողմից փաստաթղթերի փորձաքննությունից՝ փաստաթղթում առկա տեղեկատվության իսկության ստուգումից և հյուպատոսական վավերացման առկայությունը ճշտելուց, ինչպես նաև հաշվառելուց, միասնական տեղեկատվական բանկի ստեղծումից հետո, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ուղեգիր-նամակների հիման վրա՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատության ղեկավարի հրամանով:

15. Սփյուռքահայերին պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրիատի կրթական ծրագրով ընդունելության տեղերի բաշխման ժամանակ նախապատվությունը տրվում է սփյուռքի համար առաջնային համարվող հայագիտական, մանկավարժական և արվեստի բնագավառի մասնագիտություններին: Սփյուռքահայերին պետության կողմից տրամադրվող ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության տեղերի բաշխումն իրականացնում է նախարարությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվող հանձնաժողովի կողմից:

16. Սփյուռքահայերին պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրով ընդունելության տեղերը տրամադրվում են տվյալ կրթական ծրագրի համար որպես նպատակային՝ միայն տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունում և տվյալ մասնագիտության գծով ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար:

17. Սույն կարգով ընդունելության ժամկետները սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով:

III. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Նախապատրաստական դասընթացների առարկայական ծրագրերը, գնահատման համակարգը մշակվում ու հաստատվում են բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից՝ համաձայնեցնելով նախարարության հետ, և ներկայացվում են նախարարություն:

19. Նախապատրաստական դասընթացում ուսանող օտարերկրացիները համարվում են տվյալ բարձ-

րագույն ուսումնական հաստատության ուսանողներ: Նախապատրաստական դասընթացներն իրականացվում են միայն առկա ուսուցման ձևով, և դրանց տևողությունը պետք է կազմի առնվազն 6 ամիս:

20. Նախապատրաստական դասընթացից հեռացված կամ ազատված ուսանողները նախապատրաստական դասընթացում չեն վերականգնվում: Նախապատրաստական դասընթացից տեղափոխություն այլ բուհի նախապատրաստական դասընթաց չի թույլատրվում:

21. Նախապատրաստական դասընթացում ուսուցումն ավարտվում է ավարտական քննություններով, որոնք ներառում են տվյալ մասնագիտության ընդունելության քննություններով նախատեսված առարկաները: Նախապատրաստական դասընթացի ավարտական քննությունների վերահանձնում չի թույլատրվում՝ բացառությամբ հիվանդության պատճառով քննությանը չներկայանալու դեպքերի՝ համապատասխան տեղեկանքի առկայության դեպքում:

22. Նախապատրաստական դասընթացի ավարտական քննություններից դրական գնահատական ստացած ուսանողներին տրվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության համապատասխան ավարտական փաստաթուղթ (վկայական)՝ համապատասխան ներդիրով:

23. Նախապատրաստական դասընթացի ավարտական քննությունները հաջողությամբ հանձնած ուսանողները հրամանագրվում են առաջին կուրս: Նախապատրաստական դասընթացն ավարտելիս «անբավարար» գնահատականներ ստացած ուսանողներին տրվում է համապատասխան տեղեկանք:

24. Մեկ բարձրագույն ուսումնական հաստատության նախապատրաստական դասընթացի վկայականը կարող է հիմք հանդիսանալ մեկ այլ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումն առաջին կուրսում շարունակելու համար՝ ընդունելության համար սահմանված և նախապատրաստական դասընթացում ուսանած առարկաների համապատասխանության դեպքում և վերջինիս ղեկավարի համաձայնությամբ:

IV. ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

25. Օտարերկրացիների ուսուցումը, հեռացումը (ազատումը) և վերականգնումը, շարժունությունն իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործող կարգերին համապատասխան: Սույն կարգով ընդունված ուսանողների հեռացման (ազատման) և շարժունության մասին տեղեկություններն ուսումնական հաստատությունները ներկայացնում են նախարարություն՝ համապատասխան որոշում ընդունելուց հետո, երկշաբաթյա ժամկետում:

26. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընդունելության ավարտից հետո՝ երկշաբաթյա ժամկետում ուսումնական հաստատությունները նախարարություն են ներկայացնում ընդհանուր հիմունքներով ընդունված օտարերկրացիների և սույն կարգով ընդունվածների մասին տեղեկատվություն:

27. Ուսումնական հաստատությունն ապահովում է օտարերկրացու հետ կնքվող պայմանագրում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մուտքի արտոնագիր և ժամանակավոր կացության կարգավիճակ ստանալու վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության պահանջների մասին առանձին դրույթի ներառումը:

28. Օտար լեզուներով ուսուցում կազմակերպող ուսումնական հաստատությունը՝

1) տվյալ մասնագիտությամբ դասավանդվող հիմնական առարկաների գծով ապահովում է նախարարության կողմից յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ ատեստավորված, օտար լեզվով դասավանդելու երաշխավորություն ստացած կամ միջազգայնորեն ընդունված լեզվի իմացության մասին փաստաթուղթ ներկայացրած մասնագետներով.

2) կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ՝ օտար լեզվով դասավանդող մասնագետների համար:

V. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

29. Սույն կարգին համապատասխան՝ ուսումնական հաստատություններ ընդունվող դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի անունով.

2) նախարարության կողմից տրամադրված դիմում-հարցաթերթիկ՝ համաձայն ձևի.

3) բժշկական տեղեկանք ընդհանուր առողջական վիճակի մասին: Սույն տեղեկանքը կարող է տրված լինել նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բժշկական կազմակերպությունների կողմից.

4) անձնագրի կամ ծննդյան վկայականի բոլոր էջերի պատճենները և (կամ) մկրտության վկայականը.

5) կրթական աստիճանի ավարտական փաստաթղթի պատճենը.

6) 3 x 4 չափսի 4 լուսանկար.

7) ինքնակենսագրություն (CV)՝ հայերենով, ռուսերենով կամ անգլերենով.

8) հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու համար՝ ընտրած մասնագիտության թեմայով գիտական ռեֆերատ՝ 20 էջի սահմաններում, հայերենով, ռուսերենով կամ անգլերենով:

30. Սույն կարգի 29-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով նախատեսված փաստաթղթերն ընդունվում են քննարկման՝ օտարերկրյա պետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կողմից հյուպատոսական վավերացման առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով կամ միջազգային պայմանագրերով:

31. Փաստաթղթերը նախարարություն ներկայացվում են՝

1) դիմորդի կողմից անձամբ կամ նրա լիազորված անձի կողմից.

2) բարձրագույն ուսումնական հաստատության կողմից.

3) օտարերկրյա պետություններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների միջոցով.

4) փոստով (այդ թվում՝ էլեկտրոնային փոստով)՝ նախարարության պաշտոնական հասցեով:

32. Ներկայացված դիմումը կարող է մերժվել, եթե սույն կարգի 29-րդ կետում նշված փաստաթղթերից որևէ մեկը պատշաճ կերպով չի ներկայացվել, կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ամբողջացվել, ինչպես նաև սույն կարգի 14-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

33. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունում պահվող յուրաքանչյուր օտարերկրացու և սույն կարգով ընդունված ուսանողի անձնական գործում պետք է լինեն նաև հետևյալ տեղեկությունները՝

1) ուսումնառության տարիների ընթացքում քաղաքացիության փոփոխության կամ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիություն ձեռք բերելու դեպքում՝ նոր անձնագրի պատճենը.

2) ուսումնառության տարիների ընթացքում օտարերկրացիներին վերաբերող փաստաթղթերի (որոշումներ, հրամաններ և այլն) պատճենները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ- ՆԱԽԱՐԱՐ՝ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ձև

ԴԻՄՈՒՄ - ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF NKR
MINISTRY OF EDUCATION AND SCIENCE

Դ Ի Մ Ո Ւ Մ - Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ

APPLICATION FORM

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններ դիմող օտարերկրացիների համար
for foreign applicants applying for study in the NKR

1. Անունը (Name_____ Ազգանունը) Surname_____

2. Ծննդյան թիվը _____ 3. Ծննդյան վայրը _____
Date of birth (օրը, ամիսը, տարեթիվը day/month/year) Place of birth

4. Բնակության երկիրը_____ 5. Քաղաքացիությունը_____
Resident country Citizenship

6. Ազգությունը_____ 7. Սեռը՝ արական/Male իգական/ Female
Nationality Sex

8. Ընտանեկան վիճակը/Marital status: ամուսնացած/Married չամուսնացած/Single

9.Բնակության վայրը/_____
Residence Address

Քաղաքը/ City_____ Ե ր կ ի ր ը / C o u n t r y _____
Հեռ./Phone _____ E - m a i l : _____

10. Կրթական աստիճանը՝ միջնակարգ բակալավրի մագիստրոս հետազոտող
Degree recieved Secondary Bachelor's dergee Master's dergee Post-graduate dergee

11. Դպրոցի մասին տվյալները _____
The school attended (հաստատության անվանումը/Name of the institution)

Քաղաքը/ City_____ Երկիրը/ Country_____

Ուսուցումն սկսվել է_____ Ավարտվել է_____
Date of entrance (ամիսը, տարեթիվը month/year) Date of graduation (ամիսը, տարեթիվը month/year)

12.Ավարտած այլ ուսումնական հաստատությունների մասին տվյալները _____
Other Educational Institutions attended:

1. Ավարտել եմ _____
Graduated (ավարտած հաստատության անվանումը (Name of the institution)
_____ in _____ թվականին year
_____ մասնագիտությամբ
Երկիրը /Country/ Specialization

2. Ավարտել եմ _____
Finished (հաստատության անվանումը (Name of the institution)
_____in _____ թվականին year
_____ մասնագիտությամբ
Երկիրը /Country/ Specialization

13. Հայոց լեզվի իմացությունը՝ գերազանց լավ բավարար չեմ տիրապետում
Proficiency in Armenian excellent good fair none
Այլ լեզուներ/Other languages_____

14. Դիմում եմ սովորելու բակալավրի մագիստրոսի հետազոտողի կրթական ծրագրով
Apply for: achelor's degree Master's degree Post-graduate dergee
Ընտրած ուսումնական հաստատությունը_____
Educational institution chosen: _____
մասնագիտությամբ_____ կուրս
specialization year
15. Հասարակական, մշակութային և մասնագիտական ընկերակցությունների անվանումները, որոնց անդամակցում եք (Your membership in non-governmental cultural and professional organizations) associations:_____

16. Կցել հրատարակված գիտական աշխատությունների ցանկը, եթե այդպիսիք կան/ List of scientific publications if any
_____

17. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակության վայրը_____
_____
Resident address in NKR
Քաղաքը_____ Տան հեռ. _____ Բջջային_____
City Home phone Mobile
18. Ընտանիքի անդամների մասին տվյալները՝
Familyi members.
1. Հայրը/Father _____
(անունը/ name, ազգանունը/surname, ծննդյան թիվը/date of birth)
Աշխատանքի վայրը/ Work place _____

Պաշտոնը /մասնագիտությունը / Position/occupation _____
2. Մայրը /Mother _____
(անունը/ name, ազգանունը/surname, ծննդյան թիվը/date of birth)
Աշխատանքի վայրը/ Work place _____

Պաշտոնը/մասնագիտությունը Position/ occupation _____

3. Եղբայրը /Քույրը/ Brother, sister _____

Ստորագրությունը _____ ___ _____ 20___թ.
Signature

Պատասխանները տպել կամ լրացնել ընթեռնելի ձեռագրով: Type or print legibly.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2011 թ. N1036-Ն

ք. Ստեփանակերտ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 647-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 13-ի «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 24-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 647-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
«29» դեկտեմբերի 2011 թ.
N1036-Ն որոշման

ԿԱՐԳ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅԱՆ

I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Սույն կարգի գործողությունը տարածվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ բուհեր) և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների վրա (այսուհետ՝ ուսումնական հաստատություններ)՝ անկախ ուսուցման ձևից (առկա, հեռակա, հեռավար), իրականացվող հիմնական կրթական ծրագրերից (բակալավր, մագիստրոս և հետազոտող) և մասնագիտություններից:

2. Ակադեմիական շարժունությունն ուսանելու, հետազոտություններ կատարելու կամ որակավորումը բարձրացնելու նպատակով մեկ այլ ուսումնական հաստատությունում սովորողի կրթության շարունակումն է:

3. Ըստ ուսման նպատակի կամ ժամանակահատվածի՝ սովորողների՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով ուսումնառող, ակադեմիական շարժունությունը կարող է լինել որոշակի ժամկետով (այսուհետ՝ շարժունություն) կամ հիմնական (այսուհետ՝ տեղափոխություն):

II. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

4. Սովորողների շարժունությունը չի հանգեցնում ուսման սահմանված ժամկետի ավելացմանը:

5. Ուսումնական հաստատությունների սովորողների շարժունության իրականացման եղանակներից է գործընկեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև սովորողի անհատական նախաձեռնությամբ, նրանց ուղարկելը՝

1) կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի (երկու ավարտական փաստաթուղթ) շրջանակներում ուսանելու.

2) համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով (մեկ վկայականով) ուսանելու.

3) միջբուհական համագործակցության, այդ թվում՝ ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանելու.

4) վերապատրաստում (այդ թվում՝ լեզվական) անցնելու.

5) ուսումնական (հետազոտական, արտադրական) պրակտիկա անցնելու:

6. Հավակնորդների ընտրությունը կատարվում է մրցութային եղանակով՝ հաշվի առնելով նաև նրանց ակադեմիական առաջադիմությունը և ընդունող կողմի լեզվի (կամ օտար լեզվի) իմացությունը:

7. Շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով սովորողի և ուղարկող ու ընդունող ուսումնական հաստատությունների միջև կնքվում է եռակողմ կրթական համաձայնագիր: Համաձայնագրում նշվում են այն առարկաները, որոնք սովորողները պետք է ուսանեն ընդունող ուսումնական հաստատությունում: Միաժամանակ նշվում են ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ սովորողի պարտավորությունները:

8. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը:

9. Ընդունող բուհում ուսուցման ժամկետի ավարտից հետո ուսանողն իր ուսումնասիրած առարկաների և պարապմունքների ցանկը, ինչպես նաև ստացած կրեդիտներն ու գնահատականները հաստատող ակադեմիական տեղեկանքը պետք է ներկայացնի բուհ՝ ակադեմիական ճանաչման մասին փաստաթուղթը նախապատրաստելու համար:

III. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

10. Տեղափոխության մասին ուսանողների դիմումներն ընդունվում են համապատասխան ձևով ուսուցման կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում: Ուսանողը տեղափոխման մասին դիմումը ներկայացնում է իր ուսումնառության բուհի ռեկտորին՝ ստուգման գրքույկի պատճենը ստանալու համար: Բուհի կողմից ստուգման գրքույկի պատճենը տրամադրվում է 7 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի և ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը: Հակառակ պարագայում ուսանողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է: Զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով բուհ ընդունված ուսանողների տեղափոխության դեպքում տրամադրված տարկետման իրավունքի փոփոխություն չի կատարվում:

12. Չի թույլատրվում բակալավրի կրթական ծրագրով առաջին և ավարտական կուրսերում ուսանողի տեղափոխությունը: Մագիստրոսի կրթական ծրագրով ուսումնառողների տեղափոխությունը թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո:

Բուհերի հեռակա (առկա) բաժիններից առկա (հեռակա) բաժիններ տեղափոխումը թույլատրվում է առանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայության տարկետման իրավունքի՝ բուհի կողմից սահմանված կարգով:

13. Չի թույլատրվում նպատակային տեղերում ընդունված ուսանողների տեղափոխումն այլ բուհ կամ այլ մասնագիտությամբ ուսումնառության:

14. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից ռազմական բուհերում սովորող կուրսանտները, որոնց ուսումնառությունը դադարեցվել է զինվորական ծառայությունից առողջական վիճակով կամ ընտանեկան դրությամբ պայմանավորված՝ վաղաժամկետ արձակվելու պատճառով, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում կարող են հրամանագրվել՝ բուհերի համապատասխան կուրսերում ուսանելու համար:

15. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է տվյալ մասնագիտության գծով լիցենզիայով հատկացված ընդունելության սահմանային տեղերի (ըստ ուսուցման ձևերի և որակավորման աստիճանների) շրջանակում:

16. Օտարերկրյա բուհերից ուսանողների տեղափոխության դեպքում հանձնման ենթակա ստուգարքների և քննությունների թվի մեջ չեն ներառվում հայագիտական առարկաները: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ սովորողն օտարերկրյա բուհում, որպես մասնագիտական, ուսումնասիրել է հայագիտական առարկաներ, ինչպես նաև տեղափոխվող բուհում ընտրել է հայագիտական մասնագիտություններ:

17. Կրեդիտներով պայմանավորված առարկայական տարբերությունների ցանկը որոշում է ընդունող բուհը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները՝ ընդունող բուհի կողմից սահմանված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

18. Չի թույլատրվում ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր չունեցող ոչ պետական բուհերից ուսանողի տեղափոխությունը պետական կամ ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բուհեր:

19. Պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետ՝ նախարարություն) են ներկայացնում ուսանողների շարժունության բոլոր ձևերի մասին տեղեկատվություն՝ ըստ կրթական ծրագրի, ուսուցման ձևի, մասնագիտության և ուսուցման կուրսի տեղափոխման:

IV. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20. Ուսանողի՝ բուհի ներսում տեղափոխությունը, որի ընթացքում կարող է անցում կատարվել մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար), իրականացվում է բուհի ռեկտորի հրամանով, ուսանողի անձնական դիմումի համաձայն:

21. Ներբուհական տեղափոխությունները կատարվում են սույն կարգով սահմանված՝ ուսանողների տեղափոխության ընդհանուր պահանջներին համապատասխան:

V. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԻՑ ԲՈՒՀ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Ուսանողի՝ բուհից բուհ տեղափոխությունը, որի ընթացքում կարող է անցում կատարվել նույն մասնագիտությամբ, մեկ մասնագիտությունից մյուսը կամ փոխվել ուսուցման ձևը (առկա, հեռակա, հեռավար), իրականացվում է ընդունող բուհի ռեկտորին հասցեագրված՝ ուսանողի անձնական դիմումի համաձայն, որին կցվում է նաև սովորած բուհի կողմից տրամադրված ստուգման գրքույկի պատճենը:

23. Եթե ընդունող բուհում տվյալ մասնագիտությամբ և կուրսում ազատ տեղերի թիվն ավելի քիչ է, քան տեղափոխվել ցանկացողների թիվը, ապա կազմակերպվում է ատեստավորում, և անցկացվում է մրցույթ, որի արդյունքում ընտրվում են այն ուսանողները, ովքեր շարունակելու են ուսումնառությունը: Ատեստավորման և մրցույթի անցկացման կարգն ու պայմանները սահմանում է ընդունող բուհը: Մինչև տեղափոխ-

վողների կողմից առարկայական տարբերությունների հանձնումը՝ ընդունող բուհի ռեկտորն իրավասու է ուսանողին ժամանակավորապես հրամանագրել համապատասխան ակադեմիական խմբում և նրան թույլատրել մասնակցելու ուսումնական պարապմունքներին: Հրամանում նշվում են նաև ակադեմիական առարկայական տարբերությունների ցանկը, դրանց մարման անհատական ժամանակացույցը, որի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում տրվում է հրաման:

24. Տեղափոխվող ուսանողին ընդունող բուհը տալիս է սահմանված նմուշի տեղեկանք՝ համաձայն ձևի: Ուսանողը նշված տեղեկանքը ներկայացնում է իր սովորած բուհ, որի ռեկտորը եռօրյա ժամկետում տալիս է ազատման մասին հրաման՝ հետևյալ ձևակերպմամբ՝ «Ուսանող _____ ը ազատված է՝ _____ բուհ տեղափոխման կապակցությամբ»: Ուսանողին առձեռն տրվում կամ փոստով առաքվում են ազատման մասին հրամանի պատճենը, սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանքը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը, անձնական գործի փաստաթղթերը և ընդունելության քննություններին առնչվող փաստաթղթերը: Ուսանողի անձնական գործում մնում են ազատման մասին հրամանի և բուհի կողմից հաստատված միջնակարգ կրթության ավարտական վկայականի պատճենները, ուսանողական տոմսը, ստուգման գրքույկը և ուղարկված փաստաթղթերի ցանկը:

25. Տեղափոխվող ուսանողի հրամանագրումը կատարում է ընդունող բուհի ռեկտորը՝ ուսանողի դիմումը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը և ակադեմիական տեղեկանքն ստանալուց հետո (մինչև այդ ստուգվում է ակադեմիական տեղեկանքի և ստուգման գրքույկի պատճենի համապատասխանությունը): Տեղափոխության մասին հրամանում կատարվում է հետևյալ գրառումը՝ «_____ -ին _____ բուհից տեղափոխման կարգով ընդունել _____ ֆակուլտետի _____ մասնագիտության _____ կուրս՝ _____ ուսուցման ձևով, վճարովի (անվճար) սկզբունքով»: Ընդունող բուհում կազմվում է ուսանողի նոր անձնական գործ: Ուսանողին տրվում են նոր ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:

26. Հեռակա ուսուցումից առկա ուսուցման տեղափոխությունները կատարվում են սույն կարգի պահանջներին և կարգի 10-13-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխան: Առարկայական տարբերությունները հանձնելու համար սահմանվում է անհատական ժամանակացույց, որի ժամկետը չպետք է գերազանցի տվյալ կիսամյակի առկա ուսուցման համար սահմանված ժամկետը:

VI. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՀԵՐԻՑ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԵՐ

27. Օտարերկրյա պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհեր ուսանողների տեղափոխությունն իրականացվում է վճարովի ուսուցման սկզբունքով: Օտարերկրյա բուհ միջպետական համաձայնագրերով ուսման գործուղված և առողջական վիճակի կամ ուսման գործընթացը խոչընդոտող այլ անհաղթահարելի հանգամանքների պատճառով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վերադարձող ուսանողները, ընդունող բուհի ռեկտորի առաջարկությամբ և նախարարության համաձայնությամբ, ուսուցումը կարող են շարունակել անվճար սկզբունքով:

28. Ընդունող բուհը դրական կարծիքի դեպքում նախարարություն է ներկայացնում ուսանողի ակադեմիական տեղեկանքը: Տեղափոխության մասին որոշումն ընդունում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը՝ համապատասխան օտարերկրյա բուհից գրավոր հարցման դրական պատասխան ստանալուց հետո:

29. Ուսանողի տեղափոխությունն իրականացվում է սույն կարգի 10-12-րդ, 23-26-րդ և 28-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխան: Եթե ուսանողի անձնական գործն առաքման ենթակա չէ, ապա դրա մասին ընդունող բուհին հղվում է համապատասխան փաստաթուղթ, իսկ ուսանողի հրամանագրումը կատարվում է նրա դիմումի և ակադեմիական տեղեկանքի հիման վրա:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ս. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Ձև

Ընդունող բուհի անկյունային կնիքը,
ամսաթիվը, գրանցման համարը
(կամ բուհի ձևաթուղթը)

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է _____-ին՝ այն մասին, որ
(անունը, հայրանունը, ազգանունը՝ լրիվ)

նրան _____ կողմից տրված _____
(բուհի լրիվ անվանումը) *(ստուգման գրքույկի գրանցման*

_____ ստուգման գրքույկի պատճենի և դիմումի համաձայն
թիվը և ամսաթիվը)

թույլատրվել էր մասնակցել ատեստավորման գործընթացին, որը նա հաջողությամբ անցել է:

_____-ը կիրամանագրվի_____
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____ուսուցման
(ընդունող բուհի և ֆակուլտետի լրիվ անվանումները, առկա, հեռակա, հեռավար)

_____ կուրս՝ _____մասնագիտության գծով,
(մասնագիտության լրիվ անվանումը)

_____սկզբունքով՝ ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ
(անվճար, վճարովի)

կրթության ավարտական վկայականը ներկայացնելուց հետո:

Ռեկտոր_____ _____
(ստորագրությունը) *(անունը, ազգանունը)*

Կ. Տ.

_____ _____ 20 թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2012 թ. N301-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ) ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի N 336-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասին և 21-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 31-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 31-ի N 151-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N336 - Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության 2012 թվականի
մայիսի 14-ի N301-Ն որոշման

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի (այսուհետ՝ բուհեր) ընդունելության գործընթացը, որը ներառում է բուհերի մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը:

2. Բուհերն առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարում են տվյալ ուսումնական տարվա համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն:

3. Բուհեր կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք (այսուհետ՝ շրջանավարտ)՝ առանց տարիքի սահմանափակման:

4. Օտարերկրյա քաղաքացիները (այսուհետ՝ օտարերկրացիներ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհեր կարող են ընդունվել համաձայն սույն կարգի (ընդհանուր հիմունքներով) կամ ըստ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կարգի:

5. Բուհեր ընդունվելու համար տվյալ ուսումնական տարվա և նախորդ տարիների շրջանավարտները (այսուհետ՝ դիմորդ) հանձնում են ընդունելության քննություններ: Ընդունելության քննություններն անցկացվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոններում պարտադիր է բժշկի ներկայությունը:

Բուհեր ընդունվելու համար դիմորդները բուհերի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել նաև միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականներով, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականով, եթե տվյալ մասնագիտության քննական առարկան բուհերի ընդունելության քննությունների ցանկում նշված է երկու աստղանիշով:

(5-րդ կետը լրաց. 13.05.2014 N297-Ն)

6. Ընդունելության քննությունները միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններն են: Ընդունելության քննությունները և ըստ բուհերի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարության «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ գնահատման և թեստավորման կենտրոն):

Տվյալ ուսումնական տարում դիմորդներն ընդունելության քննությունները կարող են հանձնել միայն մեկ անգամ:

Բուհերի ընդունելության մրցույթում ընդունելության քննությունների գնահատականներն առավելություն ունեն միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականների կամ տարեկան գնահատականների նկատմամբ:

(6-րդ կետը լրաց. 25.04.2013 N220-Ն, 13.05.2014 N297-Ն, փոփ. 29.04.2016 N202-Ն)

7. Միասնական քննություններն անցկացվում են գրավոր, թեստերի միջոցով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի միասնական քննությունը հանձնում են միևնույն օրը: Դիմորդները միասնական քննությունները հանձնում են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից: ***(փոփ. 29.04.2016 N202-Ն)***

8. Միասնական քննություններն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական փուլի միասնական քննությունները տվյալ տարվա փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ն ընկած ժամանակահատ-

վածում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտող և նախորդ տարիների շրջանավարտ դիմորդների կողմից հայտագրվող և տվյալ տարվա հունիսին դիմորդների կողմից հանձնվող միասնական քննություններն են: Լրացուցիչ փուլի միասնական քննությունները տվյալ տարվա հունիսի 24-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում դիմորդների կողմից հայտագրվող և տվյալ տարվա հուլիսին դիմորդների կողմից հանձնվող քննություններն են:***(փոփ. 29.04.2016 N202-Ն)***

9. Միասնական քննությունների տևողությունն է՝

1) «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» առարկաների քննությունները՝ 180 րոպե.

2) «Օտար լեզու» առարկայի քննությունը՝ 150 րոպե:

(9-րդ կետի 1-ին ենթակետը փոփ. 29.04.2016 N202-Ն)

10. Կենտրոնացված քննություններն այն քննություններն են, որոնք հնարավոր չէ անցկացնել թեստերի միջոցով՝ ելնելով տվյալ քննական առարկաների առանձնահատկություններից:

11. ***(ուժը կորցրած է ճանաչվել 29.04.2016 N202-Ն)***

12. ***(ուժը կորցրած է ճանաչվել 29.04.2016 N202-Ն)***

13. Բուհերի ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական ծրագրերով, հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր օգտագործման երաշխավորված դասագրքերով և խնդրագրքերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է գնահատման և թեստավորման կենտրոնը:

14. Ներբուհական են՝ Արցախի պետական համալսարանի «Կերպարվեստ», «Ֆիզիկական դաստիարակություն եւ սպորտային մարզումներ», «Նախնական զինվորական պատրաստություն» կրթական ծրագրերի մասնագիտական եւ «Լրագրություն» կրաթական ծրագրի «Ստեղծագործական աշխատանք», «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի «Ճարտարապետություն» կրթական ծրագրի «Նկարչություն» եւ «Գծագրություն», Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Ֆիզիկական դաստիարակություն եւ սպորտային մարզումներ», «Նախնական զինվորական պատրաստություն» կրթական ծրագրերի մասնագիտական եւ «Լրագրություն» մասնագիտության «Ստեղծագործական աշխատանք», Ստեփանակերտի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի «Դիզայն» եւ «Հագուստի մոդելավորում» կրթական ծրագրերի մասնագիտական առարկաների քննությունները:

«Ստեղծագործական աշխատանք գրավոր քննության տեւողությունը 240 րոպե է, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն» բանավոր քննության ժամանակ յուրաքանչյուր դիմորդին քննելու առավելագույն ժամանակը՝ 30 րոպե:

(խմբ. 29.04.2016 N202-Ն)

15. Ներբուհական քննություններն անցկացվում են սույն կարգի 14-րդ կետում նշված բուհերի կողմից մշակված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարության կողմից հաստատված մասնագիտական ծրագրերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է գնահատման և թեստավորման կենտրոնը:

(փոփ. 29.04.2016 N202-Ն)

16. Սույն կարգի համաձայն՝ բուհերում ընդունելությունը կատարվում է՝

1) պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի չափաքանակների.

2) բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ՝ վճարովի)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած տեղերի:

17. Ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա անվճար և վճարովի ուսուցմամբ մրցույթների արդյունքները հաստատելու, արտոնություն ունեցող դիմորդների ցուցակներն ըստ մասնագիտությունների հաստատելու, անվճար և վճարովի ուսուցման համակարգում թափուր և պահուստային տեղերը վերաբաշխելու նպատակով ստեղծվում է հանրապետական ընդունող հանձնաժողով:

18. Հանրակրթական ուսումնական հաստատությունների այն շրջանավարտները, որոնց ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկան ատեստավորված չէ, ընդունելության քննությունները կարող են հանձնել ռուսերեն թարգմանությամբ միայն լրացուցիչ փուլում, բացառությամբ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և մյուս օտար լեզուների քննությունների:

19. Սույն կարգի պահանջները չեն տարածվում այն պետական բուհերի վրա, որոնք իրականացնում են զինվորական, ոստիկանական մասնագիտական կրթական ծրագրեր:

II. ՄԻԱՍՆԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

20. Միասնական, կենտրոնացված քննության դիմում-հայտերը լրացնելը, ընդունելը և մուտքագրելը՝

1) դիմորդը միասնական, կենտրոնացված քննությանը մասնակցելու համար լրացնում է միասնական, կենտրոնացված քննության դիմում-հայտ (այսուհետ՝ քննության դիմում-հայտ), իսկ քննության դիմում-հայտը փոփոխելու, ճշգրտելու և հաստատելու համար լրացնում է ցուցակ: Քննության դիմում-հայտի և ցուցակի ձևերը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը.

2) գնահատման և թեստավորման կենտրոնը տվյալ տարվա հունվարի 20-ից առնվազն հինգ անգամ զանգվածային լրատվության միջոցներով (որից երկու անգամը՝ առնվազն 1000 օրինակ տպաքանակ ունեցող թերթերում) հրապարակում է հայտարարություն, որում պարտադիր նշվում են քննության դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ դպրոց) անվանումները.

3) դիմորդները քննությանն առնչվող հարցերի մասին տեղեկատվություն կարող են ստանալ դպրոցներից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժիններից (այսուհետ՝ կրթության եւ սպորտի բաժիններ), գնահատման և թեստավորման կենտրոնից՝ անմիջականորեն կամ համացանցային կայքի միջոցով.

4) դպրոցը կրթության եւ սպորտի բաժիններից ու գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում և դիմորդներին է տրամադրում քննությունների դիմում-հայտերը.

5) դիմորդը քննության դիմում-հայտին կցում է անձնագրի, դրա բացակայության դեպքում՝ ծննդյան վկայականի պատճենը, մեկ լուսանկար (3x4 սմ չափսի), յուրաքանչյուր քննության մասնակցության համար գնահատման և թեստավորման կենտրոնի համապատասխան հաշվեհամարին փոխանցված 1500 դրամ վճարի անդորրագիրը և ներկայացնում դպրոցի տնօրենին.

6) դպրոցի տնօրենն ստուգում է դիմորդի կողմից քննության դիմում-հայտի ճիշտ լրացված լինելը, պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դիմորդին տալիս է ստացական.

7) նախորդ տարիների շրջանավարտների քննությունների դիմում-հայտերի ընդունումը կազմակերպվում է գնահատման և թեստավորման կենտրոնում.

8) միասնական, կենտրոնացված քննությունների հայտագրումը կատարվում է հետևյալ եղանակով՝

ա. էլեկտրոնային փոստ ունեցող դպրոցը դիմորդների տվյալները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում էլեկտրոնային կապով,

բ. էլեկտրոնային փոստ չունեցող դպրոցի տնօրենը դիմորդների տվյալները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում տարածաշրջանի՝ այդ նպատակով առանձնացված դպրոցի էլեկտրոնային կապի միջոցով.

9) դպրոցը շրջանավարտի անձնագրի կամ նույնականացման քարտի կամ ծննդյան վկայականի պատճենը, քննությանը մասնակցելու վճարի անդորրագիրը գնահատման եւ թեստավորման կենտրոն է ուղարկում կրթության եւ սպորտի բաժինների միջոցով.

10) գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ին և ավարտվում տվյալ տարվա մարտի 1-ին.

11) դիմորդի մասին մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակիցների ցուցակը վերահաստատելու նպատակով գնահատման և թեստավորման կենտրոնը մինչև տվյալ տարվա մարտի 30-ը կրթության եւ սպորտի բաժինների միջոցով տվյալներն ուղարկում է դպրոց:

(20-րդ կետի 3-րդ, 4-րդ, 11-րդ ենթակետերը փոփ., 9-րդ ենթակետը խմբ. 29.04.2016 N202-Ն)

21. Քննության դիմում-հայտում փոփոխություն, ճշգրտում կատարելը կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնելը՝

1) դիմորդը քննության դիմում-հայտում կարող է փոփոխություն, ճշգրտում կատարել կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնել մինչև տվյալ տարվա ապրիլի 5-ը.

2) քննության դիմում-հայտում փոփոխություն, ճշգրտում կատարելու, այն հաստատելու կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնելու համար դիմորդը դիմում է դպրոցի տնօրենին և համապատասխան ցուցակում կատարում փոփոխություն, ճշգրտում: Դպրոցի տնօրենը վերջնական տվյալներով (ճշգրտված, փոփոխված) ցուցակները կամ քննության դիմում-հայտերը կնքում և մինչև ապրիլի 10-ը կրթության եւ սպորտի բաժինների միջոցով ուղարկում է գնահատման և թեստավորման կենտրոն.

3) գնահատման և թեստավորման կենտրոնը դիմորդների փոփոխված և քննության նոր դիմում-հայտերի հիման վրա տվյալների բազայում (այսուհետ՝ բազա) կատարում է համապատասխան փոփոխություններ.

4) քննության դիմում-հայտերի տվյալների վերջնական մուտքագրումից հետո գնահատման և թեստավորման կենտրոնը պատրաստում է դիմորդների ցուցակներն ըստ քննական առարկաների և կենտրոնների.

5) հաստատված ցուցակների հիման վրա դիմորդներին տրվում են անցաթղթեր, որոնք գնահատման

և թեստավորման կենտրոնը մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը ուղարկում է դպրոցներ.

6) անցաթուղթը պարունակում է դիմորդի տվյալները (անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի սերիան, համարը, մարզը (շրջանը), դպրոցը, անձնական համարը), լուսանկարը, քննական կենտրոնի գտնվելու վայրը, առարկան, քննության օրը և ժամը.

7) դիմորդն անցաթուղթը ստանում է այն դպրոցից, որտեղ լրացրել է քննության դիմում-հայտ: Անցաթուղթը դիմորդին տրվում է ստորագրությամբ:

(21-րդ կետի 2-րդ ենթակետը փոփ. 29.04.2016 N202-Ն)

III. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

22. Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններին, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը:

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդների ընդունելությունը կազմակերպվում է սույն կանոնների համաձայն, և դիմում-հայտի ու փաստաթղթերի ընդունումն իրականացվում է Արցախի պետական համալսարանում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բուհերի այն մասնագիտությունների, որոնց համար նախատեսված են կենտրոնացված և ներբուհական քննություններ, և այդ դիմորդների փաստթղթերի ընդունումն ու ընդունելությունն իրականցվում է համապատասխան բուհերում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարության կողմից տրված երաշխավորագրերի հիման վրա՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բուհերի ընդունելության կարգի:

(22-րդ կետը խմբ. 25.04.2013 N220-Ն, փոփ. 29.04.2016 N202-Ն)

23. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են տվյալ տարվա մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ մինչև ժամը 18:00-ն:

(23-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

24. Օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների, նույն տարվա գարնանային զորակոչից զորացրված կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից հունիսի 30-ը՝ մինչև ժամը 18:00-ն:

(24-րդ կետը լրաց. 13.05.2014 N297-Ն)

25. Դիմում-հայտերի հանձնման ընթացքին հետևելու համար գնահատման և թեստավորման կենտրոնը ուղարկում է դիտորդներ՝ բուհերի ներկայացուցիչներից, որոնց ցանկը բուհի ռեկտորի ներկայացմամբ հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Դիտորդները, առանց գործընթացին միջամտելու, իրավունք ունեն իրենց դիտարկումները ներկայացնել գնահատման և թեստավորման կենտրոն:

26. Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը չեն ընդունվում:

27. Ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերն ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չեն:

28. Բուհի ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է բուհի ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով):

29. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորը (տեղակալ): Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, պատասխանատու քարտուղարի տեղակալին (տեղակալներին) և անդամներին նշանակում է ընդունող հանձնաժողովի նախագահը: Ընդունող հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է տեխնիկական անձնակազմի միջոցով:

30. Դիմորդը փաստաթղթերը հանձնելու համար տեխնիկական անձնակազմի կողմից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ մասնագիտությունների ընտրության մասին, ծանոթանում դիմում-հայտը լրացնելու կարգին:

31. Դիմորդը կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդի կողմից տրված լիազորագրում նշված անձը լրացնում է ընդունելության դիմում-հայտը և ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին:

(31-րդ կետը լրաց. 13.05.2014 N297-Ն)

32. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) ստուգում է դիմորդի՝ ժամկետային զինվորական ծառայության ավարտի մասին տեղեկանքը, զինվորական գրքույկը եւ ընդունում փաստաթղթերը.

2) ստուգում է ընդունելության դիմում-հայտը, այն հաստատում ստորագրությամբ, տալիս է ստացական փաստաթղթերն ընդունելու մասին: Դիմորդը կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդի կողմից տրված

լիազորագրում նշված անձը, հանձնելով ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը, ստորագրում է գրանցման մատյանում.

3) դիմորդին հայտնում է քննական թերթիկ ստանալու օրը.

4) ընդունելության դիմում-հայտերն ընդունման հաջորդ օրը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ գրանցման մատյանում նշելով հանձնման ժամանակը, ընդունելության դիմում-հայտերի, մեդալակիրների, միջազգային մրցույթների հաղթողների և բանակից զորացրվածների թիվը:

(32-րդ կետը լրաց. 13.05.2014 N297-Ն, 1-ին ենթակետը խմբ. 29.04.2016 թ. N202-Ն)

33. Ընդունելության դիմում-հայտերի հիման վրա գնահատման և թեստավորման կենտրոնում պատրաստվում են քննական թերթիկներ: Ընդունելության դիմում-հայտերը և քննական թերթիկները գնահատման և թեստավորման կենտրոն հանձնվելուց հետո եռօրյա ժամկետում գնահատման և թեստավորման կենտրոնը դրանք կնքում և վերադարձնում է ընդունող հանձնաժողով: Ընդունելության դիմում-հայտերը և քննական թերթիկները վավերացվում են բուհի կողմից:

34. Քննական թերթիկը դիմորդին հանձնվում է անձնագիրը և ստացականը նրա կողմից ներկայացվելուց հետո, որի համար դիմորդը ստորագրում է մատյանում:

35. Քննական թերթիկը պարունակում է դիմորդի տվյալները՝ անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի սերիան, համարը, լուսանկարը, անձնական համարը, պահպանվող միասնական քննությունների ցանկը, կենտրոնացված կամ ներբուհական քննությունները, դրանց հանձնելու օրը և ժամը, հայտագրված մասնագիտությունները, օլիմպիադայի դիպլոմի առկայության փաստը, դիմորդի մեդալակիր լինելու փաստը, ինչպես նաև տեղեկություններ զինվորական ծառայության մասին:

36. Դիմորդը դիմում-հայտի հետ միասին ներկայացնում է՝

1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ).

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի).

3) *(ուժը կորցրած է ճանաչվել 29.04.2016 N202-Ն)*

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր,նույնականացման քարտ, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական), անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.

5) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին.

6) սույն կարգի 98-րդ և 99-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.

7) միջազգային և հանրապետական մրցույթների դիպլոմները.

8) կենտրոնացված և ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

(36-րդ կետը լրաց. 13.05.2014 N297-Ն, 7-րդ ենթակետը փոփ. 29.04.2016 N202-Ն)

37. Տվյալ ուսումնական տարվա շրջանավարտները, տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդները, օտարերկրացիները, ինչպես նաև միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացած դիմորդներն ավարտական փաստաթուղթը (ատեստատ, դիպլոմ) ներկայացնում են մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը: Լրացուցիչ փուլում պետական ավարտական և միասնական քննություններ հանձնող դիմորդները միջնակարգ կրթության մասին ատեստատը բուհի ընդունող հանձնաժողովին են ներկայացնում մինչև տվյալ տարվա հուլիսի 13-ը:

38. Սույն կարգի 98-րդ և 99-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդներն ազատվում են ընդունելության քննությունների վճարից:

39. Ընդունող հանձնաժողովն առանձին սոցիալական խմբերի քաղաքացիների կարող է ազատել կենտրոնացված և ներբուհական քննությունների, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար սահմանված վճարից:

40. Մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողները կարող են դիմել նույն տարվա ընդունելության մրցույթին՝ մինչև զորակոչվելը ստացած միասնական քննությունների վկայագրով մասնակցելու համար: Մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողները զորամասի հրամանատարի կողմից տրված տեղեկանք են ներկայացնում այն մասին, որ նրանց զորացրումը տեղի է ունենալու մինչև նույն տարվա հուլիսի 31-ը: Սույն տեղեկանքը մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողի կողմից տրված լիազորագրում նշված անձը ներկայացնում է բուհի ընդունող հանձնաժողովին: Լիազորագրում մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողը նշում է բուհերի ընդունելության մրցույթին մասնակցության մասնագիտությունները, որոնք

լիազորագրում նշված անձը ընդունելության դիմում-հայտում հայտագրում է լիազորագրում նշված հերթականությամբ: Մինչև հուլիսի 31-ը զորացրվող զինծառայողների վրա տարածվում են սույն կարգի 100-րդ կետով սահմանված դրույթները:

41. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաները մրցութային համարվելու դեպքում գնահատման և թեստավորման կենտրոնը դիմորդին է տալիս վկայագիր, որը դիմորդը, բուհ ընդունվելու դեպքում, համապատասխան բուհ է ներկայացնում մինչև հուլիսի 10-ը:

(40-րդ կետը խմբ. 13.05.2014 N297-Ն, փոփ. 29.04.2016 N202-Ն)

IV. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

42. Դիմորդներն ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են մասնագիտություններն ըստ ուսուցման անվճար և վճարովի համակարգերի: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերին՝ մինչև երկու անվճար և մինչև ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտությունների քննությունները:

43. Տվյալ տարվա միասնական քննություններին մասնակցած դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել միայն հաջորդ տարվա համար: Պահպանելով գնահատականը՝ դիմորդը կարող է նաև վերահանձնել այն և մրցույթին մասնակցել ավելի բարձր գնահատականով: Անբավարար գնահատական ստանալու դեպքում դիմորդը զրկվում է մրցույթին մասնակցելու իրավունքից: ***(փոփ. 29.04.2016 N202-Ն)***

44. Զորակոչային տարիքը լրացած, միասնական քննություններին և մրցույթին մասնակցած արական սեռի դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո կազմակերպվող ընդունելության քննությունների առաջին մրցույթի համար: ***(փոփ. 29.04.2016 N202-Ն)***

45. Չի թույլատրվում դիմորդի կողմից ներկայացնել մեկից ավելի ընդունելության դիմում-հայտ: Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդները լրացնում են առանձին դիմում-հայտ, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերի համար ևս դիմում-հայտ ներկայացնելու դեպքում՝ դրանք համարակալվում են ըստ առաջնահերթության: Բազայում նույն դիմորդի՝ մեկից ավելի ընդունելության դիմում-հայտերի առկայության դեպքում տվյալ դիմորդը զրկվում է ընդունելության քննություններին և մրցույթին մասնակցելու իրավունքից:

46. Դիմորդներն ընտրած մասնագիտությունների կրկնվող առարկաների քննությունները հանձնում են մեկ անգամ:

47. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից գնահատական չունեցող դիմորդները (Ա և Ա+Բ տարբերակները չհանձնած) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն կարող են միասնական քննություն հանձնել օտար լեզվից (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն): «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությանը փոխարինված «Օտար լեզու» առարկան չի կարող համընկնել տվյալ մասնագիտության միասնական քննությունների ցանկում ընդգրկված «Օտար լեզու» առարկայի հետ: Ընդ որում՝

1) «030700 - Միջազգային հարաբերություններ», «030600 – Լրագրություն», «031000 - Հայոց լեզու և հայ գրականություն», «051000 - Մանկավարժություն և հոգեբանություն», «051100 - Մանկավարժություն և մեթոդիկա», «051300 - Սոցիալական մանկավարժություն», «032300 - Թարգմանչական գործ» մասնագիտությունների դեպքում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությունը պարտադիր է.

2) «032400 - Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության համար սահմանված «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն դիմորդները կարող են միասնական քննություն հանձնել «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայից:

48. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից (տարեկան, քննական) գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայի գնահատականը:

49. Համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի «Հայոց լեզու» առարկայի տարեկան գնահատականը:

50. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հանձնելու նշված երեք՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» մրցութային քննություններից երկուսը:

51. Սույն կարգի 50-րդ կետում նշված մասնագիտությունների համար մրցույթն անցկացվում է դիմորդի կողմից դիմում-հայտում նշված քննությունների հերթականությամբ: Հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում դիմում-հայտում առաջինը նշած առարկայի քննական գնահատականին:

V. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐՆ ՈՒՂՂԵԼԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼԸ

52. Դիմորդը կարող է ընդունելության դիմում-հայտում փոփոխություններ կատարել մինչև տվյալ տարվա հունիսի 1-ը՝ ժամը 18:00-ն: Տվյալ տարվա հունիսի 1-ից հետո դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:

(52-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

53. Օտարերկրացիները, տվյալ ուսումնական տարում օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններն ավարտած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները, տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդները և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդները դիմում-հայտում փոփոխություններ կարող են կատարել մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը՝ ժամը 18:00-ն: Տվյալ տարվա հունիսի 30-ից հետո դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:

(53-րդ կետը խմբ. 25.04.2013 N220-Ն)

54. Ընդունելության դիմում-հայտը լրացնելու օրը դիմորդը կարող է անձնագրի և ստացականի առկայության դեպքում հետ վերցնել կամ փոփոխություն կատարել ընդունելության դիմում-հայտում: Իսկ ընդունելության դիմում-հայտը լրացնելու հաջորդ օրվանից սկսած, մինչև ընդունելության դիմում-հայտերի և փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, դիմորդը կարող է հետ վերցնել կամ փոփոխություն կատարել ընդունելության դիմում-հայտում՝ քննական թերթիկի և ստացականի առկայության դեպքում:

55. Ընդունելության դիմում-հայտը հետ վերցնելու կամ դրանում փոփոխություն կատարելու համար դիմորդը դիմում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Պատասխանատու քարտուղարն առանձնացնում է դիմորդի անձնական գործը, տալիս վերադարձման թույլտվություն՝ այն վավերացնելով բուհի կնիքով:

VI. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒՄԸ

56. Ընդունելության դիմում-հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ու գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը ստորագրում են ընդունելության դիմում-հայտերի բազայի մասին ակտ, որում նշվում են ընդունելության դիմում-հայտերի թիվը, քննությունների թիվը, քննությունների համար վճարված ընդհանուր գումարը, քննությունների վարձից ազատված դիմորդների թիվը:

57. Բազայում կատարվող բոլոր փոփոխությունների և ճշտումների մասին կազմվում է արձանագրություն:

58. Բազան էլեկտրոնային կրիչների տեսքով տվյալ տարվա հունիսի 2-ին հանձնվում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ ի պահ:

(58-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

59.Օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների և տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդների բազան էլեկտրոնային կրիչների տեսքով տվյալ տարվա հուլիսի 1-ին հանձնվում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ ի պահ:

60. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը դիմորդների արտոնությունները հաստատող փաստաթղթերի կրկնօրինակները մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոն:

VII. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ՝ ԿՈՐՑՐԱԾ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

61. Դիմորդը քննական թերթիկը կորցնելու մասին դիմում է ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, որը դրա մասին անմիջապես զեկուցում է գնահատման և թեստավորման կենտրոնին:

62. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում և 24 ժամվա ընթացքում դիմորդին է տալիս նոր քննական թերթիկ: Նոր քննական թերթիկում քննության օրերը չեն փոխվում՝ բացառությամբ սույն կարգի 64-րդ կետում նշված դեպքերի:

63. Եթե քննական թերթիկը կորել է քննության օրը, դիմորդն այդ քննությունը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից նոր քննական թերթիկում նշանակված օրը:

64. Տվյալ առարկայի քննությունների վերջին օրը քննական թերթիկը կորցրած դիմորդին թույլատրվում է քննությունը հանձնել անձը հաստատող փաստաթղթի ու գնահատման և թեստավորման կենտրոնի տվյալների բազայի հիման վրա:

VIII. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

65. Միասնական քննությունների կազմակերպումը՝

1) միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա ապրիլի 15-ը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարը (այսուհետ՝ նախարար)՝ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի ներկայացմամբ.

2) միասնական քննական կենտրոնների ղեկավարների (այսուհետ՝ կենտրոնի ղեկավար) ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 4-ը հաստատում է նախարարը՝ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի ներկայացմամբ.

3) քննական կենտրոնի ղեկավարը կազմակերպում է քննական գործընթացը տվյալ քննական կենտրոնում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան.

4) միասնական քննությունների օրերն ըստ առարկաների հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Միասնական քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում.

5) միասնական քննության անցկացման գործընթացի մասնակիցներն են՝ կենտրոնի ղեկավարը, նախարարի լիազորը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը (յուրաքանչյուր 60 դիմորդի համար գնահատման և թեստավորման կենտրոնի առնվազն մեկ ներկայացուցիչ), միասնական քննության ընթացքի կազմակերպիչը (այսուհետ՝ կազմակերպիչ) և պատասխանատու կազմակերպիչը, համակարգչային օպերատորը (այսուհետ՝ օպերատոր) և պատասխանատու օպերատորը, միասնական քննական կենտրոնի հերթապահը (այսուհետ՝ հերթապահ), ովքեր իրենց աշխատանքը միասնական քննությունների ընթացքում իրականացնում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն.

6) միասնական քննական կենտրոնում միասնական քննության ընթացքը քննասենյակում կազմակերպում են գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչները և կազմակերպիչները, որոնց կազմը հաստատում է գնահատման եւ թեստավորման կենտրոնի տնօրենը: Կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի համար տվյալ քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ.

7) համակարգչային աշխատանքներն իրականացնում են ուսուցում անցած օպերատորները, որոնց կազմը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը հաստատում է նաև պատասխանատու օպերատորների ցանկը, որոնք իրենց քննական կենտրոնում կազմակերպում են օպերատորների աշխատանքը: Հերթապահների կազմը հաստատում է քննական կենտրոնի ղեկավարը.

8) կազմակերպիչներն ըստ քննական կենտրոնների բաշխվում են քննության նախորդ օրը՝ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կազմակերպած վիճակահանության միջոցով: Նույն օրը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տվյալ քննական կենտրոնի ղեկավարին է հանձնում քննական կենտրոնի կազմակերպիչների ցուցակը.

9) քննական կենտրոնում քննասենյակները համարակալվում են հերթական համարներով: Քննական կենտրոնի դիմորդները բաժանվում են հերթական թվերով համարակալված խմբերի: Խմբում դիմորդների թիվը չի կարող գերազանցել 20-ը: Յուրաքանչյուր խմբի համար քննասենյակում աշխատանքները համակարգում են 1-ական կազմակերպիչներ.

10) քննական կենտրոնի քննասենյակների մուտքի մոտ նշվում են տվյալ քննասենյակի խմբերի հերթական համարները.

11) քննությունն սկսվելուց 1,5 ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը սահմանված ձևի արձանագրությունում գրանցում է կազմակերպիչներին, համակարգչային օպերատորներին և հերթապահներին.

12) քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ կենտրոնի ղեկավարը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ այն առևտրային բանկերից, որոնք իրականացնում են քննական թեստերի փաթեթների պահեստավորում, ստանում է քննական թեստերի փաթեթները: Կենտրոնի

ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպչին տալիս է տվյալ քննասենյակի խմբերի համար նախատեսված թեստերի պատասխանների ձևաթղթերի (այսուհետ՝ պատասխանների ձևաթուղթ) ծրարները, խմբերի դիմորդների ցուցակները, որից հետո սկսվում է դիմորդների մուտքը քննասենյակներ.

13) պատասխանների ձևաթղթերի ծրարը պարունակում է՝

ա. պատասխանների 20 ձևաթուղթ, որոնք տրվում են դիմորդներին,

բ. պատասխանների լրացուցիչ ձևաթղթեր, որոնք օգտագործվում են պատասխանների ձևաթղթերի խոտանման դեպքերում.

14) յուրաքանչյուր խմբի համար նախատեսվում է պատասխանների լրացուցիչ երկու ձևաթուղթ, որոնք մնում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ.

15) հերթապահներին տեղաբաշխում է քննական կենտրոնի ղեկավարը՝ կազմելով համապատասխան արձանագրություն.

16) քննության օրը դիմորդը քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ ներկայանում է քննական կենտրոն՝ իր հետ ունենալով անցաթուղթը, անձը հաստատող այն փաստաթուղթը, որը նշված է դիմումհայտում.

17) դիմորդների մուտքը կենտրոն սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով.

18) դիմորդն անձը հաստատող փաստաթուղթը և անցաթուղթը ներկայացնում է հերթապահին և նրա հրահանգով մոտենում օպերատորին: Օպերատորը համադրում է անցաթղթի և դիմորդի մասին բազայի տվյալները, բազայում կատարում նշում դիմորդի՝ քննությանը ներկայանալու մասին, իսկ անցաթղթի վրա գրում խմբի համարը: Հերթապահները, պատերին փակցված լրացուցիչ ուղեցույցները դիմորդներին օգնում են գտնել քննասենյակը և խումբը.

19) դիմորդի մուտքը քննասենյակ կազմակերպվում է ոչ պակաս, քան երկու կազմակերպիչների կողմից: Դիմորդը քննասենյակում չի կարող ունենալ այլ առարկաներ՝ բացառությամբ անձը հաստատող փաստաթղթի և անցաթղթի.

20) դիմորդը մոտենում է իր խմբի կազմակերպչին և ստանում պատասխանների ձևաթուղթը, ցուցակում ստորագրում իր անվան դիմաց և նստում ըստ վիճակահանության արդյունքի՝ համապատասխան նստարանին.

21) դիմորդներին քննասենյակում տեղավորելուց հետո քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը քննական կենտրոնի ղեկավարից գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ ստանալով խմբերի թվին համապատասխան թեստերի փաթեթները՝ դրանք բերում է քննասենյակ: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը թեստերի փաթեթները ցուցադրում է դիմորդներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով փաթեթների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա.

22) քննությունն սկսվելուց 20 րոպե առաջ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը դիմորդների համար ընթերցում է քննասենյակում քննության անցկացման կարգը, տեղեկացնում բողոքարկման տեսակների և կարգի մասին: Դիմորդները պատասխանների ձևաթղթերում լրացնում են իրենց անունը, ազգանունը և անցաթղթերի անձնական համարները: Այնուհետև կազմակերպիչները մոտենում են դիմորդներին, կտրում պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերը, հաշվում և հանձնում քննասենյակի պատասխանատու կազմակերպչին.

23) քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերն առնվազն երկու կազմակերպչի մասնակցությամբ հաշվում, ստուգում, այնուհետև տեղավորում է այդ նպատակով ստացված ծրարում՝ ծրարի վրա գրելով քննասենյակի, խմբերի համարները և կտրված մասերի թիվը:

(65-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերը խմբ. 25.04.2013 N220-Ն, 65-րդ կետի 1-ին ենթակետը փոփ. 29.04.2016 թ. N202-Ն, 65-րդ կետի 6-րդ ենթակետը լրաց. 29.04.2016 թ. N202-Ն)

66. Միասնական քննության անցկացումը՝

1) թեստերի փաթեթները բացելու համար պատասխանատու կազմակերպիչը հրավիրում է առաջին նստարաններին նստած դիմորդներին (նրանցից որևէ մեկի բացակայության դեպքում՝ հաջորդ դիմորդին): Փաթեթների բացման վերաբերյալ արձանագրությունների համապատասխան տողում խմբերի կազմակերպիչները կատարում են նշում, որի դիմաց ստորագրում է փաթեթը բացած դիմորդը.

2) խմբերի կազմակերպիչները բաժանում են թեստերը: Դիմորդը, ստանալով իր թեստը, ստուգում է այն և թեստի շապիկի համապատասխան մասում գրում իր խմբի և նստարանի համարները: Պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում քննության սկիզբը և ավարտը.

3) միասնական քննությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր քննական կենտրոններում սկսվում է նույն ժամին՝ 9:30-ին.

4) ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական թեստերի առկայությունը քննասենյակի պատասխանատու կազմակերպիչն արձանագրում է, հաշվարկում և հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին.

5) միասնական քննության ընթացքում արգելվում է այլ դիմորդների հետ խոսելը, առանց կենտրոնի ղեկավարի թույտվության տեղը փոխելը, արգելվում է դիմորդների կողմից թեստերը եւ պատասխանների ձեւաթղթերը փոխանակելը, արտագրելը, բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ քննասենյակ բերելը.

6) միասնական քննության ընթացքում քննասենյակից դիմորդը կարող է դուրս գալ միայն անհրաժեշտության դեպքում՝զուգարանից օգտվելու կամ վատառողջության պատճառով՝ քննասենյակի պատասխանատու կազմակերպչի կամ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի թույլտվությամբ և հերթապահի ուղեկցությամբ.

7) քննասենյակում թեստի բովանդակության վերաբերյալ դիմորդի հարցերը չեն քննարկվում.

8) միասնական քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերն ու պատասխանների ձևաթղթերը նորով փոխարինում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը՝ կենտրոնի ղեկավարի, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ՝ արձանագրելով այդ փաստը: Թերություններ ունեցող պատասխանների ձևաթղթերի և թեստերի վրա գրվում է «Խոտանված է».

9) դիմորդների կողմից քննական առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի պատասխանատու կազմակերպչից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել նախարարի լիազորը, քննական կենտրոնի ղեկավարն ու գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը.

10) միասնական քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը դիմորդների ուշադրությունն է հրավիրում ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները թեստերից պատասխանների ձևաթղթերի վրա անցկացնելու մասին.

11) կազմակերպիչները քննության ամբողջ ընթացքում պետք է մնան քննասենյակներում՝ իրենց հատկացված տեղերում: Նրանց արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից և կապի այլ միջոցներից: Սույն պահանջների խախտման մասին գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տեղյակ է պահում կենտրոնի ղեկավարին, որն էլ կարող է հեռացնել կազմակերպչին քննասենյակից: Կազմակերպչին քննասենյակից հեռացնելն արձանագրվում և ստորագրվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի և կենտրոնի ղեկավարի կողմից.

12) գնահատման եւ թեստավորման կենտրոնի ներկայացուցիչն իրավունք ունի քննության ընթացքում մեկ անգամ նախազգուշացնելու դիմորդին, արձանագրելու նախազգուշացումը, կրկնվելու դեպքում՝ հեռացնելու քննությունից, եթե նա առանց թույլտվությամբ քննության ընթացքում դուրս է եկել քննասենյակից, խոսել է այլ դիմորդների հետ, փոխել է տեղը: Եթե քննության ընթացքում դիմորդն արտագրել է, կամ նրա մոտ հայտնաբերվել է բջջային հեռախոս կամ կապի այլ միջոց, ապա դիմորդը հեռացվում է քննությունից.

13) հեռացվող դիմորդից վերցվում է թեստը, դիմորդի պատասխանների ձևաթղթի վրա գրվում է «Հեռացված է քննությունից», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվողի անունը, ազգանունը, հեռացման պատճառը.

14) դիմորդի՝ քննությունից հեռացվելու փաստը դիմորդի բողոքի հիման վրա քննարկվում է նախարարի հրամանով ստեղծված բողոքարկման հանձնաժողովում, որն ընդունում է որոշում դիմորդին լրացուցիչ քննությանը թույլատրելու մասին.

15) միասնական քննության ընթացքում հիվանդության պատճառով (բժշկի եւ կենտրոնի ղեկավարի կազմած արձանագրության հիման վրա) քննությունն ընդհատած դիմորդից վերցվում է թեստը, պատասխանների ձևաթղթի վրա գրվում է «Քննությունն ընդհատել է հիվանդության պատճառով», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրություններում գրանցվում է այդ փաստը՝ նշելով քննությունն ընդհատած դիմորդի անունը, ազգանունը.

16) հարգելի պատճառով միասնական քննությանը չներկայացած (փաստաթղթով հիմնավորված), հիվանդության պատճառով միասնական քննությունն ընդհատած, ինչպես նաև բողոքարկման հանձնաժողովի որոշմամբ լրացուցիչ միասնական քննությանը թույլատրված դիմորդը քննություն է հանձնում լրացուցիչ միասնական քննության օրը:

(66-րդ կետի 5-րդ, 12-րդ ենթակետերը խմբ., իսկ 15-րդ ենթակետը փոփ. 29.04.2016 N202-Ն)

67. Միասնական քննության ավարտը՝

1) քննության համար նախատեսված ժամանակից շուտ ավարտած (ընդհատած) դիմորդը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի թույլտվությամբ մոտենում է օպերատորին, պատճենահանում պատասխանների ձևաթուղթը, այնուհետև մոտենում իր խմբի կազմակերպչին: Թեստը և պատասխանների ձևաթուղթը դիմորդը կազմակերպչին է հանձնում՝ ստորագրելով իր խմբի դիմորդների ցուցակի համապատասխան տեղում: Կազմակերպիչը համեմատում է թեստի և պատասխանների ձևաթղթում նշված թեստի համարները: Պատասխանների ձևաթղթի պատճենահանված օրինակը դիմորդը պահում է իր մոտ.

2) քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները, յուրաքանչյուր դիմորդի պատասխանների ձևաթուղթը դնելով թեստի մեջ, հավաքում են սեղաններից, այնուհետև ընթերցում են թեստի վրա գրված սեղանի համարը, համապատասխան դիմորդը մոտենում է կազմակերպչին, վերցնում իր պատասխանների ձևաթուղթը, պատճենահանում, պատասխանների ձևաթուղթը հանձնում իր խմբի կազմակերպչին, ստորագրում իր անվան դիմաց դիմորդների ցուցակում և դուրս գալիս քննասենյակից: Այդ ընթացքում մյուս դիմորդները մնում են իրենց տեղերում՝ մինչև պատճենահանման իրենց հերթը հասնելը.

3) քննության ավարտից հետո քննասենյակի յուրաքանչյուր խմբից վերջինը դուրս եկող դիմորդի ներկայությամբ խմբի կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերը (օգտագործված, չօգտագործված, խոտանված), քննության ընթացքում հիվանդացած դիմորդին տրված բժշկի տեղեկանքը, դիմորդին քննությունից հեռացնելու, ինչպես նաև խոտանված ձևաթղթի մասին արձանագրությունները, խմբի դիմորդների ցուցակը հաշվում և հանձնում է պատասխանատու կազմակերպչին.

4) քննության ժամանակի ավարտից հետո ոչ ուշ, քան 30 րոպեի ընթացքում պատասխանատու կազմակերպիչը լրացնում է տվյալ քննասենյակում անցկացված քննության արձանագրությունը.

5) պատասխանատու կազմակերպիչը խմբերի պատասխանների ձևաթղթերի (օգտագործված, չօգտագործված, խոտանված), խմբերի դիմորդների ցուցակների ծրարները, քննասենյակի արձանագրության, պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի ծրարները և թեստերը (օգտագործված, չօգտագործված) հաշվում և հանձնում է կենտրոնի ղեկավարին.

6) կենտրոնի ղեկավարը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի հետ համատեղ, ներկայացված պատասխանների ձևաթղթերը, խմբերի ցուցակները պարունակող և քննասենյակներից ստացված կտրված մասերով ծրարները վերահաշվելով, ձևակերպում է քննական կենտրոնում անցկացված քննության արձանագրությունը:

68. Քննական նյութերի՝ թեստերի, պատասխանների ձևաթղթերի ծրարների, արձանագրությունների տեղափոխումը՝

1) կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպչի ներկայությամբ ծրարները տեղավորում է համապատասխան արկղում՝ գնահատման և թեստավորման կենտրոն տեղափոխելու համար.

2) քննական կենտրոնի ղեկավարը քննական նյութերը գնահատման և թեստավորման կենտրոն է տեղափոխում քննության ավարտից անմիջապես հետո: Նույն օրվա ընթացքում գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը քննական նյութերը տեղափոխում է Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոն.

3) Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնում քննական կենտրոնի ղեկավարի և քննական կենտրոնում գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի մասնակցությամբ ընդունվում են քննական նյութերը: Պատասխանների ձևաթղթերը հաշվվում և սկանավորվում են: Պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի հաշվումից հետո կազմվում է բոլոր նյութերի հանձնման և ընդունման արձանագրություն:

69. Պատասխանների ձևաթղթերի ստուգումը՝

1) պատասխանների ձևաթղթերը ստուգվում են Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնում՝ համակարգչային սարքավորումների ու ծրագրերի միջոցով.

2) թեստերը չեն ստուգվում: Սկանավորվում, ճանաչվում և գնահատվում են միայն պատասխանների ձևաթղթերը.

3) պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի վերծանումից հետո ստուգման տվյալները գրանցվում են՝ որպես դիմորդի քննական արդյունք:

70. Միասնական քննությունների արդյունքների հրապարակումը՝

1) միասնական քննությունների հիմնական փուլի արդյունքները հրապարակվում են քննությունից հետո հինգերորդ օրը՝ բացառությամբ վերջին քննության, որի արդյունքները հրապարակվում են քննությունից հետո երրորդ օրը: Լրացուցիչ փուլի քննությունների արդյունքները հրապարակվում են քննության հաջորդ օրը.

2) գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ քննական կենտրոնների, առարկաների և քննություններին մասնակցած դպրոցների.

3) քննական աշխատանքների արդյունքների ցուցակները վավերացվում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից.

4) կենտրոնի ղեկավարն աշխատանքների ստուգման ավարտից հետո գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում է քննություն հանձնած դիմորդների քննական արդյունքների ցուցակը.

5) կենտրոնի ղեկավարը քննական արդյունքների ցուցակը փակցնում է քննական կենտրոնի տեղակայման հաստատության մուտքի մոտ: Միասնական քննությանը մասնակցած դիմորդների քննության ավարտական մասի քննական արդյունքների ցուցակը գնահատման և թեստավորման կենտրոնը կրթության եւ սպորտի բաժինների միջոցով ուղարկում է դպրոցներ.

6) միասնական քննության ավարտական մասի արդյունքը դպրոցը գրանցում է դիմորդի՝ միջնակարգ ընդհանուր կրթության ատեստատում.

7) դիմորդը քննության արդյունքի մասին տեղեկություն կարող է ստանալ իր դպրոցից, քննական կենտրոնից.

8) միասնական քննություններ հանձնած դիմորդներին տրվում են վկայագրեր, որոնցում նշվում են դիմորդի կողմից միասնական քննություններից ստացված միավորները.

9) վկայագրի ձևը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը.

10) դիմորդները մինչև հունիսի 30-ը վկայագրերը ստանում են դպրոցներից՝ ներկայացնելով քննության դիմում-հայտերի լրացման համար հիմք ընդունված անձնագիրը կամ ծննդյան վկայականը:

(70-րդ կետի 5-րդ ենթակետը փոփ.,1-ին ենթակետը խմբ. 29.04.2016 N202-Ն)

71. Միասնական քննության արդյունքների և անցկացման կարգի խախտման բողոքարկումը՝

1) բողոքարկումը կարող է լինել՝

ա. քննության անցկացման կարգի խախտման մասին.

բ. քննության արդյունքի հետ անհամաձայնության մասին.

2) բողոք-դիմումը շարադրվում է ձևաթղթի վրա.

3) միասնական քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ դիմորդը կարող է բողոքել քննության օրը (քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալը)՝ բողոքը ներկայացնելով պատասխանատու կազմակերպչին կամ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչին.

4) բողոք-դիմումի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա պատասխանատու կազմակերպիչը կատարում է «Ընդունված է՝ բողոքարկման հանձնաժողով ներկայացնելու համար» նշումը և վերադարձնում դիմորդին.

5) պատասխանատու կազմակերպիչը գրում է բացատրություն՝ այն կցելով բողոք-դիմումին, և հանձնում կենտրոնի ղեկավարին.

6) կենտրոնի ղեկավարը, ստանալով պատասխանատու կազմակերպչի բացատրությունն ու դիմորդի բողոք-դիմումը, առանձին ծրարով, համապատասխան արձանագրության հետ միասին ներկայացնում է գնահատման և թեստավորման կենտրոն.

7) բողոքարկման հանձնաժողովը, քննարկելով բողոք-դիմումը, այն համարում է հիմնավոր, եթե գտնում է, որ բողոք-դիմումում շարադրված հանգամանքները դիմորդի կողմից առաջադրանքների ոչ լիարժեք կատարման պատճառ են դարձել.

8) բողոքարկման հանձնաժողովը բողոք-դիմումի վերաբերյալ որոշում է ընդունում բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայն.

9) բողոքը հիմնավոր համարելու դեպքում բողոքարկման հանձնաժողովը որոշում է ընդունում դիմորդին թույլատրել մասնակցելու լրացուցիչ քննությանը.

10) բողոքարկման հանձնաժողովը չի քննարկում բողոք-դիմում՝

ա. դիմորդի կողմից իր մեղքով քննական հրահանգների չկատարման հետևանքով առաջացած թերությունների վերաբերյալ,

բ. դիմորդի կողմից պատասխանների ձևաթղթի լրացման ընթացքում թույլ տրված վրիպումների կամ սխալների վերաբերյալ.

11) միասնական քննության արդյունքի հետ անհամաձայնության դեպքում դիմորդն արդյունքների հրապարակման հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ը, կարող է բողոքարկել այն.

12) արդյունքի հետ անհամաձայնության վերաբերյալ բողոք-դիմումը դիմորդն անձամբ հանձնում է այն կենտրոնի ղեկավարին, որտեղ հանձնել է քննությունը: Կենտրոնի ղեկավարը ստացված բողոք-դիմումները գնահատման և թեստավորման կենտրոն է տեղափոխում բողոքարկման ժամկետի ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում.

13) բողոք-դիմումի քննարկման արդյունքում կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման, բարձրացման կամ իջեցման մասին: Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա հիմնական փուլի միասնական քննությունների բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության բողոքարկման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, իսկ միասնական քննությունների լրացուցիչ փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

(71-րդ կետի 13-րդ ենթակետը լրաց. 25.04.2013 N220-Ն, 29.04.2016 N202-Ն)

IX. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

72. Կենտրոնացված ընդունելության քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 24-ից հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:

(72-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

73. Կենտրոնացված ընդունելության քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում, որոնց ցանկը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը՝ մինչև տվյալ տարվա հունիսի 15-ը:

74. Կենտրոնացված ընդունելության քննությունների անցկացման համար գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով մինչև տվյալ տարվա հունիսի 20–ը ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ քննական հանձնաժողով):

75. Քննական հանձնաժողովը կազմված է նախագահից, տեղակալից և անդամներից:

76. Քննական հանձնաժողովը կազմում է քննական տոմսերը, տարբերակները և քննական այլ նյութեր, ստորագրում և ծրարում է քննական տոմսերի բնագրերը, որոնք կնքվում են գնահատման և թեստավորման կենտրոնի կնիքով և մինչև տվյալ քննության օրը պահվում գնահատման և թեստավորման կենտրոնում:

77. Քննության ավարտից հետո քննական հանձնաժողովի նախագահը կազմում ու գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացնում հաշվետվություն, որի պատճենը հանձնում է տվյալ բուհի ընդունող հանձնաժողովին:

78. Կենտրոնացված քննության արձանագրությունը պարտադիր կերպով ստորագրում է քննական հանձնաժողովի նախագահը:

79. Կենտրոնացված բանավոր քննության կազմակերպումը, անցկացումը և գնահատականի բողոքարկումը՝

1) կենտրոնացված բանավոր քննության քննական հանձնաժողովի նախագահը քննության օրը բուհի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը.

2) դիմորդները քննասենյակ են մտնում դիմորդների ցուցակում իրենց անունների հերթականությանը համապատասխան.

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, իսկ անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ) և քննական թերթիկի համապատասխանությունը ստուգում են հանձնաժողովի նախագահը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու քարտուղարը.

4) դիմորդների ցուցակում դիմորդն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում քննատոմսը.

5) քննատոմսն ընտրելուց հետո քննասենյակում դիմորդը ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանը, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները. պատասխանին նախապատրաստվելու համար դիմորդին տրվում է առավելագույնը 40 րոպե.

6) դիմորդի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով: Անբավարար և 8, 18-20 գնահատականները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ.

7) դիմորդների վիճահարույց աշխատանքները գնահատվում են քննական հանձնաժողովի կողմից՝ քվեարկության միջոցով: Կենտրոնացված բանավոր քննության արձանագրությունը, բացի քննական հանձնաժողովի նախագահից, ստորագրում են ևս երկու քննող դասախոս.

8) կենտրոնացված բանավոր քննության գնահատականը դիմորդին հայտնվում է նրա պատասխանի ավարտից անմիջապես հետո: Դիմորդն իրավունք ունի բանավոր քննության գնահատականը բողոքարկելու՝ դիմելով քննական հանձնաժողովի նախագահին՝ մինչեւ քննասենյակից դուրս գալը.

9) կենտրոնացված բանավոր քննությունները տեսաձայնագրվում են:

(79-րդ կետի 5-րդ ենթակետը լրաց., 8-րդ ենթակետը խմբ. 29.04.2016 N202-Ն)

80. Կենտրոնացված գրավոր քննության անցկացումը՝

1) հանձնաժողովի նախագահը կենտրոնացված գրավոր քննության օրն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը.

2) դիմորդների մուտքը կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոն կատարվում է՝ համաձայն դիմորդների ցուցակի.

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, իսկ անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ) և քննական թերթիկի համապատասխանությունը ստուգում են առարկայական հանձնաժողովի նախագահը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու քարտուղարը.

4) քննական հանձնաժողովի նախագահն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի

հետ ճշտում է քննությանը ներկայացած դիմորդների թիվը, որից հետո քննական տետրերը բաժանում են դիմորդներին, բացատրում տիտղոսաթերթի լրացման ձևը.

5) քննական տետրերը բաղկացած են տիտղոսաթերթից և 10 թերթից, ծածկագրված են, կնքված գնահատման և թեստավորման կենտրոնի ու ընդունող հանձնաժողովի կողմից.

6) ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ստուգում է տիտղոսաթերթի ճիշտ լրացումը, կազմում արձանագրություն տիտղոսաթերթերի քանակի մասին: Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնում կնքված տիտղոսաթերթերը, դրանք ապածածկագրվում են, և գրանցված տվյալները մուտքագրվում են բազայում.

7) ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն արձանագրությունը գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնում քննությունից հետո.

8) քննական տարբերակները դրվում են սեղանին, դահլիճից հրավիրվում են դիմորդներ՝ ընտրելու համապատասխան քանակի քննական տարբերակներ: Գործընթացին կարող են ներկա լինել դիմորդների ծնողները.

9) կենտրոնացված գրավոր քննության ամբողջ ընթացքում քննասենյակում պետք է ներկա լինեն քննական հանձնաժողովի նախագահը, տեղակալը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը:

81. Կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքների ստուգումը՝

1) քննության ավարտից հետո դիմորդները քննական տետրերը հանձնում են քննական հանձնաժողովի նախագահին: Պատասխանատու քարտուղարը գրավոր աշխատանքի չլրացված տեղերում նշում է կատարում լատիներեն «զեթ» տառի տեսքով.

2) քննական հանձնաժողովի նախագահը դրանք հանձնում է հանձնաժողովի անդամներին՝ ստուգման.

3) ստուգումն իրականացվում է քննության օրը՝ քննասենյակում.

4) ստուգման ընթացքը վերահսկվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կողմից.

5) կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքների ստուգումից հետո քննական հանձնաժողովի նախագահի հսկողությամբ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը ստուգում է տետրերում միավորների գումարումը և վերջնական գնահատականի գրանցումը, ապա ծածկագրում տետրերը, կազմում քննական աշխատանքների ծածկագրերի արձանագրությունը երեք օրինակից, որոնց վրա ստորագրում են առարկայական հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալները, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը, պատասխանատու քարտուղարը: Արձանագրություններից երկուսը պատասխանատու քարտուղարը քննական տետրերի հետ միասին պահում է իր մոտ, իսկ բնօրինակը հանձնում քննական հանձնաժողովի նախագահին: Նշված գործընթացը վերահսկվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կողմից.

6) անբավարար, 8, 18-20 գնահատականները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ.

7) առարկայական քննական հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրված քննական տետրերի ծածկագրերի արձանագրությունը մուտքագրման համար ներկայացվում է գնահատման և թեստավորման կենտրոն: Համեմատելով տիտղոսաթերթերը և ծածկագրերի արձանագրությունները՝ գնահատման և թեստավորման կենտրոնը կազմում է գնահատականների ցուցակ.

8) գնահատականների ցուցակները կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոնում փակցվում են քննությունը հանձնելու հաջորդ օրը՝ ժամը 16:00-ին:

82. Կենտրոնացված գրավոր քննության գնահատականի բողոքարկումը՝

1) դիմորդը կարող է բողոքարկել իր գնահատականը կենտրոնացված գրավոր քննությունների գնահատականների ցուցակները փակցնելու հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում.

2) բողոքարկման համար դիմորդը դիմում է ներկայացնում պատասխանատու քարտուղարին: Դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո պատասխանատու քարտուղարը դիմումները հանձնում է քննական հանձնաժողովի նախագահին.

3) դիմումում նշվում է կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի այն հատվածը, որի գնահատման հետ դիմորդը համաձայն չէ.

4) բողոքարկման ժամանակ հանձնաժողովը վերանայում է միայն դիմորդի կողմից նշված հատվածը (հատվածները): Մյուս հատվածների վերանայումը և վերագնահատումը չի թույլատրվում.

5) քննական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի՝ բողոքարկված կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքը ստուգած անդամը քննարկում են կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի բողոքարկված հատվածը՝ դիմորդի և նրա կողմից հրավիրված մասնագետի հետ.

6) բողոքարկված կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքի գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ չփոփոխվել.

7) բողոքարկման արդյունքները լրացվում են գնահատման էջի համապատասխան մասում, պարտադիր գրախոսվում քննական հանձնաժողովի նախագահի կողմից և հանձնվում պատասխանատու քարտուղարին.

8) կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի գնահատականի փոփոխման դեպքում գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվում քննական հանձնաժողովի նախագահի արձանագրությունը.

9) կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքի բողոքարկման արդյունքը ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, հրապարակվում է կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոնում.

10) կենտրոնացված գրավոր քննության բողոքարկված քննական աշխատանքի վերագնահատման հետ անհամաձայնության դեպքում բողոքարկման արդյունքի հրապարակման հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում, դիմորդը կարող է դիմել գնահատման և թեստավորման կենտրոնի բողոքարկման հանձնաժողովին.

11) գնահատման և թեստավորման կենտրոնի բողոքարկման հանձնաժողովի կողմից հրավիրված փորձագետը, որը պետք է ունենա տվյալ առարկայից առնվազն հինգ տարվա մանկավարժական գործունեության փորձ և համապատասխան մասնագիտության գիտական աստիճան, ներկայացնում է եզրակացություն, որի հիման վրա բողոքարկման հանձնաժողովը մեկօրյա ժամկետում ընդունում է վերջնական որոշում գնահատականը բարձրացնելու, իջեցնելու կամ նույնը թողնելու մասին.

12) սույն կետի 11-րդ ենթակետով նախատեսված բողոքարկման ընթացքում վերանայվում է կենտրոնացված գրավոր աշխատանքի միայն բողոքարկված մասը.

13) գնահատականի փոփոխման դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ համապատասխան արձանագրություն է ներկայացվում գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենին:

X. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

83. Ներբուհական ընդունելության քննություններն անցկացվում են տվյալ տարվա հունիսի 24-ից հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:

(83-րդ կետը փոփ. 25.04.2013 N220-Ն)

84. Ներբուհական ընդունելության քննությունները կազմակերպվում են սույն կարգի 73-78-րդ կետերի պահանջներին համապատասխան՝

1) ներբուհական ընդունելության քննություններն անցկացվում են տվյալ մասնագիտության մասնագիտական առարկաների առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան.

2) ներբուհական ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է սույն կարգի 79-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Գծանկար», «Գծագրություն», «Գունանկար», «Նկարչություն» առարկաների քննությունների արդյունքների բողոքարկման, որոնց քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է սույն կարգի 82-րդ կետի պահանջներին համապատասխան:

XI. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՉՆԵՐԿԱՅԱՑԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

85. Հարգելի պատճառով ներբուհական քննությանը չներկայացած դիմորդներին թույլատրվում է հանձնել լրացուցիչ քննություն՝ քննացուցակով այդ առարկայից սահմանված քննության օրերին. քննացուցակով տվյալ առարկայից քննություն չլինելու դեպքում դիմորդը դուրս է մնում:

XII. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

86. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Միասնական քննություններում դրական են համարվում 7.5 և բարձր միավորները: Բոլոր միավորները գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան:

Կենտրոնացված և ներբուհական քննություններում դրական են համարվում ութ և բարձր միավորները:

87. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաների միասնական քննությունների գնահատականները համարժեքացվում են 20 միավորային համակարգին:***(փոփ. 29.04.2016 N202-Ն)***

88. Դիմորդն անվճար և վճարովի ուսուցմամբ հայտագրած համապատասխան մասնագիտությունների մրցույթներին մասնակցում է մրցութային քննություններից ստացած դրական միավորների գումարով՝

հարյուրերորդական մասի պահպանմամբ: Այն մասնագիտությունների համար, որոնք ընդունելության քննությունների ցանկում նշված են որպես ոչ մրցութային, դիմորդը մրցույթին մասնակցում է այդ առարկաներից դրական միավոր ստանալու դեպքում:

89. Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է մասնագիտությունների համապատասխան ուղղվածությամբ՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտությունների խմբերի, ֆակուլտետների (դեպարտամենտների):

90. Անվճար և վճարովի ուսուցման ընդունելության մրցույթներն անցկացվում են մեկ փուլով:

91. Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է անվճար ուսուցման առաջին տողով հայտագրված մասնագիտության գերակայությամբ:

(91-րդ կետը լրաց. 13.05.2014 N297-Ն)

92. Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար անվճար և վճարովի ուսուցման մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան:

93. Ընդունելության դիմում-հայտում հայտագրված որևէ մասնագիտությամբ (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին:

93.1. Արցախի պետական համալսարանի և «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի «✹» նշանով նշված մասնագիտությունների անվճար ուսուցման համակարգի մրցույթին կարող են մասնակցել նաև այն դիմորդները, ովքեր մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել են միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Անվճար համակարգում առաջնահերթ ընդունվելու արտոնությունից օգտվում են այն դիմորդները, ովքեր մրցութային երկու առարկաներից հանձնում են միասնական քննություն:

(93.1-րդ կետը լրաց. 13.05.2014 N297-Ն, փոփ. 29.04.2016 N202-Ն)

94. Անվճար տեղերի մրցույթին դիմորդները կարող են մասնակցել միայն ընդունելության քննությունների արդյունքներով՝ բացառությամբ Արցախի պետական համալսարանի և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի «✹» նշանով նշված մասնագիտությունների: Վճարովի տեղերի մրցույթին դիմորդները կարող են մասնակցել և՛ միասնական քննությունների արդյունքներով, և՛ բուհերի ընդունելության քննությունների ցանկում 2 աստղանիշով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական ընդունելության դիմում-հայտում հայտագրած միջնակարգ կրթության ատեստատի կամ միջին մասնագիտական կամ նախնական մասնագիտական ուսումնական հաստատության ավարտական փաստաթղթի՝ պետական ավարտական քննությունների գնահատականներով, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականով՝ բացառությամբ «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի «✹» նշանով նշված մասնագիտությունների,որոնց դիմորդները,որպես մրցութային առարկաների գնահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Վճարովի տեղերի մրցույթում առաջնահերթությունը տրվում է առավել թվով միասնական քննություններ հանձնած դիմորդներին:

(94-րդ կետը խմբ. 13.05.2014 N297-Ն, փոփ. 29.04.2016 N202-Ն)

95. ***(1-ին պարբերությունն ուժը կորցրած է ճանաչվել 29.04.2016 N202-Ն)***

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում կարող են ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրանցում ունեցող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններն ավարտած դիմորդները:

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերի դիմորդների և նրանց ծնողների հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճյուղային նախարարների, կնքում է պայմանագիր՝ բուհն ավարտելուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մասնագիտությամբ աշխատելու վերաբերյալ:

(95-րդ կետի 3-րդ պարբերությունը փոփ. 29.04.2016 N202-Ն)

96. Մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին.

2) արվեստի գծով միջազգային և հանրապետական մրցույթների հաղթողներին.

3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին.

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին.

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

97. Բուհերի այն մասնագիտությունների գծով, որոնց քննությունների անվանացանկում առարկաները նշված են մեկ (նաև անվճար ուսուցման մրցույթին մասնակցելու համար) և երկու աստղանիշով, վճարովի ուսուցման թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար՝

1) մրցութային և ոչ մրցութային քննությունների գնահատականներ են համարվում միջնակարգ կրթության ատեստատի, միջին մասնագիտական (հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով) կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի տվյալ առարկաների պետական ավարտական քննական գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը,

2) 10 միավորային համակարգով տարեկան գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «4»-ը, «5»-ը և «6»-ը համարժեք են 13 միավորի,

բ. «7»-ը և «8»-ը համարժեք են 17 միավորի,

գ. «9»-ը և «10»-ը համարժեք են 20 միավորի,

3) միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի 5 միավորային համակարգով գնահատված տարեկան քննական գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «3»-ը համարժեք է 13 միավորի,

բ. «4»-ը համարժեք է 17 միավորի,

գ. «5»-ը համարժեք է 20 միավորի.

98. Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունների և Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունների կողմից տված տեղեկանքների:

99. Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

1) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները.

2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

(99-րդ կետը խմբ.13.05.2014 N297-Ս)

100. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում՝

1) անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս (առանձին մրցույթով)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի.

2) անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդները վճարովի ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով.

3) եթե հայտագրել են միայն վճարովի ուսուցման մասնագիտություն, բուհ են ընդունվում մրցույթից դուրս:

(100-րդ կետի 3-րդ ենթակետը խմբ. 29.04.2016 N202-Ն)

101. Առանց ընդունելության քննության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով միջազգային օլիմպիադաների հաղթողները, տարբեր մարզաձևերի գծով աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները, ովքեր ընդունելության դիմում-հայտում հայտագրել են համապատասխան մասնագիտությունները:

102. Անվճար և վճարովի ուսուցման մրցույթների արդյունքներն ամփոփվում են մինչև տվյալ տարվա հուլիսի 15-ը:

103. Ներբուհական քննությունների արդյունքներով մրցույթն անցկացվում է համապատասխան բուհում: Մրցույթի արդյունքը հաստատվում է հանրապետական ընդունող հանձնաժողովում, որից հետո բուհի ռեկտորը հրամանագրում է ուսանողներին:

104. Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից ընդունելության քննությունների մրցույթի արդյունքները հաստատվելուց հետո, բուհերում թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական միավոր (ներ) ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները հուլիսի 15-20-ն ընկած ժամանակահատվածում կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին՝ թափուր տեղեր ունեցող բուհում լրացնելով նոր դիմում-հայտ:

105. Բուհի պատասխանատու քարտուղարը հուլիսի 21-ին գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացնում թափուր տեղերի մրցույթի դիմում-հայտերը:

106. Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցույթի արդյունքները հաստատում է հուլիսի 25-ին:

XIII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

107. Ընդունելության քննությունների հանրապետական ընդունող հանձնաժողովը կազմված է 12 անդամից: Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահը նախարարն է: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝ նախարարի տեղակալը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի աշխատակազմի ներկայացուցիչը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ներկայացուցիչը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը, գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը, բուհերի ռեկտորները և պատասխանատու քարտուղարը: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմը հաստատում է նախարարը:

(107-րդ կետը փոփ. 29.04.2016 N202-Ն)

108. Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ՝

1) հաստատվում են անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթների արդյունքները.

2) հաստատվում են սույն կարգի 98-101-րդ կետերին համապատասխան արտոնություններից օգտվող դիմորդների ընդունելության արդյունքները.

3) վերաբաշխվում են մրցույթի արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած տեղերը, ինչպես նաև անվճար, վճարովի համակարգի պահուստային տեղերը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2012 թ. N 944-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(վերնագիրը փոփ. 2.12.2016 N744-Ն)

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2^1-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակը՝ համաձայն հավելվածի:

(1-ին կետը խմբ. 2.12.2016 N744-Ն)

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության որակավորումների ընդհանրական բնութագրերին համապատասխան՝ ըստ մասնագիտությունների (կամ մասնագիտությունների խմբերի) և կրթական աստիճանների, հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության որակավորումների բնութագրերը՝ մասնագիտությունների կրթական չափորոշիչները համապատասխանեցնելով դրանց:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 2-ի N 774-Ն որոշման

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 944-Ն որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ

ՄԱԿԱՐԴԱԿ	ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ	ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ/ԾՐԱԳԻՐ	ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ		
			ԳԻՏԵԼԻՔՆԵՐ	ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ)
1-ին	ՏԱՐՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	Միջնակարգ կրթության 1-ին աստիճան՝ տարրական կրթություն Տեւողությունը՝ 4 տարի	• Տարրական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են մայրենի լեզվով գրելու, կարդալու, խոսելու եւ թվաբանական գործողություններ կատարելու համար: • Տարրական գիտելիքներ բնության, հասարակության, արվեստի եւ հայ ժողովրդի պատմության վերաբերյալ: • Օտար լեզվով սահմանափակ բառապաշարի եւ արտահայտությունների իմացություն՝ իր անձը եւ պարզ առօրյա իրադրությունները նկարագրելու համար:	Տարրական հմտություններ, որոնք անհրաժեշտ են պարզ առաջադրանքներ եւ գործողություններ կատարելու համար՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով պարզագույն կանոններ, գործիքներ, չափիչ ու այլ սարքեր եւ տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաներ (այսուհետ՝ ՏՀՏ):	• Գործել եւ սովորել անմիջական վերահսկողության ներքո՝ ծանոթ ու հստակ սահմանված պայմաններում, եւ ներկայացնել կատարած աշխատանքը:
2-րդ	ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ	Միջնակարգ կրթության 2-րդ աստիճան՝ միջին դպրոց Տեւողությունը՝ 5 տարի	Բազային գիտելիքներ մայրենի ու օտար լեզուներից, ՏՀՏ-ից, մաթեմատիկայից, ինչպես նաեւ բնագիտական, հասարակագիտական, արվեստի, սպորտի, անվտանգ կենսագործունեության բնագավառների առարկաներից՝ հետագա ուսումնառության կամ մասնագիտական պատրաստվածություն չպահանջող աշխատանք կատարելու համար:	Իմացական, ճանաչողական, հաղորդակցման եւ գործնական բնույթի որոշակի հմտություններ, որոնք նպատակաուղղված են՝ 1) հանձնարարված առաջադրանքների կատարմանը եւ առօրյա խնդիրների լուծմանը՝ պարզ կանոնների, մեթոդների գործիքների եւ սարքերի կիրառման միջոցով, 2) անհրաժեշտ տեղեկատվության որոնմանը, հավաքագրմանը եւ պահպանմանը՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ՏՀՏ, 3) օտար լեզվով ամենօրյա կիրառություն ունեցող արտահայտությունների ընկալմանը եւ գործածությանը:	• Գործել եւ սովորել վերահսկողության ներքո՝ ծանոթ եւ հստակ սահմանված պայմաններում, որոշ աստիճանի ինքնուրույնության եւ պատասխանատվության դրսեւորմամբ: • Հասկանալ բնության, հասարակական եւ առօրյա կյանքի տարբեր երեւույթները եւ կատարել դատողություններ դրանց վերաբերյալ: • Տիրապետել հասարակական համակեցության կանոններին եւ դրսեւորել քաղաքացիական գիտակցության տարրեր: • Դրսեւորել ազգային եւ համամարդկային մշակութային արժեքների ընդհանուր իմացություն:

3-րդ	ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (Հիմնական կրթությամբ) (Վարպետային ուսուցման որակավորման վկայական)	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր Տեւողությունը՝ 6 ամսից 1 տարի	• Բազային գիտելիքներ մայրենի ու օտար լեզուներից, ՏՀՏ-ից մաթեմատիկայից, ինչպես նաեւ հասարակագիտական, բնագիտական, արվեստի, սպորտի, անվտանգ կենսագործունեության բնագավառների առարկաներից՝ որոշակի ոլորտում պարզ աշխատանք կատարելու կամ հետագա ուսումնառության համար: • Ընդհանուր հասկացությունների, սկզբունքների եւ մեթոդների իմացություն, որոնք բավարար են պարզ մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:	• Իմացական, ճանաչողական, հաղորդակցական եւ գործնական բնույթի բազային հմտություններ, որոնք անհրաժեշտ են՝ 1) որոշակի մասնագիտական խնդիրների լուծման եւ առաջադրանքների կատարման համար՝ համապատասխան կանոնների, մեթոդների, սարքերի եւ գործիքների ընդտրության ու կիրառման միջոցով, 2) անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման եւ օգտագործման համար՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ՏՀՏ, 3) օտար լեզվով ամենօրյա կիրառություն ունեցող արտահայտությունների գործածության համար: • Ուսումնառության արդյունքում ձեռք բերած գիտելիքները եւ իմացությունն աշխատանքում կիրառելու պարզ մասնագիտական հմտություններ:	• Աշխատանքի եւ ուսումնառության ընթացքում ցուցաբերել ինքնուրույնություն եւ ստանձնել առաջադրանքների կատարման արդյունքների հանդեպ անձնական պատասխանատվություն: • Հարմարեցնել սեփական վարքագիծը խնդիրների լուծման ընթացքում ի հայտ եկող հանգամանքներին: • Բացատրել ու կատարել եզրահանգումներ բնության, հասարակության եւ առօրյա կյանքի տարբեր երեւույթների ու օրինաչափությունների վերաբերյալ: • Տիրապետել հասարակական համակեցության կանոններին եւ դրսեւորել քաղաքացիական գիտակցություն: • Կարեւորել ազգային եւ համամարդկային մշակութային արժեքները:
4-րդ	1. ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՏԵՍՏԱՏ 2. ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (Միջնակարգ կրթությամբ) (Արհեստագործական կրթության դիպլոմ)	Միջնակարգ կրթության 3-րդ աստիճան՝ ավագ դպրոց Տեւողությունը՝ 3 տարի Նախնական մասնագիտական (արհեստագործական կրթական ծրագիր) Տեւողությունը՝ 1-ից 3 տարի	• Փաստական եւ տեսական հիմնարար գիտելիքներ միջնակարգ կրթության բոլոր բնագավառներից՝ հետագա աշխատանքի կամ ուսումնառության համատեքստում: • Աշխատանքի բնագավառին առնչվող ընդհանուր հասկացությունների, սկզբունքների եւ մեթոդների իմացություն, որոնք պահանջվում են հետագա մասնագիտական գործունեություն իրականացնելու համար:	• Տարաբնույթ իմացական, ճանաչողական, հաղորդակցման եւ գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են. 1) աշխատանքի կամ հետագա ուսումնառության որեւէ բնագավառում կոնկրետ խնդիրներ լուծելու, առաջադրանքներ եւ ուսումնասիրություններ կատարելու, ինչպես նաեւ գործածված մեթոդներն ու ձեռք բերված արդյունքները վերլուծելու եւ ամփոփելու համար. 2) տեղեկատվության հավաքագրման, համադրման դասակարգման, եւ օգտագործման համար՝ կիրառելով ՏՀՏ. 3) օտար լեզուներով գրավոր եւ բանավոր հաղորդակցվելու համար • Ուսումնառության արդյունքում ձեռք բերած գիտելիքները եւ իմացությունը աշխատանքում կիրառելու մասնագիտական հմտություններ:	• Ինքնուրույն կազմակերպել եւ կառավարել սեփական աշխատանքային կամ ուսումնառության գործընթացները՝ կանխատեսելի, բայց փոփխունակ միջավայրում եւ ստանձնել դրանց գնահատման ու բարելավման որոշ պատասխանատվություն: • Հստակ ուղղորդման ներքո բացահայտել սեփական կրթական պահանջմունքները՝ ուսումնառությունը շարունակելու համար: • Կազմակերպել այլ անձանց առօրյա գործողությունները: • Կատարել բնության, հասարակության եւ առօրյա կյանքի տարաբնույթ երեւույթների վերլուծություններ՝ կիրառելով հիմնավորման եւ ապացուցման մեթոդներ: • Պահպանել հասարակական համակեցության կանոնները եւ դրսեւորել քաղաքացիական գիտակցությամբ վարքագիծ: • Արժեւորել ազգային եւ համամարդկային արժեքները:

5-րդ	ՄԱՍՆԱԳԵՏ (Միջին մասնագիտական կրթության դիպլոմ)	Միջին մասնագիտական կրթական ծրագիր Տեւողությունը՝ 2-ից 5 տարի	• Հիմնարար եւ համակողմանի փաստական, տեսական եւ մասնագիտացված գիտելիքներ՝ աշխատանքի կամ ուսումնառության ոլորտից: • Մասնագիտության հիմնարար հասկացությունների, տեսությունների եւ մեթոդների իմացություն:	• Բազմակողմանի եւ համապարփակ իմացական, ճանաչողական, վերլուծական եւ գործնական հմտություններ, որոնք անհրաժեշտ են. 1)տարաբնույթ, այդ թվում՝ մասնագիտական խնդիրները բացահայտելու համար. 2) առաջացած խնդիրների վերաբերյալ դատողություններ կատարելու եւ լուծումներ առաջադրելու համար՝ ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում: • Հաղորդակցման եւ ՏՀՏ հմտություններ, որոնք անհրաժեշտ են. 1) մասնագիտությանն առնչվող տեղեկատվությունը, գաղափարները, հասկացությունները, խնդիրներն ու դրանց լուծումները բացատրելու եւ հանրության նեղ շրջանակներում ներկայացնելու համար. 2) մասնագիտական ոլորտում աշխատանքը դյուրացնելու եւ արագացնելու համար. 3) մասնագիտությանն առնչվող քանակական եւ որակական տվյալները հավաքագրելու, մշակելու եւ վերլուծելու համար:	• Որոշ չափով կառավարել եւ վերահսկել աշխատանքային կամ ուսումնառության գործընթացներ՝ անկանխատեսելի ու փոփոխունակ միջավայրում, ստանձնել սեփական ու այլ անձանց գործողություններին հետեւելու եւ դրանք բարելավելու պատասխանատվություն: • Բացահայտել սեփական կրթական պահանջմունքները եւ կայացնել որոշում հետագա ուսումնառության վերաբերյալ: • Պահպանել հասարակական համակեցության կանոնները, կենսական տարբեր իրավիճակներում դրսեւորել քաղաքացիական գիտակցությամբ վարքագիծ, ինչպես նաեւ իրականացնել որոշակի վերահսկողություն թիմում այդ կանոնների պահպանման նկատմամբ: • Կիրառել ազգային եւ համամարդկային արժեքները առօրյա հարաբերություններում:

ԿՈՆՍՈՒՄ	ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ	ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ	ԳԻՏԵԼԻՔՆԵՐ	ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ			ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ (ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱ)
				Գիտելիքի կիրառման հմտություններ	Հաղորդակցման, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) եւ տվյալների հետ աշխատելու հմտություններ	Ընդհանրական իմացական հմտություններ	Ինքնուրույնություն եւ պատասխանատվություն
6-րդ	ԲԱԿԱԼԱՎՐ (Բակալավրի դիպլոմ)	Բակալավրի կրթական ծրագիր Տեւողությունը՝ 3 տարի (Կրեդիտների փոխանցման եւ կուտակման համակարգ, այսուհետ՝ ԿՓԿՀ) (180-240 ԿՓԿՀ)	Մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի արդի եւ հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն եւ առաջադեմ գիտելիքներ:	Հմտություններ, որոնք ցուցաբերում են նորարարական ու առաջադեմ մոտեցումներ եւ անհրաժեշտ են ձեռք բերած գիտելիքը եւ իմացությունը մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ընթացքում ծագած անկանխատեսելի խնդիրները լուծելիս:	•Տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվությունը, փաստարկները, գաղափարները, խնդիրները եւ դրանց լուծումները մասնագիտական եւ ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու եւ բացատրելու հմտություններ: •Մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու եւ աշխատանքը դյուրացնելու համար ՏՀՏ-ներ կիրառելու հմտություններ:	• Վերլուծելու եւ եզրահանգումներ կատարելու հմտություններ՝ դրսեւորելով քննադատական մտածողություն: • Հմտություններ, որոնք պահանջում են ստեղծագործական մոտեցում ոլորտի մասնագիտական խնդիրները բացահայտելիս եւ տարբեր լուծումներ առաջադրելիս:	• Ծավալել լիարժեք մասնագիտական գործունեություն: • Կառավարել մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր անկանխատեսելի աշխատանքային կամ ուսումնական միջավայրում, ստանձնել պատասխանատվություն առանձին անհատների կամ թիմի մասնագիտական զարգացման համար:

					• Մասնագիտական ոլորտին առնչվող քանակական եւ որակական տվյալներ հավաքագրելու, մշակելու, վերլուծելու եւ մեկնաբանելու հմտություններ՝ հիմնավորված դատողություններ անելու համար:		• Որոշել հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները՝ ելնելով սեփական պահանջմունքներից: • Գիտակցել անձնական պատասխանատվությունը ազգի եւ պետության հանդեպ, հետամուտ լինել ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային եւ համամարդկային արժեքների տարածմանը:
7-րդ	ՄԱԳԻՍՏՐՈՍ (Մագիստրոսի դիպլոմ) ԴԻՊԼՈՄԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏ (Դիպլոմավորված մասնագետի դիպլոմ)	Մագիստրոսի կրթական ծրագիր Տեւողությունը՝ առնվազն 1 տարի (60-120 ԿՓԿՀ) Դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագիր Տեւողությունը՝ առնվազն 5 տարի	• Խորը մասնագիտացված գիտելիքներ՝ այդ թվում տվյալ ոլորտի վերջին ձեռքբերումների վերաբերյալ, որոնք կիրառվում են ուսումնառության, հետազոտության եւ աշխատանքի ընթացքում: • Տվյալ մասնագիտական բնագավառի եւ միջմասնագիտական ոլորտների տեսությունների առաջավոր սկզբունքների ու մեթոդների իմացություն:	Առանցքային մասնագիտական հմտություններ, որոնք անհրաժեշտ են. • հետազոտական ու նորարարական գործունեություն իրականացնելիս՝ տարբեր ոլորտների գիտելիքը համակցելու եւ նոր գիտելիք ստեղծելու համար, • նոր եւ անծանոթ իրադրություններում տեսական ու գործնական խնդիրներ լուծելու համար:	•Մասնագիտական եւ ոչ մասնագիտական լայն հանրությանն իր եզրահանգումները, համապատասխան հիմնավորումները եւ հետազոտության արդյունքները հստակ ու համակարգված ներկայացնելու եւ բացատրելու հմտություններ: •Մասնագիտական եւ/կամ միջմասնագիտական ոլորտներում բարդ խնդիրներ լուծելիս եւ հետազոտություններ կատարելիս ՏՀՏ-ները վարժ կիրառելու հմտություններ: •Հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական եւ/կամ միջմասնագիտական ոլորտներին առնչվող քանակական ու որակական տվյալները խորը վերլուծելու եւ գնահատելու համար՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու եւ որոշումներ կայացնելու նպատակով:	• Հմտություններ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրները հետազոտելու, արդիական գաղափարներ ու մոտեցումներ առաջադրելու, ինչպես նաեւ ոլորտի գիտելիքի եւ պրակտիկայի ընդլայնմանը միտված նորարարական ու ստեղծագործական լուծումներ առաջարկելու համար:	• Մասնագիտական կամ ուսումնառության ոլորտում ծավալել գործունեություն, որը պահանջում է բարդ եւ անծանոթ աշխատանքային իրադրությունների կառավարման ու վերափոխման ռազմավարական նոր մոտեցումներ: • Նպաստել մասնագիտական գիտելիքի զարգացմանը: • Ստանձնել թիմի ռազմավարական նպատակների իրագործումը վերահսկելու պատասխանատվություն: • Գնահատել իր շարունակական կրթության ու մասնագիտական զարգացման կարիքները՝ արդի տեխնոլոգիական զարգացումների համատեքստում, ունակ լինել շարունակելու ուսումնառությունը արագ փոփոխվող միջավայրերում: • Նպաստել քաղաքացիական հասարակության զարգացմանը: • Գործել՝ զուգակցելով հայոց ազգային արժեհամակարգն ու պատմամշակութային փորձը համամարդկային արժեքների հետ:

| 8-որ | ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ (Գիտությունների թեկնածուի վկայական) | Հետբուհական մասնագիտական կրթական ծրագիր Տևողությունը՝ առնվազն 3 տարի (180 ԿՓԿՀ) | • Առավել առաջադեմ (առաջացնող) գիտելիքներ մասնագիտական բնագավառից եւ ֆիզիկամաթեմատիկական ուղղություններից, որոնք կիրառվում են ուսումնասիրության, գիտական հետազոտությունների եւ աշխատանքի ընթացքում:
• Մասնագիտության բնագավառի եւ միջդիսցիպլինարային ուղղությունների նորագույն տեսությունների, մոտեցումների եւ գիտակարգերի համընդհանուր եւ խոր իմացություն: | Առաջադեմ մասնագիտական հմտություններ՝ մեթոդներ եւ գնահատում, որոնք անհրաժեշտ են.
• ձեռք բերած գիտելիքը եւ բնագավառի հայեցակարգային սկզբունքների եւ մեթոդների ինտեգրումը բարդ տեսական ու գործնական խնդիրների լուծելիս,
• նորարարական գիտական հետազոտությունները պլանավորելիս եւ իրականացնելիս: | •Տեսական ու գործնական, բարդ եւ հանգային խնդիրներ. հետազոտության աղբյուրներ շրջանակներին գիտական մոտեցումներ եւ լայն հայեցողություն եւ դրանք մեկնաբանելու գաղտնագրած հմտություններ:
•Գիտական հետազոտության կատարման ուսումնական գիտելիք եւ նոր գիտելիք ստեղծելիս S<S-մեթոդ հանձնարարման կիրառելու հմտություններ: | • Հմտություններ, որոնք անհրաժեշտ են.
1) ինքնատիպ հետազոտության կատարման եւ իրականացնելու հանար,
2) այնպիսի արդյունքներ ստանալու համար, որոնք, համաձայն գիտության եւ/կամ մասնագիտության գործունեության ոլորտում, տարածում են եւ աջակցում են մշակույթին գաղափարների խոսավոր հասանելիության, 3) հետազոտության արդյունքները տեսության վերածելու համար: | • Գիտական եւ մասնագիտական առաջատար ոլորտներում գործունեություն ծավալելու եւ կառավարելու ընդունակ գիտական գիտելիքներ եւ ֆունկցիոնալ գիտական եւ մասնագիտական բարձրակարգ գործունեություն եւ մասնագիտական բարձրակարգ գործունեություն, անկախության ու ինքնուրույնություն:
• Ղեկավարել հետազոտական խմբի կամ կազմակերպության թիմ՝ դրսեւորելով բարդարդ գործընթացների եւ համընդհանուր գործունեության պատասխանատվություն:
• Գործել ի նպաստ ազգի եւ պետության՝ ամենամեծ օգուտ՝ ապահովելով ի նպաստ հասարակության առաջադիմության եւ բարգավաճման գաղափարները: |

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2013 թ. N219-Ն

ք. Ստեփանակերտ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 25-ի N 19-Ն որոշման N 1 հավելվածի 45-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել կրթության որակավորումների շնորհման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2013 թվականի ապրիլի 25-ի
N219-Ն որոշման

ԿԱՐԳ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը կարգավորում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթության որակավորումների շնորհման ընդհանուր պայմանների հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգը տարածվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունների կամ հիմնական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների (այսուհետ՝ հայցորդ) վրա՝ անկախ ուսուցման ձևից:

3. Կրթության որակավորումների շնորհումն իրականացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» N 944-Ն որոշմամբ հաստատված որակավորումների ազգային շրջանակով (այսուհետ՝ ՈԱՇ) և մասնագիտական կրթության մասնագիտությունների և դրանց համապատասխան որակավորումների ցանկով նախատեսված որակավորումներին ու դրանց բնութագրիչների պահանջներին համապատասխան:

4. Կրթության որակավորումը շնորհում է ուսումնական կամ հիմնական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության անունից՝ որակավորման տվյալ աստիճանը հայցողի ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ որակավորման հանձնաժողովի որոշման հիման վրա:

5. Որակավորում շնորհելու իրավասություն ունեցող հաստատություններն են (այսուհետ՝ հաստատություն).

1) լիցենզավորված հանրակրթական ուսումնական հաստատությունները՝ ՈԱՇ-ի 1-ին, 2-րդ և 4-րդ աստիճանի որակավորումներ,

2) լիցենզավորված նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ ՈԱՇ-ի 3-րդ և 4-րդ աստիճանի որակավորումներ,

3) միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ ՈԱՇ-ի 3-րդ, 4-րդ և հավատարմագրված մասնագիտությունների գծով ՈԱՇ-ի 5-րդ աստիճանի որակավորումներ,

4) բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ հավատարմագրված մասնագիտությունների գծով ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ աստիճանի որակավորումներ,

5) բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունները՝ հավատարմագրված մասնագիտությունների գծով ՈԱՇ-ի 6-րդ, 7-րդ և 8-րդ աստիճանի որակավորումներ:

6. Որակավորման 1-ին, 2-րդ և 4-րդ աստիճան կարող է հայցել յուրաքանչյուր ոք՝

1) ով անցել է համապատասխանաբար տարրական, հիմնական, միջնակարգ կրթության ծրագիրը լրիվ ծավալով,

2) ում տարիքը գերազանցում է համապատասխան կրթական ծրագրի համար սահմանված նորմատիվային տարիքը:

7. Որակավորման 3-րդ, 5-8-րդ աստիճան կարող է հայցել յուրաքանչյուր ոք, ով լիցենզավորված ուսումնական հաստատությունում կամ հաստատություններում անցել է համապատասխան աստիճանի կրթական ծրագիրը լրիվ ծավալով:

II. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Ամփոփիչ ատեստավորման նպատակն է գնահատել հայցորդի գիտելիքների, հմտությունների և կարողությունների համապատասխանությունը որակավորման տվյալ աստիճանի բնութագրիչներին:

9. Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է հետևյալ ձևերով.

1) որակավորման 1-ին աստիճանում – գիտելիքների ստուգում,

2) 2-րդ և 4-րդ աստիճաններում – պետական ավարտական քննություններ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված առարկաներից,

3) 3-րդ, 5-8-րդ աստիճաններում–քննություններ և ավարտական աշխատանքի (դիպլոմային աշխատանք կամ նախագիծ, մագիստրոսական թեզ, թեկնածուական թեզ) պաշտպանություն:

10. Ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարերը, բացառությամբ որակավորման 2-րդ և

4-րդ աստիճանների, մշակում է ուսումնական հաստատությունը՝ պետական կրթական չափորոշիչների հիման վրա, և հաստատում է որակավորման հանձնաժողովի նախագահը:

Որակավորման 2-րդ և 4-րդ աստիճանների ամփոփիչ ատեստավորման հարցաշարերը և քննական տոմսերը մշակում և ուսումնական հաստատություններին է տրամադրում «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

11. Ավարտական աշխատանքների թեմաները հաստատում է իրավասու հաստատության համապատասխան ստորաբաժանումը (ամբիոն, ֆակուլտետ):

Որակավորման 8-րդ աստիճանի համար թեզի թեման սահմանված կարգով համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Բարձրագույն որակավորման հանձնաժողով» գործակալության հետ:

12. Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են.

1) հաստատության տվյալ ուսումնական տարվա այն շրջանավարտները, ովքեր ավարտել են հիմնական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը,

2) հաստատության նախորդ տարիների շրջանավարտները, ովքեր նախկինում չեն անցել ամփոփիչ ատեստավորումը,

3) լիցենզավորված, սակայն չհավատարմագրված այլ ուսումնական հաստատությունում տվյալ կրթական ծրագրի լրիվ դասընթացը ավարտած շրջանավարտները (դրսեկություն):

13. Ամփոփիչ ատեստավորման թույլատրված հայցորդների ցանկերը հաստատվում են հաստատության ղեկավարի հրամանով:

14. Ամփոփիչ ատեստավորումն անցկացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հաստատած կարգով:

III. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

15. Որակավորման հանձնաժողովը կազմավորում է հաստատությունը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ ըստ կրթական աստիճանների, մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ ըստ մասնագիտությունների խմբերի:

16. Որակավորման հանձնաժողովի կազմավորման կարգը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

17. Մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների որակավորման պետական հանձնաժողովի նախագահին հաստատության ղեկավարի առաջարկությամբ նշանակում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

18. Որակավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) հայցորդի պատրաստվածության մակարդակի և որակավորման բնութագրիչների պահանջներին դրա համապատասխանության ստուգումը,

2) ամփոփիչ ատեստավորման արդյունքներով հայցորդին համապատասխան որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան համապատասխան ավարտական փաստաթուղթ տալու (կամ չտալու) մասին որոշման կայացումը:

19. Ամփոփիչ ատեստավորման՝ ամփոփիչ քննության (քննությունների) և ավարտական աշխատանքի պաշտպանության դրական («բավարար», «լավ» կամ «գերազանց») արդյունքների հիման վրա որակավորման հանձնաժողովը կայացնում է որոշում շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու, իսկ ամփոփիչ քննության (քննությունների) կամ ավարտական աշխատանքի պաշտպանության բացասական («անբավարար») արդյունքի դեպքում հայցորդին որակավորման շնորհումը մերժելու մասին: Որակավորում չստացած շրջանավարտին ավարտական փաստաթուղթ չի տրվում:

20. Ավարտական աշխատանքը չպաշտպանած կամ ամփոփիչ քննությունները չհանձնած կամ «անբավարար» գնահատական ստացած հայցորդին թույլատրվում է վերահանձնել (կրկնել) ավարտական աշխատանքի պաշտպանությունը կամ ամփոփիչ քննությունները հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին: Ավարտական աշխատանքի վերահանձնման դեպքում հայցորդը կցվում է համապատասխան ամբիոնին և ստանում ավարտական աշխատանքի նոր թեմա: Ամփոփիչ քննությունների վերահանձնումը կատարվում է միայն այն առարկաներից, որոնց քննությանը հայցորդը չի ներկայացել կամ ստացել է «անբավարար» գնահատական:

21. Որակավորման հանձնաժողովի որոշման հիման վրա ուսումնական հաստատությունը որակավորում ստացած հայցորդին տալիս է ավարտական փաստաթուղթ՝ սահմանված կարգով:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2013 թ. N656-Ն

ք. Ստեփանակերտ

ՆԱԽԿԻՆՈՒՄ ՇՆՈՐՀՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 25-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» N 19-Ն որոշման 46-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2013 թվականի սեպտեմբերի 25-ի
N656-Ն որոշման

ԿԱՐԳ
ՆԱԽԿԻՆՈՒՄ ՇՆՈՐՀՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են նախքան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակը հաստատելու մասին» N 944-Ն որոշմամբ հաստատված որակավորումների ազգային շրջանակը (այսուհետև՝ ՈԱՇ) ուժի մեջ մտնելը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ուսումնական հաստատությունների կողմից շնորհված՝ ՈԱՇ-ով և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված նախնական (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական կրթության (այսուհետև՝ մասնագիտական կրթություն) մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումների համապատասխանեցման հետ կապված հարաբերությունները:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատությունների և հիմնական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների՝ նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը տարածվում է ուսուցման բոլոր ձևերով կրթություն ստացած շրջանավարտների վրա:

II. ՆԱԽԿԻՆՈՒՄ ՇՆՈՐՀՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ

3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից տրված տարրական կրթության մասին տեղեկանքը, հիմնական կրթության վկայականը և միջնակարգ կրթության ատեստատը հավասարազոր են ՈԱՇ-ի համապատասխանաբար 1-ին, 2-րդ և 4-րդ աստիճաններին:

4. Եթե մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթով ամրագրված որակավորումը համապատասխանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումներին՝

1) մինչև 3 տարի տևողությամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱՇ-ի 3-րդ աստիճանին, իսկ 3 և ավելի տևողությամբ նախնական մասնագիտական կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը)՝ ՈԱՇ-ի 4-րդ աստիճանին.

2) հիմնական կամ միջնակարգ կրթության հիմքով միջին մասնագիտական ծրագրերի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱՇ-ի 5-րդ աստիճանին՝ անկախ կրթական ծրագրի տևողությունից.

3) բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրի ավարտական փաստաթուղթը (դիպլոմը) հավասարազոր է ՈԱՇ-ի համապատասխանաբար 6-րդ, 7-րդ և 8-րդ աստիճաններին.

4) մինչև 2011 թվականը ներառյալ շնորհված՝ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանը հավասարեցվում է մագիստրոսի կրթական աստիճանին:

5. Եթե մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթով ամրագրված որակավորումը չի համապատասխանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերով հաստատված որակավորումներին, ապա որակավորման համապատասխանեցումը կատարվում է ըստ Հայաստանի Հանրապետության՝ օտարերկրյա պետությունների որակավորումների ճանաչման լիազոր մարմնի տված տեղեկանքի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» մայիսի 2015 թ. N316-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել ասպիրանտուրայի դիմորդների հետ կնքվող պայմանագրի օրինակելի ձեւը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2015 թվականի մայիսի 26-ի
N316-Ն որոշման

Օրինակելի

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Բարձրագույն եւ հետբուհական կրթություն իրականացնող _____կազմակերպությունը
(կազմակերպության անվանումը)
(այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս ղեկավարի՝ ռեկտոր (տնօրեն)_____
(անունը, հայրանունը, ազգանունը)
մի կողմից, եւ ասպիրանտուրայի դիմորդ (այսուհետ դիմորդ)՝ _____,
(անունը, հայրանունը, ազգանունը)
մյուս կողմից, ովքեր ստորեւ հիշատակվում են որպես «կողմ» եւ միասին որպես «կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետեւյալի մասին:

1. Պայմանագրի իրավական հիմքերը

Սույն պայմանագրի իրավական հիմքերն են՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը, «Կրթության մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, _____կազմակերպության կանոնադրությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական այլ ակտեր:

2. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրի առարկան կազմակերպությունում ուսումնառության իրականացման պայմաններն են:

3. Կողմերի պարտավորությունները եւ իրավունքները

3.1. Կազմակերպությունը պարտավորվում է՝

3.1.1. մրցույթի արդյունքում ընդունված դիմորդին ղեկավարի հրամանը ձեւակերպել որպես ասպիրանտ՝ նշելով ասպիրանտուրայում ուսուցման (առկա, հեռակա) եւ ֆինանսավորման (անվճար, վճարովի) ձեւերը,

3.1.2. դիմորդի հրամանագրման օրվանից ոչ ուշ, քան երեք ամսվա ընթացքում սահմանված կարգով հաստատել ատենախոսության թեման եւ գիտական ղեկավարը.

3.1.3. ասպիրանտուրայում ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար՝ սահմանված կարգով հաստատել ասպիրանտի աշխատանքային պլանը,

3.1.4. դիմորդի համար ասպիրանտուրայում ուսումնառության տարիներին ստեղծել գիտակրթական գործընթացն ապահովող անհրաժեշտ բոլոր պայմանները,

3.1.5. առկա ուսուցմամբ դիմորդին տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջին տրամադրել երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ,

3.1.6. աշխատանքային պլանին համապատասխան՝ ներկայացված հաշվետվության հիման վրա յուրաքանչյուր տարի ատեստավորել ասպիրանտին,

3.1.7. ուսումնական պլանները կատարած եւ ամփոփիչ ատեստավորումն անցած ասպիրանտին շնորհել համապատասխան որակավորում եւ տալ ավարտական փաստաթուղթ:

3.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

3.2.1. ատեստավորում չանցած ասպիրանտին ղեկավարի հրամանով ազատելու ասպիրանտուրայից:

3.3. Դիմորդը պարտավորվում է՝

3.3.1. պահպանել կազմակերպության կանոնադրությունը եւ ներքին կանոնները,

3.3.2. կազմակերպության գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել ասպիրանտի աշխատանքային պլանը,

3.3.3. ասպիրանտի աշխատանքային պլանին համապատասխան՝ յուրաքանչյուր տարի ներկայացնել հաշվետվություն,

3.3.4. սահմանված կարգով հանձնել որակավորման քննությունները:

3.4. Դիմորդն իրավունք ունի՝

3.4.1. տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա վերջին ձեւակերպելու երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ,

3.4.2. գիտական հետազոտություններ կատարելիս՝ կազմակերպության աշխատողների հետ հավասարապես օգտվելու գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարանից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից:

4. Ուսման վարձի չափը եւ վճարման կարգը

(վճարովի հիմունքներով սովորողների համար)

4.1. Վճարովի հիմունքներով սովորող ասպիրանտի ուսման վարձը սահմանվում է _____ ՀՀ դրամ:

4.2. Ուսման վարձի չափը սահմանվում է ասպիրանտի ուսումնառության ամբողջ ժամանակահատվածի համար:

4.3. Ուսման վարձը վճարվում է կանխիկ կամ փոխանցման կարգով՝ բանկում կազմակերպության բացած հաշվարկային հաշվին:

4.4. Ասպիրանտուրայից ազատվելու դեպքում վճարված ուսման վարձը ենթակա չէ վերադարձման:

5. Պայմանագիրն ուժի մեջ մտնելը եւ դրա գործողության ժամկետը

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից եւ գործում է ասպիրանտուրայի կրթական ծրագրով նախատեսված ամբողջ ժամանակահատվածի համար՝ բառացությամբ սույն պայմանագրի 6-րդ բաժնում նշված դեպքերի:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

6.1. Սույն պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման՝

6.1.1. ասպիրանտի կողմից տարբեր պատճառներով կազմակերպությունում ասպիրանտուրայի գիտակրթական գործընթացի ընդհատման,

6.1.2. ասպիրանտի կողմից աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների չկատարման,

6.1.3. ասպիրանտի կողմից սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական պայմանների խախտման,

6.1.4. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված գիտակրթական գործընթացի չապահովման դեպքերում:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակ ի պահ է հանձնված կողմերին:

7.2. Կողմերի միջեւ ծագած վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Կողմերի գտնվելու, բնակության վայրերը, ստորագրությունները եւ այլ տվյալներ

Կ.Տ.

_____

(Պայմանագրի կնքման վայրը)

____ _____ 2015 թ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ – ՆԱԽԱՐԱՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» դեկտեմբերի 2015 թ. N910-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՊԱՆԵՐԻ ԶԱՎԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող՝ պաշտպանության բանակում զինվորական ծառայության մեջ եւ պահեստազորում գտնվող սպաների զավակ ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող՝ պաշտպանության բանակում զինվորական ծառայության մեջ եւ պահեստազորում գտնվող սպաների զավակ ուսանողների ուսման վարձավճարը փոխհատուցվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված գումարներից.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցումն իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարությունը՝ ուսումնական հաստատությունների կողմից ներկայացված ցուցակների համաձայն՝ ուսման վարձավճարների գումարի նշումով եւ պաշտպանության բանակում զինվորական ծառայության մեջ կամ պահեստազորում գտնվող սպաներին համապատասխանաբար պաշտպանության բանակի կամ զինվորական կոմիսարիատների կողմից տրված տեղեկանքների հիման վրա:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշմամբ սահմանված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող՝ պաշտպանության բանակում զինվորական ծառայության մեջ եւ պահեստազորում գտնվող սպաների զավակ ուսանողների ուսման վարձավճաների փոխհատուցման ֆինանսավորումն իրականացնել ըստ ուսումնական հաստատությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարության կողմից ներկայացվող հայտերի համաձայն:

4. Սույն որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարությանը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության
2015 թվականի դեկտեմբերի 28-ի
N910-Ն որոշման

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՊԱՆԵՐԻ ԶԱՎԱԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրիատի առկա ուսուցման վճարովի համակարգում սովորող պաշտպանության բանակում զինվորական ծառայության մեջ եւ պահեստազորում գտնվող սպաների զավակ ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցումը (այսուհետ՝ փոխհատուցում):

2. Փոխհատուցման գումարի չափը որոշվում է տվյալ ուսումնական հաստատության կողմից սահմանված ուսման վարձավճարի չափով:

3. Փոխհատուցման գումարը հատկացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ յուրաքանչյուր կիսամյակի համար ուսումնական հաստատությունների կողմից ներկայացվող ցուցակների համաձայն, ուսման վարձավճարի գումարի նշումով եւ պաշտպանության բանակում զինվորական ծառայության մեջ կամ պահեստազորում գտնվող սպաներին համապատասխանաբար պաշտպանության բանակի եւ զինվորական կոմիսարիատների կողմից տրված տեղեկանքների հիման վրա:

3.1. Փոխհատուցում տրվում է նաեւ ներքոբերյալ դեպքերում.

1) ուսանողի սպա ծնողը պահեստազորի հաշվառումից հանվել է սահմանային տարիքը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով.

2) ուսանողի սպա ծնողը ծառայում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունում.

3) ուսանողի սպա ծնողը ծառայում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում կամ զինված ուժերում, իսկ նրա ընտանիքը ապրում եւ գրացնված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում.

4) ուսանողի սպա ծնողի մահացած լինելու դեպքում.

5) ուսանողի սպա ծնողը ստանում է զինվորական կենսաթոշակ:

Վերոնշյալ դեպքերում համապատասխան տեղեկանքները տրվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից: ***(լրաց. 4.05.2016 N210-Ն)***

3.2. Փոխհատուցում չի տրվում սպա ծնողի՝ պահեստազորում հաշվառված, բայց պաշտպանության բանակում որպես սպա չծառայած լինելու դեպքում:***(լրաց. 4.05.2016 N210-Ն)***

4. Փոխհատուցումը տվյալ ուսանողի նկատմամբ դադարեցվում է՝

1) փոխատեղման արդյունքում վճարովի ուսուցումից անվճար ուսուցման տեղափոխվելու.

2) ուսումնական հաստատությունից հեռացվելու.

3) համապատասխան տեղեկանքը չներկայացնելու.

4) ուսանողի ուսման վարձավճարը այլ կազմակերպության կամ անհատ անձի կողմից վճարվելու դեպքերում:

5. Փոխհատուցում հատկացնելու ցուցակները ճշգրտվում են ուսումնական հաստատությունների կողմից յուրաքանչյուր ուսումնական տարվա 1-ին եւ 2-րդ կիսամյակների առաջին տասնօրյակում եւ ներկայացվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարություն:

6. Փոխհատուցման հատկացման հետ կապված փաստաթղթերը պահվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարությունում եւ ուսումնական հաստատություններում:

7. Ուսումնական հաստատությունները փոխհատուցման գումարների վերաբերյալ մեկամսյա ժամկետում հաշվետվություն են ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարություն:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ – ՆԱԽԱՐԱՐ՝ **Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2016 թ. N203-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ27-Ի N 943-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին, 21-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետին եւ «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության եւ ուսուցման, դոկտորանտուրայի եւ հայցորդության ձեւակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության կարգը հաստատելու եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 15-ի N 210 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 943-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կառավարության 2016 թվականի
ապրիլի 29-ի N203-Ն որոշման

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ հաստատություններ) ասպիրանտուրայի ընդունելության եւ ուսուցման, դոկտորանտուրայի եւ հայցորդության ձեւակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից առնվազն վեց ամիս առաջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության եւ սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) հաստատություններից ստացած հայտերի հիման վրա սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատմանն է է ներկայացնում համապատասխան ուսումնական տարվա ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի ընդունելության տեղերը եւ առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ու դոկտորանտուրայի ընդունելության տեղերի բաշխումը:

3. Ասպիրանտուրայում, դոկտորանտուրայում եւ հայցորդության համակարգում սույն կարգով չկարգավորվող հարաբերությունները կարող են կարգավորվել տվյալ հաստատության սահմանած կանոնակարգով:

II. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

4. Մրցույթային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցողները:

5. Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետեւյալ փաստաթղթերը՝

1) բակալավրի եւ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի եւ դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) օտար լեզու ու ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ առարկաների ատեստավորվան վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ).

3) ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ տպագրված գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում.

4) ինքնակենսագրություն եւ երեք լուսանկար (3x4 չափսի).

5) քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

6. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման համար հաստատության ղեկավարի հրամանով ստեղծվում է ընդունող հանձնաժողով՝ հաստատության ղեկավարի կամ տեղակալի նախագահությամբ:

7. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցկացման համար հաստատության ղեկավարի հրամանով ստեղծվում են մասնագիտական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ հանձնաժողով):

8. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտական բնագավառի գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող երեքից հինգ մասնագետ:

9. Ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության անցմացման ժամանակացույցը հաստատում է հաստատության ղեկավարը եւ տեղեկացնում նախարարությանը:

10. Հաստատության հայտարարությունների համար նախատեսված վայրում փակցվում եւ (կամ) տեղադրվում է պաշտոնական կայք-էջում մասնագիտական քննության՝

1) անցկացման օրվա, տեղի եւ ժամի վերաբերյալ տեղեկատվությունը՝ քննության սկսելուց յոթ աշխատանքային օր առաջ.

2) հարցաշարը՝ մասնագիտական քննությունից առնվազն մեկ ամիս առաջ.

3) ընթացակարգային պահանջները, որոնք հաստատվում են ղեկավարի կողմից:

11. Դիմորդին մասնագիտական քննությանը մասնակցելու թույլտվությունը տալիս է հաստատության ընդունող հանձնաժողովը՝ օտար լեզվից ու ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած համապատասխան միավորը հավաստող վկայականի եւ (կամ) տեղեկանքի առկայության դեպքում, ինչպես նաեւ ընդունելության մասնագիտությանը համապատասխան գիտական ռեֆերատի մասին մասնագիտական ամբիոնի (սեկտորի, դեպարտամենտի) կամ գիտական ստորաբաժանման գրավոր դրական գրախոսականի կամ գիտական ամսագրերում հրատարակված գիտական աշխատանքների մասին հաստատված ցուցակի դեպքում:

12. Ստորեւ նշված օտար լեզուներից որեւէ մեկից ստացած անհրաժեշտ նվազագույն միավոր է համարվում՝

1. անգլերենից՝ «TOEFL» (iBT) (այԲիԹի)՝ 46 եւ «IELTS» (ԱՅԼԹՍ)՝ 5.5 միավորը.

2) ֆրանսերենից՝ «TCF» (ԹիՍիէՖ)՝ 200 միավորը.

3) գերմաներենից՝ «on DAF» (օն ԴաՖ)՝ 30 միավորը:

13. Այն դիմորդները, որոնց համար մասնագիտական առարկաներ են անգլերենը, ֆրանսերենը կամ գերմաներեը, քննություն են հանձնում այլ օտար լեզվից:

14. Ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներից ստացած անհարժեշտ նվազագույն միավոր է համարվում 25 միավորը:

15. Մասնագիտական քննության հարցաշարը, որն ընդգրկում է նախորդ աստիճանների ծրագրային նյութը, կազմվում է հաստատության մասնագիտական ամբիոնների (դեպարտամենտների), գիտական ստորաբաժանման կամ հանձնաժողովի կողմից եւ հաստատվում է հաստատության ղեկավարի կողմից:

16. Մասնագիտական քննությունից երկու աշխատանքային օր առաջ՝ հրապարակված հարցաշարից կազմվում են հարցատոմսեր (առաջադրանքներ), որոնք հաստատվում են հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ եւ հաստատության կնիքով: Հարցատոմսերը յուրաքանչյուր տարի վերանայվում են:

17. Ելնելով մասնագիտական առանձնահատկությունից՝ մասնագիտական քննության անցկացման ձեւը (գրավոր կամ բանավոր) սահմանում է ընդունող հանձնաժողովը:

18. Բանավոր քննությունը ձայնագրվում է, եւ արդյունքները պահպանվում են հրապարակվելուց հետո առնվազն 24 ժամ:

19. Մասնագիտական քննության արդյունքները գնահատվում են 20 միավորանոց սանդղակով: Քննությունը համարվում է հանձնված, եթե դիմորդը ստացել է առնվազն 13 միավոր:

20. Գիտելիքների գնահատման մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով:

21. Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

22. Մասնագիտական քննության բողոքարկման ընթացակարգային պահանջներն են՝

1) դիմորդը կարող է մասնագիտական քննության գնահատականը բողոքարկել հանձնաժողովին՝ արդյունքները հրապարակվելուց հետո մեկ ժամվա ընթացքում հանձնաժողովի նախագահին ներկայացնելով գրավոր բողոքը, որը քննարկվում է նույն օրը.

2) բողոքարկմանը մասնակցում են հաստատության վարչական անձնակազմի (դեկան կամ ուսումնամեթոդական ստորաբաժանման ներկայացուցիչ)՝ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատողը եւ հաստատության ուսանողական կամ երիտասար գիտնականների խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից.

3) դիմորդի ներկայությամբ ուսումնասիրվում եւ քննարկվում է գրավոր աշխատանքը, իսկ բանավոր քննության դեպքում լսվում է ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների եւ ներգրավված անձանց ձայների պարզ մեծամասնությամբ կայացվում է որոշում՝

ա. գնահատականը թողնել անփոփոխ,

բ. գնահատականը բարձրացնել.

4) ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է անձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, հաստատության վարչական անձնակազմի, ուսանողական կամ երիտասարդ գիտնականների խորհրդի ներկայացուցչի եւ դիմորդի կողմից: Նշված անձնանցից որեւէ մեկից ընդունված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը.

5) գնահատականի փոփոխման դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն.

6) Մասնագիտական քննության գնահատականը կարող է բողոքարկվել դատարանում՝ օրենքով սահմանված կարգով:

23. Մասնագիտական քննության վերահանձնում չի թույլատրվում:

24. Ասպիրանտուրայի մասնագիտական քննության արդյունքն ուժի մեջ է տվյալ ուսումնական տարվա տվյալ հաստատության ընդունելության քննության ընթացքում:

25. Ասպիրանտուրա ընդունվում է մասնագիտական քննությունից առավելագույն միավոր ստացած անձը:

26. Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետեւյալ ցուցանիշները՝ ըստ հերթականության՝

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի ընդհանուր միջին որակական գնահատականը.

2) բակալավրի եւ մագիստրոսի ընդհանուր միջին որակական գնահատականի գումարը.

3) հրատարակված գիտական աշխատանքների թիվը.

4) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներին մասնակցությունը (զեկուցումները):

27. Ընդունող հանձնաժողովը մրցույթի արդյունքների հիման վրա ընդունում է որոշում յուրաքանչյուր դիմորդի վերաբերյալ:

28. Ասպիրանտուրա ընդունվելու կամ մրցույթով չանցնելու վերաբերյալ որոշման մասին դիմորդներին իրազեկվում են մասնագիտական քննությունից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

29. Ասպիրանտների հրամանագրումը կատարվում է հաստատության ղեկավարի հրամանով՝ ասպիրանտի հետ կնքելով համապատասխան պայմանագիր:

30. Առկա ուսուցման ձեւով եւ անվճար հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին տրվում է սահմանված չափի պետական կրթաթոշակ՝ ընդունման օրվանից:

III. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

31. Ասպիրանտուրայում ուսուցումն իրականացվում է առկա (անվճար ու վճարով հիմունքներով) եւ հեռակա (վճարովի հիմունքով) ձեւերով: Առկա ձեւով ուսուցման տեւողությունը չի գերազանցում երեք տարին, իսկ հեռակա ձեւով՝ չորս տարին:

32. Ասպիրանտուրայում ուսուցման լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական եւ հետազոտական:

33. Ասպիրանտն ուսման ընթացքում պետք է՝

1) հանձնի ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) եւ ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը), կուտակի համապատասխան կրեդիտները, ավարտի ատենախոսությունը եւ համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում.

2) ունենա հաստատության գիտական խորհրդի կողմից հաստատված աշխատանքային պլան, գիտական ղեկավար եւ առնվազն 36 ժամ գիտամանկավարժական կամ հետազոտական ծանրաբեռնվածություն:

34. Առկա ասպիրանտուրայում ուսանելու ժամանակը մտնում է ասպիրանտների գիտամանկավարժական ստաժի մեջ:

35. Յուրաքանչյուր գիտական ղեկավար կարող է միաժամանակ ունենալ հինգից ոչ ավելի ասպիրանտ եւ հայցորդ:

36. Եթե հաստատությունում հնարավոր չէ իրականացնել կրեդիտային համակարգով ներդրված դասընթացները, ապա այդ ուսուցումը պայմանագրային հիմունքներով կարող է իրականացվել այլ հաստատությունում՝ ուղարկող կազմակերպության միջոցների հաշվին:

37. Հաստատության սահմանած կարգով ասպիրանտն ըստ աշխատանքային պլանի տարեկան մեկ անգամ ատեստավորվում է ամբիոնի, բաժնի (սեկտոր, լաբորատորիա) կողմից: Բուհի համապատասխան ամբիոնում, ֆակուլտետի խորհրդում, կազմակերպության գիտական ստորաբաժանումներում, գիտական (գիտատեխնիկական) խորհրդում պարբերաբար լսվում եւ քննարկվում են ասպիրանտների ու նրանց գիտական ղեկավարների հաշվետվությունները:

38. Սույն կարգի 37-րդ կետով նախատեսված ատեստավորում չանցած ասպիրանտը հաստատության ղեկավարի հրամանով ազատվում է ասպիրանտուրայից:

39. Գիտական հետազոտություններ կատարելիս ասպիրանտն օգտվում է հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից, հանրակացարանից եւ այլն:

40. Հաստատությունից հեռացված ասպիրանտը կարող է վերականգնվել ասպիրանտուրայում՝ վճարովի հիմունքով ուսումը շարունակելու համար:

41. Ատենախոսությունը չպաշտպանած ասպիրանտին իր ցանկությամբ անվճար տրվում է հաստատության կողմից սահմանված ակադեմիական տեղեկանք՝ ասպիրանտի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը հաստատության ղեկավարին ներկայացնելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

42. Առկա ուսուցմամբ ասպիրանտին ուսման ընթացքում տարեկան տրվում է երկամսյա արձակուրդ՝ կրթաթոշակի պահպանմամբ:

43. Հաստատության ղեկավարը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին սահմանել հավելավճար:

44. Ասպիրանտների գիտական ղեկավարների աշխատանքի վարձատրությունը կատարվում է հաստատության կողմից՝ մեկ ասպիրանտի համար տարեկան 50 ժամ հաշվարկով:

45. Հաստատության ղեկավարը կարող է արտաբյուջետային միջոցների հաշվին ասպիրանտի գիտական ղեկավարի աշխատավարձին հավելավճար սահմանել:

IV. ԴՈԿՏՈՐԱՆՏՈՒՐԱ

46. Դոկտորանտուրայի տեւողությունը չի գերազանցում երեք տարին:

47. Դոկտորանտուրայում ձեւակերպվում են այն անձինք, ովքեր ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան եւ ներկայացնում են գիտական, տնտեսական կամ սոցիալ-մշակութային նշանակություն ունեցող հիմնարար եւ (կամ) կիրառական հետազոտությունների ծրագիր (նախագիծ):

48. Դոկտորանտուրայում ձեւակերպվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է համապատասխան հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետեւյալ փաստաթղթերը՝

1) գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի վկայագրի պատճենը (այլ երկրներում գիտական աստիճանի վկայագիր ստացածների համար՝ նաեւ Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից տրված համապատասխանեցման հավաստագիրը).

2) դոկտորական ատենախոսության պլանը.

3) ինքնակենսագրություն եւ երեք լուսանկար (3x4 չափսի).

4) հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի եւ հայտնագործությունների, ինչպես նաեւ կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվությունների ցանկը:

49. Համաձայն հաստատության սահմանած կարգի՝ հաստատության ղեկավարի հրամանով դոկտորանտը ձեւակերպվում է դոկտորանտուրայում, եւ նրա հետ կնքվում է պայմանագիր:

50. Դոկտորանտի համար սահմանված ժամկետում դոկտորանտը պետք է կատարի դոկտորական ատենախոսության պլանով նախատեսված աշխատանքները՝ ավարտի ատենախոսությունը եւ համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում:

51. Դոկտորանտը կարող է ունենալ գիտական խորհրդատու, ով հաստատվում է գիտական (գիտատեխնիկական) խորհրդում եւ նշանակվում հաստատության ղեկավարի կողմից:

52. Հաստատության գիտական (գիտատեխնիկական) խորհուրդը, դոկտորանտի ծրագրին համապատասխան, տարեկան մեկ անգամ լսում է դոկտորանտի հաշվետվությունը:

53. Գիտական հետազոտություններ կատարելիս դոկտորանտն օգտվում է հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից եւ այլն:

54. Դոկտորանտների գիտական խորհրդատուների աշխատանքի վարձատրությունը կատարվում է հաստատության կողմից սահմանված կարգով եւ չափով:

V. ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ

55. Հայցորդը մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցող անձ է:

56. Հաստատություններում հայցորդությունն իրականացվում է վճարովի հիմունքով՝ տվյալ հաստատության սահմանած կարգով, որի տեւողությունը չի գերազանցում հինգ տարին:

57. Հայցորդ ձեւակերպելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ կցելով հետեւյալ փաստաթղթերը՝

1) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի եւ դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին).

2) հրատարակված գիտական աշխատությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ.

3) ինքնակենսագրություն եւ երեք լուսանկար (3x4 չափսի).

4) քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմողն աշխատում է):

58. Հաստատության սահմանած կարգի համաձայն՝ հայցորդը ձեւակերպվում է հաստատության ղեկավարի հրամանով, եւ նրա հետ կնքվում է պայմանագիր:

59. Հայցորդի լրիվ բեռնվածությունը համարժեք է 180 կրեդիտային միավորի, որը բաղկացած է երկու փոխկապակցված մասերից՝ կրթական եւ հետազոտական:

60. Հայցորդը պետք է հանձնի ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված քննությունը (քննությունները) եւ ստուգարքը (ստուգարքները) (այդ թվում՝ մասնագիտական քննությունը), կուտակի համա-

պատասխան կրեդիտներ, ավարտի ատենախոսությունը եւ համապատասխան հաստատությունում անցկացնի ատենախոսության նախնական քննարկում:

61. Հայցորդը տարեկան մեկ անգամ հաստատության սահմանած կարգով ատեստավորվում է հաստատության ամբիոնի, բաժնի (սեկտոր, լաբորատորիա) կողմից:

62. Գիտական հետազոտություններ կատարելիս հայցորդն օգտվում է հաստատության գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, գործուղումների իրավունքից եւ այլն:

63. Ատենախոսությունը չպաշտպանած հայցորդին իր ցանկությամբ անվճար տրվում է հաստատության կողմից սահմանված ձեւի ակադեմիական տեղեկանք՝ հաստատության ղեկավարին հայցորդի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը ներկայացվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

64. Հաստատության ղեկավարը սահմանված կարգով կարող է կատարել հայցորդի գիտական ղեկավարի վարձատրությունը (տարեկան առնվազն 30 ժամ):

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ՝ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2017 թ. N234-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 52 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասին, «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ կետին եւ «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների եւ դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթական գործունեության լիցենզավորման, ինչպես նաեւ միջին մասնագիտական եւ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատությունների եւ դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգերը հաստատելու մասին» N 52 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
ԱՀ կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 5-ի N234-Ն որոշման

ԿԱՐԳ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Արցախի Հանրապետությունում միջին եւ բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) պետական հավատարմագրման կարգը՝ անկախ դրանց գերատեսչական ենթակայությունից եւ կազմակերպաիրավական ձեւից:

2. Պետական հավատարմագրումն (այսուհետ՝ հավատարմագրում) իրականացվում է հետեւյալ գործընթացներով՝

1) ինստիտուցիոնալ հավատարմագրում.

2) ըստ մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրում (այսուհետ՝ ծրագրային հավատարմագրում):

3. Ինստիտուցիոնալ հավատարմագրումը պարբերաբար կրկնվող (շրջափուլային) պարտադիր գործընթաց է Արցախի Հանրապետության տարածքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների համար:

4. Սույն կարգի դրույթներին համապատասխան՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար ուսումնական հաստատությունները պետք է դիմեն մինչեւ 2019 թվականի դեկտեմբերի 30-ը:

5. Ծրագրային հավատարմագրումն իրականցվում է կամավորության սկզբունքով՝ միայն ինստիտուցիոնալ հավատարմագրման դրական արդյունքի դեպքում՝ բացառությամբ բժշկական մասնագիտությունների կրթական ծրագրերի:

6. Ուսումնական հաստատության մասնաճյուղերն ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրում անցնում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատության հայտի հիման վրա, մայր ուսումնական հաստատության կազմում՝ առանձին ժամանակացույցով: Մասնաճյուղի համար պետական հավատարմագիր տրվում է մասնաճյուղ ունեցող ուսումնական հաստատությանը:

7. Ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման գործընթացը կազմակերպում եւ իրականացնում է Հայաստանի Հանրապետության «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ):

II. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

8. Ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար ուսումնական հաստատությունը պետք է՝

1) ներկայացնի դիմում-հայտ՝ ըստ համապատասխան ձեւաթղթի.

2) ունենա կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա.

3) լրացնի ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը (web.survey.anqa.am):

9. Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացն իրականացվում է երեք հաջորդական փուլերով՝

1) *առաջին փուլ*՝ ինստիտուցիոնալ կարողությունների ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից՝ ըստ սույն կարգի բաղկացուցիչ մասն հանդիսացող ինքնավերլուծության.

2) *երկրորդ փուլ*՝ ուսումնական հաստատության ինքնավերլուծություն, կրթական եւ որակի ապահովման գործընթացների իրականացման արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ օրենքով սահմանված ուսումնական հաստատության տեսակին ներկայացվող պահանջներին, մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչներին եւ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ինստիտուցիոնալ հավատարմագրման չափորոշիչներին համապատասխան (այսուհետ՝ փորձաքննություն).

3) *երրորդ փուլ*՝ ինքնավերլուծության եւ փորձաքննության արդյունքներով ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ հավատարմագրման հանձնաժողով) ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը՝

ա. շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում,

բ. շնորհել պայմանագրային ինստիտուցիոնալ հավատարմագրում,

գ. մերժել ինստիտուցիոնալ հավատարմագրումը:

10. Դիմում-հայտի եւ ուսումնական հաստատության ինքնավերլուծության ընդունումը, փորձաքննությունը եւ որոշման կայացումն իրականացվում են սույն կարգի պահանջների համաձայն:

11. Հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա հավատարմագրված ուսումնական հաստատությանը տրվում է հավատարմագրման վկայական, որը ստորագրում է ՈԱԱԿ-ի տնօրենը:

12. Մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՈԱԱԿ-ի հավատարմագրման գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում:

13. Երկու աշխատանքային օրվա ընթացքում հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը եւ տնօրենի կողմից ստորագրված հավատարմագրման վկայականը վավերացման համար ուղարկվում է կրթության, գիտության եւ սպորտի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն):

14. Նախարարությունը հավատարմագրման վկայականը պատշաճ կերպով հանձնում է ուսումնական հաստատությանը: Ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ կարողությունները համարվում են համավատարմագրված՝ հավատարմագրման գրանցամատյանում գրանցվելու պահից: ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակում է իր կայքում եւ զանգվածային լրատվամիջոցներով:

15. Ինստիտուցիոնալ հավատարմագիրը տրվում է չորս կամ վեց տարի ժամկետով: Ուսումնական հաստատությունը ստանում է հավատարմագրում՝ չորս տարի ժամկետով, եթե փորձագիտական զեկույցում նշված թերությունները ոչ էական են՝ ցածր ռիսկայնությամբ, ոչ հրատապ եւ կարող են վերացվել չորս տարվա ընթացքում: Չորս տարի ժամկետով հավատարմագրում շնորհելու վերաբերյալ որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում, ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների՝ հաստատության կողմից հաստատված ծրագիրը եւ համապատասխան ժամանակացույցը: Հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը պարտավոր է յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ իրականացնել ինստիտուցիոնալ ներքին գնահատում եւ արդյունքները ներկայացնել ՈԱԱԿ:

16. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրումը տրվում է երկու տարի ժամկետով, եթե փորձագիտական զեկույցում նշված թերություններն էական են՝ բարձր ռիսկայնությամբ, եւ դրանց վերացումը հրատապ է, սակայն դրանք կարող են վերացվել երկու տարվա ընթեցքում: Երկու տարի ժամկետով պայմանական հավատարմագրում շնորհելու վերաբերյալ որոշման հրապարակումից հետո երկամսյա ժամկետում ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների՝ հաստատության կողմից հաստատված ծրագիրը եւ համապատասխան ժամանակացույցը:

17. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը չի կարող դիմել ծրագրային հավատարմագրման գործընթացին մասնակցելու համար:

18. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման մասին: ՈԱԱԿ-ն քննարկում է զեկույցը եւ 15 աշխատանքային օրվա ընթացքում իր գրավոր եզրակացությունը ներկայացնում ուսումնական հաստատությանն ու հավատարմագրման հանձնաժողովին:

19. Փորձագիտական զեկույցում նշված թերությունները սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրումը կորցնում է իր ուժը: Այդ դեպքում տվյալ ուսումնական հաստատության վրա տարածվում են սույն կարգի 22-րդ կետով նախատեսված սահմանափակումները:

20. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը փորձագիտական զեկույցում նշված թերությունները վերացնելու դեպքում դիմում է ինստիտուցիոնալ հավատարմագրման՝ նշված թերությունների վերացման մասով: Փորձագիտական հանձնաժողովի կողմից սույն կարգի 64-70-րդ կետերի համաձայն պատրաստվում եւ ներկայացվում է զեկույց:

21. Պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում ուսումնական հաստատությունը չի կարող բացել նոր մասնագիտություն: Նույն ուսումնական հաստատությունը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ստանալ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում:

22. Ինստիտուցիոնալ հավատարմագրումը մերժելու դեպքում հաջորդ ուսումնական տարվանից մինչեւ ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալը դադարեցվում է պետության կողմից ուսումնական հաստատությանը հատկացվող ուսանողական նպաստների ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կրթական բոլոր աստիճանների, ինչպես նաեւ գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը, իսկ ուսումնական հաստատությունը, սույն կարգի համաձայն, երկրորդ անգամ կարող է անցնել ինստիտուցիոնալ հավատարմագրում երկու տարի հետո:

23. Երկու անգամ անընդմեջ ինստիտուցիոնալ հավատարմագրում չստանալու դեպքում ուսումնական հաստատությանը տրված լիցենզիայի գործողությունը կասեցվում է:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

24. Ծրագրային հավատարմագրում անցնելու համար ուսումնական հաստատությունը պետք է՝

1) ներկայացնի դիմում-հայտ՝ ըստ համապատասխան ձեւաթղթի.

2) ունենա կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցենզիա.

3) լրացնի ՈԱԱԿ-ի էլեկտրոնային համապատասխան հարցաշարը (web.survey.anqa.am):

4) ներկայացնի պետական հավատարմագրման վկայականը.

25. Ծրագրային հավատարմագրման գործընթացն իրականացվում է երեք հաջորդական փուլերով՝

1) *առաջին փուլ*՝ մասնագիտության կրթական ծրագրի, ուսումնական գործունեության ներքին գնահատում ուսումնական հաստատության կողմից՝ ինքնավերլուծություն՝ ըստ համապատասխան ձեւաչափի.

2) *երկրորդ փուլ*՝ ուսումնական հաստատության ինքնավերլուծության, ուսումնական գործունեության արտաքին գնահատում փորձագիտական խմբի կողմից՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի պետական կրթական չափորոշիչների եւ Արցախի Հանրապետության կառավարության սահմանած ծրագրային հավատարմագրման չափանիշներին համապատասխան.

3) *երրորդ փուլ*՝ ինքնավերլուծության եւ փորձաքննության արդյունքներով ՈԱԱԿ-ի հավատարմագրման հանձնաժողովն ընդունում է հետեւյալ որոշումներից մեկը՝

ա. շնորհել ծրագրային հավատարմագրում,

բ. շնորհել պայմանական ծրագրային հավատարմագրում,

գ. մերժել ծրագրային հավատարմագրումը:

26. Դիմում-հայտի եւ ուսումնական հաստատության ինքնավերլուծության ընդունումը, փորձաքննությունը եւ որոշման կայացումն իրականացվում են սույն կարգի պահանջների համաձայն:

27. Ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրերը գրանցվում են հավատարմագրման գրանցամատյանում:

28. Հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա հավատարմագրված ուսումնական հաստատությանը տրվում է հավատարմագրման վկայական, որը ստորագրում է ՈԱԱԿ-ի տնօրենը:

29. Մեկ աշխատանքային օրվա ընթացքում ՈԱԱԿ-ի հավատարմագրման գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում:

30. Երկու աշխատանքային օրվա ընթացքում հավատարմագրման հանձնաժողովի ընդունած որոշումը եւ տնօրենի կողմից ստորագրված հավատարմագրման վկայականը վավերացման համար ուղարկվում է նախարարություն:

31. Նախարարությունը հավատարմագրման վկայականը պատշաճ կերպով հանձնում է ուսումնական հաստատությանը: Ուսումնական հաստատության ծրագրային կարողությունները համարվում են հավատարմագրված՝ հավատարմագրման գրանցամատյանում գրանցվելու պահից: ՈԱԱԿ-ն ծրագրային հավատարմագրման մասին ընդունված որոշումը հրապարակում է իր կայքում եւ զանգվածային լրատվամիջոցներով:

32. Ծրագրային հավատարմագրումը տրվում է հինգ տարի ժամկետով:

33. Ուսումնական հաստատությունը կարող է ստանալ պայմանական ծրագրային հավատարմագրում, եթե փորձագիտական զեկույցում նշված թերությունները հնարավոր է շտկել ոչ ավելի, քան երկու տարվա ընթացքում:

34. Պայմանական ծրագրային հավատարմագրում ձեռք բերելու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունն իրականացված բարելավման միջոցառումների մասին գրավոր զեկույց է ներկայացնում ՈԱԱԿ:

35. Փորձագիտական զեկույցում նշված թերությունները սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում պետական հավատարմագրման վկայականի ներդիրը կորցնում է իր ուժը:

36. Պայմանական ծրագրային հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունը փորձագիտական զեկույցում նշված թերությունները վերացնելու դեպքում դիմում է ծրագրային հավատարմագրման նոր գործընթացին մասնակցելու համար:

37. Նույն ուսումնական հաստատությունը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ստանալ պայմանական ծրագրային հավատարմագրում:

38. Ծրագրային հավատարմագրումը մերժելու դեպքում հաջորդ ուսումնական տարվանից մինչեւ ծրագրային հավատարմագրում ստանալը դադարեցվում է ուսումնական հաստատության տվյալ կրթական ծրագրով պետության կողմից հաստկացվող ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (ամբողջ) կրթական բոլոր աստիճանների տեղերի ֆինանսավորումը: Եթե մերժվել է բակալավրի կրթական ծրագրի հավատարմագրումը, ապա հաջորդ ուսումնական տարվանից մինչեւ ծրագրային հավատարմագրում ստանալը դադարեցվում է ուսումնական հաստատությանը պետության կողմից հատկացվող ուսանողական նպաստների ձեւով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի ֆինանսավորումը բոլոր երեք կրթական աստիճաններում: Ուսումնական հաստատությունը սահմանված ընթացակարգով կարող է անցնել ծրագրային հավատարմագրում մեկ տարի հետո:

39. Հավատարմագրման վկայականի եւ դրա ներդիրի (ներդիրների) տպագրությունը, հաշվառումը եւ պահպանումը ապահովում է ՈԱԱԿ-ն: Հավատարմագրման վկայականում նշվում են վկայականի համարը եւ սերիան, ուսումնական հաստատության լրիվ անվանումը, ուսումնական հաստատության կամ մասնաճյուղի գտնվելու վայրը, գործունեության վայրը, հավատարմագրման հանձնաժողովի որոշման համարը եւ ամսաթիվը, գրանցման համարը, վկայականը տալու ամսաթիվը եւ գործողության ժամկետը: Հավատարմագրման վկայականի ներդիրում (ներդիրներում) նշվում են պետական հավատարմագրման վկայականի համարը եւ սերիան, ներդիրի համարը, եւ սերիան, ուսումնական հաստատության կամ մասնաճյուղի լրիվ անվանումը, հավատարմագրված մասնագիտության դասիչը եւ անվանումը, որակավորման աստիճանը, հավատարմագրման հանձնաժողովի որոշման համարը եւ ամսաթիվը, ներդիրը տալու ամսաթիվը եւ գործողության ժամկետը: Ներդիրը (ներդիրները) վավեր է (են) միայն վկայականի առկայության դեպքում:

40. Ուսումնական հաստատությունը պարտավոր է ուսանողներին տեղեկացնել ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին:

41. Ուսումնական հաստատություններն ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման մասին որոշումնեպը կարող են երկշաբաթյա ժամկետում բողոքարկել ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդին՝ փորձաքննության անցկացման ձեռնարկով սահմանված կարգով, կամ դատարան՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

42. Չի թույլատրվում պետական հավատարմագրման վկայականը եւ ներդիրը օտարել, գրավ դնել կամ փոխանցել մեկ այլ անձի:

IV. ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԻ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

43. Դիմում-հայտերը կարող են ներկայացվել ՈԱԱԿ ամբողջ տարվա ընթացքում:

44. ՈԱԱԿ-ն դիմում-հայտն ընդունելու կամ մերժելու հարցը քննարկում եւ դրա մասին դիմողին գրավոր ծանուցում է ոչ ուշ, քան դիմումն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում: ՈԱԱԿ-ն մերժում է դիմում-հայտը, եթե՝

1) ուսումնական հաստատությունը չունի կրթական գործունեություն իրականացնելու թույլտվություն՝ լիցեզիա.

2) ներկայացված փաստաթղթերի փաթեթը թերի է.

3) ներկայացված փաստաթղթերի փաթեթը պարունակում է ոչ հավաստի տեղեկություններ.

4) ուսումնական հաստատության գործունեությունը կասեցված է.

5) լրացված չէ ՈԱԱԿ-ի էլեկտրոնային հարցաշարը:

45. Սույն կարգի 44-րդ կետի 2-րդ եւ 5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում հայտատուն հնգօրյա ժամկետում թերությունները վերացնելու դեպքում կարող է դիմում-հայտը կրկին ներկայացնել ՈԱԱԿ:

46. ՈԱԱԿ-ն ինստիտուցիոնալ կամ ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնում է դիմում-հայտն ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:

47. Դիմում-հայտի ընդունումից հետո մեկ շաբաթվա ընթացքում դիմողի եւ ՈԱԱԿ-ի միջեւ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքվում է ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագիր: Պայմանագրում հստակ նշվում են գործընթացի մեկնարկի ամսաթիվը եւ ժամանակացույցը:

48. Գործընթացի մեկնարկից հետո 12 շաբաթվա ընթացքում ուսումնական հաստատությունը պարտավոր է ՈԱԱԿ ներկայացնել ինքնավերլուծություն:

49. Ինքնավերլուծությունը ներկայացվում է թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով՝ հայերենով, անհրաժեշտության դեպքում՝ նաեւ անգլերենով:

50. Ինքնավերլուծության հայերեն եւ անգլերեն տեքստերի միջեւ հակասությունների առկայության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:

51. Ինքնավերլուծությանը կից ներկայացվում է ձեւաչափով պահանջվող հիմնավորող փաստաթղթերի փաթեթը:

52. Ինքնավերլուծությունը ստանալուց հետո հինգ շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ն ընդունում է որոշում ինքնավերլուծությունն ընդունելու կամ վերադարձնելու մասին:

53. ՈԱԱԿ-ն ինքնավերլուծությունը վերադարձնում է, եթե՝

1) այն չի համապատասխանում ՈԱԱԿ-ի մշակած միասնական ձեւաչափին.

2) առկա են բովանդակային, տեխնիկական, կառուցվածքային կամ այլ թերություններ.

3) ինքնավերլուծության մեջ արտացոլված տվյալները ոչ հավաստի են:

54. Նշված թերությունները վերացնելու համար ՈԱԱԿ-ն սահմանում է մեկամսյա ժամկետ:

55. Ինքնավերլուծությունում առկա թերությունները սահմանված ժամկետում վերացնելու եւ այն կրկին ներկայացնելու դեպքում ՈԱԱԿ-ն ընդունում է նոր որոշում ինքնավերլուծությունն ընդունելու մասին:

56. Ինքնավերլուծությունն ընդունելու մասին որոշման ընդունման պահից հինգշաբաթյա ժամկետում ՈԱԱԿ-ն ուսումնական հաստատություն է գրավոր ներկայացնում փորձագիտական խմբի կազմը: Փորձագիտական խմբի ձեւավորման կարգը հաստատվում է ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից:

57. Երկշաբաթյա ժամկետում ՈԱԱԿ-ն ուսումնական հաստատության հետ համաձայնեցնում է փորձագիտական խմբի կազմը:

58. Փորձագիտական խմբի կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է մեկ ամսով՝ մինչեւ փորձագիտական խմբի նոր կազմի վերաբերյալ համաձայնության չգալու դեպքում ուսումնական հաստատության հետ կնքված պայմանագրի գործողությունը դադարեցվում է:

59. Հավատարմագրման հանձնաժողովի հետ համաձայնեցված փորձագետների խմբի վերջնական կազմը ուսումնական հաստատության հետ համաձայնեցվելուց հետո հաստատվում է ՈԱԱԿ-ի տնօրենի հրամանով: Փորձագետների հետ կնքվում են վճարովի ծառայությունների մատուցման մասին պայմանագրեր:

60. ՈԱԱԿ-ի կողմից փորձագիտական խումբն այցելում է ուսումնական հաստատություն (այսուհետ՝ փորձագիտական այց):

61. Փորձագիտական այցի ժամանակացույցը, պայմանները, ընթացակարգը եւ տեւողությունը սահմանվում են ուսումնական հաստատության եւ ՈԱԱԿ-ի փոխադարձ համաձայնությամբ:

62. Փորձագիտական այցը կարող է տեւել 3-7 օր:

63.Փորձագիտական այցից հետո, անհրաժեշտության դեպքում, ՈԱԱԿ-ն իրավունք ունի պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր:

64. Փորձագիտական այցի ավարտից հետո վեցշաբաթյա ժամկետում փորձագիտական խումբը պատրաստում եւ ՈԱԱԿ է ներկայացնում փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը:

65. ՈԱԱԿ-ն փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը ստանալու օրվանից հետո մեկշաբաթյա ժամկետում այն ուղարկում է ուսումնական հաստատություն:

66. Ուսումնական հաստատությունը կարող է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր դիտողություններն ու առարկությունները երկշաբաթյա ժամկետում ներկայացնել ՈԱԱԿ, իսկ առարկություններ ու դիտողություններ չունենալու դեպքում հավաստում է փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ իր համաձայնությունը: Ուսումնական հաստատության առարկություններն ու դիտողություններն ուսումնասիրությամբ հիմնավորված ճանաչվելու դեպքում փորձագիտական զեկույցի նախնական տարբերակում կատարվում է համապատասխան փոփոխություն:

67. Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի ներկայացումից հետո յոթշաբաթյա ժամկետում փորձագետների խումբը վերջնական փորձագիտական զեկույցը ներկայացնում է ՈԱԱԿ:

68. Հիմք ընդունելով ուսումնական հաստատության ինքնավերլուծությունը, փորձագետների զեկույցը եւ ուսումնական հաստատության կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը՝ ՈԱԱԿ-ն կազմում է վերջնական եզրակացության նախագիծ եւ այն ներկայացնում հավատարմագրման հանձնաժողով՝ որոշում ընդունելու համար:

69. Հավատարմարգման եզրակացության օրինակելի ձեւը սահմանում է ՈԱԱԿ-ն:

70. Փորձագիտական զեկույցի նախնական տարբերակի ներկայացումից հետո 12 շաբաթվա ընթացքում ՈԱԱԿ-ն պաշտոնական համացանցային կյաք-էջում հրապարակում է ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման արդյունքների մասին եզրակացություններն ու հավատարմագրման խորհրդի որոշումները:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

71. Ինստիտուցիոնալ հավատարմագրման եւ ծրագրային հավատարմագրման ժամկետի ավարտից առնվազն մեկ տարի առաջ ուսումնական հաստատությունը կարող է դիմել ՈԱԱԿ՝ ինստիտուցիոնալ հավատարմագրման եւ ծրագրային հավատարմագրման նոր գործընթացներ սկսելու համար:

72. Ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման գործընթացների իրականացման համար նախատեսված փորձաքննության, գործուղման եւ այլ ծախսերը, անկախ գործընթացի արդյունքից, պայմանագրային կարգով հատուցում է ուսումնական հաստատությունը՝ ՈԱԱԿ-ի կողմից հաստատված եւ հրապարակված սակագների համաձայն: Ուսումնական հաստատությունները ծախսերի համար նախատեսվող գումարը պետք է փոխանցեն ՈԱԱԿ-ի հաշվարկային հաշվին:

73. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած է ճանաչվում, եթե՝

1) հավատարմագրի վավերականության ժամկետը լրացել է.

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դադարեցվել է ուսումնական հաստատության գործունեությունը.

3) լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվել:

74. Հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին հավատարմագրման հանձնաժողովի որոշումը հրապարակվում է ՈԱԱԿ-ի կայքում, եւ հավատարմագրման գրանցամատյանում կատարվում է համապատասխան գրառում:

75. Ուսումնական հաստատությունն ինստիտուցիոնալ հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում պարտավոր է իր ստացած պետական հավատարմագրման վկայականը վերադարձնել ՈԱԱԿ:

76. Պետական հավատարմագրումն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատարանում՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

77. Ուսումնական հաստատությունը պետական հավատարմագրման վկայականը կորցնելու դեպքում դիմում է ՈԱԱԿ, որը տասնհինգօրյա ժամկետում տալիս է «Կրկնօրինակ» նշագրմամբ պետական հավատարմագրման նոր վկայական:

78. Սույն կարգի բաղկացուցիչ մասն են՝

1) ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման ինքնավերլուծության ձեւաչափերը.

2) փորձաքննության անցկացման ձեռնարկը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2017 թ. N235-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասին, «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ կետին եւ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Արցախի Հանրապետության մասնագիտական կրթության մասնագիտական կրթական ծրագրի հավատարմագրման չափանիշները՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության
կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 5-ի N 235-Ն որոշման

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՀՀ	Չափանիշը	Չափորոշիչները
1.	Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՇ):	ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին, բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

2. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
2.	ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ ապահովելով կառավարման էթիկայի կանոնները:	ա. հաստատության կառավարման համակարգն ապահովում է, սահմանված էթիկայի կանոններին համապատասխան, որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը, գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման ու մշտադիտարկման հստակ մեխանիզմներ, դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա, ե. քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում),

		զ. ՄՈՒՀ- ում գործում են ՄԿԾ-ի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ, է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
3.	Մասնագիտական կրթական ծրագրերը (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը ու միջազգայնացմանը:	ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների, բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը, գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը, դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը, ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
4.	ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:	ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ, բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր, գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար, դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին

		օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում, է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին, ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման ու որակի ապահովման մեխանիզմներ:

5. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
5.	ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:	ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր, բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար, դ. պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը, զ. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

6. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
6.	ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:	ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն, բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով, դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
7.	ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:	ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր, բ. ՄՈՒՀ-ն իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար, գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն, դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը, ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ, զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին, է. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների

		կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
8.	ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:	ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ, բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը, գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

9. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
9.	Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:	ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր, բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց, գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ, դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

10. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

	Չափանիշը	Չափորոշիչը
10.	ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:	ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր, բ. որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, գ. ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում, դ. որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է, ե. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է

		բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար, զ. որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ԼԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության
կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 5-ի N 235-Ն որոշման

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

<<	Չափանիշը	Չափորոշիչները
1.	Մասնագիտությունների կրթական ծրագրերն (այսուհետ՝ ՄԿԾ) համապատասխանում են ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի, որակավորման բնութագրի և պետական կրթական չափորոշչի պահանջներին, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած առաքելությանը:	ա. ՄԿԾ-ի նպատակները և խնդիրները համահունչ են ուսումնական հաստատության առաքելությանը և նպատակներին, բ. ՄԿԾ-ն հանդիսանում է ՄՈՒՀ-ի պլանավորման և ռեսուրսների բաշխման մաս, գ. ՄԿԾ-ն մանրամասն նկարագրված է ըստ շնորհվող որակավորման ուսումնառության ակնկալվող արդյունքների, դ. ՄԿԾ-ն համապատասխանում է որակավորումների ազգային շրջանակին (այսուհետ՝ ՈԱՇ), մասնագիտական կրթության որակավորումների բնութագրին և մասնագիտության պետական կրթական չափորոշչին, ե. ՄԿԾ-ն բովանդակային առումով հստակ մշակված է և համահունչ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտության կրթական ծրագրի հետ ու նպաստում է ուսանողների և դասախոսական կազմի շարժունությանն ու միջազգայնացմանը, զ. ՄԿԾ-ի ուսումնառության ակնկալվող արդյունքները բավարարում են ուսանողների և այլ շահակիցների կարիքները, է. առկա են հստակ ընթացակարգեր ու մեխանիզմներ, որոնք ապահովում են ՄԿԾ-ի մշակման, հաստատման, մշտադիտարկման, գնահատման և բարելավման իրականացումը:

2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

	Չափանիշը	Չափորոշիչները
2.	ՄԿԾ-ն ապահովված է մասնագիտական անհրաժեշտ որակավորումներ ունեցող դասախոսական կազմով՝ ՄԿԾ-ի նպատակներն իրականացնելու համար:	ա. ՄԿԾ-ի համար սահմանված են դասախոսական կազմի մասնագիտական որակավորումներին ներկայացվող հստակ պահանջներ ու դասախոսական կազմի հավաքագրման քաղաքականություն և ընթացակարգեր, բ. ՄԿԾ-ի շրջանակներում սահմանվել են

		դասախոսական կազմի պարբերաբար գնահատման հստակ քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք նպաստում են դասախոսների մասնագիտական կարիքների վերհանմանն ու զարգացմանը, գ. ՄԿԾ-ն նպաստում է դասախոսական կազմի կայացմանը և մասնագիտական առաջընթացին, դ. հիմնական դասախոսական կազմն ապահովում է ՄԿԾ-ի կայուն իրականացումը:

3. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
3.	ՄԿԾ-ի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդներն ապահովում են ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:	ա. ՄԿԾ-ի շրջանակում հստակ սահմանված են դասավանդման և ուսումնառության մոտեցումները, մեթոդները, որոնք անհրաժեշտ են ուսումնառության ակնկալվող արդյունքները ձևավորելու համար, բ. ՄԿԾ-ն իրականացվում է՝ հաշվի առնելով միջազգային մակարդակում կիրառվող դասավանդման առաջավոր փորձը և մոտեցումները, գ. առկա են դասավանդման և ուսումնառության գործընթացների գնահատման և բարելավման մեխանիզմներ:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
4.	ՄԿԾ-ն ունի ակադեմիական ազնվությանը նպաստող գնահատման համակարգ, որը թույլ է տալիս հավաստել ուսանողի առաջընթացը և ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը և ձեռքբերումը:	ա. ՄԿԾ-ի շրջանակներում կիրառվում է ուսումնառության ակնկալվող արդյունքների ձևավորումը գնահատող հստակ և հուսալի համակարգ, որի չափանիշները հասանելի են դասախոսներին և ուսանողներին, բ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են որակավորումների շնորհման նպատակով ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերումը հավաստող հստակ մեխանիզմներ, գ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են գնահատման համակարգի բարելավման հստակ մեխանիզմներ, դ. ՄԿԾ-ի շրջանակներում հավասար և անաչառ մոտեցում է ցուցաբերվում ուսանողներին հստակ սահմանած քաղաքականության և ընթացակարգերի միջոցով՝ հաշվի առնելով նրանց պարտականությունները և բողոքները, ե. ՄԿԾ-ի շրջանակներում խրախուսվում է ուսանողի ուսումնագիտական ինքնուրույնությունը և պայքարը գրագողության դեմ:

5. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
5.	ՄԿԾ-ի շրջանակում ապահովվում է կապը հետազոտական ու ստեղծագործական գործունեության և ուսումնառության միջև:	ա. ՄԿԾ-ի շրջանակում առկա են երկարաժամկետ ռազմավարություն, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտական ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները, բ. ՄԿԾ-ն հստակ քաղաքականության ու ընթացակարգերի միջոցով նպաստում է հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին, գ. ՄԿԾ-ի շրջանակում կարևորվում է հետազոտական գործունեության միջազգայնացումը, դ. ՄԿԾ-ի շրջանակներում առկա են հետազոտական ու ստեղծագործական գործունեությունը և ուսումնական գործընթացը փոխկապակցելու և բարելավելու հստակ մեխանիզմներ:

6. ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
6.	ՄԿԾ-ն նպաստում է որակյալ կրթություն իրականացնելուն՝ ձևավորելով ուսումնառության համար բարենպաստ միջավայր:	ա. ՄԿԾ-ի իրականացման համար առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, որոնք նպաստում են սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացմանն ու ուսումնական միջավայրի ստեղծմանը, բ. ուսանողներին տրամադրվում են ծրագրի սահմաններում ուսումնառությանը նպաստող օգտակար ու մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն, գ. ՄԿԾ-ն ապահովված է իր բովանդակությանը համապատասխան ուսումնամեթոդական անհրաժեշտ բազայով:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

	Չափանիշը	Չափորոշիչները
7.	ՄԿԾ-ի շրջանակում առկա է որակի ներքին համակարգ, որն ապահովում է ՄԿԾ-ի որակի կայունությունը և շարունակական զարգացումը:	ա. որակի ապահովման ներքին համակարգը մշակված է և գործում է հասարակության կարիքներին և ուսանողների պահանջներին հետևելու, ինչպես նաև իր գործունեությունը գնահատելու համար, բ. ՄԿԾ-ի շրջանակում առկա են որակի ներքին ապահովման արդյունավետ քաղաքականություն և ընթացակարգ (ընթացակարգեր), գ. ՄԿԾ-ի շրջանակում հետադարձ կապի

		մեխանիզմներով հավաքագրվում է իրականացվող գործընթացների մասին հավաստի տեղեկատվություն, որը վերլուծվում է ծրագրի նպատակների և գործընթացների բարելավման համար, դ. ՄԿԾ-ի ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ներքին ապահովման գործընթացներում, ե. ՄԿԾ-ի շրջանակում իրականացվում է օրինակելի փորձի տարածում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա.ԼԱԶԱՐՅԱՆ

ԲԱԺԻՆ III

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

20 մարտի 2007թ. թիվ 30/Մ

§ 2
ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածի 2–րդ մասի 7-րդ կետով՝ ***հրամայում եմ.***

1. Հաստատել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը»:

2. ԼՂՀ ԿՄՍ նախարարության ընդհանուր բաժնին՝

ա) սույն հրամանի 1-ին կետով հաստատված կարգը եռօրյա ժամկետում ներկայացնել գրանցման արդարադատության նախարարություն.

բ) գրանցումից հետո 5-օրյա ժամկետում կարգը ներկայացնել Արցախի պետական համալսարանին և հավատարմագրված ոչ պետական բուհերին:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ս.Ասրյանին:

Կ.ԱԹԱՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կրթության, մշակույթի և
սպորտի նախարարի
«20» մարտի 2007թ.
թիվ 30/Մ § 2 հրամանի

ԿԱՐԳ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Սույն կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ բուհեր) երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու ընդհանուր պայմանները:

2. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը կազմակերպվում է կիսամյակային (կրեդիտային) սկզբունքով: Առաջին և ավարտական կուրսերում երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն չի կազմակերպվում: Հավակնորդների դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող շաբաթների ընթացքում:

3. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթությունը իրականացվում է միայն սկզբունքով:

4. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալը թույլատրվում է, եթե առարկաների ժամաքանակների 25%-ից ավելի տարբերությամբ պայմանավորված ստուգարքների և քննությունների թիվը, հաշվի առնելով բուհերի և մասնագիտությունների առանձնահատկությունները, ըստ տվյալ կիսամյակի չի գերազանցում 8-ը:

5. Դիմումները քննարկելու նպատակով ստեղծվում է ատեստավորման հանձնաժողով: Բուհի ռեկտորը, ատեստավորման հանձնաժողովում հարցը քննարկելուց հետո որոշում է ուսանողի ընդունման ժամկետը, կուրսը և մյուս պայմանները կամ էլ պատճառաբանված հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը: Դիմումները քննարկվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երկու շաբաթների ընթացքում:

6. Մրցութային հավասար պայմանների դեպքում ըստ հերթականության առավելություն է տրվում.

ա) տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին,

բ) առավելագույն մասնագիտական ստաժ ունեցող դիմորդներին,

գ) դիպլոմի ներդիրում նշված առարկաների քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին:

7. Երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող՝ տվյալ կիսամյակում ըստ մասնագիտության ուսանողների թիվը չպետք է գերազանցի տվյալ մասնագիտության ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարության լիցենզիայով սահմանված տեղերի քանակը:

8. Տարբեր պատճառներով գոյացած առարկայական տարբերությունները և առարկաների առանձին բաժինները (ուսումնական պլանների տարբերություններ, հանձնած քննութուններ և ստուգարքներ) համարվում են ակադեմիական պարտքեր: Դրանց ցանկը և ծավալները որոշում է ընդունող բուհը: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները ընդունող բուհի կողմից սահմանված անհատական ժամանակացույցով:

9. Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում բուհերը նախարարություն են ներկայացնում հաշվետվություն երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների շարժի վերաբերյալ:

10. Ոչ պետական չհավատարմագրված բուհերի շրջանավարտներին չի թույլատրվում ստանալ երկրորդ բարձրագույն մասնագիտական կրթություն պետական կամ հավատարմագրված բուհերում:

Պետական գրանցման է ենթարկված
ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից
գրանցման համարը 880
գրանցման տարեթիվը 05 մայիսի 2008թ.
ԼՂՀ արդարադատության նախարար՝
Ն.Նարիմանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

25 ապրիլի 2008թ. § 1 թիվ 57/Մ
ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Ընդհանուր բաժնին՝ սահմանված կարգով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցման կարգը» ներկայացնել ԼՂՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ս. Ասրյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2008 թ. ապրիլի 25-ի թիվ 57/Մ § 1 հրամանի

ԿԱՐԳ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Սույն կարգը սահմանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում հեռակա ուսուցմամբ կրթության կազմակերպման պայմանները: Այն մշակվել է՝ ղեկավարվելով «Կրթության մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասով, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հեռակա ուսուցման բովանդակությունը որոշվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշիչներով:

Հեռակա ուսուցման հիմնական նպատակներն են՝

ա) հիմնական աշխատանքից չկտրված և առկա ուսուցմամբ կրթություն ստանալու հնարավորություն չունեցող անձանց կրթական պահանջմունքների բավարարումը,

բ) կրթական ծառայությունների մատուցման ոլորտի ընդլայնումը հանրապետության հեռավոր շրջաններում և արտասահմանում բնակվող անձանց համար,

գ) ուսումնական հաստատություններում օգտագործվող կրթական տեխնոլոգիաների ընդլայնումը և կատարելագործումը:

II. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

3. ԼՂՀ բուհերում հեռակա ուսուցումը վճարովի է, բացառությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով նախատեսված արտոնություններից օգտվող ուսանողների:

4. Հեռակա ուսուցմամբ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունք ունեն բարձրագույն, միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցող քաղաքացիները՝ առանց տարիքի սահմանափակման:

5. Հեռակա ուսուցման ընդունելության կանոնները և ընդունելության տեղերը՝ ըստ մասնագիտությունների հաստատում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարությունը:

6. Ընդունելության ժամանակ դիմորդներին տրվող արտոնությունները սահմանվում են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, ԼՂՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգով և հեռակա ուսուցման ընդունելության կանոններով:

7. Մրցույթով անցած դիմորդները պայմանագիր են կնքում բուհի հետ:

III. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Հեռակա ուսուցմամբ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի յուրացման նորմատիվային ժամկետները սահմանվում են յուրաքանչյուր մասնագիտության՝ համապատասխան որակավորման աստիճանի պետական կրթական չաւիորոշիչներով (ըստ կրթական ծրագրերի՝ առկա ուսուցման նորմատիվային ժամկետից կեսից մինչև 1 տարով ավելի):

9. Հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացը կազմակերպվում է՝ համաձայն ուսումնական պլանի և ուսումնական գործընթացի ժամանակացույցի:

10. Ուսումնական պլանը կազմվում է առկա ուսուցման օրինակելի ուսումնական պլանի հիման վրա՝ պահպանելով հետևյալ պայմանը՝ առկա ուսուցման ծավալը յուրաքանչյուր տարում ոչ պակաս 160 ժամից:

11. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը (աշխատանքային պլան) կազմվում է յուրաքանչյուր կիսամյակի կամ ուստարվա համար՝ ուսումնական պլանի հիման վրա:

Ժամանակացույցում նշվում են ուսումնասիրվող առարկաները (դասընթացները), յուրաքանչյուր առարկային հատկացված լսարանային ժամաքանակը և ստուգման ձևը:

12. Ուսումնական պլանը և ուսումնական գործընթացի ժամանակացույցը կազմվում են բուհերի ուսումնամեթոդական ստորաբաժանումների կողմից՝ համապատասխան ֆակուլտետների հետ համատեղ, և հաստատվում ռեկտորի (ուսումնական գծով պրոռեկտորի) կողմից:

13. Դասընթացներն անցկացվում են բուհի կողմից սահմանված ժամանակացույցով՝ մինչև հինգ շաբաթ ընդհանուր տևողությամբ: Դասընթացներն ավարտվում են քննաշրջաններով, որոնք լինում են՝

ա) ուսումնաքննական (կիսամյակային կամ տարեկան), որի ընթացքում կատարվում են գործնական, լաբորատոր և կուրսային աշխատանքներ (նախագծեր), ամփոփիչ դասընթացներ՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքի ընթացքում ստացած գիտելիքների համակարգման, ընդլայնման և խորացման նպատակով, անցկացվում են քննություններ, ստուգարքներ, պրակտիկաներ (եթե դրանք նախատեսված են ուսումնական պլանով), ինչպես նաև դրույթային դասախոսություններ և այլ դասընթացներ,

բ) ամփոփիչ ատեստավորման, որի ընթացքում ուսանողները հանձնում են քննություններ, պաշտպանում ավարտական թեզեր:

Յուրաքանչյուր կիսամյակից առաջ ուսանողներին սահմանված ձևով տեղեկացվում է պարապմունքների սկսման մասին:

Քննաշրջանների պարապմունքներն անցկացվում են ուսումնական գործընթացի ժամանակացույցի հիման վրա կազմված դասացուցակներով:

14. Հեռակայող ուսանողի ինքնուրույն աշխատանքի հիմնական մասը գրավոր աշխատանքների կատարումն է: Գրավոր աշխատանքները, համաձայն ուսումնական պլանի, նախատեսվում են յուրաքանչյուր կիսամյակի համար: Յուրաքանչյուր ուսանողի տրվում է անհատական ժամանակացույց, որում նշվում են առարկաների (դասընթացների) անվանումները, գրավոր և կուրսային աշխատանքների (նախագծերի) քանակը, դրանց ներկայացման ժամկետները, միջանկյալ և ամփոփիչ ստուգման ձևերը: Անհատական ժամանակացույցում նշվում են նաև հաջորդ կիսամյակի անցկացման ժամկետները և բուհի համապատասխան ստորաբաժանումների (դեկանատ, ամբիոններ) հեռախոսահամարները: Սահմանված ժամկետներում գրավոր աշխատանքները չներկայացրած ուսանողները դրանք ներկայացնում են կիսամյակի առաջին օրը:

Բոլոր գրավոր աշխատանքները բուհի համապատասխան ամբիոններում ենթարկվում են գրախոսման և նախնական գնահատման: Վերջնական գնահատականը դրվում է գրավոր աշխատանքի բովանդակության վերաբերյալ ուսանողի հետ դասախոսի կողմից անցկացվող հարցազրույցից հետո:

Կուրսային աշխատանքների (նախագծերի) նախնական ստուգումից հետո կատարվում են հետևյալ նշումները՝ «Թույլատրվում է պաշտպանության» կամ «Չի թույլատրվում պաշտպանության»: Պաշտպանությունը անցկացվում է համապատասխան ամբիոններում՝ սահմանված կարգով:

Բացասական գրախոսված գրավոր և կուրսային աշխատանքները, որպես կանոն, վերադարձվում են լրամշակման և կրկնակի ներկայացման:

15. Գիտելիքների ստուգման և գնահատման ձևերն ու մեթոդները (միջանկյալ, ամփոփիչ քննություններ, ստուգարքներ), հաճախականությունը, ինչպես նաև դրանց կազմակերպման ու անցկացման կարգը սահմանում է բուհը:

16. Քննաշրջանին մասնակցել թույլատրվում են այն ուսանողները, ովքեր հանձնել են տվյալ կիսամյակում կամ ուստարում ուսումնական պլանով նախատեսված դասընթացների բոլոր բաղկացուցիչները:

17. Նույն առարկայից երեք անգամ անբավարար գնահատական ստանալու կամ նույն քննաշրջանում երեք առարկաներից (ստուգարք և քննություն) անբավարար գնահատական ստանալու դեպքում ուսանողը հեռացվում է բուհից:

IV. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

18. Ուսանողների համար ուսումնական գործընթացի մեթոդական ապահովումը ներառում է՝

ա) ուսումնական պլանով նախատեսված բոլոր առարկաների ծրագրերը,

բ) ուսումնական ձեռնարկներ և հեռակայողների համար ստեղծված դասախոսությունների տեքստեր,

գ) կիսամյակների միջև ընկած ժամանակահատվածում ինքնուրույն աշխատանքների կազմակերպման համար մեթոդական ցուցումներ,

դ) գրավոր աշխատանքների թեմաներ, առաջադրանքներ, թեստեր,

ե) ամփոփիչ ստուգումների հարցաշարեր,

զ) ամբիոնների կողմից մշակված տեսալսողական նյութեր և էլեկտրոնային տեսքով ստեղծված մեթոդական այլ նյութեր:

19. Յուրաքանչյուր կիսամյակից հետո բուհը պարտավոր է բոլոր ուսանողներին ապահովել հաջորդ կիսամյակի համար անհրաժեշտ ուսումնամեթոդական փաստաթղթերով և համապատասխան նյութերով:

V. ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն անձինք, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ կուրսը և հաջողությամբ հանձնել ուսումնական պլանով նախատեսված բոլոր քննություններն ու ստուգարքները:

21. Ուսանողները ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են բուհի ռեկտորի հրամանով՝ համապատասխան ֆակուլտետների (դեկանների) ներկայացրած տվյալների հիման վրա:

22. Ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում և անցկացվում է ատեստավորող հանձնաժողովի կողմից՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված կարգով:

23. Ամփոփիչ ատեստավորումը հաջողությամբ անցած շրջանավարտներին տրվում է սահմանված նմուշի ավարտական փաստաթուղթ (դիպլոմ) և համապատասխան ներդիր:

24. Ամփոփիչ ատեստավորումը չանցած կամ ուսումը ընդհատած ուսանողներին, իրենց ցանկությամբ, տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք:

Պետական գրանցման է ենթարկված
ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից
գրանցման համարը 881
գրանցման տարեթիվը 05 մայիսի 2008թ.
ԼՂՀ արդարադատության նախարար՝
Ն.Նարիմանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

25 ապրիլի 2008թ. § 2 թիվ 57/Մ
ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՍԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասը, 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը»՝ համաձայն հավելվածի (կցվում է):
2. Ընդհանուր բաժնին՝ սահմանված կարգով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը» ներկայացնել ԼՂՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ս. Ասրյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2008 թ. ապրիլի 25-ի թիվ 57/Մ § 2 հրամանի

ԿԱՐԳ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ

Սույն կարգով սահմանվում են մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման պայմանները:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի կրթական աստիճան և բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման ձև է:

2. Մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան ունեցող անձը մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ռաումնասիրություններ կատարելու, մասնագիտական գործնական, նորարարական, տեխնոլոգիական զարգացումներ ու նոր հնարավորություններ ընկալելու ունակություններ ձեռք բերելու և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

II. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Կազմակերպությունների տվյալ տարվա մասնագիտությունների ընդունելության ցանկը՝ ըստ մասնագիտությունների, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացմամբ մինչև տվյալ տարվա ապրիլի 1-ը հաստատում է ԼՂՀ կառավարությունը:

Կազմակերպության տվյալ տարվա մասնագիտությունների ընդունելության ցանկը ներառում է՝

1) կրթության ձևը (առկա, հեռակա, դրսեկություն, հեռավար).

2)մասնագիտությունների ցանկը՝ ըստ կազմակերպությունների.

3) ըստ մասնագիտությունների՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ընդունելության տեղերի թիվը.

4) ըստ մասնագիտությունների՝ կազմակերպությունների հայտերի հիման վրա կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) ընդունելության տեղերի թիվը:

4. Կազմակերպության կողմից զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն՝ ընդունելության մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ:

5. Մագիստրատուրայի ընդունելության անցկացման համար, կազմակերպության ղեկավարի հրամանով և նախագահությամբ, ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են կազմակերպության ուսումնական գծով տեղակալները, մագիստրատուրայի աշխատանքներով զբաղվող ստորաբաժանման ղեկավարները, ինչպես նաև ֆակուլտետների (ուսումնական ստորաբաժանման) ղեկավարները:

6. Ընդունող հանձնաժողովը, ֆակուլտետի (ուսումնական ստորաբաժանման) կարծիքի հաշվառմամբ, ուսումնասիրում և քննարկում է վերջինիս կողմից ներկայացված մրցույթի հավակնորդների ցուցակները և ըստ մասնագիտությունների, բազային կրթության ընթացքում ուսումնասիրած դասընթացների ցանկի հաշվառմամբ, իրականացնում է մրցույթ:

Կազմակերպության ղեկավարը ընդունող հանձնաժողովի կողմից ներկայացված առաջարկությունների հիման վրա հրամանագրում է մրցութային հիմունքներով մագիստրատուրա ընդունված դիմորդներին:

III. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

7. Մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի և մագիստրոսի որակավորում ունեցող ԼՂՀ քաղաքացիները: Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները 2-րդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

Հավատարմագրված ոչ պետական բուհերի շրջանավարտները կարող են ընդունվել պետական բուհերի մագիստրատուրա միայն վճարովի հիմունքներով:

Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական և միջգերատեսչական պայմանագրերի կամ համաձայնագրերի հիման վրա, լրացուցիչ տեղերի հաշվին, ինչպես նաև վճարովի հիմունքներով՝ սեփական նախաձեռնությամբ:

8. Մագիստրատուրա ընդունվելու համար դիմումը տրվում է կազմակերպության ղեկավարի անունով՝ կցելով համապատասխան փաստաթղթեր՝

1) բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի դիպլոմի և դրա հավելվածի (միջուկի) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),

2) ինքնակենսագրություն և 3 լուսանկար (3 x 4 չափի),

3) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում),

4) կազմակերպության կողմից սահմանված այլ փաստաթղթեր:

9. Մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է 2 փուլով:

1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների անցկացվում է ըստ ԼՂՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի:

1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ընթացիկ տարվա հունիսի 10-ից մինչև հունիսի 30-ը, որին կարող են մասնակցել միայն բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները:

2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը՝ ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի) տեղերի:

10. Մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

1) նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

2) մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

3) տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությունը,

4) ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

11. Կազմակերպությունը մրցույթով անցած մագիստրոսների հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը հրապարակվում է ընդունելության հայտարարության հետ և նախապես տրամադրվում դիմորդներին:

IV. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

12. Մագիստրոսները կազմակերպության աշխատողների հետ հավասարապես օգտվում են գիտական սարքավորումներից, լաբորատորիաներից, համակարգչային տեխնիկայից, գրադարաններից, հանրակացարաններից և այլ հնարավորություններից:

13. Դիպլոմավորված մասնագետի ծրագրով բուհում ուսումնառությունն սկսած ուսանողը բանակ զորակոչվելուց կամ հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելուց հետո, եթե վերականգնվում է երկաստիճան կրթական համակարգում, հնարավորություն է ստանում սովորելու մագիստրատուրայում: Եթե մագիստրատուրան երկու տարով է, ապա բուհի ֆինանսավորման հաշվին ազատվում է մեկ տարվա ուսման վարձից:

14. Մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառությունն ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձանց տրվում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության կամ կազմակերպության ավարտական փաստաթուղթ (մագիստրոսի դիպլոմ)՝ համապատասխան ներդիրով:

Գրանցված է
ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից
2012 թվականի փետրվարի 14-ին
Պետական գրանցման համարը 1051215
ԼՂՀ արդարադատության նախարար
Ն. Նարիմանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

7 փետրվարի 2012թ. N9-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին, 9-րդ հոդվածի 2-րդ մասին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 24-ի N442 որոշման հավելված 1-ի 9-րդ կետի «ժթ» ենթակետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը՝ սահմանված կարգով սույն հրամանը ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս.Ասրյանին:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2012 թվականի փետրվարի 7-ի
N9-Ն հրամանի

ԿԱՐԳ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների (այսուհետ՝ հաստատություն) շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը տարածվում է ուսուցման բոլոր ձևերով բարձրագույն կրթություն ստացող շրջանավարտների վրա:

2. Ամփոփիչ ատեստավորման նպատակն է պարզել շրջանավարտի պատրաստման մակարդակի համապատասխանությունը բարձրագույն կրթության պետական կրթական չափորոշչի պահանջներին:

II. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

3. Ամփոփիչ ատեստավորումը ներառում է գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգման հետևյալ ձևերը՝

1) ամփոփիչ քննություն,

2) ավարտական աշխատանքի (դիպլոմային աշխատանք կամ նախագիծ, մագիստրոսական թեզ) պաշտպանություն:

4. Յուրաքանչյուր մասնագիտության համար, ըստ որակավորման աստիճանների, ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների քանակը չպետք է գերազանցի 3-ից: Դրանց ցանկը որոշում է հաստատությունը՝ ելնելով պետական կրթական չափորոշիչների պահանջներից, այն ամրագրելով ուսումնական պլաններում:

5. Բակալավրի որակավորման աստիճանի համար ավարտական աշխատանքը պարտադիր չէ: Ավարտական աշխատանքի անհրաժեշտության վերաբերյալ որոշումը ընդունվում է հաստատության գիտական խորհրդի կողմից: Մագիստրոսի որակավորման աստիճանի համար ավարտական (մագիստրոսական) աշխատանքի պաշտպանությունը պարտադիր է:

6. Ամփոփիչ քննություններ կարող են նախատեսվել ինչպես առանձին առարկաների, այնպես էլ հարակից առարկաների խմբի համար: Ամփոփիչ քննությունը կարող է անցկացվել բանավոր կամ գրավոր:

7. Ամփոփիչ քննությունների հարցաշարերը և ավարտական աշխատանքի թեմաները կազմում են մասնագիտական ամբիոնները, հաստատում է հաստատության ֆակուլտետի խորհուրդը և համապատասխան ամբիոնների կողմից շրջանավարտներին է տրամադրվում ոչ ուշ, քան ամփոփիչ ատեստավորումից 3 ամիս առաջ: Շրջանավարտի ավարտական աշխատանքի կատարման համար նշանակվում է ղեկավար՝ համաձայն տվյալ հաստատության կողմից սահմանված կարգի: Ավարտական աշխատանքները՝ ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ, ենթակա են գրախոսման:

Գրախոսման կարգը հաստատում է ֆակուլտետի խորհուրդը:

III. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը (նախագահ, տեղակալ(ներ) և անդամներ) կազմավորվում է յուրաքանչյուր մասնագիտության գծով՝ ուսուցման բոլոր ձևերի համար:

9. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին հաստատության ղեկավարի առաջարկությամբ նշանակում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը: Նախագահը ընտրվում է համապատասխան ոլորտի (բնագավառի) գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, գիտական հիմնարկների մասնագետներից և գիտնականներից, ովքեր չեն հանդիսանում տվյալ հաստատության աշխատողներ և երեք տարի անընդմեջ չեն հանդիսացել տվյալ հաստատության ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերը արձանագրում է քարտուղարը, որը հանձնաժողովի անդամ չէ և նշանակվում է հաստատության ղեկավարի հրամանով:

11. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը հաստատում է հաստատության ղեկավարը:

12. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կարող է կազմված լինել առարկայական քննական հանձնաժողովներից՝ յուրաքանչյուր ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքի պաշտպանության համար: Առարկայական քննական հանձնաժողովների կազմերը հաստատում է հաստատության ղեկավարը:

Հաստատության մասնաճյուղի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում հանձնաժողովի նախագահի տեղակալ նշանակվում է հաստատության ներկայացուցիչը:

13. Ամփոփիչ ատեստավորման, ինչպես նաև առարկայական քննական հանձնաժողովների կազմերում կարող են ընդգրկվել հաստատության ղեկավարը (Բուհի ռեկտորը) և (կամ) ուսումնական կամ գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, համապատասխան ֆակուլտետի դեկանը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատողներ, տվյալ ոլորտի կազմակերպությունների, գիտական հիմնարկների, գերատեսչությունների և բուհերի մասնագետներ:

Ամփոփիչ ատեստավորման և առարկայական քննական հանձնաժողովների կազմում ընդգրկվում են առավելագույնը 6 անդամներ, որից առնվազն 2 անդամը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ: Մասնագիտությունների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ համապատասխան հաստատության ղեկավարի գրավոր հիմնավորմամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի թույլտվությամբ հանձնաժողովի կազմը կարող է ձևավորվել այլ համամասնությամբ:

14. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է սույն կարգով, բարձրագույն կրթության համապատասխան մասնագիտության պետական կրթական չափորոշիչով և դրանց հիման վրա հաստատության կողմից մշակված ուսումնամեթոդական փաստաթղթերով:

15. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն են՝

1) շրջանավարտի պատրաստման մակարդակի և բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջներին դրա համապատասխանության ստուգումը.

2) ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) մասին որոշման կայացումը.

3) տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ առաջարկությունների մշակումը և ներկայացումը:

16. Յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի աշխատանքի ժամանակացույցը, համաձայնեցված հանձնաժողովի նախագահի հետ, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատում է հաստատության ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը և ամփոփիչ քննություններից կամ ավարտական թեզերի պաշտպանությունից առնվազն 10 օր առաջ տեղեկացվում շրջանավարտներին:

IV. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

17. Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն շրջանավարտները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել ուսումնական ծրագրով (պլանով) նախատեսված բոլոր քննություններն ու ստուգարքները և կուտակել համապատասխան կրեդիտներ:

Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը հաստատվում է հաստատության ղեկավարի հրամանով՝ ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ:

18. Ամփոփիչ քննությունների հարցաշարերը կազմվում են պետական կրթական չափորոշիչների հիման վրա մշակված առարկայական ծրագրերին համապատասխան:

19. Ավարտական աշխատանքների պաշտպանությունը և առարկայական ամփոփիչ քննությունները անցկացվում են ուսումնական պլանով սահմանված ժամկետներում:

20. Ավարտական աշխատանքների պաշտպանությունը և առարկայական ամփոփիչ քննությունները անցկացվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնաժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Ավարտական աշխատանքների պաշտպանությունը կարող է տեղի ունենալ ինչպես բուհում, այնպես էլ հիմնարկներում և կազմակերպություններում, որոնց համար այդ աշխատանքները ներկայացնում են գիտական կամ գործնական հետաքրքրություն:

21. Ավարտական աշխատանքի պաշտպանությունից կամ ամփոփիչ քննությունների սկսվելուց առաջ քննական հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի ցանկը (համապատասխան հրամաններ, շրջանավարտների ուսումնառությանը վերաբերող ամփոփիչ տվյալներ, ավարտական աշխատանքի ղեկավարի և գրախոսողի(ների) կարծիքներ և այլն) սահմանում է հաստատության ղեկավարը:

22. Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պաշտպանությունը և ամփոփիչ քննություններն անցկացվում են հետևյալ ընթացակարգային պահանջների համաձայն.

1) ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է մինչև 20 րոպե ժամանակ: Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի բովանդակությունը ներկայացնելուց հետո հանձնաժողովի անդամներին՝ շրջանավարտին հարցեր տալու և պատասխանների համար տրվում է մինչև 30 րոպե ժամանակ:

2) Ամփոփիչ քննությունները անցկացվում են տոմսերով կամ թեստերով՝ ուսումնական ծրագրին և տվյալ որակավորմանը ներկայացվող պահանջներին համապատասխան:

3) Բանավոր քննություններին նախապատրաստվելու համար յուրաքանչյուր շրջանավարտին տրվում է առնվազն 20 րոպե ժամանակ:

4) Ամփոփիչ քննական օրվա տևողությունը չպետք է գերազանցի 8 ժամը:

5) Ամփոփիչ ատեստավորման ընթացքը (բացառությամբ թեստերով քննությունների) արձանագրվում և ձայնագրվում է: Ձայնագրությունը պահվում է արդյունքները հրապարակելուց հետո 24 ժամ:

23. Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պաշտպանության և ամփոփիչ քննությունների արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար» գնահատականներով՝ տվյալ հաստատությունում ընդունված գնահատման սանդղակով, և հայտարարվում նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

24. Ամփոփիչ քննության (քննությունների), ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանության դրական («բավարար», «լավ», «գերազանց») արդյունքների հիման վրա, որոնք ձևակերպված են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների արձանագրություններով, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին: Բացասական («անբավարար») արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

25. Կրեդիտային համակարգով ուսումնառության դեպքում գերազանցության դիպլոմ տրվում է բակալավրիատում միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 90%-ը, իսկ մագիստրատուրայում՝ 95%-ն ապահովելու դեպքում՝ ամփոփիչ ատեստավորումները միայն «գերազանց» գնահատականով հանձնած շրջանավարտներին:

26. Ամփոփիչ ատեստավորման և առարկայական քննական հանձնաժողովների որոշումները ընդունվում են հանձնաժողովների փակ նիստերում: Շրջանավարտի գիտելիքների գնահատման մասին որոշումը ընդունվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով:

27. Նախագահի բացակայության դեպքում հաստատության ղեկավարի (ռեկտորի) ներկայացմամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով նշանակվում է փոխարինող:

28. Ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի պաշտպանության և ամփոփիչ քննությունների հանձնաժողովների բոլոր որոշումները քարտուղարի կողմից արձանագրվում են արձանագրությունների հատուկ մատյանում: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները: Արձանագրությունները պահվում են հաստատությունում (ձևերը կցվում են՝ 1, 2, 3): Արձանագրության մեջ նշվում են ավարտական աշխատանքի կամ ամփոփիչ քննությունների գնահատականները, ինչպես նաև տրված հարցերը, հատուկ կարծիքները և այլն: Արձանագրության մեջ նշվում է շնորհված որակավորումը, աստիճանը և հաստատությունը ավարտողի դիպլոմի տեսակը:

29. Ամփոփիչ քննությունից «անբավարար» գնահատական ստանալը չի զրկում շրջանավարտին մյուս ամփոփիչ քննությունները հանձնելու կամ ավարտական աշխատանքը պաշտպանելու իրավունքից, ինչպես նաև ավարտական աշխատանքի պաշտպանությունից «անբավարար» գնահատական ստանալը չի զրկում շրջանավարտին ամփոփիչ քննություններ հանձնելու իրավունքից:

30. Ամփոփիչ ատեստավորումից «անբավարար» գնահատական ստացած շրջանավարտին իր ցանկությամբ տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք, որը տրվում է անվճար՝ հաստատության ղեկավարին շրջանավարտի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից դիմումը ներկայացնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

31. Ավարտական աշխատանքը չպաշտպանած կամ ամփոփիչ քննությունները չհանձնած կամ «անբավարար» ստացած շրջանավարտին թույլատրվում է վերահանձնել (կրկնել) ավարտական աշխատանքի պաշտպանությունը կամ ամփոփիչ քննությունները հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ այն առարկաներից, որոնք նախատեսված են եղել նրա ավարտման տարում գործող ուսումնական պլանով: Ավարտական աշխատանքի վերահանձնման դեպքում շրջանավարտը կցվում է համապատասխան ամբիոնին և ստանում ավարտական աշխատանքի նոր թեմա: Ամփոփիչ քննությունների վերահանձնումը կատարվում է միայն այն առարկաներից, որոնց քննությանը չեն ներկայացել կամ ստացել են «անբավարար» գնահատականներ:

32. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը (ձև 4) հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ քննարկվում է հաստատության գիտական խորհրդում և մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ արված առաջարկությունների հետ միասին ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն: Հաշվետվության պատճենը պահվում է Բուհում:

33. Ամփոփիչ ատեստավորման արդյունքի բողոքարկման ընթացակարգային պահանջները.

1) շրջանավարտը կարող է բողոքարկել ամփոփիչ ատեստավորման կամ ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կամ առարկայական հանձնաժողովի նախագահին՝ արդյունքները հրապարակելուց հետո 1 ժամվա ընթացքում.

2) գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը.

3) գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են հաստատության վարչական անձնակազմի՝ տվյալ հանձնաժողովի անդամ չհանդիսացող աշխատակիցը և հաստատության ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են հաստատության ղեկավարի կողմից.

4) շրջանավարտի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացվում է որոշում.

ա. գնահատականը թողնել անփոփոխ.

բ. գնահատականը բարձրացնել.

5) ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, հաստատության վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և շրջանավարտի կողմից: Կայացված որոշմանը անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը.

6) գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

Ձև 1

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N____

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«____» _____ 20___ թ.

կայացած նիստի (ժամը _____ րոպեից մինչև ժամը _____րոպեն)
Շրջանավարտ_____
_____
(ազգանուն, անուն, հայրանուն, ֆակուլտետ և մասնագիտություն)
_____
_____
_____
_____ թեմայով
ավարտական աշխատանքի քննարկման վերաբերյալ
Մասնակցում էին՝ նախագահ
_____
անդամներ
_____
_____
_____
_____
_____

(յուրաքանչյուր ավարտական աշխատանքի պաշտպանությանը հատկացվում է առանձին թերթ).
Թեզը կատարվել է _____ ղեկավարությամբ
խորհրդատու(ներ)_____
_____

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացված են հետևյալ նյութերը՝

1)_____ֆակուլտետի դեկանատի 20__ թ. _____տեղեկանքը շրջանավարտի հանձնած քննությունների, ստուգարքների և ուսումնական պլանի պահանջների կատարման մասին:
2) Հաշվարկային-բացատրագիրը _____ էջ _____ :
3) Թեզի գծագրեր (աղյուսակներ) _____ թերթ:
4) Ավարտական աշխատանքի վերաբերյալ ղեկավարի կարծիքը _____:
5) Թեզի վերաբերյալ գրախոսականը _____:
6) Համառոտ եզրակացություն աշխատանքի վերաբերյալ:

Կատարված թեզի մասին (_____ րոպե) հաղորդումից հետո, շրջանավարտին տրվել են հետևյալ հարցերը՝
1)_____
_____
(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)
2)_____
_____
_____
(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)
3)_____
_____
_____
(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշումը
1. Համարել, որ շրջանավարտ_____
կատարել և պաշտպանել է ավարտական աշխատանքը «__» գնահատականով:
2.Շնորհել_____
_____ որակավորում _____
_____մասնագիտությամբ:
3. Հանձնել դիպլոմ_____
(գերազանցության, ոչ գերազանցության)
4. Նշել, որ_____

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ _____
(ստորագրություն) (անուն, ազգանուն)
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ (անուն, ազգանուն)
1) _____ (ստորագրություն)
2) _____ (ստորագրություն
3) _____ (ստորագրություն)
4) _____ (ստորագրություն)
5) _____ (ստորագրություն)
6) _____ (ստորագրություն)

Քարտուղար, անուն, ազգանուն և պաշտոն _____

_____
(ստորագրություն)

Ձև 2

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N____

ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

(լրացվում է յուրաքանչյուր ամփոփիչ ատեստավորման քննության ժամանակ)

«____» _____ 20___ թ.

կայացած նիստի (ժամը _____ րոպեից մինչև ժամը _____րոպեն)
_____
_____
_____առարկայի ամփոփիչ քննություն հանձնելու
մասին_____
(ֆակուլտետ և մասնագիտություն)
Քննվող շրջանավարտ_____
(ազգանուն, անուն, հայրանուն)
Հարցեր
1)_____
_____
2)_____
_____
3)_____
_____
4)_____
_____

Շրջանավարտին տրված հարցերի ընդհանուր բնութագիրը
_____
_____
Ընդունել, որ շրջանավարտը հանձնել է ամփոփիչ քննությունը _____ գնահատականով:
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների հատուկ կարծիքը
_____
_____
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝ _____ (ստորագրություն)
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ՝

1) _____ (ստորագրություն)
2) _____ (ստորագրություն)
3) _____ (ստորագրություն)
4) _____ (ստորագրություն)
5) _____ (ստորագրություն)
6) _____(ստորագրություն)

Քարտուղարի ստորագրությունը _____

Ձև 3

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N____

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

«_____» _____ 20___ թ.

Ատեստավորման բոլոր քննությունները հանձնած շրջանավարտներին որակավորում շնորհելու մասին

Մասնակցությամբ՝ նախագահ_____
անդամներ _____
_____
_____

1.Շրջանավարտ_____
(ազգանուն, անուն, հայրանուն)
հանձնել է ամփոփիչ ավարտական քննություններ հետևյալ գնահատականով՝
1)_____
(քննական առարկայի անվանումը) (գնահատական) (հանձնման ամսաթիվը)
2)_____
(քննական առարկայի անվանումը) (գնահատական) (հանձնման ամսաթիվը)
3)_____
(քննական առարկայի անվանումը) (գնահատական) (հանձնման ամսաթիվը)

Ընդունել, որ շրջանավարտ _____հանձնել է
(ազգանուն, անուն, հայրանուն)
_____

_____մասնագիտության համար ուսումնական

ծրագրով նախատեսված ամփոփիչ ատեստավորման քննական բոլոր առարկաները:

_____-ին շնորհել _____

_____որակավորում:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների մասնավոր կարծիքը
_____

Տալ դիպլոմ _____
(գերազանցության, ոչ գերազանցության)
2.Շրջանավարտ_____
(ազգանուն, անուն, հայրանուն)
և այլն

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝_____ (ստորագրություն)
Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամներ՝
1) _____ (ստորագրություն)
2) _____ (ստորագրություն)
3) _____ (ստորագրություն)
4) _____ (ստորագրություն)
5) _____ (ստորագրություն)
6) _____ (ստորագրություն)

Քարտուղարի ստորագրությունը _____

Ձև 4

ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«____» _____ 20___ թ.

Ամփոփիչ ատեստավորման քննությանը մասնակցած շրջանավարտների թիվը
_____

Քննությունը հանձնած շրջանավարտների ստացած գնահատականները.
«գերազանց»_____
«լավ»_____
«բավարար»_____
«անբավարար»_____
Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականներ_____

Հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ.
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ՝ _____ (ստորագրություն)

Գրանցված է
ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից
2012 թվականի փետրվարի 14-ին
պետական գրանցման համարը 1051216
ԼՂՀ արդարադատության նախարար՝
Ն.Նարիմանյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

7 փետրվարի 2012 թ. N 10-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ (ԱԶԱՏՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետին համապատասխան.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության և գիտության վարչությանը՝ սահմանված կարգով սույն հրամանը ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ս.Ասրյանին:
4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2012 թվականի փետրվարի 7-ի N10-Ն հրամանի

Կ Ա Ր Գ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ (ԱԶԱՏՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր (բակալավրի և մագիստրոսի) իրականացնող հաստատություններում (այսուհետ՝ Բուհեր) ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման ընդհանուր պայմանները:

2. Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր, որոնք ուսանողը պետք է հանձնի ռեկտորի հրամանով հաստատված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

3. Առարկայական տարբերություն է համարվում ուսումնառած պլանում բացակայող առարկան կամ որևէ առարկայից 25 տոկոս և ավելի կրեդիտների տարբերությունը:

4. Ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում քննաշրջանում երեք և ավելի առարկաներից կամ մեկ առարկայից երեք անգամ «անբավարար» գնահատական ստանալը:

5. Բուհի ռեկտորը վերականգնվող ուսանողին ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է՝ ըստ տվյալ Բուհում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի:

II. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ, ԱԶԱՏՈՒՄ

6. Ուսանողը հեռացվում է Բուհից.

1) ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում (բացառությամբ սույն կարգի 16-րդ կետով նախատեսված դեպքերի).

2)Բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքերում.

3) Բուհի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:

7. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով ընդունված, սակայն Բուհից հեռացված ուսանողները զրկվում են տարկետման իրավունքից:

8. Ուսանողը ազատվում է Բուհից.

1) իր դիմումի համաձայն.

2) այլ Բուհ տեղափոխվելու դեպքում:

9. Բուհից ուսանողի ազատման հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման՝ համաձայն սույն կարգի 6-րդ կետով նախատեսված դեպքերի:

10. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.

1) ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում.

2) առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում.

3) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

11. Քննաշրջանի ընթացքում քննություններին չներկայացած ուսանողներին թույլատրվում է մինչև տվյալ կիսամյակի երրորդ շաբաթվա ավարտը անհատական ժամանակացույցով հանձնել ակադեմիական պարտքերը:

12. Ակադեմիական պարտքերի անվճար հիմունքներով մարումը իրականացվում է ռեկտորի հրամանով ձևավորված քննական հանձնաժողովներում: Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա վերջը:

13. Սույն կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դեպքում Բուհից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի, ակադեմիական պարտքերի մարման արդյունքների ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:

14. Բուհից հեռացված (ազատված) արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են համապատասխան զինկոմիսարիատներ:

15. Բուհից հեռացման (ազատման) դեպքում ուսանողի դիմումի համաձայն՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը: Բուհի կողմից հաստատված ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:

16. Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

17. Սույն կարգի 10-րդ կետի համաձայն ուսումնառությունն ընդհատած ուսանողները շարունակում են ուսանողական իրավունքները մինչև ուսումնառության ընդհատումը ունեցած կարգավիճակի պահպանմամբ:

III. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

18. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:

19. Ուսանողական իրավունքների վերականգնման դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող երեք շաբաթների ընթացքում: Վերականգնման դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը:

20. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են ընդունող Բուհի ռեկտորի հրամանով՝ ուսուցման բոլոր ձևերում:

21. Բուհը քննարկում է ուսանողի վերականգնման դիմումը և որոշում նրա ուսումնառության շարունակման կուրսը և մյուս պայմանները, կամ հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը:

22. Առաջացած առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի մարման համար Բուհի ռեկտորի կողմից սահմանվում է ժամկետ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:

23. Առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի հանձնումից հետո կցագրման հրամանը փոխարինվում է ուսանողի հրամանագրումով:

24. Զորակոչվելու կապակցությամբ և առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ ուսումնառությունը ընդհատած ուսանողները ուսումնառությունը շարունակում են այն պահից, որից այն ընդհատել են՝ անկախ առաջացած ծրագրային տարբերություններից:

25. Վճարովի ուսուցման համակարգում ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:

26. Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել (ազատվել) են, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված կրեդիտների գումարային քանակը չի գերազանցում 20 կրեդիտը: 20 կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր կիսամյակում, որի համար առարկայական անհամապատասխանությունների՝ սույն կետում նշված պահանջը բավարարվում է, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակի:

27. Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են տվյալ մասնագիտության համար լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի սահմաններում:

28. Սույն կարգի 14-րդ կետով ուսումնառությունն ընդհատած ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքներն այն պահից, երբ ընդհատել են այն՝ անկախ լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի քանակից և առաջացած ծրագրային տարբերություններից:

29. Բուհից հեռացված ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքները առնվազն 1 կիսամյակ հետո:

30. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են վճարովի սկզբունքով: Վճարովի սկզբունքով վերականգնված ուսանողները կարող են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 27-ի N 81 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի» համաձայն մասնակցել փոխատեղման գործընթացին՝ առնվազն մեկ ուսումնական տարի ուսանելուց հետո:

31. Բուհերից հեռացված (ազատված) ուսանողները կարող են վերականգնել ուսանողական իրավունքները պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

32. Ըստ մասնագիտությունների չհավատարմագրված Բուհերից հեռացված (ազատված) ուսանողնե-

րի վերականգնումն ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող հավատարմագրված Բուհերում չի թույլատրվում:

33. Վերականգնված ուսանողի անձնական գործում պահվում են ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգնման մասին հրամանի պատճենը, Բուհի հետ կնքած պայմանագիրը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը, ուսման վարձի վճարման անդորրագիրը:

34. Անվճար սկզբունքով ուսումը կարող են շարունակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված իրավունքներից օգտվող անձինք:

Գրանցված է
ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից
26 ապրիլի 2013թ.
Պետական գրանցման համարը 1051345
ԼՂՀ արդարադատության նախարար՝
Ա.Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

19 ապրիլի 2013 թ. N80-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 21-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001թվականի մարտի 16-ի N 52 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 410-Ն որոշման կարգի 5-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ լիցենզավորված անձանց կրթական ծրագրերով տրամադրվող լիցենզիայի ներդիրի ձևերը՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7 և 8 հավելվածների:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ-իրավաբանին՝ սույն հրամանը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ս. ԱՍՐՅԱՆ

Հավելված N7
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2013 թվականի ապրիլի 19-ի N80-Ն հրամանի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Դ Ի Ր N 000

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(վերնագիրը փոփ. 06.11.2014 N213-Ն)
ՍԵՐԻԱ — N — ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)
_____

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
«__»_____ թ. N ___ ՀՐԱՄԱՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ.

N	Դասակարգ	Մասնագիտությունը	Կրթաձևերը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողությունը, կրթության հիմքը	Ուսուցման ավարտին տրվող որակավորումը	Ավարտական փաստաթուղթը
				1	2	3	4	5				

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի
իրականացման լիցենզավորման հանձնաժողովի նախագահ _____
(անուն, ազգանուն)

_____ _____
(ստորագրություն) *(ամիս, ամսաթիվ)*

Կ.Տ.

ԼՂՀ կրթության և գիտության նախարար՝ **Ս. ԱՍՐՅԱՆ**

Հավելված N8
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2013 թվականի ապրիլի 19-ի N80-Ն հրամանի

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ե Ր Դ Ի Ր N 0 0 0

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
(վերնագիրը փոփ. 06.11.2014 N213-Ն)
ՍԵՐԻԱ — N — ԼԻՑԵՆԶԻԱՅԻ

_____
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը)
_____

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
«__»_____թ. N ___ ՀՐԱՄԱՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ՝ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԵՏԵՎՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ.

N	Դասիչը	Մասնագի-տությունը	Կրթության ձևը	Սովորողների նախատեսվող սահմանային թիվն ըստ կուրսերի					Ուսուցման լեզուն	Ուսուցման տևողությունը, կրթության հիմքը	Ուսուցման ավարտին տրվող որակավորումը	Ավարտական փաստաթուղթը
				1	2	3	4	5				

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կրթական ծրագրերի
իրականացման լիցենզավորման հանձնաժողովի նախագահ _____
(անուն, ազգանուն)

_____ _____
(ստորագրություն) *(ամիս, ամսաթիվ)*

Կ.Տ.

ԼՂՀ կրթության և գիտության նախարար՝ Ս. ԱՍՐՅԱՆ

Գրանցված է
ԼՂՀ արդարադատության նախարարության կողմից
2014 թվականի հուլիսի 23-ին
Պետական գրանցման համարը 1051468
ԼՂՀ արդարադատության նախարար՝
Ա.Դանիելյան

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

16 հուլիսի 2014 թ. N150-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 9-րդ կետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման և իրավաբանական բաժնի վարիչ Ա. Ապրեսյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Յու. Սարգսյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ս. ԱՍՐՅԱՆ**

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
«16» հուլիսի 2014թ. N150-Ն հրամանի

ԿԱՐԳ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների («Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարան» սահմանափակ պատասխանատվության ընկերություն, Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց համալսարան» սահմանափակ պատասխանատվության ընկերություն) (այսուհետ՝ բուհեր), հեռակա ուսուցման ընդունելության գործընթացը, որը ներառում է բուհերի մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը:

2. Բուհերում հեռակա ուսուցման ընդունելությունը կատարվում է համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների և քննությունների ցանկի:

3. Հեռակա ուսուցումը հանրապետության բուհերում կազմակերպվում է վճարովի հիմունքներով: Ուսման վարձի չափը սահմանում է բուհը՝ առկա ուսուցման համապատասխան մասնագիտության համար հաստատված վարձի սահմաններում:

4. Հեռակա ուսուցում իրականացնող բուհը, համաձայն սույն կարգի, տալիս է իր հայտարարությունը:

5. Բուհերի հեռակա ուսուցման համակարգ կարող են ընդունվել միջնակարգ, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

6. Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող՝ միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչները, ովքեր հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատանքի են ընդունվել մինչև 2010 թվականը, կարող են ուսումը շարունակել տվյալ մասնագիտության 3-րդ կուրսից՝ բուհի կողմից սահմանված ժամկետում հանձնելով առարկայական տարբերությունները:

II. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

7. Հեռակա ուսուցման ընդունելության մրցութային քննություններ են համարվում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից հանձնած միասնական քննությունները, ինչպես նաև կենտրոնացված և բուհերում կազմակերպվող ընդունելության քննությունները: Քննությունների կազմակերպումը և անցկացումը վերահսկում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

8. Դիմորդներն իրենց ընտրությամբ կարող են հայտագրվել և մասնակցել միայն մեկ բուհի մեկ մասնագիտության ընդունելության մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտության համար սահմանված քննությունները: Ընդունելության մրցույթը կատարում է յուրաքանչյուր բուհ՝ ըստ մասնագիտությունների հատկացված տեղերի և միավորների:

9. Քննատախտակով նախատեսված օրն անհարգելի պատճառով քննության չներկայացած դիմորդներին չի թույլատրվում մասնակցել տվյալ առարկայի քննությանը: Հարգելի պատճառով (փաստաթղթով հաստատված) քննության չներկայացած դիմորդներին հնարավորություն է տրվում այն հանձնելու, եթե քննատախտակով տվյալ առարկայի քննությունները չեն ավարտվել:

10. Ընդունելության փաստաթղթերը հանձնելիս դիմորդը վճարում է 1500 ՀՀ դրամ՝ փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար: Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 ՀՀ դրամ:

Ընդունելության քննությունների վճարից ազատվում են 28-րդ կետով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները: Անկախ քննությանը մասնակցելուց և արդյունքից՝ քննության համար վճարված գումարը հետ չի վերադարձվում:

11. Դիմորդների դիմում-հայտերը և ընդունելության փաստաթղթերի ու քննությունների կազմակերպման և անցկացման համար սահմանված վճարը ընդունում է համապատասխան բուհը:

12. Քննությունների վերահանձնում չի թույլատրվում:

III. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

13. Ընդունելությունը բուհերում կատարվում է ըստ մասնագիտությունների հատկացված տեղերի, քննությունների ցանկի և սույն կարգի համաձայն:

14. Հանրակրթական առարկաներից քննությունները համապատասխան բուհերում անցկացնում են բուհի ռեկտորի կողմից հաստատված առարկայական հանձնաժողովները՝ առկա ուսուցման առարկայական ծրագրերով և գիտելիքների գնահատման չափանիշներով:

15. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Դրական են համարվում 7,5 և բարձր միավորները, որոնք գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանումով՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան:

16. Մրցույթին մասնակցում են այն դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության համար նախատեսված քննություններից ստացել են դրական միավորներ: Ըստ մասնագիտությունների՝ ընդունելության մրցույթում առաջնահերթությունը տրվում է միասնական և կենտրոնացված քննություններ հանձնած դիմորդներին:

17. Դիմորդները կարող են պահպանել տվյալ և նախորդ տարվա «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) և «Մաթեմատիկա» առարկաների միասնական և կենտրոնացված քննությունների դրական գնահատականները՝ իրենց ցանկությամբ: Դիմորդին իրավունք է վերապահվում, պահպանելով միասնական և կենտրոնացված կարգով հանձնած քննական առարկաների այդ գնահատականները, տվյալ առարկաներից հանձնել քննություն: Այն դեպքում, երբ դիմորդը ստանում է ավելի բարձր գնահատական, հաշվի է առնվում հանձնած քննության արդյունքը:

18. Բուհերի այն մասնագիտությունների գծով, որոնց քննությունների անվանացանկում առարկաները նշված են մեկ և երկու աստղանիշով, վճարովի ուսուցման թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար՝

1) մրցութային և ոչ մրցութային քննությունների գնահատականներ են համարվում միջնակարգ կրթության ատեստատի, միջին մասնագիտական (հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով) կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական (հիմնական ընդհանուր կրթության հիմքով) ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի տվյալ առարկաների պետական ավարտական քննական գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը.

2) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի «✹» նշանով նշված մասնագիտությունների դիմորդները, որպես մրցութային առարկաների գնահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը.

3)տասը միավորային համակարգով տարեկան գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «4»-ը, «5»-ը և «6»-ը համարժեք են 13 միավորի,

բ. «7»-ը և «8»-ը համարժեք են 17 միավորի,

գ. «9»-ը և «10»-ը համարժեք են 20 միավորի.

4) միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի հինգ միավորային համակարգով գնահատված տարեկան քննական գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «3»-ը համարժեք է 13 միավորի,

բ. «4»-ը համարժեք է 17 միավորի,

գ. «5»-ը համարժեք է 20 միավորի:

19. Մրցութային հավասար միավորների դեպքում ըստ հերթականության առավելություն է տրվում՝

1) տվյալ մասնագիտությամբ աշխատող դիմորդներին.

2) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին.

3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին.

4) բուհի կողմից նշված առաջին մրցութային քննություններից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին.

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին.

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան՝ միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

20. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից գնահատական չունեցող դիմորդները (Ա և Ա+Բ տարբերակները չհանձնած) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն կարող են միասնական քննություն հանձնել օտար լեզվից (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն): «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությանը փոխարինած «Օտար լեզու» առարկան չի կարող համընկնել տվյալ մասնագիտության միասնական քննությունների ցանկում ընդգրկված «Օտար լեզու» առարկային: Ընդ որում՝

1) «030600 – Լրագրություն», «031000 - Հայոց լեզու և հայ գրականություն», «051100 - Մանկավարժություն և մեթոդիկա», «032300 - Թարգմանչական գործ» մասնագիտությունների դեպքում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ընդունելության քննությունը պարտադիր է.

2) «032400 - Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության համար սահմանված «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ընդունելության քննության փոխարեն դիմորդները կարող են քննություն հանձնել «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայից:

21. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից (տարեկան, քննական) գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկայի գնահատականը:

22. Համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի «Հայոց լեզու» առարկայի տարեկան գնահատականը:

23. Ռուսերեն ուսուցմամբ դպրոցի շրջանավարտները քննությունները կարող են հանձնել ռուսերենով (բացառությամբ հայերեն և օտար լեզուների քննությունների):

24. Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկելու առարկայական քննական հանձնաժողովի նախագահին՝ առանց քննասենյակից դուրս գալու, իսկ գրավոր քննության գնահատականը՝ այն հայտնելու պահից 24 ժամվա ընթացքում: Գրավոր քննության գնահատականները բուհերը հայտնում են հաջորդ օրը՝ ոչ ուշ, քան մինչև ժամը 16:00:

25. Քննությունների ընթացքում ծագած վեճերը լուծում է բուհի ընդունող հանձնաժողովը:

26. Բուհերի ընդունող հանձնաժողովների, առարկայական քննական հանձնաժողովների և ընդունելությանն առնչվող մյուս ծառայությունների փոխհարաբերությունները կանոնակարգվում են նախարարության կողմից հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի հեռակա ուսուցման ընդունելության աշխատակարգով:

27. Մրցույթի արդյունքները հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

Մրցույթով անցած դիմորդների պաշտոնական (հաստատված) ցուցակները հանձնվում են բուհերին՝ հրամանագրման համար:

IV. ԴԻՄՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

28. Մրցույթից դուրս ընդունվում են՝

1) 1-ին ու 2-րդ խմբերի և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք, որոնց համար, բժշկասոցիալական փորձաքննության գործակալության կողմից տրված եզրակացության համաձայն, տվյալ մասնագիտությամբ սովորելը և հետագայում աշխատելը հակացուցված չէ.

2) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձինք.

3) Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:

29. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս՝ ըստ մասնագիտությունների՝ նախարարության կողմից հաստատված տեղերի:

V. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

30. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում և ընդունելության քննությունները կազմակերպվում են բուհերի կողմից սահմանված ժամկետներում՝ ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 30-ը:

31. Դիմում-հայտի հետ ներկայացվում են՝

1) միջնակարգ կրթության ատեստատը, միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը (բնօրինակը).

2) 6 լուսանկար (3x4 սանտիմետր չափսի).

3) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական),

4) զինվորական գրքույկ և (կամ) զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինծառայությունը անցնելու մասին,

5) սույն կարգի 28-րդ կետով սահմանված կարգավիճակը հաստատող տեղեկանք (առկայության դեպքում).

6) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմներ (առկայության դեպքում).

7) Տվյալ և նախորդ տարվա «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) և «Մաթեմատիկա» առարկաների միասնական և կենտրոնացված քննությունների վկայագիր (առկայության դեպքում):

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

18 նոյեմբերի 2014 թ. N223/Մ

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 24-ի N442-Ն որոշմամբ հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 13-րդ կետի ա) ենթակետին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Տարվա լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Սարգսյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ս. ԱՍՐՅԱՆ

Հավելված
ԼՂՀ կրթության և գիտության նախարարի
2014թ. նոյեմբերի 18-ի N223/Մ հրամանի

ԿԱՐԳ
«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1) «Տարվա լավագույն ուսանող» հանրապետական մրցույթը (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպում և անց է կացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

2) Սույն կարգը որոշում է «Տարվա լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի նպատակը, խնդիրները, անցկացման կարգը և ժամկետները, ինչպես նաև թեկնածուների ընտրության չափանիշները:

2. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1) Բացահայտել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ Բուհ) այն ուսանողներին, ովքեր ցուցաբերել են բարձր առաջադիմություն և իրենց առավել ակտիվ են դրսևորել գիտահետազոտական, ստեղծագործական, սպորտի և հասարակական կյանքի բնագավառներում:

2) Նպաստել ուսանողների առաջադիմության բարձրացմանը:

3. ՄՐՑՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1) Խթանել մրցակցությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Բուհերի ուսանողների միջև:

2) Խրախուսել այն ուսանողներին, ովքեր ցուցաբերել են բարձր առաջադիմություն, ունեն նշանակալի ձեռքբերումներ գիտահետազոտական, ստեղծագործական և սպորտի բնագավառներում, ինչպես նաև ակտիվ գործունեություն են ծավալում հասարակական կյանքում:

4. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1) Մրցույթը անց է կացվում երկու փուլով.

ա) ներբուհական,

բ) հանրապետական:

2) Մրցույթը անց է կացվում՝ հիմք ընդունելով ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը, մասնագիտական ձեռքբերումները և հասարակական ակտիվությունը:

3) Ներկայացված թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով.

ա) 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) հնարավոր առավելագույն արժեքի 85%-ը.

բ) 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են ՄՈԳ-ի հնարավոր առավելագույն արժեքի 90%-ը:

գ) 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր բակալավրի կրթական ծրագրով արդյունքների ամփոփման դեպքում հաղթահարել են ՄՈԳ-ի հնարավոր առավելագույն արժեքի 95%-ը:

4) Ներկայացված թեկնածուների մասնագիտական ձեռքբերումները գնահատվում է 5-7 միավորներով.

ա) 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ներհամալսարանական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն պատվոգրեր, գովասանագրեր, դիպլոմներ, կամ հանդիսանում են քաղաքային և ներբուհական ցուցահանդեսների կամ մրցույթների հաղթողներ:

բ) 6 միավորի կարող են հավակնել այն ուսանողները, ովքեր մասնակցել են հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում կամ հանդիսանում են հանրապետական ցուցահանդեսների կամ մրցույթների հաղթողներ:

գ) 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են, միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում կամ հանդիսանում են միջազգային ցուցահանդեսների կամ մրցույթների հաղթողներ:

5) Ներկայացված թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով.

ա) 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում.

բ) 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներհամալսարանական ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում.

գ) 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են հանրապետական երիտասարդական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

6) Մրցույթի անցկացման առաջին փուլը յուրաքանչյուր Բուհ անց է կացնում մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 15-ը:

7) Առաջին փուլի հաղթողների փաստաթղթերը ուղարկվում են Նախարարության մրցութային հանձնաժողով մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը: Յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն ներկայացնում է 1 թեկնածու:

8) Մրցույթի անցկացման երկրորդ փուլը անց է կացնում Նախարարությունը մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 15-ը:

9) Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

ա) մասնակցության հայտ Բուհի կողմից՝ համաձայն Ձև 1-ի,

բ) քաղվածք բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորատի նիստի արձանագրությունից,

գ) ստուգման գրքույկի պատճեն և առաջադիմության թերթիկ,

դ) բնութագիր Բուհի կողմից՝ մրցույթի թեկնածուի հասարակական ակտիվության գնահատմամբ,

ե) հրապարակումների ցուցակ՝ ստորագրված Բուհի գիտքարտուղարի կողմից և հաստատված պրոռեկտորի կողմից, կամ ստեղծագործական, սպորտային մրցույթներում, օլիմպիադաներում մասնակցությունը հավաստող փաստաթղթեր:

10) Վիճելի հարցերի դեպքում մրցութային հանձնաժողով են ներկայացվում փաստաթղթերի բնօրինակները:

5. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1) Մրցույթի անցկացման 1-ին և 2-րդ փուլերի անցկացման համար ստեղծվում են մրցութային հանձնաժողովներ:

2) Առաջին փուլի մրցութային հանձնաժողովի կազմը հաստատում է Բուհի ռեկտորը:

3) Երկրորդ փուլի մրցութային հանձնաժողովի կազմը հաստատում է Նախարարը:

4) Մրցութային հանձնաժողովը հաստատում է իր գործունեության աշխատակարգը, որի համաձայն՝

ա) քննարկում է Մրցույթի անցկացման հետ կապված տեխնիկական և տեղեկատվական ապահովման հետ կապված հարցեր,

բ) անց է կացնում Մրցույթին ներկայացված փաստաթղթերի փորձաքննությունը,

գ) ամփոփում է Մրցույթի արդյունքները:

5) Հանձնաժողովի նիստը իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին:

6. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մրցույթին իրավունք ունեն մասնակցելու Բուհերի բակալավրի առկա ուսուցման համակարգի 3-4-րդ կուրսերի ուսանողները:

7. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ

1) Մրցույթի հաղթողները որոշվում եմ մրցութային հանձնաժողովի նիստում՝ մրցութային բոլոր փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների և հավաքած առավելագույն միավորների քանակի հիման վրա:

2) Մրցութային հանձնաժողովը վերջնական որոշումը կայացնում է բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամների կարծիքները և առաջարկությունները ներառվում են մրցութային հանձնաժողովի արձանագրության մեջ:

3) Մրցութային հանձնաժողովը լիազոր է հանդիպել երկրորդ փուլ անցած բոլոր մասնակիցների հետ:

4) Անհրաժեշտության դեպքում մրցութային հանձնաժողովը կարող է մրցույթի թեկնածուների հետ կազմակերպել հարցազրույցներ:

8. ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

1) Մրցույթի հաղթողները պարգևատրվում են Նախարարության դիպլոմներով, ինչպես նաև՝ դրամական մրցանակներով:

2) Մրցութային հանձնաժողովի առաջարկությամբ և Նախարարի հրամանով կարող են հատուկ խրախուսական մրցանակներով պարգևատրվել այն ուսանողները, ովքեր չեն ճանաչվել հաղթող, սակայն ցուցաբերել են բարձր արդյունքներ ներքոհիշյալ որևէ անվանակարգում.

ա) ուսման առաջադիմություն,

բ) մասնագիտական ձեռքբերումներ,

գ) հասարակական ակտիվություն:

Ձև 1

ՀԱՅՏ

«ՏԱՐԿԱ ԼԱԿԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ

Բարձրագույն ուսումնական հաստատության անվանումը, ֆակուլտետը, մասնագիտությունը, կուրսը	
Մասնակցի անունը, ազգանունը, հայրանունը	
Ծննդյան թիվը	
Հասցեն, հեռախոսը	
Կցվող փաստաթղթերի ցանկը	